ԴՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԹԻՒ 12

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ՄԵԾ ՎԱՆՔԵՐԻ
# ՏԱԹԵՒԻ, ՀԱՂԱՐԾՆԻ ԵՒ ԴԱԴԻ
# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳՐԵՑ
ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՏԷՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1938

ԴՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԹԻՒ 12

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ՄԵԾ ՎԱՆՔԵՐԻ ՏԱԹԵՒԻ, ՀԱՂԱՐԾՆԻ ԵՒ ԴԱԴԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

A III 2898

ԳՐԵՑ
ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՏԷՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1938



ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՏԷՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

## ԶԵԿՈՅՑ

Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր Մովսիսեան իր 5 Յունիս 1933 թուակիր նամակով մեզ կը գրէր. «Բացի ձեռագրական ցուցակների վիթխարի գործից(*), ունիմ մի քանի պատմական մանր աշխատութիւններ, որոնցից մէկի վերնագիրն է *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները*: Հաւաքած արձանագրութիւնների թիւն է 405, որոնց մի շատ փոքր մասը տպագրութեամբ ծանօթ է. մեծ մասը միանգամայն ցայժմ անծանօթ: Ծաւալն է 100 էջ՝ մեծ կէս թերթի մեծութեամբ, մեքենագրուած, որի վերջին քսան էջերը նուիրուած են մի քանի ճարտարապետական խնդիրների քննութեան, յատկապէս Հայոց ժամատների մասին: Արդեօք Երուսաղէմում հնարաւորութիւն կա՞յ այդպիսի մի աշխատութիւն ՍԻՈՆ ամսաթերթի մէջ կամ անկախ տպագրելու: Սպասում եմ պատասխանին»: Ապա կ'աւելցնէր թէ այս գործին տպագրութիւնը «ինձ համար ծերութեան օրերիս սփոփանք կը լինի: Ո՛րքան բախտաւոր էք, որ տրամադրութեան տակ տպարան ունէք եւ ամսաթերթ: Աշխատութիւններ կան կուտակուած, բայց ի՞նչպէս ի լոյս ածել . . . »:

Գործիս ձեռագիրը այն ատեն կը գտնուէր Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի կեդրոնը, որ, ըստ յանձնարարութեան Մեսրոպ Արքեպիսկոպոսի, իր 1935 Փետրուար 11 թուակիր նամակով մեզ ղրկեց եւ մենք նոյն տարւոյ մեր 21 Փետրուար գրութեամբ ներկայացուցինք Ս. Աթոռոյս Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, որ բարեհաճեցաւ յանձնել զայն Ուսումնական Խորհուրդի քննութեան: Վերջինս՝ բարեհաճ հաւանութեամբ իր Ամեն. Սրբազան Նախագահին՝ յարմար դատեց անոր տպագրութիւնը ի շարս *Դուրեան Մատենադարանի* հատորներու:

---

*(*) Այդ «վիթխարի գործը» Մեսրոպ Արքեպիսկոպոսի պատրաստած* Հայ Ձեռագրաց Ընդհանուր Ցուցակն *է: Այս մասին Սրբազանը իր 7 Մայիս 1937 թուակիր նամակով մեզ կը տեղեկացնէր թէ Ակադեմիայի Հայաստանի Ֆիլիալը տարի մը առաջ հետը պայմանաւորուած է՝ իրեն նպաստելու, որ գործը մեքենայով մաքուր արտագրուած պատրաստէ տպագրութեան համար: Հայաստանի Կոմիսարներու Խորհուրդը որոշում կայացուցեր էր հոգալ ծախքը՝ գործը երկու տարուան ընթացքին լոյս ընծայելու պայմանով, ու այդ նպատակին համար իրեն տրամադրած էր գրամեքենաներ եւ մեքենագրողներ: Ծախքին կէսը պիտի հոգար Մոսկուայի Համագիտական Ակադեմիան, որ համապատասխան որոշում առած էր՝ Ակադեմիկոս Օրբէլիի առաջարկութեան համաձայն:*

Տպագրութեան առաջին պրակը մամուլէն դուրս ելաւ անցեալ 1937 տարուան Յուլիսին, ու այնուհետեւ սկսանք տպագրուած պրակները յաջորդաբար ղրկել Ս. Էջմիածին Սրբազան Հեղինակին:

Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս կանոնաւորապէս կը ստանար տպագրուած պրակները, ու այդ առթիւ անցեալ տարի կը գրէր. «Շատ եմ շնորհակալ եւ գոհ: Նման մի փոքրիկ աշխատանքի լոյս տեսնելը մի մարդու, որ բաւական երկար ժամանակ է գրական ասպարէզից հեռացած, մի տեսակ նորութեան ձեւով է հանդէս գալիս: Տարուած իմ մեծ աշխատանքի զբաղումներով եւ մի շարք հանգամանքների հետեւանքով՝ գրական ասպարէզից համարեա թէ հեռացել էի»: Դարձեալ անցեալ 1937 տարուան Օգոստոս 16 թուակիր նամակով կը գրէր. «Նամակներիդ ստացումը եւ տպագրած թերթերի տեսքը ինձ ա՛յնքան են յուզում որ ստացուած օրը աշխատել չեմ կարողանում: Մտքեր բազմապիսի, յիշողութիւններ անցեալի գալիս ծառանում են եւ պաշարում ինձ: Վերջին նամակիդ մի քանի տողերը յայտարար են, որ նոյնն է տեղի ունենում քո մէջ. ուրեմն այդ ծերութեան յաւիտենական երեւոյթներ են . . .: 1913 թ. երբ Արարատի գագաթը բարձրացայ, ուղեկից Չիլինգարեցիները հիացած էին, նկատելով որ ես վերելք կատարեցի առանց նախնական վարժութիւնների: Ահա՛ աղբիւրը յիշողութեան եւ ապրումների: Առողջական դրութիւնս տանելի է. մի քանի ամիս շատ նեղւում էի անընդհատ գլխացաւերից. այժմ համարեա անհետացել է. ոտերս են արեան անկանոն ընթացքից ուռչում: Բժիշկ եղբօրս խորհուրդն է քիչ պարապել, շատ չնստել, աւելի երկար պառկել. խորհուրդներ՝ որ ինձ համար միանգամայն անիրագործելի են, որովհետեւ ժամերով արտագրում եմ *Ցուցակս*, յուսալով աւարտել մինչեւ առաջիկայ Յունվար-Փետրվար ամիսները»:

Գործիս տպագրութեան առթիւ Ամենայն Հայոց երջանկայիշատակ Տէր Խորէն Ա. Կաթողիկոս եւս կը գրէր իր 10 Սեպտեմբեր 1937, Թիւ 491, նամակով. «Գերաշնորհ Տ. Մեսրոպ Սրբազան համարեա ամէն օր կ'այցելէ Մեզ . . . եւ մեծ բաւականութեամբ բերում ցոյց է տալիս Մեզ իւր աշխատութեան տպագիր մամուլները, որ այնքան խնամքով ուղարկում էք իրեն: Ուրախ պիտի լինէի եթէ կարողանայիք փոստային ծախսերով մաս մաս մի օրինակ եւս մեզ ուղարկել թէ՛ վերջին աշխատութիւնից եւ թէ արդէն տպագրուած *Ռոդգման* վերաբերեալ գրքից»:

Ամենամեծ հաճոյքով կատարեցինք ամենապատուական եւ սիրեցեալ Հայրապետի սոյն հրամանը, որ իր տարւոյս 16 Փետրուար, Թիւ 107, նամակով մեզ կը գրէր. «Ստացել ենք Գերաշնորհութեանդ անցեալ տարուայ Դեկտեմբեր 20 թուակիր գրութիւնը եւ նորա հետ միասին Տ. Մեսրոպ Սրբազանի *Հայկական երեք մեծ վանքեր* աշխատութեան տպագրուած ինն մամուլը եւ

նոյն Հեղինակի *Հայաստանի հոգևոր ուսուցման մասին* գրքոյկից մի օրինակ, որի համար յայտնում ենք Մեր շնորհակալութիւնը: Յայտնում ենք նաև որ Տ. Մեսրոպ Արքազանն ևս ստացաւ Ձեր կողմից իրեն ուղարկուած իր աշխատութեան տպագրուած մամուլները»:

Գրքիս Գեր. Հեղինակին վերև յիշուած 16 Օգոստոս 1937 թուակիր նամակը վերջինը եղաւ: Այնուհետեւ մեր ղրկած վեց նամակները մնացին անպատասխան: Վերջին նամակովս, որ տարւոյս Ապրիլ 10 թուականը կը կրէր, յայտնելով թէ մօտ է գրքին տպագրութեան աւարտիլը՝ խնդրած էի Մեսրոպ Արքազանէն, որ փութացնէ ամփոփ Յառաջաբան մը ղրկել իր նորագոյն մէկ նկարով միասին: Նամակս թղթատարին յանձնուելուն յաջորդ օրը, Ապրիլ 11ին, հեռագիրը բերաւ Ամենայն Հայոց Երջանկայիշատակ Հայրապետի անսպասելի մահուան գոյժը եւ դառն սուգի ու անհնարին սրտաբեկութեան մատնեց ամէնս առհասարակ:

Այնուհետեւ հետզհետէ թէ՛ մասնաւոր նամակներէ եւ թէ՛ լրագրական հրատարակութիւններէ յոյժ ցաւալի ու խռովիչ լուրեր հասան, եւ հասնելու վրայ են տակաւին, Մայր Աթոռի մէջ տեղի ունեցած եղերական իրադարձութեանց մասին, իրադարձութիւններ՝ որոնց մէջ կը յիշուի նաև անունը աշխատութեանս արժանայարգ Հեղինակին ու մեր թանկագին ու մտերիմ բարեկամին:

Երանի՛ թէ չստուգուէին այդ տարաձայնութիւնները, որոնք ցարդ չեն հաստատուած ոեւէ պաշտօնական աղբիւրէ, եւ Գեր. Տ. Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս կարենար *կենդանի աչքով* տեսնելու ամբողջութիւնը իր աշխատասիրած այս հատորին, որուն տպագրուած պրակներուն տեսքը այնքան յուզած էր զինք եւ ուրախութիւն ու սփոփանք պատճառած էր իրեն:

Գրքիս Հեղինակէն սպասուած Յառաջաբանին փոխարէն կը զետեղենք սոյն ՅԵԿՈՒՅՑը, իր նկարով միասին, զոր արտանկարել տուած ենք 1927 թուին հանուած Ս. Էջմիածնի Միաբանութեան մէկ խմբանկարէն:

Հատորիս վերջը դրած ենք մեր կողմէ պատրաստուած *Յատուկ Անուններու Ցանկը*:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ

Երուսաղէմ, 28 Յունիս 1938

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ՄԵԾ ՎԱՆՔԵՐԻ

## ՏԱԹԵՒԻ, ՀԱՂԱՐԾՆԻ ԵՒ ԴԱԴԻ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Վանքաշատ Հայաստանում», ինչպէս Լեհման-Հաուպտն է բնորոշում իր Armenien Einst und Jetzt գրքում, կան իրօք շատ փոքրանց շատ վանքեր, որ իբրեւ ճարտարապետական յուշարձաններ եւ արձանագրութիւնների շտեմարաններ, երկրի պատմութեան համար խոշոր արժէք ունին։ Նրանց արձանագրական տուեալներով վաղուց են սկսել օգտուել հայագէտ հեղինակներ բաւական հին ժամանակներից, շատ մեծ չափով գրութեանս մէջ յաճախ յիշելիք տասներեքերորդ դարու պատմագիր Ստեփանոս Օրբէլեանը, բայց նրանց ճարտարապետական եւ գեղարուեստական արժէքներին առաջին կարեւորութիւն տուողները էին ֆրանսիացի նշանաւոր ճանապարհորդներ եւ գիտնականներ, Դիւբուա դը Մոնպերէն, Մ. Բրոսէն, Տեքսիէն եւ բաւական թւով ուրիշ Եւրոպացիներ։

Միայն անցեալ դարու երկրորդ կիսից հայ մարդիկ նախնական փորձեր արին աւել կամ պակաս չափով ի մի հաւաքել եւ հրատարակել այդ արձանագրութիւնները եւ նրանց օժանդակութեամբ պատմական եւ եկեղեցական ուսումնասիրութիւններ կատարել։ Այդ ասպարիզում առաջին տեղը պատկանում է Վենետիկի միաբան, բանաստեղծ, թարգման եւ ուսումնական Հ. Ղ. Ալիշանին իր հրատարակած չորս ըստուար եւ պատկերազարդ in folio հատորներով — Շիրակ, Այրարատ, Սիսուան եւ Սիսական։

Սիստեմատիկ եւ գիտական աշխատանք կատարողը եղաւ Պետերբուրգի յայտնի ակադեմիկոս Ն. Մառը, որ մեծ պատերազմից եւ Հայաստանի մեծագոյն մասի աւերից առաջ, գլխաւորապէս հայկական, փոքր չափով ռուսական պետական միջոցներով, օգնականներ ունենալով գլխաւորապէս իր համալսարանական աշակերտներին եւ ռուս այլ գիտնականներին, միքանի տարիներ շարունակ կանոնաւոր պեղումներ էր կատարում Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Անիի աւերակներում, հնութեան անհատնում նիւթեր ժողովելով երկրի կուլտուրական անցեալի պատկերի հարազատ պարզաբանութեան համար։ Նրա մօտ էր աշխատում նաեւ ճարտարապետ Թորոս Թորամանեանը, որ միեւնոյն ժամանակ ինքնուրոյն կերպով իր ուսումնասիրութիւնները առաջ տանելով՝ Յ. Ստրչիգովսկու երկհատոր պատկառելի ուսումնասիրութեան «Dei Baukunst der Armenier und Europa» գրքի գլխաւոր առաջն տուողը հանդիսացաւ։

Մառի աշխատանքներն աւելի քան պարզորոշակի կերպով ցոյց տուին, որ չափազանց դժուար է, մասամբ նաեւ անհնար, Հայաստանի պէս հնութիւններով խիստ հարուստ մի երկրում լայն չափերով ուսումնասիրութիւններ կատարել, առանց պետական համապատասխան մարմինների գիտակցուած օժանդակութեան։

Հայ ժողովուրդը երկար դարերից յետոյ ահա երկրորդ տասնամեակն է միայն, որ ունի իր սեփական պետական կազմը, Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը, որ այս չնչին կարճ ժամանակամիջոցում իր Երեւան մայրաքաղաքում ստեղծեց Համալսարան եւ գիտական ամեն տեսակ ինստիտուտներ։ Այդ գիտական հիմնարկներում ներ-

կայանում աշխատում են հին սերնդի գիտնականներ և նորաբողբոջ երիտասարդ գիտական ուժեր, մի եռանդով և ոգևորված ապագայի լուսավոր հույսերի հեռանկարներով։ Բնական է լինել, որ ամեն ամառ, դպրոցական հանգստյան արձակուրդներին, այդ հիմնարկների մասնագետները, պետական ձեռնարկությամբ և պահանջով, կազմակերպում են գիտական արշավախմբեր և Հանրապետության բոլոր անկյուններում, նախապես պատրաստված ծրագրով և հատուկ ցուցմունքներով, հետախուզություններ են կատարում, երկրի խորքերում հանքային հարստություններ հայտնաբերելով, երկրի երեսի գիտատնտեսական նորագույն մշակույթների բազաներ ստեղծելու, երկրի բուսական, կենդանական, ջրային, առողջարանական և այլ տեսակներ ժողովելով, լուսավոր կենցաղի հիմունքներ պատրաստելու համար։ Կազմակերպված է Պատմական Հուշարձանների Պահպանության Տեղական Կոմիտե, որ հոգ է տանում դեռ ևս կանգուն մնացած հնությունները պահպանելու և մանրամասն նկարագրելու և ուսումնասիրելու այդ հնությունները։

Ավելի է զգացվում վերջին գործունեության արագ թափի անհրաժեշտությունը, որովհետև խախտված հնությունների շարունակող ավերը սպասելու և դանդաղելու ժամանակ չի տալիս։ Բազմաթիվ այդպիսի ավերներից հիշենք երեքը։ Թե ինչպես մեր աչքի առաջ արագ անհետանում են հնության կարևորագույն հուշարձանները։

Անիից դեպի արևմուտք, Կարսի շրջանում էր գտնվում արձանագրական տվյալով և ճարտարապետական ուսումնասիրությամբ հռչակված Տեկորի հայկական հնագույն եկեղեցին, որ առաջին անգամ ֆրանսիացի Տեքսիեն էր նկարագրել և նկարել, այժմ այդ հնությունը հիմնայատակ կործանված է, միայն մխիթարական է, որ 1911ին ճարտարապետ Թ. Թորամանյանը նախապես նկարագրել էր, բոլոր դետալները նկարել և լուսանկարել էր և Տեկորի Տաճարը վերականգրով հրատարակել էր։ Այժմ մենք ունենք այդ անդառնալի կորստի լավ մանրակրկիտ պատրաստված նկարագրությունը։

Արագած լեռան ստորոտում, Քասախ գետի աջ ափին էր գտնվում հայկական ճարտարապետական յատկանշական մի կառուցվածք՝ Յովհաննավանքը, որ թեև խախտված, բայց համեմատաբար թեթև նորոգությունով կարող էր դիմանալ, եթե վերջին յետպատերազմյան խառնակ ժամանակներն այդ նորոգության հնարավորությունը չոչնչացնեին. այդ գեղեցիկ շինությունը դարձյալ հիմովին կործանվել է և պահված են միայն միքանի լուսանկարներ, գլխավորապես ընդհանուր տեսարանի պատկերով։

Մեր նկարագրելիք «Տաթեւ»ի վանքի գլխավոր Առաքելոց եկեղեցին շինված էր ժ-րդ դարու սկզբներին, Իններորդի վերջին։ Երկու տարի առաջ, 1931ին նրա շրջանում տեղի ունեցավ մի սոսկալի երկրաշարժ և հայկական սիրելի հնագույն եկեղեցիներից մեկն այժմ կործանված է և նրա ավերակները սոսկալի և ցավալի տպավորություն են թողնում։

Իսկ թե ի՞նչ վիճակում է Անին, Գր. Մառի կազմակերպած թանգարա՞նը, իր պատմական հարուստ ժողովածուով, Գագիկ Թագավորի արձանը, մանավանդ իմանալով որ Մառի ամբողջ ժողովածուն, նրա բազմաթիվ լուսանկարները ու նեգատիվները, նրա յիշատակարաններն են, Պետերբուրգից Կովկաս փոխադրելու ժամանակ անհետ և անդառնալի կորստի մատնվեցին. Ի՞նչ վիճակում են արևմտա-հարավային Հայաստանի կարևորագույն յուշարձանները, որոնցից բնաջնջվել և հեռացել են նրանց կանգնեցնողների հարազատները, հայ ժողովուրդը, որոնց համար դրանք մեծագույն սրբություններ էին, միայն ցավալի ու տխուր ենթադրություններ կարելի է անել։ Արդյո՞ք թե կենդանի մարդկանց հանդեպ ցուցադրված անլուր վայրագությունները չգործադրվին նաև լուռ և անմեղ յուշարձանների հանդեպ, որոնց դերն է միայն մասնագետներին միջոց ընձեռելու մարդկային քաղաքակրթության անցյալի կերպարանքն ավելի լրիվ ու ուղիղ պատկերացնելու։

Ամերիկական մի թերթում կարդացի, հետն էլ պատկերը տեսայ, որ տաճկական նոր, լուսավորյալ գործած կառավարու-

թիւնը ջանք է գործադրում հռչակաւոր Սուրբ Սոֆիայի աննման մոզաիկները մաքրելու գաջերից ի վեր մոլեռանդութեան փակցրած ծեփաշերտից. Լրագրում մենք տեսանք այդպիսի մոզաիկների երեք օրինակներ. Gregorios Armenias — Հայաստանի Գրիգորիոս — Dionysios — Դիոնիսիոս — Իսկ երրորդն է ամենից գեղեցիկն ու հարուստը. ականակուռ գահի վրայ բազմել է Ամենակալ Փրկիչը, աջ ու ձախ կողմերում, մեդալեան շրջանակներում, Աստուածածինն ու Գաբրիէլ հրեշտակը, գահից ցած, գետնի վրայ չոքած ու աղերսական եղանակով ձգուած է Կոստանդին կայսրը. Ձեռքերը կարկառած դէպի Քրիստոս. Ամբողջի շուրջը գտնւում է շատ գեղեցիկ շրջանակ.

Երանի՛ թէ նոյն գիտական ու խելացի վերաբերմունքը յայտնաբերուէր նաեւ հանդէպ հայկական արժէքաւոր հնութիւնների ոչ միայն կենտրոնում, այլ մանաւանդ կենտրոնական իշխանութեան անմիջական հըսկողութիւնից հեռու տեղերում.

Վերջին պատերազմից առաջ Պր. Մառի առաջարկով եւ նրա ղեկավարութեամբ որոշուած էր սիստեմատիկ եղանակով հաւաքել Կովկասի հնութիւնների բոլոր արձանագրութիւնները եւ հրատարակել Հայերի, Վրացիների եւն. Corpus Inscriptionum: Այն ինչ որ չի կատարուել մեծ պատերազմի հետեւանքով, այժմ որոշել է ի գլուխ հանելու Հայաստանի վերոյիշեալ Կոմիտէն, Մառի աշակերտ ակադեմիկոս Օրբելու առաջարկով, որ հայկական էպիգրաֆիկայի լաւագոյն ուսումնասիրութիւններ ունի հրատարակած. Կասկածից դուրս է, որ Հայաստանի Հանրապետութեան օժանդակութեամբ այդ խոշոր աշխատանքը լաւագոյն վերջաւորութեամբ է պսակուելու.

1904ին եւ 1911ին ձեռագիրներ ուսումնասիրելու եւ վանական պաշտօնական գործերով եղայ սկիզբը Տաթեւի վանքում եւ ապա Հաղարծնի եւ Ղարաբաղի վանքերում, որ կազմում էին Էջմիածնի վանքի կալուածքները. Երկու դէպքում էլ արտագրեցի հանդիպած արձանագրութիւնները, բոլոր ուշագրաւ տեղերի լուսանկարները հանեցի, միայն թէ ժամանակին հաւաքած նիւթերս չկարողացայ հրատարակել, որովհետեւ իմ նեգատիւները Թիֆլիզում եղբօրս բնակարանում հրդեհի զոհ եղան եւ ես սպասում էի յարմար առթի կորուստը վերականգնելու.

Ներկայիս կամենում եմ տալ այդ աշխատանքը. հիմնուելով իմ յուշատետրերի վրայ եւ օգտուելով ուրիշներից փոխ առնուած լուսանկարներով, թողնելով որ ուրիշները անշուշտ կը լրացնեն իմ թերութիւնները եւ կ'օգտուեն այն տուեալներից, որ կը գտնեն իմ աշխատութեան մէջ եւ աւերման հետեւանքով այլ եւ չկան բուն յուշարձանների վրայ, իրենց տեղերում.

# Ա.

# ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔ

Այդ անունով վանքը Հայաստանի Սիւնեաց խոշոր նախարարութեան եկեղեցական վարչութեան գլխաւոր կենտրոնն էր և ամէն անգամ երբ երկրի աշխարհիկ իշխանութիւնը հզօրացել եւ կարևորութիւն է ձեռք բերել, մինչեւ անգամ կիսանկախ թագաւորական իշխանութեան վերածւելով, համապատասխան չափերով կարևորութիւն են ձեռք բերել նաեւ այդ վանքի առաջնորդները, իրենց յաջորդաբար ընդունել տալով իբրև մետրապօլիտներ և պրօտոֆրօնոսներ տանն Սիւնեաց տիտղոսներով. տանից սակայն կաթողիկոսական իշխանութեան սահմանի հասնելու, ինչպէս հարեւան Աղուանքի, Վասպուրականի և այլն եպիսկոպոսները։ Իսկ երբ միանգամայն անհետացել եւ ոչնչացել է աշխարհիկ իշխանութիւնը և երկիրն անցել է օտարացեղ և օտարադաւան իշխողների ձեռքը, վանքի հոգեւոր իշխանութիւնը, թէկուզ թուլացած եւ անշքացած, պահպանել է իր վիճակը մինչեւ վերջին ժամանակները։

Պատմութեան ընթացքում Սիւնիքը խիստ հարուստ է եղել վանքերով. երկրի տասներեքերորդ դարու պատմագիր Ստեփանոս Օրբէլեանը, ինքը նոյն վանքի մետրապօլիտ և Տարսայիճ հզօր իշխանի որդի, երեսուն վանքերի մի ցուցակ է տալիս, աւելցնելով. «բայց այլ եւս բազում կային զոր ոչ թուեցաք»։ Նորագոյն, համեմատաբար աւելի լրիւ է Ալիշանի նկարագրութիւնը Սիսական գրքում, միանգամայն հաստատում է այդ վկայութիւնը, ի մի հաւաքելով մինչև 30 վանքերի ցուցակ։ Միայն թէ այդքան վանքեր միաժամանակ չէին եւ բարգաւաճ վիճակում չեն գտնուել, որ չափազանց շատ կը լինէր այդ փոքր և անտեսապէս ոչ հարուստ լեռնային և անտառածածկ մի երկրի համար։ «Թագումք ամայի և թափուր են և սակաւք ի լուսաւորութեան այժմս (պատմագրի օրով)։

Այդ բոլորի գլխաւորն ու կենտրոնականն էր Տաթեւի վանքը, «գլուխ ամենեցունց վանօրէից եւ աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական»։ Սրա հիմնարկութեան մասին պատմագրի հաղորդածը, կարծում ենք, միանգամայն իրական է եւ ուշագրաւ այն չափով, որ զերծ է աւանդական յերիւրանքներից, ինչ որ յատուկ է հայկական հին նշանաւոր վանքերին։ Տաթեւի մասին առասպելներ կազմուել են աւելի ուշ ժամանակներում և ոչ այնքան ուշադրութեան արժանի մեր պատմագրի կողմից։

Ահա նրա պատմածը (Տեմ. Գլ. ԼԹ. էջ 201 և շար., Թիֆլիսի հրատարակութիւն, 1910)։ Հնագոյն ժամանակներում եպիսկոպոսներն ապրում էին ժողովրդի մէջ, «ի քաղաքս և ի գեաւղս». չէ՞ որ հովիւը միշտ իր հօտի մէջ պիտի լինի և անմիջական հովուութեան ներքոյ պահի նրան։ Յետոյ է սովորութիւն գտանում «բնակիլ ի վանս»։ Այդպէս էին եւ Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսները. «շրջէին ի մէջ գաւառաց և ի տունս իշխանաց». իսկ աւելի ուշ «զգրեաթէ վերջին ազգամամբ սաստկացեալ եկին եւ բնակեցան սուրբն ի գեղեցկավայր տեղւոջ, որ էր բարձր գետանց հայի ընդ արեւելս ի բազում գաւառս, հանդէպ լերանցն Դիզափայտու... յոյժ առողջաւուն, և վայրն հարթայատակ եւ շրջապատեալ բարձր եւ սուր լերամբք իբր կարաքնակերտ կիտարուլոր»։

«Առաջնոյ վանիցն ձորք և խոխոմք խորագոյն, յոյժ ընդարձակագոյն և գեղեցիկ, ընդ որ անցանէ ահագին գգլմամբ գետն Որոտան, եւ ձորն այն լի այգեստանօք եւ գրախտացեալ ձանազան բուրաստանօք»։

Եթէ Սիւնեաց աշխարհը իր լեռների, գետերի, հովիտների ու անտառների բազմաձև կերպարանաւորութիւնների մէջ բնութեան սիրահար այցելուների համար արտասովոր շատ գեղեցիկ անկիւններ է պարունակում, որոնցմով կարելի է զմայլել եւ հոգեկան բարձր ապրումներ ունենալ, այդ բոլորի մէջ Տաթեւի վանքի դիրքը գերազանց է։

Տաթեւ գիւղն իր մարգահովիտներով ու պտղատուներով ընկած է մի փոքր լեռնադաշտի վրայ, որ երեք կողմից կիսաբոլորակ շրջափակուած է կոպիտ բարձր լեռան ճիւղաւորուած շառաւիղներով․ Լեռնադաշտը թեք մակերեւոյթով իջնում է հիւսիսից հարաւ-արեւելք, վերջաւորվում է մի ահռելի վիհով․ Վիհի կողերը կազմում են պարսպանման սեպացած ժայռեր, որոնց միջից փրփրադէզ ներքեւ է գլորւում Տաթեւի գետակը, բաւական մեծ, մօտ 200 մետր բարձրութիւնից․ Վիհը հեռւում աստիճանաբար աւելի է խորանում, մինչեւ



(Նկար 1)
Տաթեւի վանքը, ընդհանուր տեսարան մինչեւ 1888 թ.

Որոտան գետի հովիտը, հասնելով մինչեւ 400 մետր խորութեան․ Իսկ այդ անդունդից հոսում է Որոտան․ հեռուից անտեսանելի եւ ներկայութիւնն իմացւում է այն աղմուկի որոտից որ շարունակ արձագանգում է խոր անդունդում․

Որոտան գետը սկիզբն է առնում Սիւնիքի հիւսիսային բարձունքներից, արագութեամբ յորդանում է, իր մէջ առնելով ջրառատ աղբիւրներ, որոնց մէջ նշանաւոր է Շաքիի հսկայ աղբիւրը, իր մեծ ծաղկեփունջի նմանութեամբ ջրվէժով․ Երկրորդ տարրն է, Հայաստանի Հանրապետութեան կարգադրութեամբ, բազմաթիւ աշխատողներ գրաղուած են այդ հսկայ աղբիւրի անյիշատակ դարերից յումպէտս վատնւող հսկայական ջրի ույժը գործադրելու եւ նրա էլէկտրական էներգիայով Սիւնեցիների բընակարանները լուսաւորելու ու զանազան ձեռնարկների օգտակար գործելու․ Այդ ձեռնարկը ամենեւին չի նսեմացնելու Որոտան գետի վիթխարի ջրերի քանակը, որ իր հերթին անշուշտ շատով կայանքների տակ է առնելու և օգտակարագոյն գործերի համար անհատնում էներգիա է մատակարարելու․ Իսկ այժմ նա անտառածածկ բարձրաբերձ ժայռերի մէջ սեղմուած, իր զառուվարերով առաջ է սլանում, ժամ առաջ միանալու իր մայր Արաքս գետի հետ, որի ձախ կողմի ճիւղերից մէկն է կազմում․

Ուղիղ Տաթեւի հանդիպակաց խորշում կարծես թէ բնութիւնը փորձել է նրա արընթացութեան առաջն առնելու․ Գետի աջ ափից հանքային մեծ աղբիւրներ են բըղխում, կրային նիւթերի առատ խառնուածքով, որ դարերով ամրանալով, ժայռեր են կազմել, ընդարձակ լայնութեամբ գետի երկու ափերը միախառնել իբրեւ հրաշալի մի կամուրջ՝ Սատանի կամուրջ կոչւածով

և գետի մեծաքանակ ջրերը երկար խողովակի մեջ անցնելու։ Նեղ անցքից դուրս ժայթքող ջրերի աղաղակը սոսկալի է, որոնց ցնցուղները միացած աղբերաջրի ցնցուղներին, արև ժամանակ գեղատեսիլին ներկայացնում են մի հրաշալի ծիածան։

Ահա այդ ժայռերի և վիհի գլխի հարթության վերջի պռունգի վրան է շինված Տաթևի հինավուրց վանքը։ Բարձունքի վերայ թառած, նա իր առաջն ունի մութ անտառներով ծածկված լեռներ և անդնդախոր հովիտներ. իսկ ուղիղ առաջը, հեռու հորիզոնի վրայ երևում են Ղարաբաղի–Արցախի սարերը, մինչև Տիգրափայալի բարձունքները։

Ժայռագագաթի ծայրին է շինված վանական առաջնորդական ընդունելության պաշտոնական մեծ սենյակը, որի մեջ, վիհի գլխին կախված մի պատշգամբով։ Անցանկալի են այդ պատշգամբի առաջ տարածված տեսարանները, միայն թե անսովոր և գլխապտույտ ունեցող անձինք վայելել այդ տեսարանները չեն կարող։

Նախ քան վանքի ավերը, լուսանկար Երմակովը նկարել է մեր այստեղ տված պատկերը, որ բնական յաջող կերպով վերարտադրում է վանքի ընդհանուր տեսարանը իր գլխավոր շենքերով, պարիսպներով և մեր յիշած պատշգամբով (Նկար 1)։

Շինությանց տեղն ընտրել էին՝ թէ՛ բնության անման գեղեցկություններն ի նկատի ունենալով — հայկական վանքերի մեծագույն մասի առանձնահատկությունն է այդ — և թէ նույն տեղը գիտությամբ պարսպապատելու և անմերձենալի ամրոց դարձնելու։

Եկեղեցական և կենցաղային բոլոր շենքերն այդ ամուր պարիսպների մեջ են կառուցված. դուրս են միայն մի քանի մատուռներ, հասարակ միաբանների գերեզմանատունը, վանքի կալն ու ժամանակավոր հարթանոցը, ջրաղացը և ձիթահանքը։

Բերդի մեջ առնված ամբողջ տարածությունը հյուսիս–հարավ ձգված մի ոչ այնքան բարձր միջնորմով երկուսի է բաժանված, որ սկսելով գլխավոր դարբասից վանքի երեք եկեղեցիների՝ Աստուածածնի, Առաքելոցի և Լուսաւորչի արևելյան ճակատների հանդէպ, գալիս միանում է առաջնորդական տան արևելյան պատին. արևմտյան կիսումն են թէ՛ եկեղեցիները և թէ վանական գլխավոր շինությունները, իսկ արևմտյան մասում կիսում կայ միայն մի երկար շարք խցերի, միաբաններին թէ ուխտավորներին յատկացրած, առաջը մեծ բաց տարածություն, որ վերջի վանահայրերը իբրև պարտէզի տեղ էին օգտագործում, քանի որ վանքն այլևս չունէր երբեմնի հարյուրներով հաշվող միաբանություն։

Վանքի տեղի ընտրության մասին Օրբելյանի հաղորդածն է։ Ըստ վաղուց այդտեղում, բարձր ցցված մի քարի վրայ, հնագույն ժամանակներից գոյություն ունէր մի եկեղեցի «Յարքին անուամբ վիմին կոչեցեալ ձուլեալ» և նրա մոտ ճգնողական կենցաղով ապրում էին «անձինք կրօնաւորք»։ Դա մի տեսակ կենտրոնական վայր էր բուն Սիւնիքի և Բաղաց աշխարհի, այժմ Ղափան կոչված, բայց ունէր նաև ժամանակների յարմար խոշոր առավելություն, «եւ տեղին ամուր յամենայն ձիոց ապստամբաւորաց եւ բանակաց»։

Սիւնեաց եպիսկոպոսներն այդ շատ յարմար և մենաստանաց շատ պատշաճ տեղումն են հաստատում իրենց հոգևոր իշխանության կենտրոնատեղին. «Բայց զՏորքն և զառաջին եպիսկոպոսն որ առա եկն ոչ ձանձրանայ»։ Դավիթ անունով մի եպիսկոպոս էր, որ ձեռնարկում է ընդարձակել արդէն յոյժ նեղ և անձուկ դարձած վանական շինուածքների սահմանները. 839-ին Սիւնեաց Փիլիպպէ իշխանից տաս հազար դրամով գնում է Արծիւ կոչված տեղը — հաւանական վանքի շրջապատի պաշտպանավայրը —, իսկ փոքր յետոյ նոյն իշխանից նուէր է ընդունում Տաթև ամբողջ գիւղը և դրանով հիմք դնում ապագայում հռչակ առած վանքին, նրա իսկական հիմնադիրը հանդիսանալով։

Հաւանական Փիլիպպէ իշխանն անձամբ շահագրգռուած էր զօրեղացնելու իր իշխանության մէջ հաստատուած հոգևորականությունը. որովհետև նոյն տեղում, բացի իր մեծ նուէրից, հին եկեղեցուն կից շինում է երկրորդ եկեղեցի, յանուն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և ուրիշ իշխանների հետ յարգարում է նուէրներով հարստացնել այդ վանքը (տես Պատմ. Օրբելեանի, Գլ. ԼԹ. էջ 202–211)։

Պատմագիրը մանրամասն հաղորդում

է, օգտւելով եկեղեցու անկորուստ պահ- ւած արխիւներից, շինութիւնների վրայ եղած արձանագրութիւններից և հաւաստի անձանց վկայութիւններից. «յարձանագրու- թեանց եկեղեցեաց եւ ի ննջողն նամակաց, որ կայր պահեալ յամուրս ձեռաց առաջնոր- դաց նահանգատանն Տաթեւոյ, եւ ինչ եւ որ յաւանդութեանց առուցեալ արանց». յաճախ համապատասխան վկայագրերը ամ- բողջութեամբ ընդօրինակելով։

Հայկական բոլոր վանքերից միայն Տա- թեւի մասին է, որ մենք ունենք այնքան հարուստ տեղեկութիւններ, համեմատա- բար հին ժամանակներից, ոչ միայն նրա շինութիւնների ճիշտ ժամանակների մասին, այլ թէ ինչպէս այդ վանքը կալուածքների գնումներով, բայց գլխաւորապէս նուէրներ ընդունելով, հարստանում եւ ուռճանում է, ինչպէս նա իր այդ հարստանալու ըն- թացքում մրցութեան մէջ է մտնում մեր- ձակայ տեղական բռնակալների հետ. այդպէս օրինակ Տամալէկոյ եւ Ծուրաբերդի ամիրա- ւանոց բռնակալների հետ և իր հզօրութեամբ նրանց հողերը խլում ու գիւղերը հիմնա- յատակ է կործանում. Այստ պատմում է, թէ ինչպէս վանքը յարձակումների ենթար- կւելով, կամ երբ օտարազգի իշխողներ տիրում են երկրին, երկիրը կողոպտում և ամայի դարձնում. նոյն վիճակին է են- թարկւում, ժամանակաւոր անմարդաբնակ դառնալով, զրկւելով բոլոր ստացուածքնե- րից. բայց վերստին վերականգնում. Սա- կայն մենք մի կողմ թողնելով այդ բոլո- րինքեան խիստ հետաքրքիր մանրամասնու- թիւնները, գլխաւորապէս կանգ կ'առնենք վանական զանազան շէնքերի շինարարու- թեանց վրայ։

1.— Կաթուղիկէ կամ Առաքելոց եկե- ղեցին նուիրուած էր Պետրոս-Պօղոս երկու առաքեալներին, շինուած այն տեղում, հա- ւանական նաեւ այն անունով, որտեղ ա- ւանդական հնագոյն եկեղեցին էր կանգնած։ Այդ հին կողքին կար Լուսաւորչի անուան եկեղեցի Փիլիպպէ իշխանի շինածը, բայց հարստացած և իշխանութեամբ հզօրացած մետրապոլիտները այլեւս չէին բաւարար- ւում հին եւ մանաւանդ շատ փոքր եկե- ղեցիների շէնքերով. մանաւանդ որ Հա- յաստանի զանազան կողմերում, Աթէներորդ դարից սկսած, հարտարապետական ար- ուեստը հսկայական քայլերով առաջ էր գնացել եւ ամէն տեղերում արդէն կային հոյակապ շինութիւններ։

Նոր փառաւոր եկեղեցի շինելու հա- մար էլ այդպիսի հիմունքներ է տալիս պատմագիրը։ Իններորդ դարու վերջերին մետրապոլիտութեան գլուխ էր կանգնած եր- կարատեւ իշխանութեամբ (38 տարի) Յով- հաննէսը, որի արժանիքների մասին աս- ւած է, թէ երբ մեռնում է սրա նախորդը՝ ամենեն ընտրութիւն նորոգ հայրապետի, եւ ամենայն ժողովոյն աղաղակ հարեալ, զՅովհաննէս Փակակաջն խնդրէին ինքեանց հայրապետ, հետեւապէս նախ քան ըն- տրութիւնը, մեծ ժողովրդականութիւն էր վա- յելում, որ օգտագործում է Տաթեւի վանքը նոր ի նորոյ վերաշինելու եւ այնպէս կազ- մակերպելու, որ նրանից յետոյ այդ վանքն է դառնում Սիւնեաց հոգեւորականների խափական կենտրոնը, իրեն վերապահելով բազմաթիւ վանքերի մէջ առաջին եւ գեր- իշխող տեղը։ Պատմագրի Յովհաննէսի անձի բնորոշումն է. «երանելին եւ բազմայիսուն, արքայակերպն Տէր Յովհաննէս, ցանկա- լին հրեշտակաց եւ մարդկանց» (Պր. Լե. էջ 162–3)։

«Տեսանէր եւանեղեալ այս զեկեղեցին ճեղ եւ խրթին եւ ննացեալ ի բազում ժամանա- կաց. նաեւ ի սարժման իւրել իսկ խարխալեալ, եւ զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայ- րաքաղաքի եւ առաջնորդանիստ ժողովարանի սուրբ նայրապետանոցին առանց մեծ կա- թողիկէ եկեղեցւոյ լինել… սակայն, ոչ իշ- խէր քակել զառաջին արքային հիմնարկեալ սահմանն. եւ մի՛ անձեռնհաս բուէր յանձնուն ծախս պիտոյիցն»։

Հին եկեղեցին քանդելու հրամանը նա ընդունում է Ներեսակից իր տեսած երա- զում, իսկ նիւթականի հոգսը թեթեւացնում են Սիւնեաց երկրի մեծ ու փոքր իշխան- ները եւ մանաւանդ զահերէց իշխանի մե- ծահասակ տիկին Շուշանը իր ամուսին Ա- շոտի հետ. «Բացեալ լինէին այնուհետեւ զանձարանք Տեառն եւ առատապէս ծախեալ ի գործոյս սինուածոյն»։

Եկեղեցու հիմքը դրւում են Հայոց ՅԽԴ = 895ին և երբ շինութիւնը բարձրա- նում է, հիմնարկութեան թուականը ար- ձանագրում են եկեղեցու վրայ այսպէս.

«Յամին յորում թուականն Հայոց ՅԽԴ (=895) էր եւ զատիկն ի Նաւասարդի ԻԴ. եւ Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեալ եպիսկոպոս Սիւնեաց զկնի տեառն Սողոմոնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս»։ *(Տե՛ս Օրբ. էջ 224)*։

*Այդ արձանագրութիւնը այժմ այլ եւս գոյութիւն չունի շինութեան վրայ և յայտնի էլ չի թէ ո՛ր տեղում էր յարմարեցրած, որովհետեւ «ի վերայ եկեղեցւոյն» բառական անորոշ գործած է, տեղի նկատմամբ։*

*Այնուհետեւ պատմագիրը նկարագրում է բուն շէնքն այնպէս, ինչպէս իր օրով, այն է ԺԳ. դարու վերջերում իր աչքին էր կանգնած, որովհետեւ յովհաննէսաշէն տաճարը, պատմագրի իսկ տեղեկութիւններով, երկրաշարժից մեծ հարուածներ ստանալով, բաւական հիմնական վերաշինութեան պիտի ենթարկուէր։*

«Եւ այսպէս կատարեալ զեկեղեցին... ի տաշածոյ վիմաց եւ ի ճերմակ ճարտարաց, զարմանալի իմն յարմարեալ ակնախտիղ տեսողաց, ի հարիւր կանգնոյ բարձրութեան նորա եւ ի քառասուն ութ կանգնոյ երկայնութեան նորա եւ ի քսան չորս կանգնոյ լայնութեան նորա, ունելով ներքին չորս խորանս, բաց յաւագ խորանէն. եւ... ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս, զորս եւ զմի զարմանս, որք նշանաւորեալ խորհրդով գեղեցկագործ եւ բարձրաբերձ պատկերաց պատրաստեալ ունին զանազան քանդակօք բանդերին երկնանմանն ճարտարապետ յարկին. Եւ այս ի խորանն երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, յորոց նշխարաց եդեալ ի ներքոյ սեղանոյն եւ բազմութիւն սրբոց նշխարաց անդ զետեղելոց առաքելոց, մարգարէից, մարտիրոսաց եդեալ ի հիմունս եւ յանկիւնս եկեղեցւոյն։

Անա զայս իսկ աւարտեալ զամս մետասանս»։ *(Անդ, էջ 224–25)*։

*Թէ պատմագիրը որտեղից է վերցրել իր տեղեկութիւնները և այն՝ թէ եկեղեցու շինութեան ժամանակը 11 տարի է տեւել, պէտք է ընդունել որ նա այդ կարդացել է աւարտման արձանագրութեան մէջ, որը առաջինի, այն է հիմնարկութեան արձանագրութեան հետ կորել է։ Շինութեան ներկայ չափերը, որ վերցնում ենք Եր. Լալայեանի նկարագրութիւնից (Տե՛ս Ազգագրական Հանդէս Թիֆլիս*, 1898, *Գիրք Գ. էջ* 133–34*), որոնք են. երկարութիւն* 27.9 *մետր, լայնութիւն* 16.68 *եւ բարձրութիւն — մօտաւորապէս —* 53.25 *մետր։ Ափսոս որ ձեռքի տակ չկայ իսկական յատակագիծը։*

*Եկեղեցին ունի բազիլիկային յատակագիծ, կենտրոնական գմբէթով, որ յենւած էր պատմագրի յիշած երկու գլխաւոր սիւների կամ պիլոնների եւ արեւմտեան պատին կցւած նոյնաձեւ բարձրացած կէս պիլոնների վրայ։ Պիլոնները վերեւ են բարձրանում կլոր կիսասիւներով եւ ուղղանկիւն կտրւածքներով և իրենց խոշոր բարձրութեամբ հաճելի և թեթեւ սլացող տպաւորութիւն են թողնում։ Արեւելեան պատի մէջ է սեղանի աբսիդը, որ դրսի կողմից դուրս ընկած մաս չունի, պատը միանգամայն հարթ հաւասար է։ Բացի գլխաւոր, աբսիդի մէջ գտնւած — սեղանից — կամ — խորանից — շինութեան չորս անկիւնների սենեակներում էլ կան պատարագի սեղաններ, իբրեւ հարկ այն ժամանակների որ գլխաւոր եկեղեցիներում հնարաւոր չափերով բազմացնում էին այդ սեղանները, անվերջ պատարագների պահանջին բաւարարութիւն տալու։ Պատմագիրը այդ սենեակներում յիշատակում է չորս սեղան, մինչդեռ դրանց թիւը ութ է, կրկնայարկ, քարէ կախւած սանդուղներով վերնայարկի համար, ուրեմն եկեղեցում կայ 9 սեղան։*

*Բոլոր որմերի և գմբէթի մէջ բարձր և նեղ լուսամուտներ կան, որով շինութեան ներսը բաւական հաւասարաչափ եղանակով լուսաւորւած էր։ Տանիքն ունի Հայոց եկեղեցիներին յատուկ կրկնաստիճան թեք կտուրներ, քարէ խոշոր սալերով ծածկւած, որ չարաչար նորոգութեան ենթակայ, հազիւ թէ հնութիւնից մնացածները լինին։*

*Գմբէթը ապահովապէս Յովհաննէս եպիսկոպոսի շինածը չէ, որովհետեւ ինչպէս կը տեսնենք, երկրաշարժից կործանւել եւ ԺԱ. դարում վերաշինւել էր, ուրեմն նրան պիտի համարել ԺԱ. դարու գործ։ Նա իրենից ներկայացնում է բաւական բարձր թըմբուկով մի կառուցւածք, միանգամայն կլոր կամ շրջանաձեւ, երկու գօտիաձեւ գործւածքային զարդով երեք հաւասար մասերի բաժանւած. ներքեւի մասում ութ լուսամուտներ, իսկ վերեւի շերտերի վրայ կային*

զարդաքարեր, միաձևությունը անտարբերելու։ Թմբուկի գլխի կատարը հատատար ծալծլած թերթի նմանություն ունի, միանգամայն նման նույն ժամանակներում շինված Աստվածածնի եկեղեցու կատարին կամ վեղարին, որ կարող է իբրև փաստ ծառայել, որ գմբեթը երկրորդ անգամ չի վերաշինվել։ Այդ երկու կատարների հետևողությամբ են շինել շատ ուրիշ ուշ կառուցված հին զանգակատան վեղարը։

Եկեղեցու պատերը դրսից և ներսից շինված են միատեսակ սրբատաշ քարերով, կապտավուն անող մոխրագույն ատաղձաքարերից, որից բաղկացած են այն վիթխարի մայրերը, որոնց վրա վանքն է կառուցված։ Պատերի շարքերը հորիզոնական գծերով միմյանց չեն յաջորդում, ինչպես ուրիշ ու նոր ժամանակների շենքերում, այլ յաճախ այդ հորիզոնական գծերը բեկբեկվում են բարձր ու ցածր սալերով, որով այդ սալերը միմյանց հետ կարծես շղթայվում են։ Քարերի մեջ կան այնպիսիները, որ խոնավության ազդեցությունից հալվել մաշվել են, որի հետևանքով եղծվել է օրինակ Տարսայիճ իշխանի ներքին սեան վրայի փորագրած արձանագրությունը։

Եկեղեցին չունի նիշեր. նրա կարնիզները պարզ դասավանդանման և կիսաշրջան փորվածքներով են, միայն լուսամուտների կարնիզներն են փոքր ինչ խնամքոտ որնամենտներով, քառակուսի կամ շրջանների փորվածքներով։ Պատերի վրա կան անշահ քանակով և ոչ կարևոր արձանագրություններ և խաչագրեր։ Ավելի հարավային այդ կողմից ինտանական թևերին հիմքից փորված Աղոթատան արևմտեան ճակատի պատը և հարավային պատին կից շինված Որահի պատերը։

Երկու դռներից գործածական է միայն արևմտյանը, պատի ուղիղ մեջտեղում, քարե զարդարուն շրջանակի մեջ առնված, իսկ հարավայինը, որ հաղորդակցության մեջ էր այդտեղ շինված որահի հետ, յետոյ փակել են, երբ նրա առջևում թաղել են Գրիգոր Տաթևացուն և ուրիշ ուշ այդ գերեզմանի վրայ մինիատուր տաճարաձև, սպիտակ քարերից, գամբարան շինել։ Յատակը ծածկված է խոշոր սալքարերով, իսկ ներսի բոլոր որմերը նկարազարդելու համար ծածկված էին կրաշաղախ ծեփով։

2.— Եկեղեցու վերանորոգութիւններ. Այդ մասին տեղեկանում ենք դարձեալ նույն պատմագրից։ Յովհաննէս — մեծ հայրապետի — յաջորդն է նշանակում Դվինի քաղաքից Յովհաննէս պատմագիր կաթողիկոսի եղբօրորդի Յակոբ եպիսկոպոսը, «այր լի ամենայն առաքինութեամբ»։ Սա եւս իր նախորդի պէս Տաթևի վանքում թողնում է յիշատակութեան արժանի գործեր. յատկապես յիշելի է Առաքելոցի նկարազարդումը և մանաւանդ 25–30 կիլոմետր հեռաւորութիւնից Ձագածորից, ներկայումս Գորիս քաղաքի գետակի ակունքներից, արհեստական առու շինել տալով, այդ ջուրը բերում հասցնում է վանքի դեմ յանդիման սարալանջը, Որոտն գետի ձախ ափը, Սատանայ կամրջից վերև, և այդ տարածութիւնը, որ մինչև այդ ինչպես և ներկայումս ծածկված էր մացառներով և քարերով և կոչվում էր Յախուս, մշակելի է դարձնում, անկում խաղողի այգիներ, պտղատու ծառեր, մինչև իսկ ձիթենիներ և հավանոց շինում, շուրջը ծաղկանոցներ, որ այնուհետև տեղի անունը փոխում են Վարդուաթ։ Պատմագրի նախորդ Յովհաննէս եպիսկոպոսը, որի մասին յետոյ ասելիքներ ունինք, 1293ին նորոգում է Յակոբ եպիսկոպոսի 932ի պատրաստած առուն, որ միանգամայն փչացել էր և առուի ակունքի մոտերքում, մի բարձր քարաժայռի վրայ արձանագրութեամբ յաւերժացնում է իր և ձեռնարկող Յակոբի անունը։

Իսկ Առաքելոցի որմերի նկարազարդութեան մասին այսպէս է պատմված. «Սա եւ ածել նկարիչս եւ զաւռայսս որ է պատկերագործ, ի հեռաւոր աշխարհէն Փռանգ ազգաց, եւ զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարին բազում եւ անհուն ծախիւք եւ նկարել զրովանդակն ի վերուստ մինչեւ ի վայր։ Եւ զփրկչական պատկերն յոյժ ահաւոր ձեւացեալ եւ նկարել, հանդիպակիցս աստուածագործ սեղանոյն ի վերոյ, զբոլոր երկինս աւագ կամարին, եւ ի ներքոյ նորին շուրջ զսեղանոյն, զմարգարէականն եւ զառաքելականն եւ զհայրապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար։ Նմանապէս եւ զբոլորն համակ զարդարեաց այնման զի տեսողաց տեսարանին շլանային ի նայելն, եւ երբեք ոչ բուսէր ի դեղոց եւ յերանգոց յո-

րինեալ, այլ նմանս կենդանիէ, յորոց զարհուրեալք խուսափէին ահաւորն։ Եւ արար զայս ի թուականին Հայոց ՅՀԹ = 930»։

*Այսպիսի վառ գույներով նկարազարդութեան նկարագրութիւնը իր խիստ համառօտութեան մէջ կատարեալ մի պատկեր է տալիս թէ՛ նկարների բովանդակութեան, թէ զարդերի հարստութեան և թէ գոյների ճոխութեան մասին։ Բայց նա մեզ հիմք է տալիս նաև ենթադրելու, որ Առաքելոցի երկրաշարժից եւ այլ պատճառներից կրած հարուածներն այնպէս չեն եղել որ ազարտէին նրա հիմնական պատերն ու Յակոբի նկարները, ասել է մինչև պատմագրի ժամանակը այդ եկեղեցին իր հիմնականում պահպանել էր մինչև իսկ ամենավերջի. Գանձակի կործանիչ շարժից յետոյ։*

*Սիւնեաց անտառաշատ երկիրը ենթակայ է երկարատև անձրևների և յարատև խոնավութեան։ Շինարարական հին միջոցները երբեք չեն կարողացել շինութիւնների մէջ նրա թափանցող խոնավութեան առաջն առնել, չնայած կառուցների թեքութեան, կրաշաղախ հաստ բետոնին և նրանց վրայ շարած բաւական հաստ սալերի։ Այդ ներս թափանցող խոնավութիւնն է ոչնչացրել Յակոբ եպիսկոպոսի նկարները և մինչև իսկ Տարսայիճ իշխանի քարերի վրայ փորագրած արձանագրութիւնը, նկարազարդութեան անշան հետքեր թողնելով արևելեան աբսիդի կիսաբոլորակում և մի փոքր ուրիշ արևմտեան պատերի վրայ, բայց ոչ այն չափով որ կարելի լինէր ենթադրել թէ պահուած գունաւոր շերտերը ինչ նկարներ էին պարունակում։*

*Խոնավութեան հասցրած վնասից աւելի զգալի են եղել երկրում յաճախ պատահող երկրաշարժերի հարուածները, որ կրկնուել են պարբերաբար։ Ցնցումներից ամենաաղետաբերը հանդիսացել է այսպէս կոչուած* Շարժն Գանձակայ, *որ տեղի է ունեցել 1138 (Օրբելեան) կամ 1139 թուին (Վարդան Պատմագիր, Կիրակոս Գանձակեցի)։*

*Տաթեւում յաճախ կրկնուող երկրաշարժի մասին յիշատակարանների տեղեկութիւններ կան նաև. Թովմայ Մեծոփեցու ձեռքով գրած Գրիգոր Տաթեւացու «Գիրք Արտաքնոցի» լուծմանց մէջ, որ նմանատպութեամբ տալիս է Ալիշան Սիսականի էջ 239. «Ի զարմանալի շարժմանս, զի շմի որ. աոքլս Տաթեւու, և զանհնականան և զաւաղանս՝ որ է նոյնժամս ԻԹ.»։ Այս ձեռագիրը գրուած է ՊԾԴ = 1405–6 թուին, ուրեմն նոյն տարւոյ երկրաշարժի մասին է խօսքը։*

«Եղեւ Շարժն Գանձակայ ի ՇՁԷ (= 1138) թուականին. եւ դողաց երկիր ի հիմանց. եւ զմբէթն մեծ եկեղեցւոյն ի Տաթեւ բոլորաբոլոր շրջանակաւն քակեաց եւ անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն եւ զաւրքն որ ի դրանն կայր եւ փլոյց առհասարակ» *(Գլ. ԿԴ. էջ 340)*։

*Բաւական երկար ժամանակ այդ հիմնական նորոգութիւնը ձգուած է անկատար. հաւանաբար բաւականանում են միայն բացուած անցքը ժամանակաւորապէս ծածկելով, մինչև առաջնորդ է ընտրւում* Ստեփաննոս *եպիսկոպոսը*, 1170–1216 *թ.*։

«Սա նորոգեաց զխախտեալ եկեղեցին ի Տաթեւ զսուրբ Առաքելոյն, եւ նա զնոյն զգմբէթն ի ձեռն *Յակոբայ ճահկեցւոյ*» *(Գլ. ԿԴ. էջ 242–243)*։

*Պէտք է ընդունել, որ յիշուած Յակոբ Ճահկեցին շինող վարպետն էր և որոշ չափով ականաւոր մէկը, որ յատկապէս յիշատակուած է։ Հաւանաբար կրկնակի տեղեկութիւնը պատմագիրը վերցրել է գոյութիւն ունեցող արձանագրութիւնից, որ բարեբախտաբար պահուած է մի խաչարձանի վրայ, որ մեր այցելած ժամանակ գտնւում էր վանքի խոհանոցի գաւթում։*

«Կանգնեցաւ սբ. խաչս /ՈԼԶ/ (= 1187) / թվ/մի / յորու/մ նորո/գեցաւ / սուրբ եկեղեցիս / յառա/ջնորդութե. տն. Ստեփանոսի»։

*Միայն թէ այս արձանագրութեան մէջ չկայ վերոյիշեալ շինող վարպետի անունը։*

*Քանի որ մեր նպատակը չէ մանրամասն կանգ առնել և նկարագրել թէ ինչեր են անցել Տաթեւի վանքի և այնտեղ գահակալող եպիսկոպոսների գլխով, ուստի բաւականանում ենք միայն շինութիւնների մասին տեղեկութիւններով։ Պատմագրի անմիջական նախորդներն էին միասին առաջնորդական պաշտօնի մէջ եղող Հայրապետ եւ նրա եղբօրորդի Յովհաննէս եպիսկոպոսները։ Սրանցից բաւական առաջ մահմետական թուրքերի հետ պատերազմներում Բաղաց և Սիւնեաց աշխարհի իշխանութիւններն անհաստատ և յաճախ պատերազմներում համարեա թէ ընկճուել էին.*

երկիրն աւերած, անմարդաբնակ էր դարձել, ամայացել էր նաև Տաթևի վանքը և նրա առաջնորդները տեղափոխուել էին Վայոց ձորի Նորավանքը, մինչև որ Օրբելեան տոհ-մի իշխաններ Սիւնիքում նորից վերահաս-տատում են նոր իշխանութիւն, պատմագրի հօրեղբայր Սմբատ իշխանի շնորհիւ, որին յաջորդում է նրա եղբայրը և պատմագրի հայր Տարսայիճ իշխանը, քաջ և շինարար մէկը։

Սրանց շնորհիւ եւ օժանդակութեամբ «Տաթեւացիքն շինեցին զվանքն որ ի բազում ամաց հետէ աւեր եւ ամայի մնացեալ էր»։



(Նկար 2)
Առաքելոց եկեղեցու արեւելեան-հարաւային պատը եւ նրան կից նոր զանգակատան մի մասը։

Երկար աւեր մնալու հետևանքով Առաքելոց եկեղեցու գլուխը «խախտեալ եւ ծակոտեալ էր». փոփոխներ էր կրել նաև մի մասերն (նկար 2)։

Հայրապետը հմուտ վարպետների ձեռքով «առաստաղն» տանիքն ու գմբեթի բարձրած մասերը։ Նույնպես նորոգում է դրան հանդէպի գուբթի կամ Աղօթատան տանիքը, մաքրում է աղիտաձայլ և վիմակարկտ գերբուկները և այդ մաքրման ժամանակ, թաղնւած մեծ հնութիւններ է գտնում, սակայն հիմնական վերանորոգութեան մասին խօսք չկայ. ուստի աւելի ուղիղ կը լինէր ընդունել, որ կարկատել է պատահական փլւածքները (տես Պատմ. էջ 433–434)։

Տէր Հայրապետն իր նորոգած եկեղեցու համար պատրաստել է տալիս ժամանակի ճաշակով ընկուզէ փայտից մի գեղեցկաքանդակ դուռ. վերևի մասում արձանագրութիւն փորել տալով։

Առաքելոցի փայտե դուռը հայկական փայտագործ արուեստի մի գեղեցիկ նմուշ է, որ շատ լաւ վիճակում և միանգամայն անփոփոխ պահւած էր մինչև վերջին երկրաշարժը։ Դուռը բաղկացած է երկու կասր ընկուզէ տախտակներից. նոյն նիւթի շրջանակի մէջ առնւած։

Շրջանակը կազմւած է երկու կասր նեղ տախտակներից միմեանց կցցրած. արտաքինի մեծութիւնն է 2.24 մետր երկար և 0.7 մետր լայն, իսկ միւս ներսի կասրի երկարութիւնն է 1.16 մետր, լայնքը 0.21 մետր. իսկ բուն դրան չափերն են 1.98 մետր երկարութիւն, 1.02 մետր լայնք։ Դրան վրայի եռատող գեղեցիկ երկաթագրով փորագրած արձանագրութիւնն է.

«Է ՉԲ (= 1253) Ես տր. Հայրապետս ծառա բարձրելոյն կանգնեցի զդասերս նորոգեցի / զդուռս զիս յաղաւթս յիշեցէք աղաչեմ»։

Դրան վրայի օրնամենտները ներկայացնում են դրսից ուղղանկյունաձև. շրջանակի նմանութեամբ, ապա կողքերին երկու բաւական լայն շերտեր, 1.53 երկար և 0.20 մետր լայն, ալ կազմում քառակուսիների հիւսւածքներ, ձախինը պարանաձև հիւսւածքներ։ Կենտրոնական վերևում մի մեծ խաչ է փորագրւած, որի ուղիղ նմանութեամբ մենք գտնում ենք Աղօթատան արևմտեան պատի արտաքին երեսին թւով վեց հատ, սալերի վրայ փորւած, իսկ խաչի իրբև պատուանդան ծառայում է համակենտրոն զարդարանքներով մի մեծ շրջան։

Վերջին շարժից դուռը իր տեղից պոկւել ընկել էր և Երևանի Պետական Թանգարանի արշաւախումբը հանել էր փլատակների տակից բաւական աղբալի վիճակում։ Անփոփոխ են մնացել շրջանակը, որի երեսն ու կողքերը նույնպես հարուստ քանդակներով են զարդարւած։ Դրան երկու տախտակների ներքևի շրջանի մասը, իսկ խաչն ու արձանագրութեան կենտրոնական մասը կոտրւած էին և բեկորները անհամակցողների ձեռքով հրդեհւած։ Այդ վիճակում Արշաւախումբը Ստ. Լիսիցեանի գլխավորութեամբ բերել է Երևանի Պետական Թանգարան, հեռն էլ բարեբախտաբար միանգամայն անփոփոխ մնացած Լուսաւորչի նույնպես փորագրւած ընկուզէ դուռը։ Այս դռների ոճով ու նմանութեամբ է շինւած Վարագայ վանքի Ս. Աստուածածին եկեղեցու դուռը. բաղկացած 2 տախտակներից, մի մի խաչի և շրջանների ու լայն շրջանակի հիւսւածքային փորւածքով (Տե՛ս Bachmann, Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan, Spz. 1913. Tafel 30)։

Հայրապետի արձանագրութիւնից պարզւում է, որ խանգարւած և քանդւած էին եկեղեցու ներսի դասերը, դռները անպաշտպան և շինութիւնը բաց ու անխնամ, իսկ բուն շինութիւնը անփոփոխ և կանգուն էր։ Մենք յետոյ կը տեսնենք, որ իր եղբօրորդու արձանագրութեան մէջ վերջինին իրեն «շինող եկեղեցեաց» է արձանագրում. այդ մասին յետոյ։

Այս երկուսի յաջորդն էր Պատմագիր Ստեփանոս Օրբելեանը, որ հաստատում է վանքը գիւղեր և կալւածքներ նւէրներ ընդունելով իր ազգականներից և իշխանը տալով. շինում է Լուսաւորիչը, իսկ Առաքելոցի մասին ոչինչ չի գրում։ Նոյնպէս հիմնական նորոգութիւնների մասին խօսք չկայ նաև նրա յաջորդների ժամանակներում։

Երեք Յովհաննէս եպիսկոպոսներ են յիշատակւում սկսած Առաքելոցի շինողից մինչև Հայրապետի եղբօրորդին. դրանց վերջին երկուսից, կամ գուցէ նաև առաջինից, ինչպէս Ալիշանն է ընդունում, պահւած կան մի շարք արձանագրութիւններ։ Թւականով արձանագրածները մէկին կամ միւսին վերագրելը շատ դժւարին է. խնդիրը բարդանում է անթուական արձանագրու–

*թեանց դէպքում եւ այդ խնդրին մենք կը դառնանք, բայց գործը աւելի դիւրին կը լինի եթէ նախապէս ծանօթ լինենք եկեղե-ցաշէնի միւս գործերին.*

*Այդ շէնքերը պատմագրի խօսքերով սրանք են.* — «Կանգնեաց եւ մերձ եկեղեցւոյն յանկիւն դրանն հարաւոյ սիւն մի զարմա-նալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ, եւ ապա զխաչն կոփածոյ քարամբք, պարա-պէ զմիջոցն որձաքարով, եւ զի էր նիստ տեղւոյ անյարմար, հարթէ զդժուարութիւն զետնոյն, եւ զխորութեան վայրան բարձրա-ցուցանէ կրասաղախ որմովք, օծէն եւ զաղ-տնագս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երդիւս, բազում *ոսկիս եւ շարանս* ի սպաս եկեղեցւոյն, եւ հարթեալ ճանապարհս ըզ-վայրն, օծէն եւ արքունի *տաղիսս* եւ զար-*դարանս*, *համբարանոցս* եւ *արքայանոցս*. եւ ի դրան եկեղեցւոյն *տուն* աղօթից եւ տեղի դամբանի իշխանաց եւ եպիսկոպոսաց Սիւն-եաց» *(տե՛ս էջ 225).*

*ցւոյն, պիտի հասկանալ արեւմտեան դրան, որովհետեւ հարաւայինի հանդէպ 1043ին մի ուրիշ Յովհաննէս եպիսկոպոս եկեղեցու որան էր շինել. Այդ տուն աղօթից եւ տեղի դամբանի կարելի է հասկանալ իբրեւ երկու առանձին շինութիւններ, բայց դա յետոյ աւելի գործածական դարձած ժամա-տուն կոչւածն է որ խօսպէս, ինչպէս կը տեսնենք, ծառայում էր յիշւած կրկնակի նպատակներին և ուրեմն այս դէպքում էլ մի շէնքի մասին է խօսքը, որ գոյութիւն ունէր մինչև իննական թուականը և ապա էջմիածնի հոգևոր իշխանութեան թոյլ-*



*(Նկար 3)*

Տաթեւի վանքի հին աղօթատան արեւմտեան պատը.

*3. — Տուն աղօթից եւ տեղի դամբանի յատկացրած էր Սիւնեաց իշխաններին եւ եպիսկոպոսներին. շինում է ի դրան եկեղե-*

*տւութեամբ ժամանակի վանահայր Անա-նիան քահանայ, հին զանգակատան հետ ի միասին, տեղը նոր զանգակատուն շինելու.*

*Վանքի արձանագրութիւնները ժողովե-լիս մի ուսանողարոց մեծ գահլիճում ժողո-ված տեսանք 15 գեղեցիկ խաչքարեր, ո-րոնց վրայ գտել և արտագրել էինք մի քանի արձանագրութիւններ, առանց ի վի-ճակի լինելու որոշելու թէ սկզբնապէս ո՛ր տեղերում են գտնւել այդ խաչքարերը. Այդ խաչքարերից երկուսի լուսանկարը կայ տպւած Ալիշանի Սիսականում, որոնցից մէկը կրկնւած Սարժիզովսկու գրքում, որ*

երկուսին էլ մոլորման մէջ է գցել ժամանակի որոշման հարցում։ Մենք նկատեցինք այդ մոլորութիւնը համեմատելով Ալիշանի և ապա նաև Ս. Փափազեանի յիշեցեալ Ալբոմի մէջ նկարած երկու խաչքարերը. մէկը Հայրապետ եպիսկոպոսինը՝ թուականով, միւսը Յովհաննէս եպիսկոպոսինը առանց թուականի և եզրակացրել էինք, անի համանմանութեամբ, թէ երկուսն էլ նոյն ժամանակուայ գործեր են և ոչ Յովհաննէս եկեղեցաշէնինը, հակառակ Ալիշանի և նրա օրինակին հետևող Սարգիս Ջալալեանին։

Գոհ էինք, երբ Երուանդի Պետոյեան

Նոյն Երմակովի մի այլ նկարում, որ ներկայացնում է վանքի ընդհանուր տեսքը (Նկար 1), կարելի է տեսնել Առաքելոցի արևմտեան կողմից Աղօթատան թեք կտուրը, իսկ հարաւային պատին կից, նոյն անդի արահից դէպի արևմուտք հին զանգակատունը, որ քանդել են աղօթատան հետ։ Կտուրի թեքութիւնից և արևմըտեան պատի ձևից, որի մէջ կայ մի զոյգ լուսամուտ, դժւար է աղօթատան յատակագծի և ընդհանուր ձևի մասին մի պատկեր կազմել. իսկ պատմագիրն էլ բաւականացել է միայն յիշատակելով. «Շինեաց ի դրան



(Նկար 4)
Վահանայ վանքի աղօթարանի կամարը։

Թանգարանում մի ալբոմի մէջ գտանք Երմակովի մի շատ գեղեցիկ լուսանկար, որ ներկայացնում է հին Աղօթատան արևմտեան ճակատը (Նկար 3) նախ քան նրա քանդումը և այդ ճակատին տասն հատ արձանագրութիւն, վեց խաչքարերով, որոնց թւում յիշուած երկու խաչքարերը։ Ինձ համար պարզւեց, որ Աղօթատունը քանդելիս խաչքարերը հանել և վանքի յիշեալ ուխտաւորաց պահում տեղաւորել են անկանոն ձևով։ Այդ լուսանկարի միջոցով մենք կարող ենք բացի ոճական հիմունքներից, նաև այլ կերպ համարեա անհերքելի ցոյց տալ անթուական արձանագրութեան ժամանակները։

եկեղեցւոյն տուն աղօթից եւ տեղի դամբանի իշխանաց եւ եպիսկոպոսաց Սիւնեաց»։

Օրբելեանն այդ շինութիւնը վերագրել է եկեղեցաշէն Յովհաննէսին, անշուշտ հիմնըւելով այն արձանագրութեան վրայ, որ կարդացել է աղօթատան արևմտեան ճակատին, զոյգ լուսամուտներից ցած։ Այդ արձանագրութեան քանդելուց առաջ արտագրել էր Ջալալեանը (Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հտ. Բ. էջ 303. տես նաև Սիսական էջ 231 և 235) և մենք գտանք նոյնը Երմակովի նկարում։ Յիշեալ կրկնակ լուսամուտների ուղիղ տակն է արձանագրութիւնը փորագրուած, սովորական

երկաթագիր տառերով, որոնց ձեւերն ակներեւակի տարբերւում են նոյն պատի խաչքարերի արձանագրութեան տառերից եւ կրում են հնութեան կնիք։ Արձանագրութիւնը գրուած է մի տողով։ Ութ տառերի վրայ, բայց ոչ ուղիղ գծով, որովհետեւ, ինչպէս արդէն յիշեցինք, պատաշարքը հաւասար հորիզոնական շարքերով չեն, մի մասում գիծը բեկւում է եւ տառերը վերեւ են փոխադրուած։

«Զտէր յովանէս զսիւնեաց եպիսկոպոս շինող սրբո եկեղեցոյս յիշեցէք + + + +»։ Թուական չկայ, բայց հիմք չկայ կասկածելու, որ իսկապէս առաջին Յովհաննէսինն է, որովհետեւ հետեւեալ երկրորդ Յովհաննէսը շինել է Սրահ, աւելացրել է պատարագելու նոր սեղաններ, բայց չէ յիշատակուած թէ նաեւ եկեղեցին է շինել. իսկ վերջինից կան մի քանի արձանագրութիւններ աւելի նոր եւ աչքի ընկնող նոր գրերով փորագրուած։

Հին աղօթատան պատը զարդերի ընդգրկում զարդարուել է արձանագրութիւններով, թուով տաս հատ, զարդաքարերով եւ բազմաթիւ խաչերով, որոնցից վեց հատը մեծ եւ գեղեցիկ փորագրութիւններով, չորսը արձանագրութիւններով, երկուսն առանց. իսկ փոքր խաչերի թիւը շատ շատ է, որոնց մէջ երկուսը ակլիքեֆ։

Արձանագրութիւններէն երկուսը գըրուած են «կատարեցաւ — եւ — քարեփանոս — մաշտաւոր» — հաւանական է ընդունել, որ դրանք շինութեան ժամանակից են, ի նըկատի ունենալով մանաւանդ գրութեան ձեւերը, իսկ միւսներից մեզ համար կարեւոր են Հայրապետի եւ Յովհաննէսի անուններով արձանագրութիւնները։

Լուսամուտից դէպի ձախ բաւական մեծ եւ գեղեցիկ փորագրած մի խաչքարի վրայ, խաչի ներքեւի չորսում երկտողով կարդում ենք։

«Զտէր յովանէս յիշեցէք ի Քրիստոս Թ. ՉԻ» (= 1271)։

Այժմ այդ արձանագրութիւնը գտնւում է 15 խաչքարերի մէջ, այնտեղում էլ մենք արտագրել էինք։

Նոյն թուականով նոյն պատի մէջ կայ Հայրապետի արձանագրութեան խաչքարը, որ գտնւում է լուսամուտի ամենաբարձր մասում. դրանից ցած մի երկրորդ խաչ, իսկ արա տակը, երկանց լուսամուտի գլխին կայ հիւսուածքի օրնամենտով մի քար։ Արձանագրութեան խաչքարը իրենից ներկայացնում է մի բաւական մեծ սալ. հարթ մակերեւոյթը երեքի բաժանած, կենտրոնական մասում տերեւազարդ օրնամենտ, աջ ու ձախ կողմերին մի մի խաչ, որոնցից ձախ կողմինը իր փորագրութեան ձեւով միանգամայն նման է Յովհաննէս եպիսկոպոսի փոքր չափս յիշեցինք խաչքարի խաչին, եւ երբ միմեանց մօտ դնելով դիտում ենք, կարելի է հեշտութեամբ համոզուել, որ նոյն ժամանակւայ, հաւանական նաեւ նոյն վարպետի աշխատանքն են ներկայացնում։ Խաչերի թեւերը կազմում են ներսում երկուական ոլորուած զոյգ պարաններ, որ չորս ծայրերում վերջաւորւում են տերեւազարդերով. իսկ դրսից միայնակ պարան է շրջափակում, որ ծայրերում վերջաւորւում է ոլորապտոյտ հանգոյցներով։ Խաչի կենտրոնում, երկշարք կլոր գնդակիկներ։ Փոքր խաչի մէջ միայն մի չորք, երկուսը գմբաւր կը տեղաւորէր։ Մեծ խաչի թեւերի բաց արանքները զարդարուած են խաղողի ոստերով, մի մի ողկոյզ վրան, իսկ Հայրապետի փոքր խաչի բաց տեղերում մի մի տերեւ եւ թուականն են փորագրուած։

Այդ երկու խաչերի արձանագրութիւններն են.

«Զտէր Հայրապետ սիւնեաց եպիսկ. յիշ» ի վերեւի անկիւններում. Թ. ՉԻ (= 1271)։

Միւս խաչը որ սկզբնաբար գտնւում էր աղօթատան լուսամուտի աջ կողմում. ունի արձանագրութիւն.

«Զտէր Յովանէս շինող սրբո եկեղեցւոյս»։ Միայն առանց թուականի։

«Եկեղեցւոյ շինող» խօսքեր բառերն են մոլորեցրել Հ. Ալիշանին եւ միանգամայն անհասկանալի կերպով, նաեւ մանաւանդ Բարխուդարեանին, որ անուշադիր է թողել ճական անյարիր հանգամանքը եւ ընդունել, որ երկրորդ անթուական խաչքարը պատկանել է եկեղեցաշէն առաջին Յովհաննէսին։ Երեւում է, որ Բարխուդարեանին մի փոքր կասկած է ունեցել, որովհետեւ մինչդեռ Ալիշանն անվերապահ գրում է. «Ընթերցիր (յէջ 231 Սիսականի) զարձանագիր խաչաքանդակացս Յոհանու եպիսկոպոսի յիշ Թ. դարու եւ ջանացիր ընդ ձեւ տառիցն» (էջ 561), Բարխուդարեանին գրում

է «ենթադրաբար իններորդ դարու» angeblich aus dem 9 Jahrhundert, թէև մեր չորս հարիւր տարիների անցքերը սճական տարբերութիւնների մէջ անուշադիր չպիտի թողնուէր»։

Աղօթատան պատի վրայ կայ թեւականով մի ուրիշ արձանագրութիւն ես, շինողի արձանագրութեան ներքեւ, հինգ տողերի վրայ, նաւզ գրութեամբ, մասամբ մաշուած եւ լուսանկարի մէջ աղօտ, երկար ալիստանքով եւ լաւ խոշորացույցով կարելի է կարդալ. մենք յաջողեցինք կարդալ միայն «Հայրապետ» ու «թվ ՉԺ» բառերը։

Առանց արձանագրութեան ամբողջութիւնը կարդալու, դժուար է ասել թէ արձանագրութեան «Հայրապետ» բառը հասարակ թէ յատուկ անուն պիտի ընդունել։ Ուրիշ արձանագրութեան մէջ մի քանի անգամ են հանդիպում Հայրապետի եւ Յովհաննէսի անունները, երկու անգամ միացած։

Թանգի կոչուած ընդունարան գաւիթի ձախակողմեան պատի մէջ ամրացրած է մի հին գեղեցիկ խաչքար, այսպիսի յիշատակարանով.

«Տէր Հայրապետ Միանեաց եպիսկոպոս յիշեա. թվ. ՉԺԲ (= 1263)»։

Երկուսի անուններով արձանագրութիւններն են. մէկը որահի երկրորդ սեան վրայ, բաղկացած 11 տողից. երկու առաջ եւ վերջին անընթեռնելի.

«Յանուն այ. ես Վարդան կրօնաւոր եղի/եցի զ/որան . . . զչափաւաց ի որ. առաքելոցս եւ/ունն իմն որ. Հայր. եւ որ. Յ— Վաննես ս/ռնին»։

Նոյն որահի չորրորդ սեան վրայ կայ միւս արձանագրութեան համանման բովանդակութեամբ. 14 տողանի.

«Թ. ՉԼ (= 1281) յանուն այ. ես յովանէս հանանս իմ հալալ արդեանց զնեցի զկոժմակոքն սվի սուրբ առաքելոցս առաջնորդ սուրբ ուխտիս տէր Հայրապետ տէր Յոհանէս եսուն Գ ատր ժամ . .»։

Ալիշանն ունի մի արձանագրութիւն արտագրուած Յովհաննէսի շիրմի քարից.

«Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս շինող եկեղեցւոյս, թուին ՉԽ = 1291»։

Ուրեմն արձանագրութեան մէջ երկու անգամ է Յովհաննէսի անուան կցուել «շինող եկեղեցւոյս» խօսքը անտանը եւ անշուշտ այդ է մոլորեցրել Ալիշանին, իսկ ուղիղ կը լինէր «նորոգող» ասել։ Ճիշտ արձանագրութիւնը մենք Տաթեւում տեսնել չէինք կարող, եղած շինութիւնների քանդուածների հետեւանքով։ Ալիշանը գրում է. «Առաջի մեծի արեւմտեան դրան կաթուղիկէին կայ գաւիթ կամ ժամատուն ոչ շքեղ, եւ ի նմին գերեզման առաջին հնոյ Տարսայիճի (Արուս խաթունի)», եւ մերձ նմին այլ եւս քնարանք, յորոց մին ունի արձանագիրս» (Տե՛ս Սիսական էջ 235)։

Միւս «քնարանք»ն էին Սիւնեաց Մեարովր (ՌՃԺԲ) եւ Զաքարիա (ՌԺ) արքեպիսկոպոսների որոնց արձանագրութիւն տալիս է Ջալալեանը (հար. Բ. էջ 301), բայց չունի Յովհաննէսի արքեպիսկոպոսինը. անհասկանալի է թուում, թէ ինչո՞ւ է անուշադիր թողնել, իսկ Ալիշանը չի յիշատակում ուրիշ Մ. Փափազեանը (Հնութիւնք Վանօրէից Սիւնեաց Աշխարհի, 1892 Վաղարշապատ, Այրամ հինգերորդ հ. 330–331) գրում է, որ ինքը եղել է Տաթեւում նոր գանգատատունը շինելիս եւ վանահօրից լսել է, որ հիմքը փորելիս երեւացել են «շինող Յովհաննէս եպիսկոպոսի . . . ոսկրներից ազդրը, վանահօր ասելով 11 վերշոկ երկարութեամբ»։ Այդ վկայութեամբ եւ հաստատում է, որ իսկապէս աղօթատան մէջ եղել է նաեւ մի Յովհաննէս եպիսկոպոս թաղուած եւ որ նրա շիրմի վրայ եղել է արձանագրութիւն՝ իրրեւ եկեղեցաշինի։

Յովհաննէս եպիսկոպոսի անունով կայ մի այլ բաւական կարեւոր արձանագրութիւն, որ ինչպէս յիշել է, գտնւում է Վարդապետական տան օթեւանքների մօտ, Ուղթափա կոչուած սարադաշտի վրայ, Վերիշէն կոչուած Դարիս գիւղի դէմ յանդիման, մի բնական տաշածած ժայռի վրայ փորագրուած։ Այդ յուշարձանը, որ յիշեցնում է Հայաստանի Ուրարտեան թագաւորների սաների ժայռերի արձանագրութիւնները, յայտնում է.

«Յամի յարում էր թվ. ՉԽԳ (= 1294) ես տէր Յոհանէս կամաւն աստուծոյ եւ աղաթիւք նոցելար նաւր մերոյ տէր Հայրապետ սուրբ զցուէս Վարարախան ի Վարդան զոր աստուածաղտակի եւ նոցաւր տէր Ծախր զնեալ էր եւ տուեալ բաղում աշխատութեամբ եւ արդեամբք, զկտափանեալն ի բազում ժամանակաց կրկին նորոգեցաք յիշա-

սակ ձեզ եւ ճախնեաց մերոց որք հանդիպիք սուրբ երրորդութեանս յիշեսջիք ի Քս.»

Հայրապետ եպիսկոպոսը, Յովհաննէսի հարեղբայրը, պատմութեան աւանդելով երեք տարի վերջինից առաջ էր վախճանուել, եւ այս արձանագրութեան մէջ եղբօրորդին ապաւինում է նրա աղօթքներին։ Իսկ թէ ե՞րբ է տեղի ունեցել երկրորդի մահը, մեր ունեցած երկու արձանագրութիւնները գալիս են մեզ շփոթութեան մէջ ձգելու։ Առաջին արձանագրութիւնը տալիս է 1294 թ., երբ Յովհաննէսը դեռ կենդանի էր, նոյն թւին Ստեփանոս Օրբէլեանը իրեն արդէն տեսակում մեզ ծանօթ ամենահին շէնքն է։ Նրա հետ կարելի է համեմատել մի երկրորդ օրինակ, դարձեալ Սիւնիքում, աւելի որոշ յիշատակուած Օրբէլեանի պատմութեան մէջ։

Բաղաց աշխարհի Զագիկ իշխանի որդի Վահանը կրօնաւոր դառնալով 911ին մի վանք է շինում, որ սովորաբար իր անունով է յայտնի իբրեւ Վահանայ վանք, թէեւ եկեղեցին նուիրուած էր Գրիգոր Լուսաւորչին։ Նրա եղբայր Ջուանշէրի որդին, դարձեալ Վահան անունով, կրօնաւորում է նոյն վանքում, աւելի շէնացնելով իր



(Նկար 5)
Վահանայ վանքի աղօթարանի կամարը։

կոչում է «Սիւնեաց եպիսկոպոս» (տես էջ 489). իսկ Ալիշանի վերև յիշած արձանագրութիւն (Սիսական էջ 235) Յովհաննէսի շիրմի վրայ ունի ՉԽ = 1291 տարեթիւը. Կարելի է տարիների այդ տարբերութիւնների մասին զանազան ենթադրութիւններ անել, կամ Ալիշանի տեղեկատուն է արձանագրութիւնը սխալ և թերի կարդացել, կամ մայրի արձանագրութիւնը փորողն է տարեթիւը սխալ փորել. ընթերցողին ենք թողնում մէկն ու միւսը համարել ընդունելի. չմոռանալ որ շիրմի քարը չկայ։

Տաթեւի այս Տօսն աղօթիցը, որ միենոյն ժամանակ մեծամեծների գամբարան էր, իր հարեղբօր հիմնարկած վանքը.

«Շինեն զմեծ Աղօթարան ի դրան եկեղեցւոյ վիմարդեան մանարձանօք, յորում հանգուցեալ կան ի նիրհի բազում թագաւորք եւ թագուհիք Աղվանից եւ Բաղաց, եւ իշխանք, այլ եւ գեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցւոյն մեծամեծ քարածոյ վիմօք 30 կանգնոյ չափ, կանգնեն կամար ի դրան վանիցն եւ ի վերայ երկու խորան յանուն Գէորգի եւ Պօղոսի. Շինեն եւ ձուլեալ կրաւաղախ քարանց Տապան մի մեծ եւ բերէ փողովք զջուրն ի դուռն սորայ.»

Այս Վահանը 967ին ընտրւում է կաթուղիկոս Ամենայն Հայոց եւ միայն հինգ



A III 2898

տարի պաշտանավարելով վախճանւում է (Գառ. Դլ. ժն. էջ 238–241)։ Ինչ որ Տաթևում Տաւն աղօթից է կոչւել, այստեղ նոյն պատմագիրը Աղօթարան է անւանում։ Այս աղօթարանի շինւելութեան ժամանակը կարող ենք ընդունել 930ի շուրջը։

Երեւանի Թանգարանի արշաւախումբը, անցեալ 1932ի ամառը նոյն Ստ. Լիսիցեանի ղեկավարութեամբ երկրորդ անգամ անցաւ Սիւնիք և ծանօթացել է նաև այս Վահանայ վանքի հնութեան աւերակների հետ, պատրաստելով միքանի լուսանկարներ, որ հաճոյակատարութեամբ մեզ տւեց օգտագործելու (նկար 4, 5, 6, 7)։

թիւն, թէ մաքուր եւ խնամքով տաշւած են, միայն թէ այդտեղի պղնձահանքերի նախկին տէրերը այդ հոյակապ վանքի աւերակները գործածել են իրենց քարահանք եւ նոր կառուցւածքների համար անխնայ գործածել են այդտեղ պատրաստի տաշւած քարերը։

Շինութեան ճարտարապետական ոճի համար որոշ գաղափար տալիս են երկու կամար կորնիզի քարերի տաշւածքները։ պարանաձև գործւածքային հիւսւածքով։ Այդ հիւսւածքների փարթամութիւնը իր ձեւով ամենից մօտ է Զւարթնոցի խոյակների կողոնքներին, Անիի բերդի եկեղեցու կորնիզին, ինչպէս որ նկարել է Թորամանեանը (Տե՛ս Strzygowski, Armenishe Baukunst, I. p. 419) եւ մանաւանդ Զուարթնոցի կորնիզներին, արտանկարւած Ստրժիգովսկու մօտ (Ա. էջ 116)։ Կարելի է համեմատել նաեւ Անիի գագկաշէն եկեղեցու կորնիզը (Ստրժ. էջ 225), եւ Ղոշավանքի կորնիզը (Ստրժ. էջ 285) (նկար 8)։



(Նկար 6)
Վահանայ վանքի աղօթարանի կամարը։

Նկարները թւով հինգ են, որոնցից երեքը տալիս են Աղօթարանի կամ գուցէ Դաւթի [illegible] կամարների նմուշներ, չափազանց մեծ քարերից աղեղաձև միացած միմեանց։ Կամարներից մէկը յենւած է կիսախարխլւած որմաչար սիւների վրայ։ Էքսպեդիցիան ժամանակ և յարմարութիւն չի ունեցել աւերակների կոյտի հետ աւելի մանրամասն ծանօթանալու։ Լիսիցեանի ասելով, շինութեան վրայ գործադրած քարերն, ինչպէս և պատմագիրն է հաղորդում, արտասովոր մեծ տաշեր են, թողնում են մի տեսակ կիկլոպեան պատերի տպաւորու-

Լիսիցեանի չափագրութեամբ եկեղեցու մեծութիւնն է 12 մետր երկար, 7 մետր լայնք, իսկ աղօթարանի չափերն են 12.60 երկար եւ 8.5 լայնք։ Վերջինի մէջ հողակոյտի տակից բացել եւ կարդացել են Աղ-

ուանից Շահանդուխտ թագուհու գերեզմանի արձանագրութիւն ՇԼ = 1081 թուականով։

Այս աղօթարանի շինութեան հիշատակարանը յայտնի չէ, մատուռական հաշուով կարող ենք համարել 950 թուականը, մի քանի տասնամեակ աւելի ուշ քան Տաթեւինը։

4. — Սրբատուն. ինչպէս աղօթատունը այստեղ ես բառի իմաստով պիտի հասկանալ նրա գործածութիւնն ու նպատակը, որովհետեւ կանգուն շէնքերից եւ ոչ մէկը անկրկրայ գրան յատկացնել չենք կարող։ Առաջին յիշատակութեան մէջ այդ շէնքի րը, որ խլել էին Սիւնեաց եպիսկոպոսներից, իբրեւ պատիժ մեր յիշած Յակոբ եպիսկոպոսի ըմբոստութեան ընդդէմ կաթողիկոսական իշխանութեան։

«Եւ ընծայէ նմա հայրապետն (Անոր մետրապօլտին) խաչն Սիւնեաց եւ զոսկեզօծ վառն եւ մեծագին զաւազանն եւ զպատուական զանոյս բազմականին, զորս պահեալ էին ի Սմբատին արքայանի հայրապետանոցին» (Դլ. ԾՋ. էջ 304)։

Այստեղ յիշուած հայրապետանոցը կարող է հասկացուել Անիի կաթողիկոսարանը, բայց կասկած լինել չի կարող, որ Տաթե-



(Նկար 7)
Վահանայ վանքի կարճիքը։

տեղը թողնուած է անորոշ, իսկ երբ խօսք է լինում նրա մէջ պահուած իրերի մասին, յայտնի է դառնում, որ Սրբատունը գըտնուել է Հայրապետանոցին կից եւ նշանակուած էր մէջը պահելու վանքի թանգարժէք իրերն ու հաւանական նաեւ եկեղեցական ոչ առօրեայ գործածութեան անօթներ եւ զգեստներ։

Անիում Սիւնեաց մետրապօլիտ են ձեռնադրում Յովհաննէս եպիսկոպոսին, ի ներկայութեան Գագիկ թագաւորի եւ Կատրամիտէ թագուհոյ և Տէր Սարգիս կաթողիկոսը մետրապօլիտին է վերադարձնում այդ կոչման համապատասխան այն նշանակնե-ւում նոյնպէս Սրբատանը, որի մէջ պահւում էին այդքան արժէքաւոր իրեր, առաջնորդների կացարանին կից, ամենապատահով տեղում պիտի լինէր։ Հաւանական այդ շէնքի մէջ էին պահւում նաեւ այն բազմաթիւ մասունքները, որոնց շատութեամբ ճոխացանում էին հայոց հին վանքերը, ամենից առաւել հէնց Տաթեւի վանքը, ձեռագրերի յիշատակարաններում հաղորդներով յիշուած եւ Օրբելեանի պատմութեան մէջ, երբ թւում է թէ որքան նշխարքներ են ամբարուել Առաքելոցի հիմքերում։

5. — Դրատուն. մեծ վանքերի անհրա-

մէջը մի չինութիւնն էր, մանաւանդ այն դէպքում, երբ մեծ վանքի մէջ աւանդաբար խնամք և հոգ էր տարւում ուսման վրայ, իսկ Սիւնեաց դպրոցը հին դարերում, և յետոյ աւելի մեծ չափերով Յոհան Որոտնեցու, որա աշակերտ Գրիգոր Տաթևացու, որա աշակերտ Առաքել Սիւնեցու օրերով, մինչև ԺԵ. դարը։ Տաթևի վանական ուսումնարանը հայոց վանքերի մէջ խիստ պատուաւոր դիրքում է գտնւել։ Այդ դպրոցականների շնորհիւ է, որ որոշ վանքերում, հակառակ տոկալի աւերի ու աւարառութիւնների, այնու ամենայնիւ պահպանւել են աւել կամ պակաս արժէքաւոր ձեռագրա-



(Նկար 8)
Վահանայ վանքի կարնիզը։

կան ժողովածուներ, երբեմն ամենահին և ընտիր օրինակներով, սկսած տասներորդ դարից։ Բաղաբերդ ամրոցում Թուրքերի կռիւների ժամանակ, իբրև ամենաապահով տեղում ծածկել էին Սիւնիքի եկեղեցական արժէքաւոր իրերը «եւ տուեալ գանձամաբ եւ զաննման սրբութիւնս եկեղեցւոյն Տաթևւոյ փարթամ եւ հարուստ աթոռոյն, խաչք և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ եւ անգին ակամբք եւ անհուն մարգարտով զարդարեալ, եւ կտակարանք յոլովք, որք թուով աւելի քան զաւազ ծովու» (Օրբ. Գլ. ԿԱ. էջ 336)։ Թշնամին այդ ամէնը աւարի է մատնում։ Երբ 1904ին ցուցակագրում էինք Տաթևի չափազանց փոքրացած ժողովածուն, առակումով լսեցինք, որ վերջի վանահայրը, գրադարանը կարգի բերելու անմտութեամբ, ժողովածուի այն օրինակները, որ անխնամ պահելու հետևանքով շատ էին քայքայւած և կամ խոնաւութիւնից թերթերն ամուր միմեանց սեղմւած և մի ամբողջ միաձոյլ էին դարձած, այդպիսի օրինակները վառել է իբրև արդէն անպէտք դարձած։

6. — Յարկք կրօնաւորաց է չինում Յովհաննէս մեծագործը իր օրով Տաթևում հաւաքւած այն բազմաթիւ վանականների համար, որոց թիւը, անշուշտ չափազանցրած թւով, 500ի էր հասնում։ Վանքի կանգուն սենեակներում, կամ խցերում նոյն իսկ մի հարիւր հոգի էլ ապրել չեն կարող։ Հենց այդ խցերի թիւը հարկաւոր է եղել. բայց երբ պակասել են միաբանները վանքի աղքատութեան և կրօնաւոր դառնալու փափագի նւազման հետևանքով, խցերից շատերը քանդել, տեղն ազատել են, մանաւանդ որ դրանք ընդհանրապէս վանական բոլոր շէնքերից ամենախղճուկներն էին եւ ամենահասարակ եղանակով կառուցւած։

7. — Սեղանատուն կամ բառով Տրապէզ է կոչւում վանական հանրական կենցաղի այն անհրաժեշտ շինութիւնը, որտեղ սահ-մանւած ժամերին բոլորը պէտք է համայ-նական ճաշը վայելէին. Տաթեւի շէնքերի մէջ պահւած է այդպիսի մի շինութիւն, նեղ երկար ձգւած, Առաքելոց եկեղեցուց հարաւ գտնւող շէնքերի շարքում, համա-րեա թէ մէջտեղում լուսամուտներով դէպի հանդիպակաց ձորը բացւած. Կամարակապ այդ շէնքի մէջ ճաշողները նստում էին քարէ երկար ձգւած նստարանների վրայ. սեղանները նոյնպէս քարէ սեղաններ, որ տակաւին պահւած են, բայց չէին գործա-ծւում, միաբաններ չլինելու պատճառով. Տաթեւի կանգուն սեղանատունը՝ հինը. Յով-հաննէսի շինածը չէ. Յովհաննէսի շինածը պատուհասիչները «այրեցին և քանդել յա-ւակեցին զգործարանսն և զարդարեալն Մար-տուր Սեղանոյն և զամենայն յարկս կրա-կաւորացն» (Պատմ. էջ 313). Այլ հաւա-նական է ԺԸ. դարում Շապանեցի Սիմոն Եփրաթաղեցու շինածն է, ինչպէս յիշւած է Օրբէլեանի պատմութեան Անանուն շա-րունակողի շարայարութեան մէջ.

Տրապէզի դասական օրինակը մենք գըտ-նում ենք Հաղարծնի վանքում, դեռ եւս բաւական լաւ վիճակում պահւած և Հաղ-պատի վանքում, որ վերջերը գործածւում էին իբրեւ Ձիթահանքի շինութիւն.

8. — **Թաքստարաններ** այն անհրաժեշտ տեղերն էին, որ անապահով ժամանակների պահանջով բոլոր մեծ վանքերը պիտի ու-նենային, որպէսզի թշնամիների անակնկալ յարձակումներին կարողանան պահպանել վանական արժէքաւոր իրերը. Հաղբատի ձեռագրերը պահպանել են քարայրներում, մինչև որ 80-ական թուականներին Նշապէտ Ե-րիցեանը պատահմամբ գտաւ, բայց ար-դէն քայքայւած վիճակում. Զուարթնոցի պե-ղումներին Խաչիկ վարդապետը եկեղեցու յատակի գանձատանի մէջ գտաւ թաղւած էն զգեստներ, որ սակայն միանգամայն փչացած վիճակում էին. Ինչպէս ան-նք ծածկւած իրեր են գտնում նաև Տա-թեւի վանքում, նորոգութիւններ կատարե-լիս.

9. — Տունն և Դարանն շինութիւնները շինուած «ի պէտս եկեղեցւոյ» մի մեծ տնտեսութեան մէջ բազմապիսի կարիքների կարող էին ծառայել, անշուշտ համապա-տասխան Համբարանոցներին, որտեղ հա-ւաքւում էին համայնական կեանքով, իր սեփհական տնտեսական կեանքով սահմանա-փակւած մի փոքր գիւղի չափ բնակիչներ ունեցող վանքի մէջ. Վանական կանգուն շէնքերի մէջ տակաւին գտնւում են, ա-ռաջնորդարանին կից բնական ժայռերի մէջ պատրաստւած, մեծ ամբարներ, մեծաքա-նակ հացահատիկներ պարունակելու. Սե-ղանատանը մօտ գտնւում է մի այլ բաւա-կան ընդարձակ շինութիւն, յայտնի իբրեւ մթերանոց. Ցաւում եմ ասելու, որ վան-քում գտնւած ժամանակս առանձնապէս կանգ չեմ առել եւ ուշադիր քննութեան ենթարկել այդ շինութիւնները, նրանց շի-նութեան ճիշտ ժամանակը և յատուկ գոր-ծադրութեան հնարաւորութիւնները ու-սումնասիրելու համար. Դրանցից շատերը գարերի ընթացքում, համեմատ կարիքի և կարգերի շափերի, փոփոխութեան են են-թարկւել.

Ահաւասիկ այն բոլոր շէնքերը որ կա-ռուցել է Առաքելոցի կաթուղիկէն շինող Յովհաննէսը.

10. — Սիւն մի զարմանալի, յայտնի նաև Դաւազան և Շարժուն սիւն անունով, այն գոթողն է, որ գտնւում է Առաքելոցի հարաւում, միաբանական շինութիւնների առաջ. «Կանգնէ եւ մերձ եկեղեցւոյն, հան-դէպ դրանն հարաւոյ Սիւն մի զարմանալի յանուն Սրբոյ Երրորդութեանն ի մանր քա-րանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ» (Գլ. ԻԱ. էջ 225).

Սեան վրայ արձանագրութիւն չկայ և ակներեւ Յովհաննէս եպիսկոպոսի միակ կա-ռուցւածքն է, որ ոչ բնութեան հարւած-ները են խորտակել և ոչ մարդկանց աւե-րիչ չարութիւնները քանդել. Կարելի է հա-մարել, որ պահւած է իր սկզբնական վի-ճակում. Նոյն իսկ երկար դարեր սահել ան-ցել են առանց մաշելու այդ հաստատուն քարէ գանգուածը. Նրա շուրջը բաց հրա-պարակ է, միայն 1900 թուականից յետոյ անհասկացող վանականներից մէկը շուրջը քարէ նոր չրջապատ է կառուցել տուել, երկաթէ վանդակներով և այն եղանակով,

որ այլևս չեն երևում խաչաձևի երկու մեծ ասլերը։ Միստականի էջ 234 նկարը, ձևով ընդօրինակութիւն, ակնյայտնի սխալներով է և այդ սխալ նկարը ընդօրինակուած է Ազգագրական Հանդէսի 1898ի Գիրք Գ. էջ 141ում. միանգամայն յաջող է Մարմինգովեկու էջ 695 Երմակովի լուսանկարից վերցրած պատկերը (Նկար 9)։

Սիւնը ութ կողմանի է, որմաշար սալերով շինուած, մօտ 15 մետր բարձրութեամբ։ Հիմքում կան երկու մեծ բազմանկիւնանի հաւասար մակերեւոյթներով խաչքարեր, ներքեւինը աւելի լայն քան վերեւինը։ Երկրորդ խաչքարի վրայ բարձրանում է վեց հաւասար շարքերով սիւնի բունի կէս մասը, որի գլխին դրած է միակտուր քարից մի կարնիզ, պարանաձև ոլորուն փորուածքով, երկգօտի։ Այդ կարնիզի վրայ շարունակւում է բունը, դարձեալ վեց շարքով. խոկ ասլերից մի քանիսը փորագրութիւններով զարդարուած են։

Վերջերորդ որմաշարքի գլխին դարձեալ հաստատուած է միակտուր մեծ քարէ կարնիզը. գեղեցիկ փորուածքով տափակ հիւսուածքի գօտի, վրայից կախուած զարդերով։ Հիւսուածքը նման է Զուարթնոցի և Վ.-Հանավանքի կարնիզների քանդակներին։ Այդ կարնիզի վրայ կանգնեցրած է մի բուրական քարէ ութանկիւնանի աւելի բարակ քան սիւնի բունի հաստութիւնն է, այդ քարի վրան կան ութ հատ զարդարուն փորագրուած շրջանակներ, զոյգանման բոլորած։ Դրա վրայ մի գունդ է ամրացրած, թեք կանթեղներով փորուած, և ի վերջոյ այդ գունդի վրայ արձանաձև փորուած խաչքարը, որի շրջանակը, նոյն քարից, վերջաւորւում է կիսաշրջան գլխով, ինչպէս ուրարտական գօթողների գլխի մասը։ Արձանաձև փորուած խաչը պարանի հիւսուածքի նմանութեամբ է։ Հայրապետի փորագրել տուած խաչի պատուանդանն էլ է զարդարուն մի շրջան։

Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ սիւնը և ինչի՞ց կամ մ՞րանեղից են վերցրել դրա գաղափարն ու օրինակը։ Մարմինգովեկին այդ համարում է գամբարանի գօթող, որի նման օրինակներ առաջ է բերում միայն հայկական և ոչ ուրիշ ազգերի գերեզմանական յիշատակարաններ։ Ձեռքի տակ չունինք եւրոպական աղբիւրներ, մենք ևս ստիպուած պիտի բաւականանանք ինչ որ մեզ ծանօթ են հայկական նոյնը յիշեցնող յիշատակարաններով։

Հայերի մէջ գերեզմանի համար իբրև թաղման յիշատակներ գործածուել են — մենաստանական և գրուից շիրիմի վրայ դրուած գերեզմանաքարեր, մարդու հասակի մեծութեամբ, բնական ասլերով և կամ զանազան ձևերով տաշուած։ Ամենաընդհանուրը գերեզմանաքարերն են, քառանկիւնանիները և օրօրոցաձևեր. երբ քառանկիւնու գլուխը վերջաւորւում են առնիքի նման, կամ աղեղաձև տաշուածքով։ Այդ քարերը տեսակաւորւում են զանազան օրնամենտներով, կամ ռելիեֆներով, երբեմն նոյնիսկ ննջեցեալի կեանքին համապատասխան պատկերացումներով։ Այդ շիրիմների վրայ կանգնեցնում են խաչարձաններ փոքր կամ մեծ չափերի, բարձր պատուանդանների վրայ, երկաստիճան կամ աւելի կառուցուածքներով։ Այս խաչարձանների առանձնները, նրանց նուրբ և բազմաստանձ ռելիեֆ և հարթ փորուածքները, զրուածքների տեսակները խաչար զարգացման են ստացել օգուած տասնմեկերորդ դարից։ Նրանց գեղեցիկ և չատակոն օրինակներն են Հաղբատի Ամենափրկիչ խաչարձանը, Սանահնի Տուտէորդու և Սարգսի խաչերը, Դսեղ գիւղի Սիրուն խաչը, Դաշ Մեհիթար վանքի խաչարձանները, մեր նկարագրելիք Դուլի վանքի երկու խաչարձանները։ Այս վերջինների նկարները գծագրութեամբ և ոչ մի տեղ չեն հրատարակուած, և ուրիշ շատ օրինակներ, որ հրատարակուած են գլխաւորապէս Ազգագրական հանդէսի համարներում, Ալիշանի յիշեալ աշխատութիւններում և Մարմինգովեկու երկհատորի մէջ։ Այնքան ընդհանրացած չէ կենդանիների արձաններով յաւերժացնել մեռելների գերեզմանները, յատկապէս խոյի արձաններով, որի նշանաւոր օրինակն է Արաքսի ափին Հին Ջուղայի Մանուկ Նազարի (տես Մարմինգովեկի հտ. Ա. էջ 255–263) զանազան տեսարաններով և օրնամենտներով արձանի մարմնի վրայ ռելիեֆ փորուած քանդակներով։ Թամբած ձիեր (Տե՛ս W. Bachmann, Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan, Leipzig, 1913 p 6. Tafel 9)։

Գերեզմանների վրայ միակտուր քարերի խաչեր և բարձր գօթողներ են կանգնեցնում, զարդարուած խաչերի և այլ օրնամենտներով, ինչպէս Թալինի յուշարձան-



*(Նկար 9)*

Տաթեւի վանքի սիւնը։

ներն, որոնց վրայ կան նաև արքերի ռելիեֆներ, և Հաւինայի օրինակներն են (Տե՛ս Ստրժիգովսկի. հտ. Բ. էջ 716–719), կամ մեր յիշելիք Սոթքի խաչարձանները, բարձր սարինաների վրայ ոսինազարդ կառուցուածներ, ինչպէս Օձունի և Աղուդիի յուշարձանները: Բայց չինում են նաև յատուկ չէնքեր հանգստարան (Հառումոսում, Անիում. Վիմ. Տար. էջ 20–21). Տապանատուն, Վիմատուն կոչուածներ, որոնց մէջ բաղմաթիւ մեռելներ են թաղել, ծածկելով պարզ տալերով: Հաղարծնի և Սանահնի արքայական գերեզման մատուռները չգիտենք թէ ինչ անուններ ունէին. գուցէ տապանատուն էին կոչւում:

Ստրժիգովսկին Տաթևի սիւնը ևս գերեզմանական գաթող է համարում, որի ձեւափերպման օրինակով մեզ ծանօթ են եւ համեմատելի միայն երկու համանման օրինակներ, Որոտնայ վանքի բակի սիւնը եւ Օշականի ներկայումս մի գիւղական բակում գտնուած սիւնը. մինչդեռ վերոյիշեալ գերեզմանական բոլոր տեսակների յուշարձանները սփռուած են Հայաստանի բոլոր անկիւններում: Երկու ուրիշ անձինք, Աս. Լիսիցեան եւ Լ. Մելիքսէթբեկեանը բերանացի ինձ յայտնել են, որ իրենք կարծում են, թէ այդ սիւնը կապ ունի Հայաստանում տարածուած Փարոսի կոչուի հետ: Մելիքսէթբեկեանը յայտնեց նաև որ նա նիւթեր է հաւաքում այդ մասին աշխատութիւն հրատարակելու և որ Վրաստանի հնութիւններում հետաքրքիր օրինակներ է գըտել: Ինձ համար միանգամայն անհասկանալի, մանաւանդ խաչով վերջաւորուած գոթողների մէջ Փարոսի կոչըս գանելը:

Որոտնայ վանքի սիւնը, մենք կարծում ենք, Տաթևի սիւնի հետևողութեամբ կանգնեցրած մի օրինակ է, վերջի երկրաշարժին գլորուել է և եկեղեցու փլատակների տակ ծածկւել: Նրանից նախապէս վերցրած արձէ տասանձնակի ընդօրինակութիւն մեզ ծանօթ չէ և մենք վերարտադրում ենք Մ. Փափազեանի ալբոմից Որոտնայ վանքը, ամբողջ կանգնած սիւնով, 1892ից լուսանկարած (Նկար 10): Սիւնի պատուանդանում չինած է արմաշար քառանկիւնի խարիսխ, որի վրայ է բարձրանում միակտուր քարէ բունը. քառանկիւնի տաշուածքով, ամէն մի կողմի լայնութիւնը 0.40 մետր, իսկ սիւնի բարձրութիւնն է 2.13 մետր: Բունի գլխին ամրացրած է մի գեղեցիկ խոյակ, դարձեալ քառանկիւնի ձևով, որ միևնոյն ժամանակ բաղա է ծառայում



(Նկար 10)

Որոտնայ վանքի եկեղեցին իր սրահով եւ սիւնով:

արձանաձև փորված խաչի։ Այս սիւնն էլ առանց արձանագրութեան է, ուստի ժամանակի մասին դժուար է կարծիք յայտնել, մանաւանդ որ ոճական մանրամասնութիւնները ցոյց տալու նիւթն էլ է պակասում։

Տասն և հինգերորդ դարում կանոնական յատուկ դրութիւն է պատրաստուել գիտական պատրաստութեամբ հայ վարդապետ-

կատարւում էր երկու գաւազանների տակ, որոնցից և նրանց ընդհանրացած անունները Տաթևի կամ Որոտնայ «գաւազան» կոչումով։

Տաթևի սիւնը կոչւում է նաև «Ճօճաժական սիւն», որովհետև չնայած նրա մօտ 15 մետր բարձրութեանը և քարային վիթխարի զանգուածին, մի մարդու ուժ բա-



*(Նկար 11)*
Աղուդի դամբարանը մինչեւ վերջի 1931 թ. երկրաշարժը։

ների քարոզելու և քարոզի ժամանակ համապատասխան ձեռքի գաւազան բռնելու իրաւունք տալ, եկեղեցական յատուկ ծիսակատարութեամբ. «Հանուն գաւազանի իշխանութիւն տալոյ» ծիսարանով։ Այդ կանոնը կիրարկւել է հայոց բոլոր վանքերում, բայց յատկապէս Որոտնայ և Տաթևի վանքերում և ըստ աւանդութեան այդ ծէսը

ւական է նրան տեղից շարժելու։ Երբ բարձրանում էք նրա դէմ յանդիման միաբանական շինութիւնների երկրորդ յարկի կտուրը և ձեռքեր մեկնելով բռնում էք գաւազանի կամ սեան գլխի խաչից և ուժով ձգում դէպ ձեզ, նկատում էք որ այդ վիթխարի հսկան տեղի է տալիս ձեր ուժին և առաջ շարժւում և բաց թողնելուց շա-

նկատելի կերպով սկսում է ճօճալ, մինչեւ կայունանալը։ Այդ տեղից է նրա «Ճօճական սիւն» անունը, որի հետեւանքով առեղծուել են զանազան առասպելներ, հրաշապատում մանրամասնութիւններով։

Երկրորդ համեմատելի սիւնը Օշականինն է, որ ժողովրդական աւանդութեամբ նաև Մօրիկ կայսեր սիւնն է կոչւում. որովհետեւ ըստ աւանդութեան բիւզանդական հայազգի Մաւրիկիոս կայսրը Օշական գիւղից է եղել և այդ սիւնը նրա յիշատակին է։ Դուցէ կարելի է այդ առասպելի վրայ աւելացնել նաև ամենավերջինը. գերմանացի ճանապարհորդ Դր. Բելկի ենթադրու- ենթադրել է որ դա եղել է Օշական գիւղում (Տե՛ս Լեմանի գրքի հա. Ա. էջ 147 և 500)։

Օշականի սիւնը միակտուր քարից է, ութ անկիւնանի կողերով, ամրացրած ընական ժայռի վրայ, մօտ հինգ մետր բարձրութեամբ, սեան գլխին մի խարիսխ է բարձրանում, վալիւտաներով, որ այժմ տեղից հանուած է և պահւում է էջմիածնի Թանգարանում։ Այս սեան մօտ ուրիշ աւերակներ չկան, որ կարելի լինէր ընդունել թէ դա ամբողջի կանգուն մնացած մի մասն է։ Եռյակի կազմուածքը մեծ նմանութիւն ունի տասներորդ դարու Անիում Գագիկ թագաւորի Զուարթնոցի նմանութեամբ շի-



(Նկար 12)
Աղուդի գիւղում գամբարան, արեւելքից։

թիւնը, որ հրինուած է Լեմանի Հաուպտի Armenien Einst und Jetzt գրքում, թէ երբ Մեհրուժան Արծրունու մատնութեամբ Պարսիկները գրաւում են Արշակունի թագաւորների տոհմային գամբարան և հարստութիւնների առատիկ Անի-Կամախ բերդը, գերեզմաններից հանում են թաղուած ոսկորոտիքները։ Հայոց զօրքը յետ է խլում այդ ոսկորոտիքները և պատմութիւնը հաղորդող Փաւստոս Բիւզանդացու ասելով, տանում կրկին թաղում են Արագած լերան ստորոտում «յամուր ի գեւղն որ Աղձքն անուանին» (Տե՛ս Դպր. Դ. գլ. ԻԴ.). Բելկը նաև եկեղեցու խոյակին, որի մէջ գամբիւղադարդի փոխարէն պարզ կլոր շրջան է, վրան վալիւտաները և ապա քառակուսի տրակը (Տե՛ս Սարգիսեանի հա. Ա. էջ 321)։ Հաւանական խարիսխի գլխին որ և է յաւելեալ մաս կար, գուցէ Տաթեւի ու Սրբանոյ պէս խաչ, իսկ յետոյ ամեն տարի նոյն տեղում բունող արագիլն է իր հսկայական բոյնը հաստատել, որին գիւղի բնակիչները երբեք ձեռք չէին տալիս։

Այս երեք սիւներին մասնաւորական ձեւով համեմատելի են, պատմականորէն Սիսնեաց աշխարհի Սոթք գիւղի, ներկայի Մար-

*տունոն գաւառի Ձոր գիւղի գմբեթաձեւ խաչարձանները, աւելի պակաս չափով Թալինի մահարձանները եւ ի վերջոյ Օձունի Սմբատ Թագաւորին վերագրած մահարձանը և Սրսան վանքի հարեւանութեան մէջ Աղուդիի մահարձանը, որը դարերով կանգուն մնացած, վերջի երկրաշարժից կործրեց իր գագաթի մասը։*

*Օձունի մահարձանը յաճախ է նկարագրուել և քննադատուել է։ Սա ունի որմաչար պատուհանաձեւ կամ դռնաձեւ մի կող-*

*Թէ ինչո՞ւ է դա Սմբատ Թագաւորի անունը կրում, որ իշխել է 914-928ը, իմանալ չկարողացանք (Տե՛ս Սարգիզովսկի հա. Բ. էջ 696-697 եւ Աշխարհագրական Հանդէս 1901, էջ 376)։*

*Աղուդիի մահարձանն իր ձեւով շատ մօտ է Օձունին, կառուցուած է կամարաձեւ մի շինութեան վրայ. իսկ ֆասադի կողմից բարձրանում են եօթն աստիճաններ ինչպէս այնտեղ։ Երկու քառանկիւնանի որմաչար պատեր վեր են բարձրանում,*



*(Նկար 13)*
Աղուդի գիւղի դարպասը, արեւմուտքից։

*մուածք, վերջաւորուած կլոր կամարով, վըրան գեղեցիկ կարնիզ։ Ֆասադը կազմում է մի կողմից եօթն աստիճանով, իսկ կամարների բացուածքներում կանգնեցրած են երկու միակտուր քարերից բարակ ուղղաձիգ քարէ սիւներ, քառանկիւնի տաշուածքով։ Արձանի բարձրութիւնն է 5.80 մետր, իսկ լայնութիւնը 3.83 մետր, քառանկիւնի սիւների չափերն են 2.10 մետր բարձրութիւն, 0.35 մետր լայնք։*

*միջանկեալ աղեղի կամարներով եւ գլխի կարնիզով երկյարկ բաժանուած։ Ներքեւի յարկը կլոր մի սիւնով երկու բացուածքների է բաժանուած, իսկ վերեւի մասը կամ յարկը երեք բացուածք ունի, քանի որ հիմնական որմաչարի մէջ երկու դարդարուն կերտուածք են կանգնեցրել։ Վերջի երկրաշարժից այդ կերտուածքները վայր են գլորուել, իրենց գլխի կարնիզով։ Ներքեւի յարկի միջին սեան թէ խարիսխը և թէ խոյակ-*

*Նիրը շատ սիրուն են եւ ուրոյն ձեւ ունին (նկար 11, 12, 13, 14)։*

*Խորանի տակը քառակուսի սալ է, վըրան չորս կողմերում չորս շրջանակներ, մէջը խաչաքանդակ, սալը մի կլոր քար, հիւսածք զարդարանքով։ Դրա վրայ է հաստատուած ութ անկիւնանի միակտուր քարէ բունը եւ սալը գեղեցիկ խոյակը, հանելի ձեւի ոլորումներով։*

*Վերեւի յարկի երկու կիրառածքը ունեն գեղեցկութիւն հաղորդող Մա. Լեւոնցեանը կարողացել է կարդալ միայն մի քանի բառեր. «գեղեցկութեան մասին խանդավառ եւ անկարելի էր երկար մնալ»։ Նա կարդացել էր միայն այսքան.*

«Խաչս յանուն ար–քո փրկչին ամ.——ջիր որդոյն——»։

*Այս մահարձանի նկարը տպուած է 408 էջում առանց որ եւ է մեկնաբանութեան.*



*(Նկար 14)*

Աղուդի գիւղի դամբարանի բազալի դեսայը։

*քառակուսի բազա, վրան կլոր շրջանակ, որոնց վրայ իրրեւ բուն բարձրանում են քառանկիւնի տաշածքով քարեր, ներքեւ նեղ, վերեւում լայնանալով։ Այդ քարերի արանի վրայ են յենւում կամարների ադեղները, որ ուղղագիծ կարնիզով է պսակւում։ Կարնիզի մէջ փորուած են շըղթայաձեւ խաղողի ճիւղեր, ողկոյզներով։*

*Այս մահարձանի վրայ պահուած էին արձանագրութիւններ, բայց դժբախտաբար ան–*

*1911ին Թօթավանքի կալուածքը ըդնալիս պիտի անցնէի Զող գիւղի վրայով, որտեղ տեսայ բազմաթիւ գերեզմաններ խաչքարերով եւ միքանիսը գօթողներով, որոնց շատերը անգական թուրք աղգաբընակութիւնը կտրատելով գործածել էր իր խղճուկ հիւղերի պատերի մէջ։ Գիւղի հեղեղատում տեսայ մի բաւական մեծ քառանկիւնանի երկար գօթող, որ մինչեւ կարուած ձգուած էր այդ հեղեղատում։ Գիւ–*

…ները հաղորդեցին, որ այդպէս երե-ւոյթին, մի տարի առաջ Թիֆլիսի Կով-կասեան Թանգարանի կողմից պատուան-դաններից հանեցին որ հետները տանեն Թիֆլիս, այդ մէկն ընկաւ կոտրուեց, միւս երկուսը տարան։

Թիֆլիսի տարածները թէև մենք անձա-մբ չտեսանք, բայց Լեօն Մել-իքսեթբեգեանը բարի եղաւ Թիֆլիսի Կով-կասեան Թանգարանից այդ երկու խաչքար-ները արտանկարել տալ և մեզ ուղար-կել՝ նրանց վրայի հետեւեալ երկու ար-ձանագրութիւններով միասին (նկար 15)։

Ա. Խաչքարում

«Կամօ-ք-ն այ / մակրս կնկյի վ/որ խչս ... — ծնողցն իմ բարա/ցին ամէն թ. ՌՁԷ (= 1638)»։

Բ. Խաչքարում

Մէջ կողմից. «Ննորեօլն այ / եւ այօին / ... Դ»։

Ձախից. «Ս.ի.լ-ի-Րէկս աձա/պաւս ծա-ռայ / կնկցուցամ որ խչս»։

Աջ կողմից. «Որեխոսս ծնօ/ղաց մերց ... լիմարին»։

Հանգէպ. «Ի աղօաննին մա-ու/րթին / թվին ՌՃԺ (= 1661)»։

Իսկ կարուած ընկած խաչարձանը կարդա-ցինք եւ բերել տուինք էջմիածին եւ այնտեղ, մեր աշխատանքով կառուցուած Մատենադարանի հարաւային պատի առաջ կանգնեցրինք։ Մենք նախապէս կարուած կտորները խնամքով ցեմենտով եւ միացրինք և, որովհետև նրա բա-ւականաչափ չափազանց մեծ եւ ասանձին արուեստ չներկայացընող քարը բե-րուած գմուար էր, իրրև բաղա-միմային յարմար եղանակով գործա-դրեցինք էջմիածնի վանքի նախկին ձիթա-հանքի բաղայակից պատրաստած երկու մեծ ... քարերը, իրար վրայ հաստա-տելով, այնպէս որ միանգամայն յիշեցնում է հին բաղան եւ անկորուստ էլ պահում են Հայաստանի նախնական գործարաննե-րից մէկի մասերը (նկար 16)։

Այս և Թիֆլիսի տարուած երեք գոթող-ներ էլ ունեն արձանագրութիւններ. Եր. Լալայեանը Բայազէտ գաւառի նկարագրու-թեան մէջ տալիս է այդ արձանագրութիւն-ներից համառօտութիւն (Ազգ. Հանդ. 1910, Գիրք ԺԹ. էջ 26–27), ասանց կանգ առ-նելու քարերի ձեւերի վրայ։ Մեր բերանը յիշատակում է նաև Սարգիսովեանն, հետ էլ մի ուրիշը, որ նրա ասելով Թիֆլիսի Թանգարանումն է եւ այնտեղ է տարուած Հին Ջուղայից։ Արդե՞օք դա Սոթքից տար-ւածը չէ։

Գոթողը մեր միացնելուց յետոյ չի ամ-բողջացել, որովհետև պակասում է նրա վերջաւորութիւնը, որ անչուշտ արձանաձև փորուած խաչ էր ներկայացնում, ինչպէս մակարերել է տալիս քարի ծայրին ճեղցած պատուանդանը։ Ամբողջի բարձրութիւնը, հաշուած անգում եղած պատուանդանի չափն ու կորած խաչը, հինգ մետրից պակաս չէ։

Այս գոթողը միակտուր քարից էր, մոզ մոխրագոյն աւազաքարից, չեչոտ և ոչ յար-մար բարակ եւ նուրբ տաշուածքի համար։ Տաշուած է քառանկիւնի ձեւով, բայց չունի ոչ համաչափութիւն և ոչ էլ մեծ վարպետ-ութիւն։ Հինգ տարբեր լայնութեան գօ-տիներ ամբողջը բաժանում են չորս մա-սերի, 16 մակերեւոյթով, ամենաներքեւի եւ նրանից բարձրի 7 երեսների վրայ փո-րագրուած է յիշատակարան արձանագրու-թիւն, ուղիղ. Ներքեւի մասում հարթ տաշերով, ամենավերեւի գօտին չափ նեղ է, միջիններըլայն են։ 16 հարթ մակե-րեւոյթները զարդարուած են խաչեր և փոքր ուղիղ խաչերով, եզերքները պարանաձև հիւսուածքներով կամ ձողերով։

Այս Սուրբ խաչը կանգնեցրել են ակր Մեղիքեթի որդիները, Ուլուխան, Մալհում եւ Դաստար ի յիշատակ ակր Մելքիսէթին, կողակից Իկրումին, Գային, Լաւումին, Ճառա-ներուն Իփրօյաիմին, Խաչատրինաին ի թվ. ՌՃՂ (= 1053ին)։ Խաչի պատրաստողն է Բարգուրծ Ջօճրապ։

Արուեստի կողմից, համեմատած նա-խորդ հայկական հին գարերի փորագրու-թիւնների հետ, նկատելի է խաչը յետա-մնացութիւն. ոչ համաչափութիւն է պահ-պանուած, ոչ փորուածների նրբութիւն և ոչ ճաշակի ազնիւ արտայայտութիւն։ Բար-գուրծ Ջօհրապն աշխատել է միայն խճող-ուած խաչերի և զարդերի կուտակումով է-ֆեկտ յառաջ բերել։ Ո՞ւր են անհետացել հայկական հին գարերի քարգործների հա-



(Նկար 15)
Զող գիւղի երկու խաչարձանները։

*ճեյի, վարժ, կանանաւոր եւ գեղեցիկ ձեւերը։ Այդ երեւոյթը հասկանալու եւ բացատրելու համար բաւական է մտաբերել հայկական ժամանակակից պատմութիւնը, երբ միայն մի քանի տասնեակ տարիներ դրանից առաջ Ծանրաստեան գաղթականութեամբ ամբողջ Հայաստանի ժողովուրդը, չաս ի յայտ են բերել արհեստի իրենց բնատուր պահանջքն ու պատրաստութիւնը եւ այդպիսի գոհողներ ստեղծել, թէկուզ ոչ հին արուեստի կատարելութեամբ։*

*Գերեզմանական յուշարձաններն ու գաթողները մի բան պարզում են, որ հայկական ճարտարապետութեան մէջ այդ ճիւղը բաց-*



(Նկար 16)

Զող գիւղի մահարձանը Էջմիածնի մատենադարանին առաջ։

*քշերի ազատումով քշուած էր եւ երկիրն անմարդաբնակ եւ ամայի էր դարձած. հայերին քշեցին տարան Պարսկաստանի անապատները շէնացնելու։ Ուստի պիտի զարմանալ ու գոհ լինել, որ մի փոքր խաղաղութիւն վայելող հայ մարդիկ նորից մակողմանի եղանակով մշակել է, որ իշխաններ ու հարուստ անհատներ ջանք են թափել իրենց յիշատակը հետագաների համար անջնջելի թողնել. բայց կարծում ենք ցայժմ ծանօթ տուեալները բաւական չեն անվերապահ եղանակով յայտարարելու թէ*

*Տաթեւի, Որոտնայ և Օշականի ուխտերը և մեռելների յիշատակին կանգնեցրած յուշարձաններ են։*

*Ստեփանոս Օրբելեանին շատ ծանօթ էին իր հայրենիքի հնութիւնները. նա ինչո՞ւ պիտի գրէր թէ Յովհաննէսը Տաթեւի ուխտը կանգնեցրել է յանուն Սուրբ Երրորդութեան։ Ուշադրաւ է նաև մի հանգամանք. նա սկզբում պատմում է, որ Երրորդութեան ուխտը կանգնեցրել է Առաքելոցի չինելուց յետոյ, նրա հարաւակողմում. իսկ մի այլ տեղ նա ասում է թէ նա այդ ուխտը կանգնեցրել է երկու տարի եկեղեցին չինելուց առաջ։ Ակներեւ է, նա էլ տարակուսանքի մէջ էր թէ իսկապէս ինչի՞ համար և ե՞րբ է չինուել այդ ուխտը։ Մեր եզրակացութիւնն է, մենք տակաւին համառօտ ոչինչ չգիտենք։*

11. — Գրիգոր Լուսաւորչի անունով *եկեղեցի չինւել է երեք անգամ. առաջին չինել տւողն էր վանքի համար հողեր վաճառող և Տաթեւ գիւղը նուիրաբերող Սիւնեաց երկրի գահերէց Փիլիպպէ իշխանը, Հայոց ՄՂԷ = 848ին.* «Շինէ եկեղեցի մի գեղեցկատեսիլ մերձ հիմն եկեղեցւոյն ի հարաւոյ կողմանէ, յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորի. եւ ինքն վախճանեալ դնի անդէն ի դրան... Եւ այս լինէր յՄՂԷ թուականին (= 848) հայոց» *(Դլ. ԼԲ. էջ 211).*

*Այդ եկեղեցին փայտաշէն, յամենայն դէպս փայտածածկ էր, որովհետեւ ՆՂԵ = 1046ին Պարսկաստանից ասպատակիչներ անհեղակյի եւ յանկարծուստ յարձակւում են, պարսպներից ներս խուժում և ամբողջ վանքը ենթարկում են աւարի. ներկայ եղողներին, որ փախուստով ազատուել չեն կարողանում, անգթօրէն կոտորում են, փայտ լցնելով կրակի ճարակ են տալիս Լուսաւորչի եկեղեցին.* «Խակեալ յատակեցին զգործաւորսն եւ զտառապեալ մարմնաւոր սեղանոյն եւ զամենայն յարկս կրօնաւորաց եւ այլ բնակչացն» *(Դլ. ԾԸ. էջ 313).*

*Այս առնչութեամբ հաղորդւած է երկու շատ կարեւոր տեղեկութիւն Տաթեւի Սիւնի և մեծ եկեղեցու մասին.* «կամեցան եւ զսքանչելի սիւնն կործանել զմեծ սքր Յովհաննիսին որ երկու ամսոց յառաջ քան զմեծ եկեղեցին էր կանգնեալ, եւ ձեռեալ հրաւ ինչ ոչ իշխեցին հալել. նմանապէս եւ ոչ ի մեծ եկեղեցին» *(էջ 313).*

*Աւարառուները այնտեղ երկար մնալ չէին կարող. նրանց կատարած գործը կայծակի արագութեամբ էր. եթէ նրանք կարողացան Լուսաւորիչը հրդեհել, եւ արտաքին ու գործարանները կրօնաւորների յարկի հետ հիմնայատակ կործանել, ասել է, այդ շէնքերը հասարակ կառուցուածքներ էին և նրանց կործանելը երկար աշխատանք չէր պահանջում, ինչպէս հայտակայ քարաշէն սիւնն ու աւելի խոշոր Առաքելոց եկեղեցին։*

*Վանքից բացակայ էր ժամանակի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը, որով ազատւում է նրա կեանքը և վերադարձած, տեղական իշխանների օժանդակութեամբ ձեռնարկում է թէ՛ աւերները վերականգնելու եւ թէ նոր շինութիւններ աւելցնելու։ Ամենից առաջ վերաշինւում է Լուսաւորչի եկեղեցին եւ իր նորաշէն տաճարի տակ է դնում Լուսաւորչի մասունքները, որի մասին պատմւած է մասնաւորապէս այնպէս ինչպէս Զուարթնոցի նկարագրութեան մասին.*

«. . . Եւ դնէ ի նմա զգանձն հոգեւոր զանճառամեմսն ի յեփցս զսուրբ Լուսաւորչին զպատուական եւ զերջանիկ նշխարն, միակողմն այլասն եւ զմիւս բազուկն յաջակողմանն աւագ կամարին ի գլուխ սեղանն ամփոփեալ անյայտ ի մարդկանէ, զոր յետ ժամանակաց գտեալ եղեւ ի նմին սեղանոյ մերոյ նուաստութեանս նորին կազմութեան կնքով»։

*Սրբի Լուսաւորչի անունով բոլոր եկեղեցիների հիմքերում նրա անհասանում նշխարներից մասեր են դրել. Պատմութիւնը կրկնւում է. Զէ՞ որ Զուարթնոցի պեղումներով զբաղւող Խաչիկ վարդապետը եկեղեցու մէջ պիլասներից մէկը քանդեց մինչեւ հիմքը, նրա յատակում պահւած նշխարներ որոնելով և հաւատացնում էր նաև թէ գտել է իր որոնածը։*

*Յովհաննէսի շինած Լուսաւորիչը կործանւում է երկրորդ անգամ բնութեան հարւածից. Յիշւած Գանձակի շարժի ժամանակ 1138ին, Առաքելոցի գմբէթը ընկնում է դրա վրայ և հիմնայատակ կործանում. Եկեղեցին այդպէս մնում է մինչեւ մեր պատմագրի ժամանակը. երբ նա երրորդ անգամ է վերաշինւում 1295ին և իր գործը դրան ճակատի մեծ սալի արձանագրութեամբ ու իր գրուածքի յիշատակութեամբ յաւերժացնում. Արձանագրութիւնն է.* «Ի թվ. ՉԽԴ զոր. Սահմանեա մեռապատ-

յիշ Սիւնեաց որ է պատուաւորեալս նաոց մեծաց որդի մեծափառ իշխանին Տարսայի- ճին շինող սբ. եկեղեցոյս յիշեցէք ի Քս.» (Նկար 17)։

*Եկեղեցու այդ շէնքը շինուած է ամ- բողջովին, ներսից և դրսից, մաքուր սըր- բատաշ մեծ սալ քարերով, բազիլիկային, միանաւ, առանց գմբէթի, 10.65 մետր երկար, 6.4 մետր լայն (Աղք. Հանդէս)։ Արտաքուստ իր պարզութեամբ հաւասար է Առաքելոցին, ներքուստ, իր փոքրութեան պատճառով աւելի պարզ է երեւում։ Հիւ- սիսային պատը միացած է Առաքելոցի հա- րաւային պատին. իսկ արեւմտեան պատը կիսով չափ ծածկուած է սրահի կամարով։ Երե- ւանի Պետական Թանգարանը։ Դրան մե- ծութիւնն է 1.95 բարձր, 1.11 մետր լայն, բաւական հարուստ փորագրութիւններով. բայց ոչ այնպէս գեղեցիկ ինչպէս Առաքե- լոցի դուռը։ Սրա զարդանախշը կազմում են 32 հաւասարաչափ փոքր խաչերի մի շղթա- յաձև շրջանակ, որի մէջ փորուած է մի շատ մեծ խաչ, զարձեալ իբրեւ խարիսխ ունե- նալով մի մեծ զարդարուն շրջան։ Մեծ խաչի թեւերի տակ կան փոքր երկու խա- չեր, բոլորը տերևազարդ զարդանախշով գե- ղեցկացրած։ Դրան վերևի երկու անկիւ- նում փորագրուած է ՌԿԳ թուականը = 1614, որ ամենայն հաւանականութեամբ յետոյ է փորագրուած, որովհետեւ դրան փորագրու-*



*(Նկար 17)*

Տաթեւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու արձանագրութիւնը։

*Այսպիսը արեւելքում ներս առնուած է, հե- տեւապէս արեւելեան պատը հարթ հաւասար է ինչպէս նաև հարաւային ամբողջութեամբ երեսացող պատը։ Արեւմտեան ճակատում, լուսամուտից բարձր կայ մի գեղեցիկ խաչա- զարդ (Տե՛ս ընդհանուր տեսարանի նկար 1, Առաքելոցի հարաւ. արեւելքում)։*

*Վերջին ահաւոր երկրաշարժը կործանել է նաև այս եկեղեցու արեւմտեան մասը, այդ պատճառով նրա հին ընտիր դուռը, որ բարեբախտաբար անվնաս էր մնացել, Լիսիցեանի արշաւախումբը բերել է Երե-* *թեան ոճը աւելի հին է և հաւանական շի- նութեան ժամանակակից (Նկար 18)։*

12. — Կամարներ և *դրանց վրայ* խո- րաններ *է շինում երկրորդ Յովհաննէսը երբ աւարտում է աւարառուների կործանած Լուսաւորչի եկեղեցին և կրօնաւորաց յար- կերը* «վայելուչ քան զառաջինն»։ *Այդ կա- մարների մասին այսպէս է տալիս.* «Կանգ- նէ եւ սա կամարս ի վերայ աւագ դրան վա- նացն որ նայէր ընդ արեւմուտս. եւ եդնէ ի վերայ նորա երկու խորան յանուն սրբոյ Կա-

մի բառը միւսի փոխարէն գործածած նաև հետեւեալում յիշւելիք Սրահի նկատմամբ, որովհետև տերմինները բացորոշակի չեն գործածւել։

13. — Սրահ-Գաւիթ. այս Յովհաննէսի նոր շէնքերից մէկն էր, անշուշտ Սուրբ Լուսաւորչի եկեղեցին աւարտելուց յետոյ, որանից դէպի արեւմուտք, Առաքելոցի հարաւային պատին կցած, աւելի ցած քան եկեղեցու պատը։ Բարեբախտաբար պահւած է այս շինութեան յիշատակարանը. Երիցակ վանականի արձանագրութիւնէն յետոյ թւականով վանքի բոլոր արձանագրութիւններից հնագոյն թւականով (նկար 19)։



(Նկար 19)
Տաթեւի վանքի սրահը։

«Ամի յորում էր թ. ՆՂԲ ի թագաւորու-թեան/նս Սմբատա որ/դո Աշոտո / ես տէր / Յովհաննէս շինեցի զս/(ր)ահս աւգնա/(կ)անու-թեամբ / Սմբատա որդ ա/ղաւթէք յի/շե/ցէք ի Քս.»։

Հարաւային երկրի ամառւայ շոգերը և ժողովրդական սովորութիւնն առիպել են մարդկանց այդ եղանակներին ըստ կարելւոյն դուրսն ապրել եւ քնել, մանաւանդ թէ ի նկատի ունենանք, որ սառնաշունչ ձմեռների հետեւանքով տները շինւած են այնպէս, որ ունին միայն մի դուռ և տանիքից լոյսի և ծխի մի անցք. Հետեւապէս զուրկ են զովացուցիչ օդի շարժումից. ուստի հայկական տունը բաղկացած է երկու մասից, բուն տնից և նրա առաջը բաց ճակատով շինած սրահից կամ ամառւայ տնից։ Վանական խցերի առաջ էլ սովորական են այդպիսի բաց սրահներ. բայց Յովհաննէս եպիսկոպոսը հարկ է տեսել մի այնպիսի մեծ սրահ շինելու, որ միաժամանակ մեծաթիւ անձինք հաւաքւել կարողանան, ինչպէս ընդունարան մեծ գահլիճներում, որպիսի նպատակի համար ամենայարմարն էր մեծ եկեղեցու հարաւային երկար պատի կողմը. «Շինեաց ի հարաւոյ դրան մեծ եկեղեցւոյն սրահս յոյժ յարմարս ի հանգիստ եղբայրութեանն» (Վլ. ՏՐ. էջ 315)։

Սա շինւած է իբրև չորս որմաշէն սիւներով կամարածածկ մի կառուցւածք, երկարաձգւած, արեւելեան կողմով կպած Լուսաւորչի արեւմտեան պատին. իսկ հիւսիսային կողմով յենւած է Առաքելոցի հարաւային պատին (նկար 20)։ Կամարների շրջանակները զարդարւած են քանդակներով։ Այս սրահի պա-

տերի վրայ ամենից շատ արձանագրութիւններ են փորուած, մասամբ անձրեւների ազդեցութիւնից եղծուած։ Յատակը սալայատակած է, հաւանական աւելի ուշ սկսել

Առաքել Սիւնեաց եպսկս. կանգնեցի – զխաչս ի փրկութիւն — հոգս մեծ – հռետորին եւ րաբունապետին Գրիգորի — թվ. ՊԾԹ (= 1410)։

Իսկ աւելի ուշ 1787ին Տաթեւի առաջ-



*(Նկար 20)*

Առաքելոց եկեղեցու հարաւային պատը եւ Ս. Գրիգոր եկեղեցու արեւմտեան բացուածքը։

են այդտեղ եւս, ինչպէս ժամանակին, մեռելներ թաղել. այդտեղ են թաղել հռչակաւոր Գրիգոր Տաթեւացուն եւ որա աշակերտ Առաքել Սիւնեցին որոնց կամարների վրայ արձանագրել է. «Կամաւն այ. ես——

նորդներից Տէր Յովակիմը, որ Մղուկ գաւառէ, յԱնգեղակոթ գեղջէ», մեծ վարդապետի գերեզմանի վրայ սպիտակ գոյնի մաքուր տաշած քարերով եկեղեցանման մի դամբարան է շինել տալիս, որոնց մէջ,

*եկեղեցու արեւմտեան դրան հանդէպ.*
«Սա չորս վիմաքարս կանգնեալ են ի սուրբ աթոռս, զերկուսն ի մէջ տաճարին, առընթեր երկուց սեանց, զմին ի վերայ գամբառանին եօթնալոյս վարդապետին Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ, զարդարուն խաչիւ քանդակեալ ի քարանց, եւ ճոյակապ յօրինուածով կոփածոյ քարամբք գեղեցկապէս մասուռ եփնեալ, եւ զմիւսն ի մէջ ժամատանն» *(Գլ. Հն. էջ 535–6).*

*Մատուռի վրայ Ցոլակիմ եպիսկոպոսը փորագրել է տալ մի չատ երկար արձանագրութիւն, մի առ մի թուելով Բանակը* «բարձրաբերձ սեամբք, վայելուչս իբր քաղցր հովանոյ». *Միայն թէ սրա բարձրաբերձ սիւներով հովանոցն աւելի շուտ էր կործանուել եւ չի յիշատակւած թէ ինչ պատճառով, կամ ում ձեռքով.*

*Նոյնպիսի սրահ մենք տեսնում ենք նաեւ Որոտնայ եկեղեցուն կից (Տե՛ս Նկար 10), որ իր սիւներով եւ այս սրահով հաւանական Տաթեւի մայր վանքի շինութիւններն է ընդօրինակել. Սրահ կը գտնենք նաեւ Դադի վանքում, իսկ էջմիածնի Գայանէի վանքի արեւմտեան պատին կից կառուցւածքը, որտեղ թաղւել են էջմիածնի*



*(Նկար 21)*
Գրիգոր Տաթեւացու գամբարանը, երկրաշարժից կործանուած.

*Թէեւ այն անձանց անունները, որ իրենց նուէրներով օժանդակել են շինութեանը. Այս մատուռը նախապէս ճոխ քանդակներով եւ խաչերով զարդարուած մի մինիատուր եկեղեցի էր, բաւական լաւ մի նմուշ ԺԸ. դարու հայկական ճարտարապետութեան.*

*Վերջին երկրաշարժը փլատակներ է դարձրել սրահի հետ միասին եւ այդ մատուռը (Նկար 21).*

*Սրահաշինութեան աւելի հին օրինակ էր յիշւած, ինչպէս տեսանք, Վահանաշէն վանքում, Բաղաց երկրում. Տաթեւում սրահներ է շինել նոյնպէս Աստուածածին եկեղեցու շինել տւող Գրիգոր եպիսկոպոսը. կաթողիկոսներ, մի տեսակ ժամատան փոխարինումն է, որ շինել է տուել Եղիազար Հռոմկլայեցի կաթողիկոսը 1688ին.*

14.— Աստուածածին եկեղեցին *Տաթեւի վանքի միակ հին շինութիւնն է, որ վերջին կործանիչ երկրաշարժից յետոյ դեռ կանգուն է մնացել, բայց այնպէս խախտւած, որ Սա. Լեոնիցեանը վտանգաւոր է համարել ներս մտնել եւ նրա չափերը վերցնել. Նա կառուցւած է իբրեւ երկրորդ յարկ, կամարակապ մի բարձր յարկի վրայ, որի տակով է վանքի անցուդարձը կատարւում, երբ պարսպի գլխաւոր դռնից ներս են մտնում.*

*Մի քառանկյունի շենք է. չորս ճակատները եռանկյուն վերջավորությամբ կտրված ատամիկով, կենտրոնում բարձրանում է ութանկյունանի գմբեթը, որի կոնուսը, ինչպես երևում է, նման է Առաքելոցի գմբեթին, տարբերությունը թմբուկի մեջ է, որ այստեղ ութ անկյունների արկադների կիսասյուներով և կեղծ կամարներով են զարդարված (Նկար 22).*

*Եկեղեցու չափերն են 7.14 երկար, 5.1 մետր լայն (Աղք. Հանդէս). Ուստի գմբեթը յենված է այդ չորս որմերի վրա. թեև բացի արևմտյանից, մյուս որմերն ունեն ներս ընկած նիշեր, որ գմբեթին ավելի կայունություն են տալիս. Այստեղ էլ ապսիդը դուրս ցցված չունի. Պատմագրի գեղեցիկ նկարագրությունն այս է.*

«Եպիսկոպոսն Գրիգոր կանգնեաց կամարս ի վերայ գրանց, որ նայէր ընդ արեւելս եւ մերձ նմին տան սրբարանին, եւ ի վերայ սորա եկեղեցի մի գմբեթաւոր գեղեցկայարմար, յանուն սրբուհւոյ Աստուածածնին. Եւ էր նա իբրեւ դիտանոց բարձր, որ նայէր ի վերայ վանացն, եւ ի չորեսին կողմանցն հիմնեաց գաւիթս, բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք յօրինէր սրահս վայելուչս իւր փառաց ճոխանոց, եւ գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն» *(Պլ. Կ. էջ 321-22).*

*Գավիթ և սրահ այստեղ գործ է ածված իբրև համանիշ բառեր. ուրեմն շինության ներքևում շինված էին սրահներ, սյունազարդ, և Դիտանոց ածականը վերջերը ժողովրդի բերանում յատուկ անուն էր դարձել և այդ եկեղեցին սովորաբար կոչում են Դիտանոց, որ շատ լավ յարմարվում է նրա բարձր դիրքին և այն սքանչելի տեսարաններին, որ բացվում է շրջակայքի վրա այդ եկեղեցուց.*

*Եկեղեցու արձանագրության առաջին ընթերցողությունը տվողն էր Ջալալյանը, որ տարեթիվը սխալ է արտագրել և այդ սխալը կրկնել են Ալիշանն և ուրիշները.*

«Ի տրչապայութի. սուքար/ի ի հայկազեան Ծ (sic) յոթեղինաց եւ / Լ եւ Ջ թվոց ես Գրիգոր ամենանվաստս ծառա Քի. եւ ողորմութբ. Տոր ե/պիսկոպոս սիւնեաց կանգնեցի զկամարս / եւ ի վերայ զեկեղեցիս եւ զոր այլ օժնութիւնս է եւ որ այլ աշխատութիւն է իմ ի սուրբ եւ արդ/իւնքս վկան եկեղեցիս եւ յորժամ յաւարտումն / եկն ամենայն կամեցան եղբարք եւ կարգաւորք սուրբ վարժանաւոյս լինել ինձ եւ խ/նդրումք իմով կարգեցին քառասունս»: *Ճարտարապետությունը սովորական է (Տե՛ս Ջալ. Բ. 303, Սիսական էջ 236-7, Վիմ. Տար. էջ 24).*

*Արձանագրության Ծ տառը մեզ բավական չփոթեցրեց, որովհետև յոթեղենաց հավասար է 50ի, իսկ դրա փոխարեն համարելով որ դա փորագրության անճշտ սխալ է և կարդալով Ժ հավասար տասն անգամ 50, ստացվում է շինության ուղիղ թվականը, 500, գումարած 36, գումարած 551, ստացվում է փրկչական 1087, միանգամայն համապատասխան Գրիգոր եպիսկոպոսի պաշտոնավարության թվականներին. Նա Սյունյաց մետրոպոլիտ էր 58 երկար ձիգ տարիներով. վախճանվել է 1116ին, և, որքան պատմագրի տեղեկությունները են վկայում, այդքան ժամանակում [illegible] վանքի 1083, 1086, 1091 թվերին խոշոր նվիրաբերություններ է արել և ահա թե ինչո՞ւ իր արձանագրության մեջ հպարտությամբ յիշատակում է.* «այլ աշխատութիւն է իմ ի սուրբ եւ արդիւնքս, վկան եկեղեցիս»:

15.— Զանգակատունն *Տաթևում շինվել է ԺԴ. դարու սկզբներում, որ կանգուն էր մինչև իննսունական թվերը և ժամանակ հետո միայն քանդեցին. Նրա պատկերը պահված է գործեց Երմակովի լուսանկարում և արտանկարված վանքի ընդհանուր տեսարանի հետ նախորդ հրատարակություններում և մասնավորապես Սիսականում (էջ 229 և 237) (Տե՛ս նկար 1).*

*Շինությունը ձևով բավական տարբեր է Հաղբատի ու Սանահնի շենքերից (Տե՛ս նկարը յաջորդ). Նկատելի է նկարի մեջ ներքին յարկ մի փոքր գանով, որի վրա բարձրանում են չորս որմաշար քառակուսի սյուներ, աղեղաձև կամարներով միացած, ավարտայր և անկյունավոր ֆրոնտոններով. Դրանց վրա կանգնեցրած են միակտուր քարերից սյուներ, որոնց միացման կամարների վրա բավական նկատելի թմբուկ է և այդ թմբուկի վրա հաստատված է ավարտայր վեղարը, նման վանքի մյուս երկու գմբեթներին.*

*Զանգակատան համար ձուլված էին եր-*



*(Նկար 22)*

Տաթեւի Սուրբ Աստուածածին եկեղեցին հարաւարեւմտից խարխլուած։

կու զանգակներ պատմագիր Ստ. Օրբելեանի յիշատակարաններով. զանգակների շրթունքներին, ուղիղ խոշոր տառերով, ինչպէս Մ. Փափազեանն է իր Ալբոմի մէջ յիշատակում, արձանագրութեան ընդօրինակութեամբ։ Արձանագրութիւնը տուել է նաև Ալիշանը, միայն թէ երկուսի ընթերցուածների մէջ տարբերութիւններ կան. իսկ ոչ տեղեան անուշագիր չենք ընդօրինակել։ Ճարտի հետեւանքով այդ զանգակները անհետացել են։

«Տէր Սմբատ Սիւնեաց զանի կոչեա ի փառս ճայրենի անեղ եւն ձենդեամբ. ՉԾԱ (= 1302)»։

կատան շինուածքին միայն. ճաշի թաղանգակութեան մէջ խոսք չկայ բուն շինութեան մասին, այլ պարունակում է ճաշի բնարանի բացատրութիւնը։ Այդ ճաշը շատ յաճախ ընդօրինակուած է ձեռագրերում.

«Օրհնութիւն Նորակերտ ընծուածոյ ճաշարին եւ զանգակատան առաքելական աթոռոյ վանիցն Տաթևի, որ է աթոռ Սիւնեաց վիճակի ի բանն. / Տէր ի տաճար սուրբ իւրում»։

Հին փոխարէն նորակառոյց զանգակատունն էլ է հիմնայատակ կործանել վերջին շարժից։



(Նկար 23)
Տաթևի Ձիթհանքը։

«Տէր Սմբատ մետրապօլիտ Սիւնեաց որ է պրոտոթրոնոս ամ. հայոց. ՉԾԴ (= 1305)»։

Արձանագրութեան միւս մասերը չենք արտագրում։ Զանգակատան շինութիւնն Սմբատի շարայարութը վերագրում է Յոհան Որոտնեցուն, որ պիտի հաւանաբար այնպէս թէ Սմբատեանը պատրաստել է տալ զանգակները, բայց ետ ոչ ձեռն է շէնքը և աւարտել է Յոհան Որոտնեցին։ Ինչու է որ նրա վրայ արձանագրութիւն չկայ, այլապէս Զալալեանը ինչո՞ւ պիտի անուշագիր թողնէր։ Յոհան Որոտնեցին մի ճոխ ունի գրած, նուիրուած այդ նորակերտ զանգա-

16. — Երիցակի տաճար. Արձանագրութիւնները ժողովելիս, հիւսիսից հարաւ ձգուած պարսպի մէջ գտանք վանքի ամենահին թուականով մի արձանագրութիւն, որի մէջ ասուած է թէ Երիցակ վանականը շինել է տաճար։

«Զերիցակ Սիւնեաց վիճակաւ եպիսկոպոս յիշեա թվ. ՆԽ (= 991)»։

Պատմագիրը յիշատակում է Սիւնեաց եպիսկոպոսների թւում մի Երիցակի «ի մարգարէութեան Հայոց Վահանայ Մամիկոնեանի և ի հայրապետութեան տեառն Մաշտէի կաթուղիկոսի», որ Բագրատ գաւա-

ուում իր հգնօղական կեանքով եւ եկեղե-ցականութեամբ հռչակ էր ստացել և առաջ-նամբ ընթացող ստանձնողը պաշտօնավա-րում է միայն մի սարի և որ գլխաւորն է արձանագրութեան թուականը 991, ամենե-ւին չի յարմարւում հինգերորդ դարու ա-ռաջնորդին. Տաթեւում կան միայն երեք եկեղեցիներ եւ դրանցից ոչ մէկն էլ չի յի-

Ծուբինները.— Առաջնորդական ընդունարան բաւական երկար կամարակապ շէնքը կոչ-ւում է Թանաքի. գտնւում է Հուսատուրչւա եկեղեցուց հարաւային մասում. ունի մի պատուհան եւ դուռ, որ նայում են ձորի անդունդին, որի վրայ կախւած է մի փոքր պատշգամբ, աջանշելի տեսարանը վայելող-ների համար. Ընում յիշւում է Տաւնս նա-



*(Նկար 24)*

Տաթեւի վանքի աւերակները (յետ երկրաշարժի).

չառափւում. Կամ տանար առնելով պիտի հասկանալ ոչ թէ եկեղեցի, այլ մի այլ շէ-նութիւն. Մենք յետոյ կը տեսնենք, որ Դադի վանքի ընդունարան սրահի անունն է Տանար, այդպէս արձանագրւած շինու-թեան ճակատին.

17.— *Օրբելեանից յետոյ յիշւած Ծի-*

ատրակոյ, որ կարելի է հասկանալ կամ վանքի հիւրատունը կամ այցելու ուխտա-ւորների կացարանները. Մինչեւ հին ժա-մանակների համար վանական միաբանական կացարանների արուեստ է Վանք, Ծարկ կրօ-նաւորաց անուններ. Անանուն չարայարողը գործ է ածում, Ծննակ, խուց, Հովանոց անուններ.



*(Նկար 25)*

**Տաթեւի վանքի աւերակներ (յետ երկրաշարժի)։**



*(Նկար 26)*

**Տաթեւի վանք, 1931 թ. երկրաշարժի պատճառած աւերը։**

Տնտեսական շինությունների մեջ յիշ-ված են Ձիթհանքը, որ ներկայումս գըտ-նվում է պարսպից դուրս, հիւսիսային կող-մում եւ հասարակ քարաշէն մի կառուց-վածք է (նկար 23)։ Գինետուն կամ Շիրա-խանայ, որ տարբեր է Հնձանից, որ մի առ-



(Նկար 27)՝
Տաթևի նոր զանգակատան աւերակները։

ակ գործարան է խաղող ճմլելու համար։ Հին Տրապեզի փոխարէն գործածական է դառնում Սեղանատուն բառը, որին կից կան Հացատուն և Խոհանոց։

Անհամարելի այն բոլոր եկեղեցական, տնտեսական եւ բնակարանային կառուց-վածքները, որ անհրաժեշտ մասն էին կազ-մում Տաթեւի մեծ վանքի եւ որոնց մեծ մասը, դարեր իրենց հովանու տակ պատս-պարելով վանականների բազմաթիւ սե-րունդներ, վերջերս արդէն ամայի էին թող-նված, քանի որ վանքում այլ եւս չկար և ոչ մի վանական. իսկ 1931ի առհելի եր-կրաշարժը եկաւ հիմնովին քանդելու հայկական հին կուլտուրայի և շինարարա-կան առեղծագործությունների այդ յուշար-ձանների մեծագույն մասը (նկար 24, 25, 26, 27)։

## Ա. ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Յամին յորում թագաւորն հայոց ՅԵՆ էր եւ զատիկն ի նաւասարդի ի Դ. ես տէր / Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի տեառն Սաղմոնի / արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս» (Տե՛ս Օրբել. Պատմ. Դլ. ԽԱ. էջ 221).

Արձանագրության մեջ «զատիկն ի Նավասարդի ի Դ.» գործածությունը քննելի է, որովհետև Հայոց Նավասարդ ամսում, այն է հայկական նոր տարում, զատիկ չինել չի կարող.

2. Հյուսիսակամ պատերի մեջ պահված հին ագօթատան արևմտյան պատի վրա կան 10 արձանագրություն. Դրանցից հնագույնն է երկանգք պատուհանի ներքևում, թեով ուխ սալքարերի վրա, մի աղոտ, մեջտեղից մի փոքր թեք գծով գրված.

«Զor. յովաննես զսիւնեաց եպիսկոպոս շինող սրբո եկեղեցոյս յիշեցէք —————».

Այս արձանագրությունը առաջին ընթերցողն էր, նախ քան ագօթատան քանդելը, Ջալալյանը (Հա. Բ. էջ 303). Այնուհետ այս արձանագրությունը վերագրված է երկրորդ Յովհաննէսին, սակայն որ և է պատճառաբանությամբ, կարծելով որ արձանագրությունը գտնվում է արտաքին վրա (Տե՛ս Սիսական էջ 231, կրկնված նաև էջ 235).

3. Նույն հյուսիսակամ պատի մի սալի վրա կա արձանագրություն, խոշոր հին երկաթագիր գրերով, նախընթաց արձանագրության տառերը հիշեցնող. Հավանական նույն ժամանակից.

«Կատա/րեցաւ».

4. Նույն հյուսիսակամ պատի պատուհանից վերև մի սալի վրա, հին բայց ավելի մանրատառ երկաթագրով. Հավանական ժամանակակից մի արձանագրություն.

«Ըսքե/փանոս աշխաս/ւոր յիշեցէք».

5. Գլխավոր, հ. 2 արձանագրության ներքև, մի շարք սալերի վրա փորված են բազմաթիվ հատտրակ խաչեր, հետևյալ ներքևում հինգ սալերի վրա, երեք աղոտ, գտնվում է եռասող մի արձանագրություն, գործել ավելի փոքր երկաթագիր տառերով. որի աղդեցությունից մաշված և դժվար ընթեռնելի. Ես այդ արձանագրությունը կարողացա կարդալ միայն «Հայրապետ» և «Քվ. ՇԴ» և մի քանի բառեր, որ միտք չէին տալիս. Երկար աշխատելով կարելի է կարդալ.

6. Նույն հյուսիսակարով պատի վրա կան վեց գեղեցկափոր խաչեր, որ ագօթատան քանդողները հավաքել և վանքի մի սենյակի մեջ են դարսել. Դրանց փորագրության ոճական նմանությունը միմեանց հետ ակնբախ է. չորսն ունեն արձանագրություն, երկուսն՝ առանց. Դրանցից Յովհաննէս եպիսկոպոսի անթվական խաչքարի մասին մեր յուշատետրում նշանակել ենք. «կոփելի գույնի սալ տարբեր շինության ավերակների քարերից». Պատի մեջ ամենաբարձր տեղում, պատուհանի աջից վերև է Հայրապետ եպիսկոպոսի խաչքարը.

«Զor. Հայրապետ սիւն/եաց եպիսկոպոս յիշ. Թ. Ջի» (= 1271).

Խաչքարիս լուսանկարը տես Սիսական էջ 561.

7. Նույն պատի վրա, լուսամուտից դեպի ձախ, կա մի զարդարուն խաչքար, խաչի ներքևում արձանագրություն.

«Զor. Յովաննես յիշ/եցէք ի քս. Թ. Ջի» (= 1271).

Այս քարը նույնպես մենք տեսանք սինոդարդ սենեակում.

8. Նույն պատի վրա կա Յովհաննէս եպիսկոպոսի գեղազարդ խաչքարը, անթվական արձանագրությամբ. արտանկարված Սիսականում (էջ 297) և Սարգիսովի (էջ 257). Իսկ մենք տեսանք սինոդարդ սենեակում.

«Զor. Յովաննես շինող սրբո եկեղեցւոյս».

Այս արձանագրության մասին մեր կարծիքը յայտնել ենք նախընթացում.

9. Լուսամուտից դեպի ձախ, մի կիսամաշ սալի վրա կարդացվում է.

«... յի/շեցէք ի քս.».

10. Նույն պատի վրա, գեղեցիկ խաչքար, խաչազարդերով, որի վերի երկու անկյուններում «Դր» «Ար». վերջին բառը փակագիր. ընթերցանությունը չենք համարում վերջնական.

11. Նույն պատի վրա, լուսամուտից ձախ, մի սալի վրա.

«Զգրիգոր զ/Վարդան / յիշեցէք»։

*Բացի յիշուած արձանագրութիւններից եւ խաչերից, ազօթատան այդ ամբողջ պատը ունի եւ այլ զարդեր, շրջանակներ, երկու զարդաքարեր, մէկը լուսամուտի գլխի երկ-բաժանման տեղում. բազմաթիւ փոքր, քանդակուած խաչեր, երկուսը ռելիեֆ, բաւական մեծ։ Դրանք ներկայացնում են իբրեւ հաջորդական փորագրութիւններ։*

12. *Այստեղ յիշենք Տաթեւում գըտնուած ամենահին արձանագրութիւնը Լուսամուտի արեւելքում. Հիւսիսից հարաւ ձըգուած պատի մէջ.*

«Ձերիցակ Ս/իւնեաց վա/նական ե/նեղ ա/նարի յիշ/եա Տւ. Թ. Նես» (= 991)։

13. *Վանքի Առաքելոցի փայտեայ գեղեցիկ փորագրուած դռան վերեւի արձանագրութիւնը — ներկայումս Երեւանի Պետական Հնութեանց Թանգարանում — կիսով չափ փչացած է, մենք արտագրել ենք, երբ փչացածներ չկային.*

«Է։ ՉՌ ես տր. Հայրապետ ծառայ քարձրելոյ / կանգնեցի զդրանս Առաքելոցի / զգուշա զիս աղաւթս յիշեցէք աղաչեմ» (*Տե՛ս Սիսական էջ 236, Ազգ. Հանդ. էջ 142*)։

14. *Առաքելոցի արեւմտեան պատի լուսամուտի մի փոքր քարեր, տեղադրուած է մի քար, նման Հայրապետի խաչքարին, զարդարուած գեղեցիկ քանդակներով. վրայի արձանագրութիւնն է.*

«ԶՑոհանէս երեց / սողոց յիշեցէք» (*Տե՛ս Սիսական էջ 235, կարդում է «որդւովքն»*)։

15. *Նոյն պատի վրայ, աւելի դէպի հարաւ, որմաքարերի վրայ արձանագրութիւն.*

«Հրամանաւ ածապան / ռէռանց եւ յաւժարու/թեամբ իմոց կրաւնաւորաց եւ ի նոյն աա/րհս ի յեւթներորդ գ···յս արաց կանգնեցաւ արձանս»։

*Վեցերորդ տողի մէջ երեք տառ ծռուած են անընթեռնելի. կարելի է գուցէ լրացնել «ամ(սոյ) արաց»։ Արձանագրութեան էական մասը վերջից վեց տող ծածկին մեզ անընթեռնելի։*

16. *Այս արձանագրութեան կողքին կայ մի երկրորդը, որ մաշուած եւ գժուար ընթեռնելի էր. Ալիշանի մօտ նոյն տեղում յիշուած է հետեւեալը.*

«Աւգնեայ մեղ Քս. զՑոհաննէս անարժանս ի քահանայս յիշեցէք» (*Սիսական էջ 235*)։

17. *Նոյն պատի վրայ, աւելի հիւսիսային կողմն ընկած, գտնուած է հին գրերով արձանագրութիւն, կողքին մի խաչ փորած.*

«Զհայր Ցա/պու յիշեց/էք» (*Սիսական էջ 235*)։

199. ա. «Այս է հանգիստ Թադորսի որդի Սաւու
բ. ռին կանկնեցուց կենակիցն իւր թվն ՌՃՀԱ» (= 1722).

*Եր. Լալաեանն ունի երկու արձանագրութիւն, որ ես չեմ նկատել ու արտագրել.*

200. «Այս է հանգիստ Դե . . մանկան պրն Սմպատին յիշեցէք ի Քս թվ ՋԽԴ» (= 1495).

201. «Ես Թադվոր եհրան Սոլթան կանգնեցի խաչս փրկութիւն հոգւուն մերում, թվին ՋԽԳ» (= 1494). *(Ազգ. Հանդ., էջ 105).*

## ԺԵ. ՀԻՆ ՀԱԼԻՁՈՐ

*Տաթեւի անապատների արձանագրութիւնների ժողովման գործը վերջացնելուց յետոյ վերադարձայ Տաթեւ։ Երկու ճանապարհ կայ. Ուղթափալար կոչուած գաւառավայրով, Սատանի կամրջից բարձրանում էք դէպի արեւելք, եւ Հալիձոր գիւղը չմտած, բարձրանում էք լեռնադաշտը եւ մինչեւ Տաթեւ ճանապարհին ոչ մի գիւղի չէք հանդիպում։ Սա յարմար, կարճ եւ սովորական ճանապարհն է։ Ուղթափալարը ամբողջ տարածութեամբ իջնելով դէպի հարաւ, վերջանում է պարսպանման ցցուած գառիվայրերով. այդ գառիվայրերի վրայ, ժայռերի տակն են շինուած մի շարք հայ գիւղեր։*

*Գիւղերի տեղի ընտրութեան համար մի քանի պատճառներ կան. հարթ տարածութը ձմեռը ծածկուելով ձիւնով, ենթակայ է բուք ու բորանի, խմելու ջրերը պակաս են, բայց գլխաւորը՝ ժայռերի տակի գիւղերի բնական ամրութիւններն են ներկայացնում, որոնց թշնամին հեշտութեամբ ներս խուժել չի կարող։ Այդ բոլոր գիւղերը միմեանց հետ հաղորդակցութիւն ունին թէ լեռնադաշտով եւ թէ գառիվայրի փեշերից, բայց յարմար եւ անցանելի են միայն ձիով եւ ոտով եւ ոչ սայլերով։*

*Այժմեայ չէն Հալիձոր գիւղի մօտն է Հին Հալիձորը, տների քարակոյտ ներկայացնող աւերակներով, գերեզմաններով եւ խաչարձաններով։ Դէպի Շնհէր տանող ճանապարհին կայ մի բլուր, որտեղ մի հին աւերակ. մատուռի մօտ արտագրեցի այս արձանագրութիւնը.*

202. ա. «Անուն Այ ես Տարսայ,
բ. ինս որդի Լիպարտի
գ. զՀալիձորս շինեցի
դ. ր Ավնասր Ավինոց մարմանդ

ե. ովն Սիրանես քարգործին ն
զ. երենիք ովի որդիք բոռն եւ բ
է. ռնռ (?)
ը. ու
թ. Սիրանես քարգործն ե
ժ. կեղեցի շինեց անվարձ
ժա. Նորավանաեսգոյն նրայդասմա
ժբ. ն փոխարէնի արարի որ նրայ
ժգ. նայրենիք յնի յազգէ յազգ ո
ժդ. վ զայս գիրս խափանելոյ ջան
ժե. ա յիմոց կամ աւտարաց ՈԺԸ նա
ժզ. յրապացն նզոված եղ
ժէ. մասնոյ բաժին Յոդաի
ժը. առջէ նասաստայ գիրս.
ժթ. Սա որ Հայր. վկայ եմ
ի. Եւ որ Սարգիս վկայ եմ»։

*(Ազգ. Հանդ., էջ 41)։*

*Տարսայիճ իշխանը իր աւագ եղբայր Սմբատին թաղում է «ի Հայրենի գամբարանն սուրբ ուխտին Նորավանից, ի թուին ՉԻԲ» (= 1273), եւ ինքը մեռնելով՝ «դնի ընդ եղբօր իւրում Սմբատայ, յիւրում ձեռակերտ գամբարանին, ի թուականին ՉԼԹ» (= 1290)։ Հաւանական է ընդունել, որ արձանագրութեան մէջ յիշուած Սիրանէս քարգործը Նորավանքում հէնց այդ եկեղեցին է շինել և իրեն վարձատրութեան մշտական ժառանգութիւն յիշուած կալուածքը ստացել եւ կտակագրական արձանագրութեամբ յաւերժացրել այդ գառման փոխարէնը։*

*Նոյն տեղում.*

203. ա. «Կամաւն Այ ես Հզմամել
բ. ու Սիրանես կանկնեցի սբ.
գ. խաչս նորն մերոյ Գորք
դ. ա մորն մերոյ Թենիկա»։

204. «Այս է նանգիստ Ճանրիարին»։

*Հետագայն ձեւի գերեզման.*

205. «Ած ողորմի Նարինա»։

206. ա. «Ջեսորմեր յիս
բ. եգէք ի Թս բվ
գ. ՊԿԳ» (= 1414)։

*Հայիմոր գիւղում չորս արձանագրութիւն վերջացել է մեր ուշադրութիւնից, որ գտնւում են Սիսականի ու Ազգագրական Հանդէսի մէջ։*

207. «Այս է տապան Առաքել վարդապետի առաջնորդի Սսարքի վանուց. ՌՃԿ» (= 1711)։

208. «Այս է տապան Փարսադանի կողակից Ոհանանին. ՌՃՂ» (= 1741)։

209. «Ես Արզուս կանգնեցի զխաչս ստառն իմոյ Եղեկի եւ որդւոյ իմոյ Պապկոյ նոյնոյն. յիշեցէք ի Քս. թվին ..ԿԱ»։ *(Տէր-Միսաքեան, էջ 258. Նոր-Դար, 1891, թ. 159)։*

210. «Ի թվիս ՉԺԴ (= 1265) ես Դրիգորիկ բազում աշխատութեամբ եկի զառցոն (?) ամենեցի զբուխուրեկոռայ կեռս ի գիս վայելուչ այ (?) իմաստութեան ածասեր պարոնացն Սմբատայ եւ նարազատի իւրոյ Տարսայինին։ Ես Տարսայինս գիր ովի նայրենեացս . . . բե որ ի նայոց . . . ի տանկաց խլեալ ԼԾԸ (?) նայրապետաց նզովեալ եղիցի»։

*Աղեյայանի անուշագիր ընթերցանութեամբ է արտագրուած. տես Ազգ. Հանդ.* 1898 *Դ., էջ* 41, *Վիմ. Տար., էջ* 108։

## ԺԶ. ՇՆՀԵՐ ԳԻՒՂ

*Այդ գիւղում գտնւում էր կուսանոց, որ մինչեւ վերջին ժամանակները կոյսեր էին ապրում, իսկ այժմ միւս անապատների պէս անմարդաբնակ է դարձել։ Կուսանոցի մասին եկեղեցու արձանագրութիւնը լաւ տեղեկութիւն է տալիս։ Հարաւային դրան ճակատին փորագրուած է.*

211. ա. «Ի թվին ան մերոյ Ոի
բ. Թս ՌՃԻԵ (= 1676) իսկ Հայոցն թիւ ՌՃԻԵ եղեւ շինութի եկեղեց
գ. յս եւ արդ մեք աղախնեքս որք ժողվել կայաք աստ
դ. յանկարծ բլով անձինս :Ձ: զկնի կամաց շի
ե. նրբ սանս շարժեալ նզյն (ա)յ ոմն քս
զ. ասէր մնդոյի Աղարի յանուն որ էր շեղ
է. եւ յազիլ(ոյ) զ.. եւ եկլ իւր կամաւ աստ
ը. ն եւ բազում աշխատութբ եւ նայլայ վասեկց իւրց շինեց զե
թ. կեցցիս արքեկի Դ. սկզբն արար եւ սեպամբրի Լ. կերե
ժ. ց վս որոյ աղաչեմք զկնի մեր եկլ քրցդ եւ կս
ժա. անցդ մի մ
ժբ. ռոնլ զերախաք եղբորս մե.. նռեցիա»։ *(Չալալ., էջ 308, Ազգ. Հանդ. Գիրք Դ., էջ 44, Միսաքեան, էջ 259, Վիմ. Տար., 193-4)։*

212. *Սեղանի ձախ կամարի վրայ.*
ա. «Շնորհօք սբ նշյն երնեկցի ունս աղ
բ. աւինին թվին հյոց ՌՃԻԵ ի նրա
գ. պետութե որդն տեառն Մկրյ
դ. եւ ի թգրութե պրոց Ճան Սու
ե. լեմանին եւ արնեպիս երկրիս սեր
զ. ուն ՕՆՆփսի»։
*(Ջալալ., էջ 307–8, Սիսական, էջ 258, Տաճ. ձն. 5, Ազգ. Հանդ., էջ 43, Վիմ. Տար., էջ 193)։*

213. *Սեղանի աջ կամարի սեան վրայ.*
ա. «Ազգմամբ սբ նշյն ես ամենա
բ. մեղս մեղաց Ազրիա որ եմ աղետ
գ. ի յԴիլէզ Դոսեն եկի ի ժղվրս
դ. Ես կանց եւ եսու ենել զկղե
ե. ցիս ի չրս աղրիկի սկսի եւ սբ
զ. սեմբրի Լ աւարտցի որ է ա
է. մին ի ծնընդենէն Քի ՌՋՃՀՉ, եւ ա–
պաշեմ զմենսե
ը. սղ որմ սաս կամ յղօրս ի մեջ
թ. ենրիս յեղլ զմեզ եւ զծնողսն մեր
զհյրն իմ մահի Մի
ժ. եարզւլին եւ զմայրն իմ զՀը
ժա. ռփսիմէն եւ զկնկիցն իմ զ
ժբ. Ոսկին եւ զրդին իմ զ
ժգ. Գորսն եւ զԿենիամին ամէն»։
*(Ջալալ., էջ 308, Սիսական, էջ 259, Ազգ. Հանդ., էջ 43, Վիմ. Տար., էջ 185)։*

214. ա. «Ես անարժան մանեսի Բինի–
ամէն
բ. որ եմ երկրեն Դուլբնիցս Դասս
գ. են եւ եմ ս (*գրած է Ս*) րդի
մանեսի Ազարիեն
դ. որ ես եինել սալտրս եւ ես
Նորոգ
ե. եալ աալն Միռասալ Նոզոյս
զ. կենկից Մարջարեին նանզուց
է. եալ եկբայր մանեսի Գեորգին
ը. իւր որդոյն Նիկողոսին Հայրա–
պետին
թ. որդին իմ Ովանեսին Մկրեսին
ժ. Կարապետին թվ. ՌՃԿԹ»։
*(Ջալալ., էջ 308, Ազգ. Հանդ., էջ 44, Սիսական, էջ 230, վր. ունին «Յիշեցէք ատայ Մարգար յերկրէն Որդուբադու»։ Վիմ. Տար., էջ 206–7)։*

215. *Եկեղեցու արեւմտեան դրանը տեղ փորագրուած է մի խաչարձան, յիշատա–կարանով.*
ա. «Ես Հոգիդեղ կազնեցի զխ
բ. աչս ճաւր իմ եող(զ)ախս յիշեցէք ի
Քս թվ. ՉԷ»։
*(Սիսական, էջ 259, Ազգ. Հանդ., էջ 43, Վիմ. Տար., էջ 122, Լալայեանը սխալուել է Սիսականից, կրկնել է նրա սխալները եւ իւր կողմից էլ սխալուել է։*

216. *Հարաւային պատի մէջ խաչքար.*
ա. «Սբ խաչս յօղկ է
բ. Ծառին եւ իւր ծնողց
գ. ·առն եւ Ափրին թ. ՌՃԻԵ»։

217. *Դարձեալ նոյն պատի մէջ.*
ա. «Ես Յոհան կանգնեց
բ. ի զխաչս եղբաւր իմ ՍՆ
գ. պասայ եւ ամուսնո
դ. իմ Թամամա
ե. թվ. ՉԱ» (= 1281)։

218. *Անապատի ուղի ընդարձակ սե–նեակում, մեծութիւնն է 17 քայլ, հինգ քայլ լայն, ցածր կամարակապ շէնք։ Դրան ճակատին գրած է.*
ա. «Շինեցաւ
բ. թն. ՌՃԿԹ (= 1720)
գ. յիշատակ է սեղանատունս
դ. որ ի երկրէն ի Դողենինաց
ե. ի գեղջէն Ցղնցի Դլանի որդի
զ. Ովանէսին եւ իւր որդի Ածատուրին»։
*(Ազգ. Հանդ., էջ 44)։*

219. *Անապատը շրջափակուած է պարս–պով, որի մէջ ամրացրած է խաչարձան.*
ա. «Ես Առաքս Սանոնեցի
բ. զխաչս ճաւր եւ
գ. մաւր եւ եղբաւր իմոյ յիշ
դ. եցէք ի Քս»։
*Առաջին տողը կարելի է կարդալ նաեւ «Առաք Սանոնեցի»։*

*Գիւղի այգիների մէջ է Տաթեւի վան–քի այգին, մէջը հին մատուռի աւերակ, որի շուրջը գերեզմաններ եւ խաչարձան–ներ։*

220. *Խաչ փոքր, հասարակ.*
«ՁՍոփիանոս ..եցի յիշեցէք ի Քս»։

221. *Աւելի մեծ խաչ, կարմրագոյն, ձանրագրութիւնը եղծուած, ընթեռնելի միայն մի քանի տառեր.*
«Թվ. ՉԻ» (= 1271)։

222. *Երրորդ խաչքար.*
ա. «Թվ. ՉԽԳ (= 1294) ես Գա
բ. պաք
գ. կազն
դ. եցի

ե. գլխա
զ. շա
է. յիշեցէք ի Քս.։

223. *Գիւղի գերեզմանատուն, կալե-րից բարձր.*

«Այս է տապան Դաւթեցի մանգաղի Ն… այր ղուլի որդի Մարգարին թվին ՌՃԺԶ» (= 1667). Ո նման է Ոի.

224. ա. «Այս է տապան կոյսակրօն Ճնան
բ. դուխանին որ է դուստր Խաչա-պէկին։։

225. ա. «Այս է տապան Դաւթեցի վար-պետ
բ. Դոնարին որ է դուստր Յովա-նէսին թվ. ՌՃԾԱ» (= 1702).

226. ա. «Այս է տապան կուսակրօն Հռիփսիմէին որ դս
բ. որ Եղիսաբէթին ՌՃՀԳ (= 1724) թվին։։

227. «Այս է տապան Խնայծախեցի կու-սակրօն Հռեփսիմին թվն ՌՃՀԴ» (= 1725).

228. «Այս է տապան Դաւթեցի մանգա-ղի Նորայր ղուլի որդի Մարգարին թվին ՌՃԺԶ» (= 1667).

*Գիւղի եկեղեցին, որ շինած է կեն-տրոնում, քառակուսի մեծ է, կամարակապ, ոչ շատ հին. Անկիւններում գտնւում են հին ԺԴ. դարու գերեզմանաքարեր.*

229. ա. «Այս է հանգիստ Փաւայ
բ. Նանին

230. «Այս է հանգիստ Փարին։։

231. ա. «Այս է տապան Գինու որդի Առ
բ. աքելին թվ. ՌՄԱ» (= 1752).

232. ա. «Այս տապանս է օրհնեալ ի յուս
բ. տակի որ Մ
գ. լճի որդի Աղային թվ. ՌՃԾԵ» (= 1706).

*Եկեղեցու խորանում կան խաչեր.*

233, 234 և 235. «ՁԼԶ և ՁԽԱ». «ՁԿ կամ ԳԿ». «Կանգնեցի խաչս փրկութի հո-գոյս»։։

236. ա. «Ես Ոհես կկեցի
բ. խաչս մեզ եւ ծնեցելոց մերոց թվ. ՉԱ» (1352).

## ԺԷ. ԽՈՏ ԳԻՒՂ

*Խոտ գիւղը, նախընթաց գիւղերի նման ժայռերից ներքեւ շինած, ոչ հեռի նրան-ցից. ունի հին գերեզմանատուն, որտեղից արտագրել եմ այս արձանագրութիւնները.*

237. ա. «Այս նշան կանգնե
բ. ցեալ ի փրկութի հոգո
գ. Ավանիսին ծնողաց եւ եղբարց իւ
դ. որք յիշեսցեն ամենայն թվ. ՊԾԵ» (= 1406).

238. ա. «Թվ. ՉԾԵ (= 1306) ես Ովա-նես կանգնեցի
բ. զխաչս հաւր իմ Սա
գ. ազին մաւր իմ աղաւթս յի-շեցէք ի Քս.։։

239. ա. «Թվ. Չ(Ճ)ԼԱ (= 1282) ես Ճարվին
բ. տան տան *(կրկնւած տան)* կանգ-նեցաւ զ
գ. խաչս եղբաւր իմ Ճր
դ. վաւանի յիշեցէք ի Քս.։։

240. ա. «Թ. ի ՊՀԶ (= 1427) ես Գն-դիկու
բ. Կլմայես կանգնեցաւ զխաչս հաւր
գ. եւ մաւր եւ ազգի յիշեցէք ի Քս.։։

241. ա. «Ես Խիսան կզն
բ. սբ խաչս իմն։։

242. *Խաչ, պառկած, կարդացւում է միայն.*

«Թվ. Չ(ԽԴ)։։

243. «Ես Վաղաշխանեցի զխաչս .. Սար-գիս հաւր եւ մաւր իմո։։

244. «Այս է հանգիստ Մուրդին։։
*(Տապանաքար ԺԴ. դարու).*

245. ա. «Ես Մամ
բ. ախաբ
գ. ունս Տ
դ. արսինի
ե. ս ..ւորս կանկնեցինք զխա
զ. չս ի փրկութի հոգ
է. ս Մուրադին իեց։։

*Խոտ գիւղի դաշտում գտնւում է մի աւերակ վանք, որից կանգուն է միայն հա-րաւային պատի մի մասը, սիւներից մէկը եւ միւս մասերից բեկորներ. Շինութեան երկարութիւնն է 37 քայլ. Դրսից սրբատաշ քարերով էր, ներսից հասարակ. Հարաւա-յին կողմից ունեցել է երկու դուռ. Շուր-ջը տարածւում են հին գիւղի, կամ այլ շինութիւնների աւերակներ.*

## ԺԸ. ՔԱՐԱՀՈՒՆՋ ԳԻՒՂ

Քարահունջ, Գորիսի ամենամօտ գիւղն է, դարձեալ ձորակի տակ. ունի մի հին մատուռ, գիւղից ցած, մօտը գերեզմաններ եւ խաչեր.

246. Մեծ խաչ, լաւ քանդակուած.
«Ովէս թվ. ՌԿԲ» (= 1613).
247. Խաչ.
ա. «Սս Հարա.. կանկն
բ. եցի խաչս թվ. ՌԼԳ» (= 1584).
248. ա. «Եւլմանին կանկնեցի խաչս
բ. բարեխս ք. ՌՃԼ» (= 1681).
Թուականը մասամբ անընթեռնելի է, կարող է եւ ՌՀ լինել.
249. Կիսով չափ հողով ծածկուած խաչ, միայն թուականը կարդացի.
«Թվ. Ռ...»
250. Խաչքար, հողքին աստղանաքար.
«Եկեղեցին որ խաչս կանկնեցի ես Դաւ...»

## ԺԹ. ԳՈՐԻՍ ԳԻՒՂ

Գորիսը շինուած է բարձր բլուրների գոգում եւ մէջտեղ առանձնակի ցցուած բազմաթիւ բուրգանման փոքր բլուրների շուրջը. Այդ ցցուած քարեայ վիթխարի արձանները հեռուից քարացած անտառի նմանութիւն ունին. Մեծ եւ փոքր բլուրները լի են արհեստական այրերով, որ հնագոյն ժամանակներից մարդիկ ծակծկել փորել են և իրենց համար բնակութիւն շինել(*). Զագերի բնակարանները սփռուած են գաւառի բոլոր վայրերում, որոնցից հաւանական եւ գաւառի Զագամոր կամ Թաթարական հնչմամբ Զանգեզուր անունն է ծագում. Այրերի մի մասը թողնուած են անգործածելի, իսկ մեծ մասամբ յարդանոցներ կամ գոմեր են, հազւագիւտ դէպքում ներկայումս անգամ մարդկային բնակարաններ.

Այդ բազմաթարեան արհեստական այրերը մինչեւ օրս, որքան ինձ յայտնի է, գիտական նպատակով ոչոք դեռ չի ուսումնասիրել. Հնագիտական եւ ուշադրութեան արժանի են նաեւ գիւղի հին բնակարաններից մի քանիսը. Նրանք Հայաստանի այդ աշխարհամասի գիւղական տան տիպից, որոնցից մենք նկարագրել ենք մեր Հայ գիւղական տունը(*) գրուածքի մէջ, ամենայայտնի կերպով տարբերւում են. Այստեղ հանդիպում ենք երկյարկանի տների, արտաքուստ քաղաքների բուրգի նման, տափակ կտուրներով, առանց տան ներքի կրակարանի. Դրա կողքին ունեն յաճախ եւ ծածկուած են զարդագանդակ սիւներ. Ուշադրութեամբ ուսումնասիրողը նոյն տեղում հարուստ նիւթ կ'գտնի, քանի որ իրար կողքի պահուած են հնագոյն այրեր, զարգացմամբ եւ երկյարկանի կացարաններ, և նրանց մէջը ապրող բնակիչների կենցաղի համար որոշ գաղափար կ'կազմի.

Ես հնարաւորութիւն ունէի այդ անելու եւ ցաւում եմ որ չեմ կարողել այնտեղ երկար ժամանակամիջոցում. իմ միտքը զբաղուած էր ձեռագրեր եւ արձանագրութիւններ որոնելով.

Գորիս գիւղի հին եկեղեցու բակում տապանաքարերի վրայ կարդացի.

251. «Այս է տապան ար Մելքոնի որդի ար Մարկոսին թվ. ՌՄԼԲ» (= 1783).
252. «Այս է տապան ար Մարկոսի ար Բաղտասարի թվ. ՌՄԽԹ» (= 1800).
Գերեզմանատանն նշանակեցի.
253. ա. «Այս է տապան մեծի
բ. Մելիք Օհան իշխանի
գ. ի ՌՄԻԸ (= 1779) որ եղեւ
թվականին».
254. ա. «Այս է տապան ջհոյ Մելիք
բ. Օհանի որդի Մելիք Սեֆինին թվ.
ՌԿԲ» (= 1613).

## Ի. Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Հին Գորիսումն է գտնւում Ս. Գէորգ անունով եկեղեցին, կանգուն մնացած, բայց այժմ չի գործածւում. Զեւով բազիլիկ է, 23×6,80 մետր մեծութեամբ, կամարակապ, երկու դռնով, հարաւից եւ արեւմուտքից. Շինուած է հասարակ քարերով, բայց նորոգուել է, ապացոյց՝ պատերի մէջ

(*) Տեսնել նկարները Սիսեանի, էջ 201, Ազգ. Հանդ., 1898, Գ. էջ 174, Դ. էջ 20, արտատպուած Սիսեանից.

(*) Փարամազ Տէր Մովսիսեան, Հայ գիւղական տունը, Վիեննա, 1897, գերմաներէն բնագրից թարգմանուած.

գործ են գրված գերեզմանաքարեր։ Կամարները յենված են պատերից մի մետր ներս ընկած սյուների վրա։ Եկեղեցին ունեցել է գավիթ, որ այժմ քանդված է։ Շուրջը գտնվում են ավերակներ և բազմաթիվ գերեզմաններ խաչերով, տապանաքարերով և սալքարերով։

*Անշոր խաչարձան, գեղեցիկ քանդակված, եկեղեցու արևելյան մասում, մի մասը ներքևից ծածկված հողով։*

*Խաչքարեր.*

255. ա. «Ես Դեղիցեան Սանալ զան
բ. կննցի խչս հարն իմ Մարկոսին..»։

256. ա. «Ես Դիչիս կնցի խչ
բ. եղբարն իմ Միրադին»։

*Տապանաքարեր.*

257. ա. «Այս է հանգիստ
բ. Ոսլուին թվ. ՌԾԲ» (= 1603)։

*Անշոր քար է գեղեցիկ քանդակված.*

258. «Այս է հանգիստ Ղարախանին թվ. ՌՃԽԸ» (= 1699)։

259. ա. «Ի թվ. ՌԺԳ (= 1564)
բ. այս է հանգիստ Մարիոս..»։

260. «Այս է հանգիստ Ջհանգիրին աղայ Սաքանին որդի դուսար Դեսիանին թվ. ՌԱ» (?)։

261. ա. «Ես Աֆ(ր)անդաս կնցի խչս
բ. Աշխնգամին թվ. ՌԽԹ» (= 1600)։ *(Մեծ գերեզմանաքար է)։*

262. «Այս է հանգիստ Հախումին թվ. ՌԾԳ» (1604)։

263. ա. «Սյս է տապան խոջա Դաւութի որդի
բ. Խերխաքարին և կողակցուն Խաթունին»։

264. «Այս է հանգիստ Դաւութին թվ. ՌՃԽ» (= 1691)։

265. «Այս է հանգիստ Շահնազարին որդի Գենճանին թվ. ՌՃԾԷ» (= 1708)։

266. «Այս է հանգիստ տր Ովանես թվ. ՌՃԽԱ» (= 1692)։

*Սալքարեր.*

267. ա. «Այս է տապան պղընձագործ
բ. ուստա Շահրիմանին թվ. ՌՃԼ» (= 1681)։

268. «Այս է հանգիստ Մարիանին թվ. ՌՃԿԱ» (= 1712)։

269. «Այս է հանգիստ Ղազարին թվ. ՌՃԷ» (= 1658)։

270. «Այս է հանգիստ տէր Աղին թվ. ՌՃԼԲ» (= 1683)։

271. «Այս է հանգիստ Շահնազարին թվ. ՌՃԼԴ» (= 1685)։

*Գրերը գրված են թարս, ինչպես կնիքներում։*

272. «Այս է հանգիստ պարոն Հախնզարպեկին թվին ՌՃԺԴ» (= 1665)։

273. «Այս է սոյն պարոն Աստղովդեկին թվին ՌՃԻԱ» (= 1672)։

## ԻԱ. ՄԱՐՏԻՐՈՍ ԱՂԲԻՒՐ

*Սուրբ Մարտիրոս աղբիւր, գտնվում է գյուղից բարձր, հինավուրց ծառերով պաշտպանված, մինչդեռ շուրջ բոլոր այլես ծառի հետք չի մնացել։ Աղբյուրի վրա շինված է կիսախորան, արձանագրություններով, որ մասամբ եղծված է, երկու անկյունից կտրված։ Քարի վրա որ և է զարդ չկայ։*

274. ա. «Ցիսառւրբ որէ
բ. . . . ափար մեղե
գ. . . . ծնողաց բ. . խոսվս ի Քս
թվ. Չխ» (= 1291)։

## ԻԲ. ՀԻՆ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԳՈՐԻՍ

*Լսել էի, որ Հին Գորիսում մի ավերակ վանք կայ և այնտեղ գնալով գտայ այդ ավերակը։ Վանքը գտնվում է գյուղից ներքև, գյուղացիներից մեկի խոտահարքում. այժմ միանգամայն ավերակ է և թափված քարերից գյուղացին իւր խոտայի շրջապարիսպն է շարել։ Կանգուն մնում է մի փոքր կամարակապ ծածկ, մնացած եկեղեցու ներսի հետ փոքրիկ գանով։ Շինությունը մի մասը շինված էր տաշած քարերով, միւսը անտաշ, սև կարծր և ադխտակապույն փխրուն չեչ քարերով։ Ամբողջը շատ փոքր էր, մատուռանման։ Ոչ մի արձանագրություն չգտայ, այլ միայն երկու խաչքարեր 1,5×0,85 մետր և 1×0,78 մետր մեծությամբ։ Երկրորդի խաչը եռաթև է, անկյունները ողկույզով և շրջաններով զարդարված, առաջինը պարզ խաչ է, առանց որ և է զարդի։*

*Գյուղացու շարած պատի մեջ գտայ մի ուրիշ քար բուսական գեղեցիկ զարդաքան-*

ղանիներով, որը հանելով անդաստանքերի կան-գուն ծածկի տակ։ Վանքի մերձակայքում գտնվում են օրորոցաձև գերեզմաններ և ավերակ շինությունների մնացորդներ(*)։

Դիզի ձորակից մեծ թեքությամբ բարձրանում են քարե բլուրներ, գետակի աջ ափի բլրի ամենաբարձր տեղում կա-ռնման բարձրացած է մի ժայռ, որի վրա տեղացիների ասելով «Կիր կալ կի-րառ»։ Ուղղահայաց գծով բարձրացող դեպի այդ ժայռը և ուրախացող անխոնջ ցանկալով ցուցմունքը։ Իրոք որ այդ անդա-ստանձնակի ժայռի վրա արձանա-գրություն էր գրված Սիւնեաց Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով։ Նրա նախորդ Յակոբ եպիսկոպոսը այդ ժայռի ստորոտում էր անցրել այն նշանավոր ուխտը, որով անվանել էր Տա-թևի վանքի հանգիստական ջանիջայրը։ Որովհետև գեղի ձախ ափին և Սյունյաց Պատ-միչի պատմելու առասպելականությամբ «Զգոյշուան արար վերջացոյ»։ Յովհաննէսը փլված որմը նորոգել է և արձանագրել։

Ժայռը տաշված է ոչ թե գեղի գլուխը, այլ ցեղի արիը գործած երեսով, որը նախ ընտանիքից տարածուլ էր։ Տաշված մասի եր-կարությունն էր 2,26 մետր, 0,83 մետր լայն։ Տաշվածքի ձախ մասում արձանա-գրությունն է փորագրված, իսկ աջ մասում երեք երկթև խաչեր, քովէքով, 0,63×0,26 սանտիմ մեծությամբ։ Ահա այդ գրու-թյունը(**)։

275. ա․ «Յամի յորում էր թվ․ ՉԿԴ(***) ես որ Յովհաննէս կամաւ
բ․ Ն Այ եւ աղաւթիւք ծողեւոր հաւր մերոյ որ Հա
գ․ յապետս սորա զջուրս Վա-րարակին ի Վարդուան զ
դ․ որ ածապասի եւ ծողեւոր որ Յակոբ զննալ էր եւ
ե․ սորեալ բազում աշխատութբ եւ արդեամբ զխափան
զ․ եալն եւ բազում ժամանակաց կրկին նորոգեցաք յիս
է․ աստղ մեզ եւ ծախնեաց մերոց որք ճանդիպիք օք եւր
ը․ որդուցն յիշեցէք ի Քս։
(Արարատ, 1918 թ․ Դեկտ․ էջ 207)։

Առաջին անգամ տպագրված գտա, Ազգագրական Հանդես, 1898, էջ 129–30, սխալներով. Վիմական Տարեգիր, էջ 135։

Այս արձանագրության մասին գոյու-թյուն ունեցող գրականության մեջ այս ան-ճշտությունները կան. «Սյունյաց Յակոբ ե-պիսկոպոսը Տաթևի նշանավոր միաբանա-կաններից էր, նա բաց վկայության Սան-ճակաս Օրբէլեանի Դղյակցի էր, եղբօրորդի և ձեռնասուն Յովհաննէս Զ. կաթողիկոսի և սորանից ձեռնադրված. Տաթևի գահին տիրեց 918–938 թիվը, 40 տարի, և յայտնի դարձաւ իւր շինարարական գործերով։ Մեզ հետաքրքրող ջրի մասին Պատմիչը գրում է. «Սա զանձագին ածնէ զջուրն Զայե-ձորոյ որ Վարարակն կոչի, ի տեղւոջն Փի-լիպպէէ որդւոյ Վասակայ ընդ ԺԻԹ դրամի և մի յոստաւոր ջուհիրի, և բերեալ ի Յա-քուան որ հանդէպ վանիցն, յանկոյս գե-տոյն, և արար զամենայն վայրն ատապար և փլալից վարդօսու և անկալից. անկեալ բազում այգիս և որթատունկս, էարկ ասանես ի զանազան պտղաբերաց, ձիթենիս և թզե-նիս, և յամենայն մրգաբերաց, արար դրախ-տս զարմանալիս։ Եւ զարդարեալ զվայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծա-ռովք եւ քաղցրահամ որթովք, ի վայելումն եղբայրութեանն, և ի պէտս ամենայն կա-րօտելոց եւ աղքատաց։ Բայց սորանից, Յակոբ եպիսկոպոս նոյն անգամ «տաճարեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դրախտաւորացն եւ հարթեալ զգլուխ նորա արար պարսպափակ, եւ եդից զմէջն իւր բարձր գիտանոց, որ հայէր ի վերայ նորա զմրէթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք. և զորմ եւ զձեղուն նորա եւ զարդարեալ նկարչաց գանազան երանգով. նկարել զամենայն տէրունական եւ տէրունական պատկերս եւ զառաքելոց եւ զհայրապետաց, եւ բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս գմբէթս եւ դրէ ինքեան արձան յիշատակի»։

Յակոբի գրած յիշատակարանն է. «Ես Յակոբ ծնորհիւն Այ եպիսկոպոս Սիւնեաց, զննեցի զՎարարակ ջուրն յածապան ձեռամբ Փիլիպպէէ, Սիւնեաց ձեռանէ, ընդ ԺԻԹ դրամի եւ պատուական ջոհարի, եւ բազում ծախիւք եւ մեծամեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի չեռնեն

(*) Ազգ․ Հանդ․ 1892, Դ․ գիրք, էջ 30, չի յիշատակում այս վանքը։

(**) Արձանագրության վերջին մասը ավելի ուշ ժամանակվա գրերով փորագրված է. «Հար-գուած այս ցավուած»։

(***) Ազգ․ Հանդ․ ՉԿԱ։

Զաքարիայոյ եւ բերի ի Վաղարշապատ, եւ ընծայեցի որպէս սարկ՚ս եւ այլքն վայելուչս եւ զգեստս բազմածախս եւ պղնձեղէնս, ի վայելումն սուրբ հայրապետաց որ ի սուրբ աթոռս նստեալքն եւ սուրբ ժողովոյս եւ ամենայն հաւատացելոց Քրիստոսի։

Եւ չկայ յայս ջրոյս ճաշու ոչ Ներսեսեանց, ոչ Խոսրովանեանց, ոչ Ծննդեանց կամ Յայտնեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կարել եւ ոչ ի մարդ եւ ոչ պարտիզի ջուր տալ, զատ ի մասնակից ըմպելոյ մարդոյ եւ անասնոյ։ Եւ թէ ոք յանդգնի եւ զայս ջուրս կտրէ, այն գիտին ճզովեալ լիցի Այ եւ սուրբ Նշանիս եւ ՅԺԸ հայրապետացն որ ի Նիկիայն գումարեցան, եւ յամենայն սրբոց եւ ի մեծէ եւ բարձրէն Տեառն ընդ ուրացողս եւ կախաւորս լիցի յաւուր ահեղ ատենին Քրիստոսի. եւ ընդ սատանայի եւ հրեշտակաց նորա հարակ լիցի անշէջ հրոյն տանջանաց. ուր հուր նոցա ոչ շիջանի եւ որդն նոցա ոչ վախճանի. յՌՁԱ թուականիս գրեցաւ վէմս այս իմով ձեռամբ եւ կնքեցաւ մեր դովրական մատանեաւս ի կամս Աստուծոյ»։

*Ցակոբ եպիսկոպոսի խոշոր գործը ժամանակին աւերւում է եւ 362 տարի անց Ցովհաննէս եպիսկոպոսը, Ստեփանոս Օրբելեանի նախորդը, վերանորոգում է եւ ամրացված ժայռի վրայ իր յիշատակարանը արձանագրում, ինչպէս նրանից շատ դարեր առաջ սովոր էին անել Ուրարտական թագաւորները երկիրը ոռոգելու համար իրենց անցկացրած առուների մօտ գտնւող ժայռերի վրայ։*

*Այժմ էլ նկատելի են արխի հետքերը, որ երկար վերստեր կտրում անցնում է Ուչ-Թափալար կոչւած լեռնագագաթի միջով, Դորխո, Թարահունջ, Շնհէր, Խոտ և Հալիձոր գիւղերի արտերի միջով։ Տարածութիւնը իրաւ է շատ երկար է 20ից 30 վերստ, բայց դաշտի թեքութիւնը եւ համարեա հարթ դաշտավայրը ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում։ Ջրի ճանապարհին Վարարական ջուրը այժմ թափւում է Դորխոի գետակի մէջ. ոռոգման համար ներկայումս կորչում է միանգամայն անպտուղ, թափւելով Որոտն կամ Բարգուշատ գետը և այնտեղից Արաքս, մինչդեռ յիշած արտերում ամառը հաճախ անոջ գիւղացիները, ճանապարհորդները և անասունները ջրի մեծ նեղութիւն են քաշում, եւ որ գլխաւորն է՝ Տաթեւի գիւղացի Վարդանը գործով ջաքում է գործել և մրաջան ու շինարար եպիսկոպոսների ծաղկեցրած բուրաստանը գործով անապատի է վերածել։ Ներկայումս պայմանները չափազանց նպաստաւոր են և անհրաժեշտ է Յովհաննէս եպիսկոպոսի օրինակին հետեւելով, նորոգել դարերից խանգարւած մեծ ձեռնարկութիւնը։*

*Օրբելեանը պահել է նաեւ Փիլիպպոս իշխանի վաճառման պայմանը.*

«Կամաւն Այ ես Փիլիպպէ որդի մեծին Վասակայ Սիւնեաց, մեծաւ խնդրանօք կամաւորութեամբ վաճառեցի զՀարաւակայեանց ջուրն սուրբ Գրիգորին, որ իմ պապուն մեր Փիլիպպէի ընծայել էր ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթեւոյ, եւ գնեաց Ցակոբ Սիւնեաց եպիսկոպոս ընդ ԺՌՌ գրամի եւ մին մեծագին գոհարի, եւ վճարեաց զամենայն գինն ողջամբ, եւ ես առեալ իմ զգանձս եւ զմին գոհարն ի Ցակոբայ Սիւնեաց եպիսկոպոսէ եւ ազատ ետ ես եւ իմ զաւակունքս եւ ազգայինք զայդ ջրոյդ յայսմհետէ մինչեւ յաւիտեանս ժամանակաց. եւ չկայ Ներսեսեաց կամ Խոսրովեանց, կամ Ծննդեան եւ Հայելեաց յայդ ջրոյդ ճաշու, ոչ տաս եւ ոչ սակաւ, ոչ յարտ ճանապարհ եւ ոչ ի մարդ զատել, որ մարդ եւ անասուն ջուր ըմպեն ի մոգակ, եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանս անձն կամ յայլ ինչ, յԱյ եւ ի սուրբ Նշանէդ ճզովեալ եղիցիմք եւ զվերոյգրեալ ամենայն ստանն Ցակոբայ անճառ կենօք ժառանգեսցուք. Ած ընդհանուր առաջի սուրբ ուխտիդ եւ սուրբ եւ աստուածածնիդ հայրապետաց»(*)։

## ԻԳ. ԱԼԻՂՈՒԼԻ ԳԻՒՂ

*Ալիղուլի գիւղ. նշանակել եմ միայն երկու արձանագրութիւն։*

*Եկեղեցու արևելեան պատի վրայ.*

276. «Այս է տապան Պետրոսի որդի Աւետիս բ. ՌՃՂԳ» (= 1744)։

277. «Այս է տապան Պաղտասարի որդի որ Պաղտասարին որ ճանապարհեցաւ թվ. ՌՃՂԷ» (= 1748)։

(*) Տես Օրբելեան, Պատմութիւն, Գլ. ԻԹ., Ջալալեան, Ճանապարհորդութիւն, Բ., 274-75, Սիսական, 228-29. 260-61. Ազգագրական Հանդէս, 1898, Գիրք Գ., 128-130։

## ԻԴ. ԽՆՁՈՐԵՍԿ ԳԻՒՂ

*Խնձորեսկ գիւղ, Զանգեզուրի ամենամեծ գիւղը, թէ բնակչութեամբ և թէ մանաւանդ իւր փռուած դիրքով։ Բնակիչների մեծ մասը առկաւին ապրում է գետնի մէջ փորւած ծակերում կամ այրերում. տներ կան, որոնց մէջ մանելն ու ելնելը համարեա անկարելի է, եթէ բնիկների վարժութիւնը չունենաք։ Վերին աստիճանի հետաքրքիր են մանրամասն ուսումնասիրութեան ենթարկել այդտեղի բնակարանները, որոնց շատերը հնագոյն ժամանակներից են մեզ հասել, որտեղ ոչ փայտն է փտել, ոչ արհեստական պատերը փլչել։ Բնութեան պատրաստած, կամ մեծաւ մասամբ մարդկային ձեռներով միանգամ փորւած ծակերը կամ տները իրաւ որ կարող էին, և դարեր են դիմացել։*

*Գիւղի կենտրոնում է եկեղեցին, սովորական շինութիւն, հասարակ քարերից շինւած. արձանագրութիւններ.*

278. ա. «Թվ. ՌՃԺ եւ Բ եր (= 1663)
բ. յիշատակ է սբ Հոփփսիմա եկեղեցիս եւ Պետրոս որդի Թուրա
գ. կս ջինել սուփ սբ եկեղեցիս ի ճալալ արդ
դ. եանց խմոց յիշեցէք զիս ի Քս».
*(Ազգ. Հանդ., էջ 34).*

*Թակում, ոչխարանման տապանաքարի վրայ.*

279. ա. «Այս է տապան սբ էնմիածնա
բ. Նվիրակ
գ. Մեսրոպ վրդի
դ. թվ. ՌՄԻԱ» (= 1772).

280. ա. «Այս տապան Նազարի որդի
բ. սարկաւագ Ոհան
գ. ին թվ. ՌՃՀԳ» (= 1724).



*(Նկար 28)*
Մխիթար Սպարապետի գերեզմանը Խնձորեսկ գիւղում.

## ԻԵ. ԽՆՁՈՐԵՍԿԻ ԱՆԱՊԱՏ

*Այս գիւղում ևս եղել է մի անապատ, որ այժմ այլ ևս չկայ. բնակիչները քանդել ուսումնարան են շինել. քանդւած է նոյնպէս շրջապարիսպը. Այդտեղ կարդացի այս արձանագրութիւնները.*

281. «Այս է տապան Ոհան վրդին թվ. ՌՃՂԷ» (= 1748).

282. «Այս է տապան տր Բարսեղին թվ. ՌՃԿ» (= 1711).

*Դաւիթ Բէկի նշանաւոր գործակից Մխիթար Սպարապետի գերեզմանի արձա-*

*Նորոգութիւնն է. որի նկարը առաջանք Ս. Լիսիցեանից (նկար 28)։*

283. ա. «Այս է տապան ի հանգիստեան իշխան մար(մն)ով
բ. ի գերեզման սայ Մխիթարի մեծի անուամն
գ. սորա՝ սեր իշխանութեան սայ քաճաւրաս
դ. գնաց սիվան որ է երկրեն սայ Կաննուվ եր
ե. Նանաս
զ. ակեցա
է. թվ. ՌՃՀԶ» (= 1727).

(*Ազգ. Հանդ.*, էջ 35, և 1904, XII, 197)։

284. ա. «Այս է տապան Կորչու որդի Սարգիսին որ է
բ. Նորեակ բաժնոր եր թվ. ՌՄՂԱ ին» (= 1842).

*Գիւղի մէջ տեսայ եւ այս գերեզմանները.*

285. «Այս է տապան Պասուն որ է որդի Մայիլին թվ. ՌՃՀԶ» (= 1727).

286. Այս է . . Թումային թվ. ՌՃԻԷին» (= 1678).

*Աղբիւրներ, գլխաւորը գրական տեղեկութիւնների համար Սիսական*, 220–222, 256–60, 261–263, 264, 360. *Ազգ. Հանդ.*, 1898, Գ. 160–68, Դ. 33–36, 40–46. *Ջալալեանց*, Բ. 306–9, 311–13. *Արարատ*, 1918, Դեկտ.։

## Բ.

# ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԸ

## ՍԱՂԱԽԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Այս վանքը եւս Տաթեւի նման շինուած է առանձնացած եւ բաւական հեռու բնակչութիւնից. հաւանական այդպէս էր և հիմա, որովհետեւ նրա անմիջական շրջապատում գտնւում են միայն վանական շինութիւնների աւերակները. Շինութեան տեղը շատ գեղեցիկ է եւ բնութեան տեսարաններով հարուստ. Թէեւ հեռու է Տաթեւի արտասովոր գեղեցկութիւններից. Աղստեւ գետի ձախ կողմից հոսող մի գետակ իր երկու [illegible] մի տեսակ թերակղզի է կազմում Ղազախի լեռնաբարձունքներից դէպի հարաւ-արեւելք իջնող փէշերի վրայ, մի քառակուսի կիլոմետրաչափ անընդհատ հարթութեամբ. Այդ հարթութեան հիւսիսում մի լեռ է բարձրանում, միանալով Փամբակու լեռնագօտիների հետ, իսկ հարաւից արագութեամբ իջնում է մինչեւ Աղստեւ գետը, հեռուն տարածւող եւ ընդարձակ հորիզոնով. Ահա այդ հարթութեան վրայ է շինուած Հաղարծինի պատմական վանքը.

Վանքը շրջապատող բարձունքներն ու ձորերը ծածկուած են խիտ անտառներով, միջնակայ գիւղեր չունենալու հետեւանքով սովորական անխնամ եւ անհաշիւ ոչնչացումից ազատ մնացած. Դրա ամենամօտ տեղերն են Դիլիջան ամարանոց-կուրորտ, Գօշու քիլիսա, և Ջարխէչ, 10–12 կիլոմետր հեռու ընկած հայկական գիւղերը.

Ե՞րբ է հիմնուել Հաղարծինը. Նրա եկեղեցիներից Կաթողիկէի հարաւային դրան ճակատին պահուած է ՇԻ (= 1071) թուականը, որ կարելի է համարել գլխաւոր եկեղեցու շինութեան թուական, նորոգման ժամանակ քարի ներկայ տեղում յարմարեցրած եւ տեղաւորուած. Վանքի մասին յայժմ ծանօթ հնագոյն տեղեկութիւնն այդ է. Իսկ պատմական հին յիշատակութիւն գտնում ենք մեզ ծանօթ Ստեփանոս Օրբելեանի պատմութեան մէջ. նա գրելով Առաքելոց եկեղեցու երկրաշարժից գլորուած գմբէթի վերականգնելով Ստեփանոս եպիսկոպոսի մասին, յիշատակում է թէ Զաքարէն և Իվանէ իր աթաբէկ եղբայրը որոն մեծապէս սիրում և պատւում էին և ետուն ի Կայէն տեղի հանգստեան նմա ըզգերահռչակ ուխտն Հաղարծին եւ զիւղն զԱրտամաձորն» (Գլ. ԿԳ., էջ 342). ԺԳ. դարում մի այլ պատմագիր, Կիրակոս Գանձակեցին, նոյնպէս յիշատակում է Հաղարծնի մասին, որոշ դէպքերի կապակցութեամբ. երբ Մխիթար Գօշը կառուցում է Գետկայ իւրաշէն վանքի օծման մեծաշուք հանդէսը, հրաւիրեալ պատուաւոր հիւրերի մէջ էր Հաղարծնի վանահայր Խաչատուր Տարօնեցին (Տե՛ս Հրատ. Տփխիս, 1909, էջ 199). Մխիթար Գօշն իր վանքը հիմնել է, օգնում կառուցանելով փայտաշէն մի եկեղեցի յանուն Գրիգոր Լուսաւորչի և այս քարաշէն մի մեծ եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի ՈԽ (= 1191)ին (Տե՛ս Ազգ. Հանդ., 1903, Գիրք Ժ., էջ 9). Միւս յիշատակութիւնն է, թէ երբ Հեթում թագաւորի որդի Կոստանդին կաթողիկոսը Վարդան վարդապետի ձեռքով Արեւելեան Հայաստան է ուղարկում եկեղեցական բարեկարգութեանց համար իր սահմանած ԻԴ կանոնները, բոլոր նշանաւոր եպիսկոպոսներն ու վանահայրերը երգմամբ ստորագրութիւն են տալիս հնազանդութեամբ կատարել կաթողիկոսի կանոնները. դրանց մէջ էր, իբրև նշանաւոր վանքի ներկայացուցիչ նաև Հաղարծնի վանահայրը. «Եւ գլխաւոր վանորայքն՝ Սանահինն, և Գետիկ. և Հաւարծինն և Կեչառոյս և Հաւուց Թառ և Այրի վանք և Յովհաննու վանք և Հոռոմոսի վանքն» (յ. ա. էջ 295). Այդ դէպքը տեղի է ունեցել 1240 թուերին.

Բանի որ պատմական աւելի հին տուեալներ չկան, ենթադրաբար պէտք է ընդունել, որ Հաղարծնի ներկայ տեղում,

ինչպէս Տաթեւում եւ այլ հռչակուած տե-ղերում, կար հին մի վանք, իր միաբանու-թիւնով. իսկ յետոյ երբ Զաքարեաններն ուժեղացան եւ այդտեղ ընտրեցին իրենց ընտանեկան գամբարանի տեղ, կալուած-ների նուիրաբերութեամբ հարստացրին, ճարտարապետական արուեստ արդէն հա-յերի մէջ մեծ թռիչք էր ստացել. աւատա-կան փոքրիկ իշխանները մրցում էին իրենց իշխանութեան ներքոյ եղող վանքերը գե-րազանց զարդարելու. այդ շրջանում ահա շի-նեցին Հաղարծնի այժմ գոյութիւն ունեցող թանանք. Դսեղի վանքի ու Հաղարծնի վա-նական շէնքերի տեսակների ու զարդա-րութեան մէջ խոշոր մերձաւոր նմանութիւնն-ակներեւ է ու շեշտուած. Գլխաւոր վանքերը անկասկած միմեանցից օրինակներ էին վեր-ցընում, իսկ վանական կեանքի պահանջ-ները համանման շինութիւններ էին առեղ-ծում.

Գլխաւոր եւ երկրորդական շէնքերը կառուցուած են երկու գծի վրայ, արեւել-քից արեւմուտք ուղղութեամբ, միմեանց զուգահեռ, մէջտեղում բաւական ընդար-



*(Նկար 29)*

Հաղարծնի վանքը, ընդհանուր տեսարան.

Կաթուղիկէի գեղեցիկ եկեղեցին, հաւանա-կան արձանագրական ՇԻ (= 1071) թուին. Շինութեան ճարտարապետական ոճն այդ բանն է հաստատում.

Հաղարծնում այժմ կանգուն են մի շարք շէնքեր, որ թէեւ դարերի ընթացքում ենթարկուել են նորոգութիւնների և նոր-կոյումս խոշոր փոփոխութիւններ ունին, բայց ընդհանրապէս սկզբնական պատկերով են հանդիսանում և հայ եկեղեցաշինական ճար-տարապետական ճաշակի իսկական յայտա-րարներ են. Տաթեւի, եւ յետոյ կը ծանօ-թանք պատկերով. Առաջին գծի վրայ մի շարք անորոշելի աւերակներից յետոյ գալիս է կա-մարածածկ հայակայ 1. Սեղանատունը–Տրա-պեզին: Սրա շարունակութիւնը, դէպի ա-րեւելք կազմում են 2. Վանականների յար-կեր կամ խուցեր, որոնց կամարակապ ծած-կերը փլչել են և միայն պատերն են կան-գուն, իսկ ամենաարեւելեան վերջի տեղում կառուցուած է 3. Մայր եկեղեցին–Կաթու-ղիկէն, Սուրբ Աստուածածնի անունով (Նկար 29).

Երկրորդ շարք շէնքերը սկսում են

միջադնական խաչերի հանդէպ, հարաւային ուղղութեամբ, միմեանց անգամ կպած, բայց ոչ ուղիղ գծով, այլ յետ ու առաջ։ Այստեղ շինուած են 4. Գրիգոր Լուսաւորչի անուամբ մի փոքր եկեղեցի, որան արեւմուտքից կպած է 5. Ժամատունը չորս քարեայ սիւների վրայ յենուած, կամարածածկ, վերնալոյսով, որ առաջնում է կենտրոնական հերթիկից։ Այդ ժամատունը յատակագծով եւ շինութեան ամբողջ կազմուածքով ընդօրինակութիւն է հայկական գիւղական տան գարատնամերի։ Այս մասին յետոյ։ Գրիգորի եկեղեցուն արեւելքից միանում են 6 – 7 երկու աւելի Փոքր եկեղեցիներ, այնպէս դասաւորուած, որ ազատ են ձգել սեղանի արեւելքից բացւող փոքրիկ պատուհանները, աւագ սեղանը լուսաւորելու համար։

Մինչեւ ամենավերջին ժամանակներում կատարուած պարբերական վերանորոգութիւնների հետեւանքով յիշած եկեղեցիներն ու սեղանատունը համեմատաբար լաւ վիճակում էին. դրանց կից կան բաւական թւով աւերակների կոյտեր, յատկապէս արեւելքի եւ հարաւի զառիվայրերի փէշերին եւ բարձունքներին, ուր մեծ վանքերին յատուկ կառուցուածքներն են եղել, ներկայումս աւերակ դարձած։

Երբ արեւելքից հոսող առուակի խոր ձորակի զառիվայրով բարձրանում էք դէպի վանքը, բարձրադիր դիրքի գագաթին հանդիպում էք մի շարք 8. Փոքրիկ մատուռների, որոնցից չորսը տակաւին կիսականգուն են, իսկ դրանց շուրջը մեծ հանգըստարան է, տարբեր ձեւերի գերեզմանաքարերով եւ խաչարձաններով, որ անշուշտ բազմանգամ միաբանութեան գերեզմանատունն է իրենից ներկայացնում։

Այդ քարերից մէկի վրայ կայ ՈԿԷ (= 1218) թուականի մի յիշատակարան, ոմն Ներսէս քահանայի գերեզմանի վրայ։

## 1. ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Վանքի գլխաւոր եկեղեցին է սա (տես նկար 29). Ներսից ու դրսից մաքուր սրբատաշ կրաքարով շինուած, ներսում չորս պիլոններ, որոնց վրայ բարձրանում է բարձր կլոր թմբուկով գմբէթը — գլխի սալերը թափուած։ Թմբուկը որ յաճախակի պիլաստըրներով է օղակուած, այդ պիլաստրների մէջ կան չորս լուսամուտ։ Արեւմտեան դրան ճակատի լուսամուտն ունի պարզանաձեւ զարդով խաչ, իսկ դրան շրջանակն ունի բաւական գեղեցիկ եւ ճոխ փորագրութիւններ։ Այդ դրան ճակատին է գտնւում տարեթիւ ՇԻ. եւ նրա հակառակ կողմում ՉԼ. թուականները, առանց որ եւ է բացատրութեան. Ճ տառը շատ գեղեցիկ ձեւով է։ Պատերի վրայ ուրիշ փորուածքներ եւ նիշեր չկան. արեւելքից ապսիդը դուրս ընկած չէ։ Արեւելեան ճակատի անկիւնաւոր բարձրութեան մէջում երկու վեղարաւոր անձինք ձեռներին բռնած ունին եկեղեցու մինիատուր մոդելը, ինչպէս Սանահինի, Հաղբատի, Հառիճայի գլխաւոր եկեղեցիներում եւ Անիի գագկաշէն եկեղեցում։ Եկեղեցուն կցուած շինութիւններ չկան, գուցէ այնպէս էլ հընումն էր, որովհետեւ ժամատուն գամբարանը շինուած է Գրիգոր եկեղեցուն կից։

Եկեղեցու գլխաւոր մուտքի կողքերին կանգնեցրած են երկու գեղեցիկ քանդակուած խոշոր խաչքարեր, մեծ պատուանդանների մէջ, բայց առանց արձանագրութեան։ Արդեօ՞ք եկեղեցաշէն վարդապետների յիշատակին չեն այդ խաչարձանները։

Դրան վրայի ՉԼ (= 1281) թ. հաւանական նորոգութեան տարին է ցոյց տալիս, իսկ միւս գլխաւոր արձանագրութիւնը, գտնւում է արեւելեան պատի վրայ, գեղեցիկ մօտ երկու մետր բարձր, բայց թէեւ տառեր ու տողեր պահուած են, սակայն կարդալ այլեւս անկարելի է, որովհետեւ օդի եւ խոնաւութեան ազդեցութիւնից մաշուել, եղծուել է։ Մեր նկատած եւ եկեղեցու վրայից ընդօրինակած ութ արձանագրութիւնները պարունակում են նուիրաբերութիւնների յիշատակութիւններ, միայն մէկի մէջ յիշատակութիւն կայ թւ ՌՃԼ (= 1681)ին Թիֆլիսեցի Զիթաղի Թոռ Մահտեսի «Սուլխանն եւ Իւր որդիքը – Նորոգեցաւ զհաղարծնոյ զեկեղեցիան զսուրբ Աստուածածինն եւ սուրբն Գրիգոր»:

## 2. ՓՈՔՐԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Արեւելեան փոքրիկ եկեղեցին ունի ճարտարապետական ուշագրաւ մի նորոյ-

թիւն, որտ նիշերը կիսաշրջան աղեղով միացուած են, որով արտաքին պատի միատեսակութիւնը ընդհատուած է եւ առանց յատուկ զարդաքանդակների, բեկբեկուող գծերով, միացած տանիքի անկիւնաւոր գծերին, ամբողջ շինութեանը արտաքուստ տալիս են համեստ տեսք։ Նման ձեւի նիշերի զարդեր կամ կարնիզներ հանդիպում են հայկական ուրիշ եկեղեցիներում եւս. մենք տեսել ենք Զուխտակ վանքի անուամբ կիսաւերակ եկեղեցիներից մէկի վրայ, որ գտնւում է Հաղարծնի հարեւանութեան մէջ, Դիլիջանից բայ. ՌՃ (= 1651)ին Թիֆլիսեցի Հոգիջանի որդիները եւ թոռները «Նորոգեցաք զսուրբ Ստեփաննոս, որ յոյժ խախտեալ էր» (նկար 30)։

Սուրբ Ստեփաննոսի մատուռը գտնւում է Սուրբ Գրիգորի եւ ժամատան միջեւ. շատ փոքր մի կառուցւածք է, զուրկ որեւէ աչքի ընկնող առանձնայատկութիւններից, միայն թէ պահուած է նրա շինութեան արձանագրութիւնը արեւմտեան փոքրիկ դրան ճակատին, միակտուր մի սալի վրայ։

«Ի թուն. ՈԽԳ (= 1194) ի լիերխան/ութե



(Նկար 30)

Հաղարծնի վանքը Գրիգոր Լուսաւորչի ժամատնով։

գէպի Ղարաքիլիսա տանող շոսէի ուղղութեամբ, Դիլիջանից մի քանի կիլոմեթր հեռու, գուցէ նոյն վարպետի գործ։ Կայ նաեւ Սրտան գետի ձախ ափի Ղարաքիլիսայի ուշագրաւ եկեղեցու նիշերի մէջ։

Գրիգորի եկեղեցին ունեցել է արեւմտեան պատի ճակատին շինութեան արձանագրութիւն, բայց եղծուած և անընթեռնելի է դարձած. որանից ընդօրինակել ենք ընդամէնը չորս արձանագրութիւն, և միայն մէկն է թուականով, հարաւային պատի վր- Իւանէի եւ յառ/աջնորդութե խաչատուր վար/դապետին ես Եսայի Հարբա որդի եհանեցի / զեկեղեցիս վասն իմ հոգոյս / փրկութե եւ ամեն / միաբանէս զլյաչնուքն հրագալու-ցին ժամն / ինձ հրամանցին / եւ զզատիկն Մյրոմանս որ անխափան առ/նեն կատարիչ գրոյս աւրհնեալ լինին / յԱյ» (Տե՛ս Ջալ. Հար. Ա., էջ 134, Վ. Տ. էջ 38)։

3. Ժամատունը շինուած է Սուրբ Գրիգորի արեւմուտքում. ճարտարապետական

առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, միայն շատ հարուստ է արձանագրություններով, որ բոլորն արտագրելու ժամանակ չունեցանք։ Արևմտյան գլխատուն և միակ դրան ճակատը համարյա ամբողջովին ծածկված է գրանցով։ Դրան ճակատի լուսամուտի շուրջը զարդարված է հաստատակող խաչի շրջանակով. ամբողջ շենքը փտած նստվածք ունի և զուրկ է եկեղեցիներին թեթև վերսլացող տպավորությունից։ Ժամատան շինության գլխավոր արձանագրությունը պահված է, և պատմական արժեքավոր բովանդակության պատճառով յանկալի է ընդօրինակել և տպագրել.

«Կամաւ ամենակալին Ա(յ) այս մեր գիր յիշատակի է ես. արձան մեծաց/նեալ որդւոց մեծին Սարգսի յազգէ Բագրատունեաց Իւանէի եւ Զաքարէի յորժամ նախախնամութեամբ Ա(յ) հասաք յարարածս եւ ես / սփռեալ ամփոփեաց ժառանգութիւն նախնեաց մերոց եւ ի ձեռս մեր / յառաջ զանառիկ ղղեակն Հանբերդ եւ զբազմաւորանիստ քաղաքն Անի եւ / այլս զամուրն Բջնիք Մարանդմիձ եւ Դուազանք զԴաւրեժ զԿարնոյ քա/ղաքն մինչեւ ի նշպ զՇամքի եւ զՇուշան զԳառնս մինչեւ ի Թե/լսկա / եւ զայլ բազումս իւրեանց սահ/մանաւն զոր աւելորդ համարեցաք յի/շատակել: Այլ անբարկանային Ած սիրեաց զբազ/մարծանաց զլխո իմո զՋա/քարիա եւ կոչ/եաց առ ինքն յորս ձեռն եղեւ արիութիւնս. եւ ես սինեցի / ի մեր նայրենի վանքս Հա/ղարծին մամսոյն վիմարդեան կամարակալ/ի / զրան որբս Գրիգորիս եւ ս. այլի յե/րեւան եսու վաճ յիշատակի եղբաւր / իմո եւ պարսին ապաստաւոր սորա զնաւազ խո/րանին պասարագն Զաքարէի / մասուցանել անխափան. կատարիչք գրոյս աւրհնեալ լիցին յԱյ» (Տե՛ս Շահխաթունեան, հտր. Բ., էջ 370, Ջալ. Ա., էջ 131-2, Արցախ, էջ 366, Վ. Տ., էջ 141, Աղվ. Հանդ., Գիրք Իե. էջ 67-68)։

Այս կարևոր յիշատակարանին թուականը չկար, բայց պատմական տվեալի շնորհիվ կարելի է ապահովապէս հաստատել ԺԲ. դարու վերջի կէսը, իսկ շինութեան վրայի բազմաթիւ նուիրաբերութեան արձանագրութեան մէջ հնագոյն թուականներն են 1181, 1185, 1206։

Ամենակարեւոր յիշատակարանն է Ս. Գրիգորի արևմտեան պատի խաչքարի վրայ փորագրածը, ժամատան ներսում.

«Ի ՈԼԴ (= 1185) թուիս նայոց ի թա/գաւորութեանն Աբ(խազ)/աց Գէորգեա ի նայրապետութեանն նայոց տն Գր/իգորիսի ես Խաչատուր վարդապետ եւ Սուքիաս / նորա/գեցաք զսուրբ Գրիգորս / նրամանաւ թագաւոր/ին եւ իւր մեծամեծ իշխանացն Սար/գսի ամիրս . . ./դին Անոնի / նպ / ղ դ/ունանյին Սլքէկին եւ թագա/դրին / զ5ին եւ զնոր կազմութին գրով ես / ի սբ Գրի/գոր . . . զայդին ի միջնաբերին գրին զսն խաչկուպավա/իցս ի միջին զփուր/դեանն զԱբրաամոր զՑան/ձուան եւ նրամանաց թա/գաւորն զսբ խաչին սանն/աւր յիշա/տակ կատարել . . .» (շար. անէծք) (Տե՛ս Ջալ. Ա., էջ 135, Արցախ, էջ 367, Վ. Տ., էջ 31, Աղվ. Հանդ. էջ 71։

Ժամատան ներսը, պատերի և չորս սյուների անկյունները կազմող արևելյան անկյունները ներկայացնում են ոչ թե կորն-թարթ՝ այլ հարթ հատատր առաստաղներ, երկուական զույգ սալքարերից ստանձին հմտությամբ շաղկապված և այնպէս լավ եզրանակով ամրացրած, որ տասնց ընկնելու դարեր գիմացել են, մինչեւ իսկ մեր երկրում յաճախակի անցք ունեցող երկրաշարժերի անհեղ ցնցումներին։ Նույն ձևով են ծածկված Հաղբատի Ս. Նշան եկեղեցու նշանավոր ժամատան առաստաղի չորս անկյունները, մոզաիկանման գունավոր շարվածքով։ Այստեղի սալերից երկուսը փորագրված են հոյակապ կլոր որնամենտով, իսկ երկու սալի վրայ քանդակում են ռելիեֆ արձաններ, մարդկանց պատկերներով և կից արձանագրություններով, որ թերևս լինելու պատճառով կարդալ չը կարողացայ։ Ռելիեֆներից մեկը ներկայացնում է մի մարդու պատկեր, որ հագին ունի մինչև ծնկները հասնող երկար շապիկ, գլխին ծածկած կլոր գլխարկ և երկու ձեռներում բռնած գործիքներ։ Սրա արձանագրությունը կարդացի. «Սիմէոն անոեա յաղաւթս յիշեցէք»:

Միւս ռելիեֆի առանձնությունը գլխին ծածկած ունի սրածև, վեղար յիշեցնող գլխարկ, աջ ձեռքին խաչ, ձախին գաւազան։ Արևմտահարաւային սալերի վրայ դարձեալ քանդակված են երկու արձանագրութիւն, իսկ արևմտա-հիւսիսային սալի ռելիեֆը թեստաղած արծիւ է։ Բոլոր ռելիեֆները

բուսական հեռավորքերի են և արժանի խնամքով լուսանկարվելու և ուսումնասիրվելու։

4. Ներեզմանք թագաւորաց. այդ անունով է Չալալեանը կնքել երկու փոքր մատուռներ, շինված ժամատան հարավային պատին կից, ուղիղ այնպես ինչպես Սանահնի արքայական գամբարանատուներն էին. այժմ փլած, անհետացած։ Այդտեղ Չալալեանը կարդացել է. «Այս է հանգստարան թագաւորաց Դաւթայ եւ Դաւգայ»։ Այժմ հիմնայատակ քանդված է և փորփրված են այդ մատուռներն ու գերեզմանները, մնում է միայն սև գույնի մի քար որի վրա մենք կարդացինք «ԱՐՏ ԹԳ»։

5. Սեղանատուն–Տրապիզ. վանականների խցերի ակումբքում (տես նկար 30), ամենաարեւմտեան մասում, շինված է բուսական մեծ եւ երկար ձգված, կամարածածկ Սեղանատունը. արձանագրութեան մէջ յունական նաեւ հայերի մոտ գործածական բառով որոշված։ Այս նշանավոր շինութեան մասին տեղեկութիւն է տալիս Կիրակոս Գանձակեցին (յ. տ. էջ 211), այսպէս. «Յովհաննէս Արմանեցին, որ և (Վանեցն Դեսպոյ) Հաղարծնին էր առաջնորդ և ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի յուր հարիւր հինգ թուականին։ Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երեւելի՝ որքառակ վիմօք» (տես նկար 30)։ Իսկապես որ գործածված մակդիրը իսկական շէնքին միանգամայն յարմարւում է և անկասկած է, որ պատմագիրն անձամբ տեսել է այն։ Շինանքի անունը համեմատ է արձանագրութեան հաղորդածին, իսկ թուականի մէջ խոշոր տարբերութիւն կայ. արձանագրինն է ՈՂԷ (= 1248), իսկ պատմագրինը ՉԵ (= 1351), կասկած չկայ որ սխալը սպրդւել է պատմագրի ձեռագրի մէջ։

Արձանագրութիւնն է որ նախապէս բուսական թերի էր կարդացված.

«Ի թվ. ՈՂԷ յառաջնորդութե Յովանիսի / վարդապետի շինութե ածանեն սանս եւ ես / կուսա . . . / անունց արքայն եսու ագնութի / տրապիզիս դեկան վղապետս եւ միաբանքս խոստացան . . . որ / Բարսղ . . . ով խափանե իմ մեղացս եւ է»։ (Տե՛ս Չալ. Ա., էջ 13, Արցախ, էջ 369, Վ. Տ., էջ 92, Աղվ. Հանդ., էջ 74)։

Շինութեան երկարութիւնն է 23 մետր, լայնութիւնը 10 մետր (Արցախի թեեր), կորին ունի երկու հերթիկ եւ երկու երկար և բարակ լուսամուտներ հարաւի կողմից, իսկ հիւսիսային պատն դրսից ամենեւին չի երեւում, որովհետեւ նա ծածկված է ահղի զառիվայր թեքութեան մէջ, ինչ որ մի տեսակ կարծես թէ կանոն է հայկական գիւղերի շինութիւններում. համարեա միշտ մի որմը ծածկված է լինում զառիվայրի թեքութեամբ։ Շէնքը ներսից հոյակապ տպաւորութիւն է թողնում. կամարները միմեանց հետ միացած են խաչաձեւող աղեղներով, յենված պատերի, երկու մեծ առանձնացած և տաս հատ պատերին կպած կիսասիւների վրայ. կամարները միանում են երկու կենտրոնում, որոնց գլխին տանիքի հերթիկներն են բացւում։ Տաթեւի նշանաւոր ներկայ շէնքը որա հետ համեմատել երբեք չի կարող. սա իր զուգահեռն ունի Հաղբատի վանքի սեղանատան մէջ, որի մեծութիւնն է՝ երկարութիւն 30,10 մետր, լայնութիւն 9,10 մետր։ Սա եւ ներքուստ երկու գեղեցիկ սիւներով և որանց վրայ բոլորւող կամարով երկու մասի է բաժանւում, որոնցից իւրաքանչիւրը վեց կիսասիւների հետ միանում է կամարներով, եւ կազմում տանիքի հերթիկը, սկզբում չորս կողմանի խորախակերպ ս-զակով, որ նեղանալով ութ բաժանումն է առնում (Տե՛ս Ազգ. Հանդ. 1901, գիրք Է–Ը, էջ 410–411)։ Հաղբատի այդ հին սեղանատունը վերջերս փոխարկված էր ձիթահանքի, իսկ Հաղարծինը միանգամայն անպէտք ձգված է, որովհետեւ նրա մէջ կերակրելու միաբանական բազմութիւն այլ եւս գոյութիւն չունի եւ երբեք էլ գոյութիւն չի ունենալու։

## Ա. ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փոքրիկ մատուռների, որոնցից չորսը տակաւին կիսականգուն են, չուրջը կան բազմաթիւ գերեզմանաքարեր եւ խաչարձաններ. ուրեմն այդ բազմանգամ միաբանութեան գերեզմանատունն էր։ Փորագրված արձանագրերը գծաքանտարար մաշւել անըն-

*թեռնելի են դարձել, միայն մի խաչքարի վրայ կարդալ կարողացայ.*

287. «ՌԿԷ թվ. ես Գրիգոր կանգն
եցի զխաչս ի վերա գերե
զմանի եղբաւրորդո իմ Նե
րսես քահանաի . . մեղացն
իմաստութի. . . ևարաժամ . .
. . . եցաւ սուգ մեծ երող ի
վերա ակսողաց զնա . . .
. . . . . . . . . . . .»
*(Ազգ. Հանդ. ժ. ա. 62)։*

## ԿԱԹՈՒՂԻԿԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

*Գլխաւոր արձանագրութիւնը հարաւային պատի վրայ է, դրան կիսակամարում, կարդացւում է միայն թուականը.*

288. «ՉԿ. . .» *և խոշոր գեղեցիկ գրերով* «ՇԻ.»։ *(Ազգ. Հ., էջ 63)։*

*Նոյն պատի վրայ փորագրուած են նուիրատուների արձանագրութիւնները.*

289. «. . . . առ(ա)քիս եւ Գրիգոր եղբարք
միաբան
. . . որ ծիրոյու Աձատուր վդ եւ
միաբան
. . . սահմանեցաք ի տարին Եփե-
սոսի որ ժ
. . . . . կատարիչըն ուրն
. . . . . . . . . . .» *(Ազգ. Հ. 64)։*
290. «. . . եւ եորիեսն մի
. . . Ննցան որ Աձաձնի»։
291. «Ես Յոհաննէս քահանա պետրի
կեցի միաբանեցա որ Աձաձն
իս որ Յվ եւ միաբանք որ պատա
րագ ի Յովհաննու եաւն ինձ»։
292. «Կամաւք բարերարին Ալ ես Սա-
հակ զի
մ նոգո արդիւնս եսու ի ծինուքի
Աձաձնիս եւ յոս վեդ աղ եւ միաբան
քս բ. պատ(ար)ագ ի աւնի Սա-
հակս ևայրս
պեպին ժամն ի ծնողացն եւ յիս
իմ նո . . .» *(Ազգ. Հ. 84)։*

*Այդ հարաւային պատի տակ, գլխաւոր դռնից դէպի աջ կանգնեցրած են երկու մեծ խաչքարեր, գեղեցիկ փորագրութեամբ միատեսակ զարդարուած, նման ԺԲ–ԺԳ դարերի փորագրութիւններին։ Զարմանալի է, որ այդ գեղեցիկ կոթողները յիշատակարաններ չունին։*

293. *Արեւելեան պատի վրայ, դռնից մօտ երկու մեծ քարեր, փորագրուած էր մի մեծ արձանագրութիւն, գուցէ շինութեան մանրամասնութիւններով. թէև տառերը ու տողերը նկատելի են, բայց օդի ու խոնաւութեան ազդեցութիւնից այնպէս աստիճան փչացել են, որ մեր կարդալու աշխատանքն ի զուր անցաւ, ինչպէս մեզնից առաջ Սարգիս Ջալալեանն է գրում. «Զարձանագիրս չկարացի ընթեռնուլ, զատ որում եղծեալ էր գլխովին»։*

294. *Եկեղեցու ներսում, հիւսիսային պատի վրայ կար այս արձանագրութիւնը.*

«Շնորհիւն Ալ ես Իէկս որդի Աօոս յազ-գէ Մարքանս / եւ ամուսին Բօրինա եւ եղ-բայր իմ Սմբատ միաբանեցայ / աք որ ոխես որդեօ եւ ճայրն իմ եւ ձվաք արդիւնս...»։
*(Տե՛ս Արցախ, էջ 365, Ազգ. Հ., էջ 64)։*

295. *Տանուտէրութիւններով գարում եկեղեցին նորոգել են Թիֆլիզեցի Թաղոյ որդիները և իրենց արձանագրութիւնը փորագրել տուել արեւմտեան պատի վրայ.*

«Ես Թիֆլիզեցի Չիրաղի որդոյ Թաղոյ որդի մեսսի Սուլթանս / եւ եղբայրն իմ զԱլն եւ մեր որդին Սախփանոսն եւ Թադին / եւ Փանրազասեցի խոջայ Դուլէն եւ իւր որդին Յարութին մեծու / յուսով որ առ Քս վերսին նորոգեցաք զեաղարձուոյ զեկե/եղեցիան զոր *Աձաձնին* եւ սբն *Գրիգորին* յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց ի թվին հայոց ՌՃԼ» *(= 1681)։ (Տե՛ս Արցախ, էջ 365, Վիմ. Տար., էջ 194–5, Ազգ. Հ., էջ 64)։*

## ՓՈՔՐԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՒ ԺԱՄԱՏԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

296. «Շնորհիւն Ալ ես Մխիթար քահանայ որդի Աւեթին եսու ի աալել զ/սբ *Գրիգորս* յիշատակ որդոյ իմոյ Բարսեղին եւ Անդրիասին որ Յվ / Աղ վդ եւ միաբանքս բ. պատարագ եսուն ի աւնի Պարսա . . »։

297. «Սիրովն Ալ ես Յոհաննէս քահանա մի/աբանեցա սբ *Գրիգորիս* եւ միաբան/քս եսուն ա. պատարագ ի աւնի Դ/աւթի եւ Յակոբա ով խափանէ դատի եկս»։

298. «Աւրհնեալ է Ած ամենայն ա-րար/(ած)ոց Ած ազգին Հայրապետին եւ եպս/ապետին ամենա»։ *(Աշխ. Հ., էջ 66)*։

299. *Եկեղեցու հարավային պատի վրայ գտնւում է արևի ժամացոյց, աւելի ուշ ժամանակաշրջանից պատի մէջ ամրացրած, դրա ներքեւում գտնւում է նորոգութեան մեծ արձանագրութիւնը.*

«Ի թվին հայոց ՌՃԽԸ ... աց Ճան Սու-լեմանին որ/դոյ փոքր Ճանապատին եւ սէ... իշխանին եւ մելիքին / պարոն Ճանճազարին եւ հայրապետ.. Զուղեցոյ եւ առաջնոր/դութեան որ ուխտիս Սանոսէ եպիսկոպ... որ Գեորգ աստեղծեալ սորին / աղօթութեանն յԱյ մեզ յե-սինեւ ի կրոնից Թիփլիզեցի հոգեւորին որ-դին պա/րոն Պաղոս, Մխիթարս, Սափրաս եւ Զալիս եւ որդին մեր Դաապարն, Հոգի-ջանն / Բաղդասարն եւ Մելքոնն զմեր հոգոյ արդեամբքն նորոգեցաք զսբ / *Սեփանոս* որ յոյժ խախտեալ էր վս փրկութե հոգոյ մե-րոց եկար/ութե կենաց որդոց մերոց եւ միաբանէ սորայ հասուանեցին յայսնութե եւ յար/ութե պատարագն զմեզ յիշեսջիք եւ մեք խոստ(աց)աք որ զկանգնեղ սորին միշտ ի / վառ պահել որդեց որդի. Կատարեցին արհ-նին յԱյ ամեն։ *Վերեւի չորս տողի մէջ կայ խուլի բեկորի արձանագրութիւնը* սորէ եկեղեցակէ»։ *(Տե՛ս Արցախ, էջ 368, Աշխ. Հ., էջ 65–6)*։

*Ժամատան եւ Սուրբ Գրիգորի միջեւ մ չինւած է* Սուրբ Ստեփանոսի *մատուռը, նո-րոգւած Թիֆլիզեցիների ժամանակաշրջանում, բաւական փոքր և արտաքուստ զուրկ որ և է հետաքրքրութիւնից։ Սրա միակ հին արձա-նագրութիւնը գտնւում է արեւմտեան փոք-րիկ դրան ճակատի միակտուր աքի վրայ։*

300. «Ի թւ. ՇՂԸ (= 1149) ի յիշխանու/թեան Իւանէի եւ յառ/աջնորդութե եպ-ջասուր վար/դապետին ես *Տէր* Հարբա որդի էյինեցի / զեկեղեցիս վասն իմ հոգոյս փր-կութե եւ ամեն / միաբանս պատարագուեն հրապալուցին ժամն / ինձ հրամանեցին եւ զզատիկն Մյլեաննա որ անխափան առ/ենն կատարիչ գրոյս աւրհնեալ լիցին յԱյ»։ *(Ջալ. Ա., էջ 134, Վիմ. Տար., էջ 38)*։

*Սուրբ Գրիգորի արեւմտաքում չինւած ժամատունը ճարտարապետական տանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում, միայն հարուստ է արձանագրութիւններով, որ գմբեխատակի բոլորի արտագրելու ժամա-նակ չունեցայ. միջանի որինակ պիտի լը-րացնենք նախորդների կարդացածներից, բայց դարձեալ մնում են չկարդացածներ։ Արեւմտեան գլխաւոր եւ միակ դրան ճա-կատը համարեա թէ ծածկւած է բազմա-թիւ անձանց գրութիւններով։*

301. *Գաւառական կարեւոր արձանագրութիւն է, դրան մեծ չրջանակի վրայ.*

«Կամաւն Այ ես Դաւիթ եւ Ասոտ միա-բանեցաք սբ *Գրիգորիս* եւ զմեր հոգոպա-հուսան *յԱծածնիս* ընծայիս սուրբ եւ սկ վս եւ միաբանք սահմանեցին պատարագ զամեն եկեղեցիս ի տունի Սեխիայի մարգարէին որչափ ես կենդանի եմ»։ *(Տե՛ս Ջալ. Ա., էջ 131, Աշխ. Հ., էջ 68)*։

302. «Ես Աարկաւագ զիմ հոգու արդիւնս ի սբ *Գրիգորս* ետու ի հայրան եւ միաբանքս ա. պատարագ ետուն ինձ ի տոնին Կիւրղի ով չառնէ դասի յԱյ ի տոնին Իգնատիոսի ա. ժամ առնեն ի տոնին Թադէոսի ...», *(Ջալ.* «ա. ժամ առնեն Ներսեսեանի ով խա-փանէ դարի յԱյ» *ասել ունի*։ *(Տե՛ս Ջալ. Ա., էջ 131, Աշխ. Հ., էջ 68)*։

303. «Ի թւ. ՈԾԵ (= 1206) ի յաջխար-հակալ եղբ/աւրեան Զաքարէի եւ Իւանէի եւ յառաջնորդութե սն Ստ/եփաննոսի ես Տէր որդի Ամպա/սայ իմ զեղն Թամամես Սկան-դարան/ց հողն զնեցի եւ ի Հաղարծինս ետու վս իմ հոգոյս եւ վս յերկարութե կենաց ճանն/ուսնի եւ Աւագի եւ միաբանս զծառ-զարդար/ին եւ զերկոտրդ զալքսեանն ժամն ինձ ետուն զամ/են եկեղեցեացս ով զայդին ասից հանէ եւ կամ / զիմ ժամն խափանէ իմ մեղացս տէր է Յուդա/ի մասնակից եղի-ցի»։ *(Տե՛ս Ծահ., էջ 604, Ջալ. Ա., էջ 132, Արցախ, էջ 366, Վիմ. Տար., էջ 47, Աշխ. Հ., էջ 68)*։

304. «Ցուանգն Այ ես Թասուր միաբա-նեցա սբ *Գրիգորիս* վղ Ցովանէս եւ միաբանքս ա. պատարագ ի տունի սբ Յակոբա խա-փանողէն դատին»։ *(Տե՛ս Ջալ., էջ 133, Վիմ. Տար., էջ 238, Աշխ. Հ., էջ 68)*։

305. «Սիրաւքն Այ Աբրահամ եւ ամու-սին իւր սիկին / միաբանեցաք սբ *Գրիգս* որ Յվ .. աարկաւ վղ եւ միւս *(Ջալ.* Յովհան-նէս եւ Սարգիս վարդապետ*)* պատարագել զԱստուածածնս եւ սկզբ *(Ջալ.* իմ սիկին եւ զկեանս Յովհանու*)* տունի Ոսկեանց ով չառնէ իմ մեղացն որ»։ *(Տե՛ս Ջալ. Ա., էջ 132, Աշխ. Հ., էջ 69)*։

306. «Կամաւն Յաղիբէկ եւ կենա- կից - - - »:

307. «Կամաւն Այ ես Գրիգոր կարճա- հասակ զիմ հոգոյ արդիւն յեկեղեցիս եսու եւ միաբանքս բ. պատարագ ի տաւնի սբ Գէորգի առնեն ինձ եւ ծնողաց իմոց ով խափանէ դատի յԱյ (Արտ. Ջալալեանից, տե՛ս Ա., էջ 133)։

*Ժամատան դրսի, արեւելեան և հիւսի- սային պատերի վրայ կա կան արձանագրու- թիւններ, վերջինի վրայ բաւական ընդար- ձակ. բայց խիստ քայքայուած լինելով կար- դալ չկարողացայ։ Ներսի արձանագրու- թիւնների միջանից նոյնպէս անընթեռնելի- ներն, որովհետեւ շատ բարձր էին, հար- կաւոր էր յատուկ յարմարութիւններ, սան- դուխներ կամ գերանք։*

*Ներսի արձանագրութիւններն այս են.*

308. «Կամաւն Այ / ես Արշակս եսու զիմ հալալ արդիւնս ի ծիննւրքիւն ամեն միա- բանքս / որսի յաւժարութեամբ եսուն ի սա- րին ամ ա. ժամ ի Գէորգի եւ ի Պաւղոսի / տաւնին որ խափանէ առաջի Այ իմ մե- ղացն պարտական է / եւ Յուդայի մասնա- կից. Տր Ած ողորմի Տիրատուր վարդ ա- մեն»: (Ազգ. Հ., էջ 69)։

309. «Կամաւն Այ մեք վարդս եւ ն/ արքս զմեր հոգս արդիւնս ս/վաւ ի գաւ/իթս եւ ամեն միաբ/անքս եսուն մեզ ի սարին բ. ժամ / Յոհաննու եւ Յակ տաւնին ա. վարդի /ն եւ ա. հարքին որ խափանէ դատի ի Տէ»:

310. «Ի թ. ՈԼ (= 1181) ի թագաւորու /թե Գէաւրգիս եւ յառաջ/նորդութե սբ վարդապետ/ին հայրարս ես Դեղ զա/սրա- կին հողն զապա ա/ռան կալ/ի սբ Գրիգորիս եւ / աոնս եսուն ի սարին բ. / ժամ ինձ եւ իմ ննջեցել/ոցս թե ոք հակառակ կամ / յիմոց կամ ի մեծաց / յերից սբ ժողովոյն / հղով- եալ եղիցի / զժամն նոր կիրա[կ]էին ար- ենն»: (Տե՛ս Ջալ. Ա., էջ 133, Վ. Տ., էջ 33, Ազգ. Հ., էջ 69–70)։

311. «Ճնորհիւն Այ ես / Սարգիս զիմ հոգս արդիւնս եսու ի գաւ/իթս եւ միաբանքս եսուն ինձ ի սար/ին ա. ժամ Վարդավառ- աւրն որ խափ/անէ Յուդայի յինի մասնա- կից»: (Տե՛ս Ջալ. Ա., էջ 133–34, Վիմ. Տար., էջ 237, Ազգ. Հ., էջ 70)։

312. «Կամաւն Այ ես Յովանէս եսու իմ հոգոյ / արդիւնս ի գաւիթ - - միաբանքս եսուն / պատարագ - - »: (Ազգ. Հ., էջ 70)։

313. «Ես Անսոն Դահղեցի եւ ի/մ եղ- բարս Սարգիս զ/մեր հոգս ա/րդիւնս ի գ/աւ/իթս ետամ / եւ միաբանք/ս եսուն ա. ժա/մ տաւնի Անսո/նի որ խափ/անէ դատի Տէ»: (Տե՛ս Ջալ. Ա. էջ 133, Վիմ. Տար. էջ 237, Ազգ. Հ. էջ 70)։

314. «Ճնորհիւն Այ ես Փասլ եւ ամու- սին իմ Սիմա ետուաք / զմեր Փերանց այգին ի սբ Գրիգորս առաջնորդ եր Յովանէս / եւ միաբանքս եսուն մեզ ժամ զկնի Սահակա տաւնին կիրակէին / զամէն եկեղեցիքս արդ ով զայգին առնի հանէ կամ զմեր ժամն / խափանէ մեր մեղացս տէր է առաջի Այ»: (Տե՛ս Ջալ. Ա., էջ 134, Վիմ. Տար., էջ 237, Ազգ. Հանդ., էջ 71)։

315. *Փայտի արձանագրութեան մօտ է Ջալ. արտագրած այս արձանագրութիւնը.*

«Ես Ջուղայ զիմ հոգւոյ բաժինն եսու ի գաւիթս սբ Գրիգորին. միաբանքս խոս- տացան առնել ինձ պատարագ ի տաւնի Պաւ- ղոսի եւ Գէորգի, կատարիչքն աւրհնին յԱս- տուծոյ»:

316. *Դարձեալ գաւթի ներսում, կա- մարների վրայ.*

«Սիրովն Այ ես Յոհաննէս եւ Սարգիս ետուաք ի սբ Գրիգորն / այգն? այգին Մար- գարիան զաւաղ մահ.. ա. տուրքան / եւ ամեն սարնանա? ամ եւ միաբանքս եսուն / մեզ զՏնընդառաջի աւրն հղովեալ եղիցի / որ խափանէ դատի յԱյ ՈԿԶ (= 1217)։ (Ազգ. Հանդ. 71)։ (Ջալալեանն ունել ունի, «Ցե- տուաս սբ Գրիգորի ի վեր ժամ զզուռն»)։

317. «Ես Գրիգոր միաբանեցայ սուրբ Գրիգորիս իմ հալալ արդեամբ եւ վարդապետ Յովհաննէս եւ միաբանքս սահմանեցաք ժ. պատարագ ի տաւնի Նաւակատեաց խաչին թ. Թումանին եւ զայլն Գրիգորին, ով խա- փանէ մեր մեղացն տէր է»: (Տե՛ս Ջալ. Ա. էջ 136)։

318. «Ես Ներսէս խանանս եսու զաւազ ուխտաւորս / ի սբ Գրիգոր զարդարել յոս- կո եւ յարծաթո եւ / միաբանքս եսուն զ. պատարագ ի տաւնի Թէո/դոս թագ. որ խա- փանէ զանէծսն»: (Ազգ. Հ. էջ 72)։

319. «Սիմէոն ..... յաղաւթս յիշե- ցէք»:

320. *Ջալալեանը այստեղ է նկարա- գրում. «Յահեակ կողմն սուրբ Գրիգոր ե- կեղեցւոյ կան երկու խորանաւոր փոքր մա- տուռ, ի մէջի որոց եւ գերեզմանք մանկա-*

գրեալ. «Այս է նմանօրինակ քաղաքաց Դադայ եւ Դաւգայ»:

Նոյն արձանագրությունը Արցախի մեջ տպված է. «Համշիաս . . ա . քաղաքոյն Դալիկայ», համանման ուղիղ է Ջալալյանի ընթերցվածքը, ինչպես ընդհանրապես նրանց երկու այլատառությունների ընթերցվածների համեմատությունից.

321. Սեւ գույնի, տափակ գերեզմանաքարի վրա տապանին կա. «Սէա բդ»: (Տե՛ս Ջալ. Ա. էջ 134, Արցախ էջ 367, Ազգ. Հանդ. էջ 72).

322. Սեղանատան արձանագրությունը բավական դժվարությամբ է կարդացվում, սակայն Մակար եպիսկոպոսը կարդացել է միայն. «Ի թվ. ՈՂԷ (= 1248) յառաջնորդութեան Յովհաննէսի վարդապետի օրհնեալ . . . .» Եղծված են բոլոր վերջացող տառերը, ասված է ժամանակության մեջ. իսկ Ջալալյանը մինչեւ տառերից ավել կարդացել է. «Եւ օրհնութեան ամսեան ժամ եւ ես Կոստայ . . . եսու ի Տրապիզոն միաբանն խոստացաւ» եւայլն.

Համառոտում ընդօրինակել ենք ընդամենը 36 արձանագրություն, բայց ժամանակավ մնացին չընդօրինակվածներ.

---

## Դ.

# ԴԱԴԻ ՎԱՆՔ

Էջմիածնի վանքը պատերազմից առաջ ունէր Ղարաբաղում իր խոշորագոյն կալուածը, Խաթարվանք կամ Ջարեքգարվանք անունով, որի տարածութիւնն էր 46,000 դեսեատին, և ես 1911ին գնացի ծանօթանալու վանքի այդ ստացուածքին. Գանձակից ճանապարհւեցի Գետաբեկի հանքերը, որտեղ գերմանական Սիմենս ֆիրման պղինձ էր արտադրում և լեռնային այն ճանապարհով, որ 1898ին Լեման-Հաուպտի ու Բելկի Հայաստանը ուսումնասիրող գերմանական էքսպեդիցիան էր անցել. Նոյն ճանապարհով պիտի իջնէի Սեւանի լճի հարաւային ափը, այցելելով Ջող գիւղի մօտով մանէի այդ ընդարձակ կալուածքը. Գանձակի ու Սեւանի միջի հաղորդակցութեան ամենակարճ ճանապարհն էր այդ, ձիով եւ սայլով անցնելու համար. բայց այդ ճանապարհը երկու տարուց ի վեր անանցանելի էր դարձած սովորական երթեւեկութեան համար, որովհետեւ տաւաղակայինը, աւելի շատ պատամբների մի խումբ, ռուսական իշխանութեան դէմ ըմբոստացած, իր համար ընտրութիւն էր դարձրել Աղ-դաղեա (Սպիտակ սար) կոչուած դժուարամերձ բարձունքները. Թաքնուում ու երբեմն սպանում էր անցորդներին ու մերձակայ գիւղերը, մարդկանց փրկանք ստանալու համար գերի վերցնում և պաշտպանուած դժուարամերձ անտերում, նաև տեղացիների գաղտնի համակրութեան վրայ յենուած, հեղինում և ի դերև էր հանում զինուորական ամեն տեսակ պատժիչ ձեռնարկները. Ինձ շատ զգուշացրին չբռնել այդ ճանապարհը, բայց ես փորձեցի և ոչ միայն որ և է վտանգի չհանդիպեցի, այլ բնութեան այնպիսի անհման տեսարաններ տեսայ, որ լիուլի արժեց իմ ձեռնարկած բախտի խաղը. Փորձառու մարդ վստահացրած, որ լեռնական այդ թուրքերը միշտ յարգանքով են վերաբերւում հոգեւորական անձանց եւ պատրաստ էին հանդիպման դէպքում դրամական որոշ ընծայ տալ նրանց.

Սողանախաշի բարձունքները հասայ տաւուտեան, երբ արեւն արդէն բարձրացել էր և փշում էր լեռնային մեղմ ու զով քամին. Երկինքը ջինջ մաքուր էր, իսկ ամառուայ փայլուն արեւը լուսաւորում էր Հայաստանի գլխաւոր լեռների վերեւ ալտացող գագաթները, որոնց կենտրոնում ագամանդի յստակութեամբ փայլում էր Սեւանի լիճը. Դեղարքունեաց, Աղմաղանի, Արագածի ու Արարատի բարձր գագաթները ցից-ցից ցցուած եւ միմեանց մօտեցած, պատկերացնում էին վիթխարի ռելիեֆ մի քարտէզ, մութ կանաչից սկսած բաց կանանչի, փայլուն սպիտակի և ամեն տեսակ նրբանների գունաւորութեամբ կենդանացած. Արարատից երեւում էր միայն նրա սպիտակափառ վիթխարի գագաթը, բազմատեսակ գոյների ճոխութիւնը պայծառացնելու. Բայց ամենից ուշագրաւը լճի տեսարանն էր, նրա ամբողջ առաջանը մի ծայրից մինչեւ միւսն աչքի առաջ էր, արեւի արտացոլացումից երեւում էր նրա յատակի ամբողջական կոնտուրան, բարձր ու ցածր ափերը, երկար ձգուած ձորերով, մութ խորը վիհերով և հարթ ու հաւասար դաշտերով.

Ջող պատմական Սիւնիքի Սոթք գաւառի նշանաւոր գիւղերից մէկն էր, որի մէջ միայն թուրքեր էին ապրում, բայց կանգուն մնացած էին բազիլիկաձև հին եկեղեցին, բազմաթիւ խաչարձաններով գերեզմանատունը և գերեզմանային այնպիսի կոթողներ, որ նախընթացում նկարագրել ենք. Այդ գիւղից ճանապարհ ընկնելով դէպի հարաւ-արեւելք, հասայ այն լեռնադաշտի բարձունքները, որ կազմում են Ղարաբաղի ու Սեւանի ջրբաժանները, որտեղից տարածւում էին վանքական հողերի ընդարձակ տարածութիւնները. Մի քանի կիլոմետր պիտի անցնէի միայն կանաչ մարգերով ծածկուած, այնուհետեւ սկսում է անտառային խոշոր ընդարձակութիւն. Մի ծայրից մինչև միւսը երկիրը ներկայացնում

է չափազանց կտրտուած մի լեռնաստան անկանոն ձգուած ձորերով, բլուրներով, թեք մակերեւոյթներով եւ ոչ մի տեղում որ եւ է դաշտ, թէկուզ մի կիլոմետր երկարութեամբ։ Չնայած այդ բանին, այդտեղ երբեմն բնակուել է խիտ ազգաբնակութիւն, բաժանուած փոքր և մեծ գիւղերի մէջ, որ ամայանալուց յետոյ, խիտ անտառների վայր են դարձել։ Ողջ հայ ազգաբնակութիւնը մահմետական ծով ժողովրդով շըրջապատուած, շարունակ երկար անհաւասար կռիւների և հիւսիսի ռուսական «քրիստոնեայ» Պետրոս «Մեծ» կոչուած ցարից խորունելով, գաղթի դիմեց դէպի այդ ցարի մեծ անապատները, Մուղանի ու Ղզլարի շըրջանները, ամայի և անմարդաբնակ ձգելով իր բնիկ երկիրը։ ԺԸ. դարում փոքր չափով կատարուեց այն, ինչ որ ահաւելիօրէն կրկնուեց «Մեծ պատերազմին» Հայաստանի մեծագոյն երկրամասի մէջ։

Կալուածքի ընդարձակութեան մէջ ըընակւում էին ընդամէնը մօտ երկու հարիւր ըընտանիք «քուրդեր», փոքրաթիւ ըընտանիքներով տառանձնացած, իրենց խաշնարածական կեանքով։

Նախկին բնակիչների թողած յուշարձաններն էին վանքերի ու եկեղեցիների աւերակներ, բերդեր, ջրաղացներ — մի տեղում 12 աւերակ, մէկը միւսից ներքև —, արհեստական ճանապարհներ եւ գիւղատեղերի աւերակներ։ Մեր լուսանկարած բոլոր աշխատանքներն անհետացան. անկորուստ պահուել են բազմաթիւ արձանագրութիւնների ընդօրինակութիւններ, որոնցից մի մասն արդէն տպուած է Ջալալեանի Ճանապարհորդութեան երկրորդ հատորում և ապա Մ. Բարխուդարեանի «Արցախ» գրքում։

Դժուար և զառիվայր ճանապարհներով հասայ Թարթառ գետի հովիտը, որի աջ ու ձախ ափերին, միջանի կիլոմետր միայն իրարից հեռու գտնւում են կալուածքի երկու նշանաւոր վանքերը, որոնց անուններով և ամբողջ կալուածքն կոչւում էր Խութավանք և Զարխնդարվանք։ Որոնցից աւելի կարեւորն առաջինն է, որ մեր նկարագրութեան առարկան է, իր հին Դադի վանք անունով։

Սիւնիքի պէս Ղարաբաղն էլ հնում ունեցել է իր բազմաթիւ վանքերը. այժմ բոլորն էլ անմարդաբնակ և երեսի վրայ ձըգուած։ Հնում որանց մէջ նշանաւորներն էին Գանձասարն ու Դադին։ Գանձասարը ծառայում էր իբրեւ Աղուանից կաթողիկոսների աթոռանիստ, իր բարձրադիր դիրքով միանգամայն յիշեցնում է Տաթեւի ու Հաղարծնի վանքերը։ Հայկական ճարտարապետութեան ԺԳ. դարու գեղեցիկ մի յուշարձան է, որի շինութեան արձանագրութիւնը լաւ է պահուած։ Դրա մէջ կարդում ենք. «Ես Ջալալ Դաւլայ Հասան, որդի Վախտանգայ, թոռն մեծին Հասանայ, բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արծախական աշխարհին, թագաւոր եւ ի յօգնաստանման Սանահնցին . . քաջ անգարձ կամքի . . հաւր իմոյ եւ մաւր իմոյ խորհուրդին, որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի . . սկսեալ ի ՈԿԵ (= 1216) թուին հայոց . . աւարտումն եղեւ ի ՈՁ եւ Ը (= 1238) թուին . .»։

Համարեա նոյն թուականին էր, մի փոքր աւելի առաջ, հիմնադրուած Դադի վանքի գլխաւոր եկեղեցին, իշխանաց իշխան Քրդի դուստր & Վախթանգի ամուսին Արզու խաթունի ձեռքով, այն է ՈԿԳ (= 1214)ին և այնտեղում որ հանգստարանն էր Արցախի իշխանների։ Երկու վանքերը միմեանց հետ համեմատելով, նկատելի է մի հանգամանք. որքան էլ գեղեցիկ է Գանձասարի եկեղեցու շէնքն ու վանքի բնական դիրքը եւ, թէեւ իբրեւ կաթողիկոսանիստ, հոգեւոր բարձր իշխանութեան կենտրոն էր, Դադի վանքը գերազանցում էր նրանից իր բազմաթիւ վանական երկրորդական շինութիւններով եւ միջանի եկեղեցիներով ու մատուռներով, որ յայտարար է նրա կարեւորութեանը իբրև վանականութեան կենտրոն հին Արցախում։ Այդ հիման վրայ կարելի է ընդունել, որ այդտեղ հոգևոր շեշտուած կեանքին կից, ժողովրդական մեծ սրբավայր է եղել, համապատասխան ուխտագնացութիւններով։

Թարթառ գետն իր ամբողջ հոսանքում կալուածքի մէջ լայն հովիտներ չունի, լեռներ ու առապացած ժայռեր իրենց ամուր գոգում շրջափակում են նրան, շատ տեղերում նեղ, դժուարին ճանապարհների համար անգամ տեղ չթողնելով։ Ուստի նրա ափերին ընդարձակ շինութիւնների համար յարմար տեղ ընտրելն այնքան էլ դիւրին գործ չէր։ Բայց անկաշկանդ ընտրութեան դէպքում, կարելի էր աւելի լաւ տեղ

ընտրել, քան վանքի ներկայ տեղն է. օրինակ հէնց Զարեքզոր վանքի գիրքն անհամեմատ աւելի խոշոր յարմարութիւններ է ներկայացնում ծառայուն մի վանք հիմնելու համար։ Հետեւապէս վանքի հիմնադիրները ազատ ընտրութիւն անելու հնարաւորութիւնից զրկուած էին։

Դադի վանքի յանդիման գետի աջ ափին ցցւում է Լաչին-գայա (Լաչինի ժայռ) կոչուած համարեա ուղղահայեաց բարձրացող ժայռապարիսպը, որի հանդէպ, գետի ձախ ափին գտնւում է վանքի տեղը, որ յետեւում բարձրացող լեռներից մեղմօրէն իջնում է մինչև գետափը։ Արեւելքից դարձեալ բարձրանում են անտառոտ բլուրների շարքեր, իսկ արեւմտեան կողմից անմերձենալի բարձունքներ, իրենց մէջ սեղմուած գետով։ Վանքին կարելի է մօտենալ միայն հիւսիսի բարձրութիւններից կամ արեւելքի բլուրներից։

Ահա այդ փոքրիկ տարածութեան վրայ է շինուած Դադի վանքը, կարելի է ասել բնական մի մեծ փոսի մէջ, միանգամայն զուրկ հորիզոնից, լեռնաստանի դժուարամերձ հաղորդակցութիւններով։ Դրանից մինչեւ վանական շինութիւնները մօտ կէս կիլոմետր է։ Վանական բոլոր շէնքերը շրջափակուած են հասարակ պարիսպներով, բայց ոչ իբրեւ բերդի պարիսպներ։

Ծանօթանալով դեռ ես կանգուն մնացած շինութիւնների հետ, տեսնում ենք որ նրանք ոչ միաժամանակ եւ ոչ էլ մերձաւոր տեւողութեան կառուցուածքներ են, այլ անշուշտ դարերի անջրպետ կայ նրանց մէջ։ Բարեբախտաբար միքանի դէպքերում անկորուստ յիշատակարան արձանագրութիւնները, թուական տուեալներով, դիւրացնում են շէնքերին ժամանակի որոշումը, սակայն ոչ միշտ։ Իսկ անարձանագիր յուշարձանների համար չքացել է նաեւ աւանդութիւն պահպանող ժողովուրդը։ Երբ աւելի խորանայ և հիմնաւորուի հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը եւ հաստատուն հիմունքներով բնորոշւին շինարարական առանձնայատկութիւնների էպոխաները, ահա թէ երբ հնարաւոր կը դառնան անթուական շինութիւնների ճիշտ ժամանակորոշումները։

Անցնելով Դադի վանքի կանգուն շինութիւնների նկարագրութեանը, բոլոր յուշարձանները, յարմարութեան համար, բաժանում ենք միքանի մասի, թեք տարածութեան հետեւանքով, շինութիւնների դասաւորութիւնն ի նկատի առնելով։ Շինութիւնների դասաւորութեան կարգը, ինչպէս կարելի կը լինի նկատել, որոշ չափով յայտարար է նաեւ նրանց հնութեան կարգին։ Մենք կ'սկսենք ամենահիւսիսային կողմի շէնքերով և ապա կ'անցնենք աստիճանաբար դէպի հարաւ ընկած շէնքերը։

1. Հնագոյն Բազիլիկ, գտնւում է հիւսիսային զառիվայրի թեքութեան վրայ, հիւսիսային ամբողջ պատը հողի մէջ ծածկուած է արտաքուստ, ինչպէս Հաղարծնի սեղանատունը. շինուած է անտաշ քարերով, կամարածածկ է, առանց գմբէթի, բայց յամենայն դէպս լուսաւորուել է վերնալոյսով. գուցէ ունեցել է գմբէթ, որի մասին տանիքի փլուածութեան հետեւանքով որոշակի կարծիք յայտնել դժուար է։ Արեւելեան պատը հիւսիսայինի պէս ծածկուած է բնական հողաշերտով, ունի սեղանի ապսիս, կողքերին փոքր խցիկներ։ Թուական երկար ձգուած շինութիւնը միջնում սիւներ չունի եւ տանիքի կամարները յենւում են պատերին միացած, երկու կողմից երեքական կիսասիւների վրայ։ Իբրեւ բազիլիկային յատակագիծ, ունի միանաւ կերպարանք, իրենից ներկայացնելով մի երկար քառանկիւնի յատակագիծ, առանց որ եւ է բաժանումի։

Հիւսիսային պատի մէջ կան չորս, իսկ հարաւայինի մէջ երկու որմադարաններ, որոնց օրինակը եկեղեցու մէջ սովորական չէ և ոչ էլ նպատակը հասկանալի։ Դռների թիւը երկուս է, մէկն արեւմտեան պատի մէջտեղում, իսկ երկրորդը գտնւում է հարաւային ու արեւմտեան պատերի անկիւնում, հարաւ բացւող։ Շինութեան մէջտեղում, տանիքի փլչելուց յետոյ բուսել է մի բաւական հաստ ընկուզենի, իբրև յայտարար երկարժամանակեայ աւերի։ Բայց հնումը, փլչելուց առաջ, ենթարկուել է ակնյայտնի նորոգութեան և փոփոխութիւնների. օրինակ յիշած դարանների շրջանակ կազմող որմաշարքը մաքուր տաշուած քարերով է, միանգամայն տարբեր մնացած պատերի շարուածքից, իսկ արեւմտեան դուռը, դրսի կողմից, զարդարուած է գե-

գեղեցկազարդ շրջանակով, ԺԲ–ԺԴ դարերով։

Չկայ ոչ մի գրութիւն ոչ հին մասերի եւ ոչ էլ գեղեցիկ տաշուածների վրայ։ Մեծ հաւանականութեամբ կարելի է այդ աշխատանքը վերագրել ժամատունը շինող Գրիգորիս եպիսկոպոսին, 1224 թուին։

2. Բազիլիկ երկրորդ եկեղեցին անմիջապէս կպած է տաճարին, հարաւային կողմից, երկարացած մինչեւ նրա հարաւային դուռը, աւելի նեղ է եւ կարճ քան տաճարը, միայն պատերի յենարան կիսասիւները, թևով երեքական, տաճարի պէս կրկնուած են, իբրեւ յենարան տանիքի կամարածածկի ծանրութեան, նոյնպէս շինուած է անտաշ քարերով եւ հիւսիս-հարաւ ձգւուած միջնորմով բաժանուած է երկու հաւասար մասերի, արեւմտեան մասը հաւանաբար յաւելցրած էր ժամատանը։ Նոյնպէս արձանագրութիւն չունէր։

Ահաւասիկ այս երկու անշուք շէնքերով, բնութեան տեսարաններից զուրկ մի անկիւնում, նշանաւոր վանքի համար շինութեան տեղ ընտրելը, հիմք է տալիս կարծելու, թէ այդ տեղը շատ աւելի խոր հընութեամբ էր սրբագործուած, որ Արցախի մեծ իշխանները ընտրեցին իբրեւ իրենց ընտանեկան գերեզմանատուն եւ ամեն տեսակ կալուածներով հարստացնելով, երկրի խոշորագոյն վանքերից մէկը դարձրին։

3. Կաթողիկէ, Արզու Խաթունի եկեղեցին շինուած է նախկինների շարունակութեան վրայ, արեւելեան անկիւնում։ Ամենահոյակապ եւ գեղեցիկ շինութիւնն է սա, սրբատաշ քարերով, ԺԳ. դարու հայկական ոճի ընդհանրացած ոճով կառուցուած։ Յատակագիծը խաչաձեւ գմբէթաւոր եկեղեցիներինն է, համարեա հաւասար քառանկիւնի թեւերով, ներսում չորս ապսիդներ, որոնց անկիւններում գոյացած որմերը հոյակապ գմբէթի յենարաններն են։ Պատերը դրսից ցցուածքներ չունին։

Արզուխաթունն այն հազուագիւտ հայ իշխանուհիներիցն էր, որ իր ձեռագործ ընտիր նուէրներով Գետիկի Գոշ Մխիթարի, Հաղբատի, Մակարայ եւ իւրաչէն Դադի վանքերին սեղանի ծածկոցներ եւ եկեղեցիների շինութիւններին դրամական նըպաստներ տալով, իր անունը թէ պատմութեան եւ թէ այդ եկեղեցիների որմերի արձանագրութիւնների մէջ անմոռաց է թողնելու։ Մանաւանդ հայ կանանց ձեռնարկութեան պատմութեան մէջ նրա անզնագործած Սեղանի Ծածկոցը միշտ կը յիշուի, քանի որ պատմագիր Կիրակոս Գանձակեցին տալիս է այդ ձեռարուեստի բաւական լաւ նկարագրութիւնը։

Մխիթար Գոշի եկեղեցու շինութեան օգնում են Հաթերքի տէր Վաչէնեցի Վախթանգը եւ իր չորս եղբայրները, Գրիգոր, Գրիգորիս, Խոյգան եւ Վասակ. Բուրդ իշխանի որդիները Դաւիթ եւ Սադուն. «Եւ քոյր նոցա Արզու Խաթուն, կին Վախթանկայ Հաթերքեցւոյ, որ բազում ինչ օժանդակ եղեւ։ Արար եւ վարագոյր գեղեցիկ, զատերովք խոյովք, ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, զարդ ճանգակակերպ և ճկարեալ պատկերօք, ճօղրագոյն ճաճանչովք, անօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զանկզօղն.... Եւ ոչ այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց. Հաղբատայ և Մակարայ վանից և Դադի վանաց. քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կինն» (Կիր. Գանձ., էջ 203–4 եւ Ազգ. Հանդ., 1903, գիրք Ժ., էջ 9–10)։

Շահխաթունեանն ունի Գէորգի սուրբ Աստուածածնում (Բ. էջ 367), կրկնում Արցախում (էջ 330), Եփ. Ալյուբթիւնեանն չունի (Ազգ. Հանդ., 1903, Գիրք Ժ., էջ 21–29). մի արձանագրութիւն, որի մէջ ասուած է թէ Գէորգի վանքը շինելիս, ի թուին ՉԽ (= 1291)ին գործը կատարել է «Զեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանգա եւ նորին զուգակցին Արզու Խաթունին, եւ նորին եղբարցն Սմբատայ, Վասակայ եւ խորգն (խորթն) Գրիգորոյ եւ նոցին զաւակացն...»։

Աւագ սեղանին կից, եկեղեցու ներսում կան նաեւ ութ փոքր սեղաններ, չորս անկիւնների եռայարկ սենեակներում, կամ խորաններում շինուած։ Այդ սենեակների երկրորդ յարկը տանում են պատերից դուրս ցցուած քարէ աստիճաններ, որոնց մի մասը տաշած, կոտրուած են։

Եկեղեցին ներսից եւ դրսից միատեսակ խնամքով տաշուած քարերով է շինուած,

բույսի այդ պատերը՝ ծածկված են կրաձեփով, և ինչպես մնացորդներն էին ցույց տալիս, ամբողջապես նկարազարդված էր։ Նկարներից մի քանիսը մեր տեսած ժամանակ տանելի վիճակ ունեին, որոնցից մենք լուսանկարներ պատրաստեցինք. մինչդեռ Տաթևում միանգամայն եղծվել էին։ Նկարներ պահված էին հյուսիսային և հարավային պատերի վրա. հյուսիսայինի վրա ազդել էր խոնավության քայքայիչ ազդեցությունը։ Սրանք թե ժամանակին գույներով արտանկարված լինեին հայկական արվեստի այդ ավանդույթի պահված որմանկարի բեկորները։

Հարավային պատի տեսարանն էր, Աստվածածին, նկարված երեք քառորդ հանդիպահայաց դիրքով, հագին մոխրագույն երկար շապիկ, գլուխը փաթաթած կարմիր ծածկոցով, ձեռների վրա երկարած խաչազարդ ուրար։ Նա հայացքը հառած դեպի արևելք գնում է կենտրոնում նստած մի անձի։ Նրա աջ կողմում գտնվում է թևավոր հրեշտակ, ավելի փոքր դիրքով նկարված, որի հայացքը նույնպես դարձած է դեպի նույն կենտրոնական անձի պատկերը. իսկ այդ կենտրոնական անձնավորությունը թե ով է, չկարողացանք որոշել, որովհետև շատ էր վնասված և նկատելի էին միայն անորոշ գծագրությունները։

Հյուսիսային պատի տեսարանն է. մի անձնավորություն քայլում է դեպի արևելք, աջ ձեռքում բռնած ոսկեկազմ ավետարան, ունի կարմրագույն երկար միրուք, ինչպես որ նրա գլխի մազերի գույնն է. հագել է կարմիր բաճկոն և գորշ գույնի վերարկու։ Նրա մոտ է մի երկրորդ անձնավորություն, երիտասարդ հասակում, անմիրուք, աջ ձեռքը աղերսական եղանակով առաջ կարկառած. հագին ունէր միայն դեղնագույն մի շապիկ, խաչերով զարդարված. ուրիշ հագուստ չունէր։

Նույն պատի վրա նկարված էր Յիսուսի ծնունդը։ Աստվածածինը պառկած է, գլուխը բարձրացրած դիրքում, ինչ որ սովորական է ավետարանների մանրանկարներում։ Նրա գլխի վերևը կանգնած է Յովսեփը. բայց դրա գլուխը թափված է, չկայ նկարում։ Կոյսից ավելի ներքև չոքած էին երեք մոգերը, հագներին գույնզգույն, արևելյան ձևի հագուստներ. իսկ բարձրում տանում էին խմբով հրեշտակները, «Փառք ի բարձունս» երգելով։ Մանրամասնությունների նկարագրությունը թողել էինք լուսանկարչական ընդօրինակության։

Կային նաև որմանկարների այլ բեկորներ, միանգամայն անորոշելի։ Նկարչական ու ոճական հատկությամբ պետք է ընդունել, որ նկարները պատկանում էին եկեղեցաշինության ԺԴ. դարին։ Եկեղեցու ներսի պատերի վրա գտնվում են նվիրատուների արձանագրությունները ՈԿԴ = 1215, ՉԺԶ = 1267, ՉԻ = 1271 և ՉԿԱ = 1312 թվականներին։

Պահված է նաև եկեղեցու հիմնարկության երկար և գլխավոր արձանագրությունը, կարդում ենք Հնությունից մնացած անփոփոխ, փորագրված գեղեցիկ գլխագիր տառերով, հարավային պատի սալաքարերի վրա, 19 երկար տողերով։ Այդ արձանագրությունը կարևոր է նաև իբրև պատմական բովանդակությամբ հիշատակարան։

323. «Շնորհիւ ամենակալին Այ ձեռ եւ միածնի որդոյ նորա Յի Քի եւ պարգեւաւք ամենասուրբ Հոգո / (ոյն) Արզուխաթուն նուաստ աղախին Քի դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուս/ին Վախտանկա թագաւորազնո ան Հաթերքո եւ ամենայն երկրին խաչենո յուսով մեծաւ շին/(եցի) զսբ կաթողիկէ ի տեղոջ հանգստարանի առն իմո եւ զաւակաց իմոց Հասանա անդրանի(կին) / իմո եւ Գրիգորի եւ ի Տէրն կիսաւրեա փոխեանեց(աւ) զի վասն իմ մեղաց պատժեաց զիս Աստուած եւ երարձ / ի գլխոյ իմո զերկոսեան պայկն վայելուչ զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին / վասն քրիստոնէական հաւատոյս եւ զկնի երից ամաց եւ կրտսեր որդին իմ Գրիգոր ի Տէրն կոչեցեալ / պարտս բնութեան հատուցանելով վճարեաց ի կենցաղս եւ փոխեցաւ առ Յս սուգ անմխիթար / ... բռնառացելո մաւրս իւրեանց այլ զի ի կենդանութեան յոյս ի մեջ եղ ... / ափնել եկեղեցի յայսմ տեղոջ եւ ոչ ժամանեցին վասն արագահաս լինելո ի ա... ... / իսկ աւանդեցին անդառնալի կատարել զփափագ սրտից նոցա եւ իմո եւ դստերաց իմոց եւ ամենայն զարմից: Արդ աղերսիւ հայցեմ որք երկրպագէք սբոս խորանիս յիշել յա/ղաւթս զվերագրեալսն ի սմա: Կատարեցաւ սբ հաւարանս ի թուականութես Հայոց ՈԿԳ (= 1214) / ի փառս Այ եւ ի

նորոգութի որ ուխտիս եւ սահմանեցաւ ժառանգութիւն եկեղեցւոյս գեւղս եւ / ագարակս իւրեանց սահմանաւքն զապահեն եւ զեզնարածանց եւ զբնանց եւ զ'յանաչաւորն որ ի Վայոձոր / եւ երկու սուն յարփա եւ հաստատեցաւ կամակցութբ եղբարցս զաւագ խորանի զգաստարագն յանուն վերադրեցոցս կա/սարել անխափան ով այսմ վճռի հակառակ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց սեղոյս կամ օ ոմ եւ / իցէ խափանեսցի լոյս նորա որ առ Քս եւ դատապարտեսցի յԱյ»: *(Տե՛ս Շահխ., էջ 597, Արցախ, էջ 204, Վիմ. Տար., էջ 56).*

*Եկեղեցու միւս որմերի վրայ փորագրուած են ուրիշ արձանագրութիւններ զանազան նուիրատուութիւնների յիշատակութեամբ, սկսած ՈՀԳ* = 1224, 1241, 1253, 1271, 1273, 1331, 1477, 1605, 1667 *թուականներից միջանին էլ առանց թուականների. Դրանցից* 1253*ի մէջ Զաքարերդայ Տէր Ներսէս եպիսկոպոսը տեղեկացնում է, որ իր այգին է նուիրել վանքի* ճիւրաստանը*. Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդութեան օրօք.*

*Եկեղեցու հիւսիսային պատը, թէեւ ինչպէս հնագոյն բազիլիկի դէպքում գառիվայր թեքւող հողաշերտով չի ծածկուած, բայց ընական ցցուած ժայռեր դժուարացնում են այդ պատին մօտենալը եւ նրա վրայ փորագրածը կարդալու, գուցէ այդ է պատճառը, որ այդտեղ ոչինչ չկայ փորագրուած. Դրա փոխարէն, ոչ սովորական մի երեւոյթ, եկեղեցին այդ կողմից էլ դուռ ունի, որի շրջանակը բաւական հոխ զարդերով է քանդակուած, նման արեւմտեան զարդածական դրան քանդակներին. Կիրակոս պատմագիրը չի յիշատակում Արցախի միւս եկեղեցիների օժանդակելու գործերի հետ նաեւ այս Կաթողիկէի շինութիւնը, որ 23 տարի ուշ շինեց քան Գետիկայ Դոչ Մխիթարայ եկեղեցին, որին օգնել էր դրամով բարեպաշտ խաթունը. Թէ ինչ անուն էր կրում Արզուխաթունի շինել տուած եկեղեցին, տեղեկանում ենք նրա վրայ գրած արձանագրութիւններից. երկուսի մէջ յիշւում է* «Կաթուղիկէ» *մի անգամ* «Սուրբ խաչ» *և երեք անգամ* «Սուրբ Նշան»*, միանգամայն յարմար եկեղեցու խաչաձեւ յատակագծին.*

*Շատ հաւանական ենթադրութեամբ կարելի է ընդունել, որ Հաղբատ վանքի հոյակապ շինարար առաջնորդ* խաչենցի *Յովհաննէս եպիսկոպոսը, ազգական իշխանացն Խաչէնոյ, հետեւապէս և Արզուխաթունի, որը գլխաւոր խորհրդատուն էր եկեղեցու շինութեան դէպքում եւ նրա առաջարկով է Դադի վանքի կաթողիկէին Սուրբ Խաչ կամ Սուրբ Նշան անունը տուել, հետեւողութեամբ Հաղբատի Սուրբ Նշանին. Հին բազիլիկների անունները չգիտենք.*

4. Սրահ, *շինուած կից Արզուխաթունի եւ երկրորդ բազիլիկին, յենուած է առաջինի արեւմտեան եւ երկրորդի հարաւային պատերի վրայ. ունի հինգ հաստ որմաշար սիւներ, որ զուգահեռ միանում են եւ իրանց վրայ ընդունում կամարաձեւ առանցքը. Շինութեան ձեւով եւ տեղով Տաթեւի Սրահի համանման մի շինութիւն է, միայն թէ սրա որմերը շարուած են անտաշ քարերով. Սրահի պատերի վրայ կան երեք արձանագրութիւն, երկուսը եղծուած և անընթեռնելի. երրորդն է շինութեան արձանագրութիւնը, որի թուականը, պէտք ցաւել որ կորած է.*

324. «Կամաւն Այ ես *Մնացաս* որդի Վախտանկա շինեցի զգաւիթս եկեղեցւոյս / եւ եսու զնինահար իր սահմանովն եւ զԴոփուն սաճն յեկեղեցիս»:

5. Զանգակատունը *և ժամատունը լրացնում են եկեղեցական շէնքերի ամբողջութիւնը. շինուած է ժամատան արեւմըտեան պատին կից. երեք կողմից պատերով է ծածկուած, կամարակապ քառանկիւնի մի շինութիւն, արեւմտեան ճակատով միայն բաց, եզերուած գեղեցիկ բարձր կամարով. Այդ որմերի վրայ է բարձրանում մի երկրորդ յարկ, կազմուած չորս միակտուր քարերի սիւներով, վրան փոքրիկ գմբէթ.*

*Առաջին յարկում, արեւելեան պատին յենուած, կանգնեցրած են երկու խաչարձաններ, զարդարուած նուրբ և ընտիր քանդակներով. Գեղեցիկ խաչարձանների յաճախութիւնը հայկական փորագրական արուեստի ուշագրաւ մի ճիւղն է եւ նրանց բազմատեսակ օրինակները սփռուած են Հայաստանի նշանաւոր վանքերում. Արցախն իր այդ երկու հիանալի յուշարձաններով յետ չի մնացել Հայաստանի միւս երկրամասերից.*

Փորվածքը կատարված է գորշ—սպիտակավուն հրաքարի վրա, որ ունի միջակ կարծրություն, ողորկ է և առանց ծակոտկենների։ Խաչերից առջևն մեկը պատրաստված է երկու կտոր քարատախտերից, վարպետորեն այնպես միմյանց կցված, որ առաջին անգամից միակտոր քարի տպավորություն է թողնում։ Քանդակները են հայկական ոճի հյուսվածքներ, ներբուսաձև զարդեր, քառակուսի զարդեր, վերին սահմանի մանր և նուրբ հյուսվածքներով սերտ միմյանց հետ շաղկապված։ Իբրև խաչքար քանդակի շրջանակ ռելիեֆ խոշոր և գեղեցիկ հայկական գլխագրերով ցցված է արձանագրությունը։ Խաչերից մեկի վրա Յիսուսի ռելիեֆ արձանն է փորված և դժբախտաբար հենց այդ մեկն է բավական վնասված, մի կողմով ենթակայ լինելով քամուց հարվածող անձրևի կաթիլներին։ Այդ երկու խաչարձանները հայկական խաչարձանների լավագույն օրինակներից են և անհրաժեշտություն կայ նրանց կորստից ազատելու։ Արձանագրությունն է.

325. «Եհն զաւրութեամբ ես Արզախաս ադի Հասանա կանգնեցի զսբ նշանս / յիշատակ հոգւո իմո. զսէր Արզախաս յիշեցէք ի Քս թվին ՉԼԲ» (= 1283)։

Երկրորդ խաչարձանը, կանաչ գույնով ներկած, ունի այս արձանագրությունը.

326. «Տր Գրիգորիս սնուցող սբ Արածաւի յիշ.»:

6. Ժամատունն այն անհրաժեշտ կառույցն է, որ ունեցել են հայկական բոլոր հին մեծ վանքերը, առանց բացառության։ Այն եկեղեցին որի մասն է կազմում տակավին լավ վիճակում և համեմատ անվնաս պահված ժամատունը, առաջին բազիլիկն է։ Սրա ձևն ամենապարզ և սովորականն է, կենտրոնական մասում կանգնեցրած են չորս միակտուր խոշոր քարե սյուների վրա տանիքի կամարները, որ խաչաձև իջնում են կողմերի չորս պատերի վրա, իսկ կենտրոնական մասում բարձրանալով և նեղանալով, հասնում են մինչև վերնալույսի բացվածքը, հերթիկը։ Ներսից կամարներն ու պատերի բոլոր քարերը կանոնավոր և խնամքով տաշված են, իսկ պատերի դրսի շարվածքը, բաղկացած է անտաշ քարերից։ Այս ժամատան մեջ են մեռելները էին թաղում, ինչպես ցույց են տալիս առկա գերեզմանաքարերը, որոնց վրայի արձանագրությունները դժբախտաբար եղծված և անընթեռնելի էին։

Ժամատան շինել տվողն էր արձանագրության մեջ յաճախ յիշվող վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը, որ այդ շենքը շինել է Արզուխաթունի եկեղեցուց ուղիղ տաս տարի յետոյ, ՈՀԳ (= 1224)ին։ Այդ տեղեկությունը կարևոր է և գալիս է հաստատելու մեր այն կարծիքը, հիմնված փաստերի վրա, որ ժամատները շինում էին ոչ մեծ և ճարտարապետէն եկեղեցիներին կից, այլ կից այն եկեղեցիներին, որ հնությամբ և ժողովրդական ավանդությամբ, ժողովրդի աչքում համապատասխան տեղի մեծագույն սրբավայրն էր հանդիսանում։

Հատկանշական է, որ նույն Գրիգոր եպիսկոպոսի շինածն էր նաև Հնագույն Բազիլիկի արևմտյան դուռը քանդակազարդերով և ներսի գոլարների կամ պահարանների տաշածոյ շրջանակները։ (Համապատասխան արձանագրությունը տես հավելվածում հ. 361)։

Մի լայն ու բավական երկար պողոտաձև միջանցք—պողոտայ բաժանում է զույգ եկեղեցական այս շենքերը, ավելի հարավ և երկրորդ թեքության վրա ընկած բնակարանային և տնտեսական շենքերը, բացառությամբ մի մատուռի, որ գտնվում է որահի դեմ յանդիման, պողոտայի մակարդակի վրա։ Այս դասավորությունը գլխավորապես տեղի թելադրանքով, յիշեցնում է Հաղարծնի վանքը։

7. Մատուռը համարեա քառակուսի ձև ունի, շինված նրա առաջում թաղված իշխանական անձանց յիշատակին, փոքրիկ մի շենք է, որի մեջ ուշադրության արժանի և նկատելին այն է, որ փոխանակ սալ քարերով, որոնցով Կաթուղիկէի տանիքն է ծածկված, այստեղ գործածված է մուգ կարմիր թրծած աղյուս։

8. Առաջնորդական Տունը կրում է Տաճար անուն, այդպես է գրված արձանագրության մեջ։ Այդ տունը բաղկացած է երեք մասից, կամ երեք դահլիճից. առաջինում մի մեծ դահլիճ, շինված է միանգամայն ժամատան ոճով և նմանությամբ,

դրսից պատերը անտաշ քարերով շարված, իսկ ներսի կողմից մաքուր սրբատաշ է. կենտրոնում չորս միակտուր շարքերի սյուներ, քառանկյունի խոյակներով և խարիսխներով. դրանց և պատերի վրա է հենվում տանիքի կամարածածկը։ Ներսում յատակը հողածածկ է, հյուսիսային պատի երկարությամբ շարված են երկար և կես մետր լայնությամբ ու բարձրությամբ սալ քարեր, որ անշուշտ ծառայել են բազմականների գետնից բարձր նստելու տեղեր, որ երկրի սովորության համեմատ ծածկված էին գորգերով կամ կարպետներով և բարձերով։ Այդ բարձր տեղում նստում էին բարձրաստիճան անձինք, համեմատ ամեն մեկն իր աստիճանի և ավագության կամ ծագման։ Այդ մեծ շենքի մեջ ելևմուտքը կատարվում էր միակ մի դռնով, իսկ լույսն ստացվում էր կտրի կենտրոնից բացվող երդիկից։

Առաջին մեծ տանը կցված է մի երկրորդը, ավելի փոքր չափերով, բայց շինված միանգամայն նույն ձևով. դրսից հասարակ իսկ ներսից տաշված քարերով, ունի վերնալույս երդիկի միջոցով, և որովհետև տարածությամբ ավելի փոքր է, չորսի փոխարեն միջում կանգնեցրած են երկու սյուն միայն, մի գծի վրա։

Սրա հարավից կցված է մի երրորդ կացարան, որ կամենում ենք սենեակ կոչել, որովհետև որոշ չափով տարբերվում է նախորդներից, լուսավորություն ստանալով պատի մեջի երկու լուսամուտներից, այլապես շինված է նույն ձևով և կամարածածկ է, բայց ավելի փոքր լինելով սյուներ չունի։ Սա էլ, ինչպես նախորդները, ունի միայն մի դուռ։

Այս երեք կառուցվածքները կարելի է մի բնակարան համարել, իրար՝ներս կցած, միայն թէ իրար հետ հաղորդակցող դռներ չունին։

Մեծ Տան կամ Տաճարի շինության արձանագրությունն է.

327. «Թ. ՈԿ (= 1211) Ես Գրիգոր/իս որդի Հասանա / շինեցի զտանս յիշատակ / հոգո / իմո յաղաւթս յիշեցէք»: Ուրեմն այս դուռը կաթողիկէից երեք տարի առաջ է շինել։

Վանքում կայ նաև երկրորդ բնակարան կամ Տանար, նույն հարթության վրա ընկած դէպի արևմուտք, նույնպէս բաղկացած երեք բաժանմունքից, երկու մեծ կացարաններ, մեկը փոքր։ Սա ավելի հասարակ շենք է, ներսից ու դրսից միատեսակ անտաշ քարերի պատերով, միայն թէ կամարածածկ են։ Երկար ձգված մի միջանցք անջատում է այդ երկու բնակարանները։ Երկրորդ կացարանների վրա կառուցված է երկրորդ յարկ՝ հավանական վերջի վանահայրերի ժամանակ, սովորական պատուհաններով։ Արձանագրություն չունի։

Վանքի բազմաթիվ արձանագրություններից մեջ կայ մի շատ հետաքրքիր արձանագրություն, որի մեջ հայ թագուհիներից Մաման, կին Հասանա և դուստր Կյուրիկեա թագավորի, Գրիգորիս եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ գալիս է այդ վանքը, հագնում է միանձնուհու ձև ու իր մարդու հետ ի միասին կրոնավորվում է։ Շատ տարօրինակ մի երևույթ է, որ աղամարդկանց վանքի մեջ կրոնավորական սքեմ է հագնում մի կինմարդ և այնտեղ ապրում։

328. «Թվին ՈԼԱ (= 1182) / Ես Մամա թագուհի ամուսին Հասանա դու/ստր Կյուրիկեա թագաւ... կա/ցայ յուսադր/ւթեան ամս Լ (= 30) ես և այր իմ և թողեալ զհ/այրենիս մեր որդոց մերոց եկեալ/ք ի վան/ս մաւս ի տէր Գրիգորիս և որդի Նաւրի ն/ամանուն նորին և զգեցաք զձև մի/անձնա/ց և կանխեցի զխաչս յիշատակ հոգո ի/մո որք երկրպագէք յաղաւթս յիշեցէք»:

Այս ամուսինները, երևում է, թագավորելուց յետոյ, առանձնանում են վանքի մեջ և ապրում են կրոնավորական կեանքով. հավանական է ընդունել, որ նրանք հազիվ թէ բնակվէին հասարակ միաբանների հետ, նրանց խղճուկ խցերում, գուցէ երկրորդ բնակարանը, միջնորմով անջատված, դա է եղել պալատանաթող արքայական զույգի կացարանը։

9. Վանքի հնձանը կամ Գինետունը պահված է բավական լավ վիճակում, գտնվում է նախայիշեալ բնակարաններից ավելի դէպի արևմուտք, բաղկացած է կամարածածկ մաքուր տաշած քարերով մի շինությունից, որ իր բարձրությամբ ու ընդարձակությամբ հոյակապ տպավորություն է թողնում։

10. Հիմնական, խոշոր ու խնամքով

շինած շինություններից զատ կային և հա-տուկ բազմաթիվ շենքեր, միաբանական յարկեր կամ խցեր, հարաւային զառիվայրի զանազան մասերում, որտեղերում կարելի է տեսնել հողաբլուրներ կամ կիսաքանդ աւերակներ։

11. Երեք փոքր մատուռներ դեռ ևս կանգուն են և գտնւում են վանքի մերձա-կայ բլուրների վրայ, ինչպէս Տաթեւում կային պարսպից դուրս նաև Հաղարծնում։

12. Վանքի անմիջական շրջապատում էր, մինչև գետափը, նրա խաղողի և պըտ-ղատու ծառերի այգին և պարտէզը, որտեղ լաւ մշակութեան միջոցով կարելի կը լինէր բաւականալից խաղող ստանալ. Հնձանում ճմլելու և գինետան կարասները լցնելու։

13. Շէնքերի մէջ մենք չտեսանք կամ չկարողացանք յայտնաբերել Հիւրատունը, Գործատունը, Սրբատունը, Դպրատունը, Ձի-թահանքը, շինութիւններ, որ չէին կարող եկեղեցական շինութիւններով այդքան մի ճոխ վանքում պակասել, մանաւանդ ան-հրաժեշտ Տրապեզ ընդհանուր վանականնե-րի սեղանատունը, որ երբեք պակասել չէր կարող։ Հիւրատունն է միայն, ինչպէս տե-սանք յիշած Զաքարեբրդոյ Տէր Ներսէս ե-պիսկոպոսի 1253 թ.ի արձանագրութեան մէջ, յատկապէս յիշատակուած եւ բազմա-թիւ աւերակների կոյտի մէջ է ներկայումս։

# ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ԵՒ ՄԵՐՁԱԿԱՅ ՏԵՂԵՐԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

---

### Ա. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ

Գանձակ քաղաքից գնալով դէպի հիւ-սիս-արեւմուտք մտնում ենք հայկական մեծ գիւղերի շրջանը, հարուստ պատմական անցեալով և տակաւին անկորուստ պահուած յիշատակարաններով։ Տրամադրելի ժամա-նակս սահմանափակ էր, կարողացայ կանգ առնել միայն հոգեւոր բարձր իշխանութեան իրաւասութեան ներքոյ եղող տեղերում։

Համեմատաբար փոքր եւ անկարեւոր կառու-ցուածքներ էին երկու Թարգմանչաց վան-քերի հողերը. Ռանանց եւ Սոշակավ մեծ հայկական գիւղերի սահմաններում, եր-կուսն էլ Թարգմանչաց նոյն անունով։ Ռա-նանց գիւղի Թարգմանչացը իւր մէջ. գարու-անկարեր և մատտանման շէնքով, ուշա-դրութեան արժանի ոչինչ չէր ներկայա-ցընում, գիւղին բաւական մօտ, միայն մի փոքրիկ անջատուած, որոշ ամերի անդա-կան ժողովրդի ուխտատեղին է։

329. Սոշակաւի շինութեան թուականն է «ՌՀԹ» (= 1630)։

Սոշակավի Թարգմանչաց վանքը շի-նուած է շատ սիրուն դիրքի վրայ, գիւղի հիւսիսային բարձրադիր վայրում, առաջը ընդարձակ դաշտեր ու հորիզոն, խնամքով հասցրած փոքրահասակ կաղնուտի ծմակով։ Անշուշտ հաւանական է որ ոչ շատ հնում վանքի ամբողջ շրջապատն ու բարձունք-ները խիտ անտառով էին ծածկուած, որի արմատներից էր բուսել մատղաշ անտառը։ Հետաքրքիր է եկեղեցին, բաւական փոքր, հատուկ անտաշ քարերից շինուած, քա-ռակուսի յատակագծով, ցածլիկ եւ փոքր մի դռնով, միանգամայն յարմարւում է պատմագիրների վկայութեանը, թէ հին ե-կեղեցիները, մինչեւ իսկ էջմիածնի Մայր եկեղեցին, հին ժամանակներում — մթին և խրթին — էին (նկար 31)։

330. Արցախի մէջ շինութեան թուական նշանակուած է «ՆԼԸ» (= 989), մենք այդ թուականը եկեղեցու պատերի վրայ չտե-սանք, բայց մեր տպաւորութեամբ եկեղե-ցին կարող է նոյն իսկ այդ թուականից ա-ւելի հին լինել։ Այժմ էջմիածնի Գրադա-րանում է գտնւում Թարգմանչաց վանքի 1303 թ. գրած նշանաւոր Աւետարանը, որ մինչև վերջին ութսունական թւերը պահւել էր այդ վանքում։ Վանքի շրջապատի բո-լոր շէնքերը նորագոյն ժամանակւայ գոր-ծեր են։ Արձանագրութեան թուականը տե-սել և նշանակել է գերմանացի Բելկ ճանա-պարհորդը 1891 թ. (տես յ. աշխ. էջ 3)։

### Բ. ԶԱՐԵՔԱՑ ԱՆԱՊԱՏ

Վանական ամենամեծ կալուածներից մէկն էր այդ անապատի հողերը. Շամքոր

գետի միջին հոսանքում. Նոում որեւիցէ նշանակություն չունենալով, վերջերը կարեւորություն էր ստացել իր ընդարձակության եւ մանաւանդ միքանի հազար դեսետին անտառներով։ Դիլիջանը կենտրոններից հեռու եւ զուրկ հաղորդակցության միջոցներից, միայն Գետաշենի պղնձի հանքերին վառելափայտ մատակարարելուն էր ծառայում։ Այս շրջանի հայերը եւս ռուս Պետրոս Մեծի խոստումներին զոհ գնալով, ինքնաւական թշնամիները այդ ամայության եւ մենակության մէջ վանահայրեր էին պարում։ Եկեղեցու արեւմտեան կողմից շինուած է սիւնազարդ սրահ, իսկ մօտ հարթուր քայլ հեռու մի բլրի վրայ, առանձնակի կանգնած, գտնւում է Զանգակատուն եւ այգաւեղից ոչ շատ հեռու, կան երկու մատուռ եւ ընդարձակ գերեզմանատուն։



*(Նկար 31)*

Թարգմանչաց վանքը, Խաչակապ գիւղում։

ամփոփուած էին իրենց փրկությունը գաղթի մէջ որոնել եւ կալուածքի բոլոր մասերում թողել են, խիտ անտառով ծածկուած, գիւղական աւերակներ՝ ամեն կողմում։

331. Իսկ բուն Անապատը, Շամքոր գետի ձախ ափին, մի աննշան շինություն է «ՌՃԼԳ» (= 1684) թւին կառուցուած «ձեռամբ Տեառն Ներսէսի հանգերձ եղթանասուն եղբարցս»։ Եկեղեցին գեռ կանգուն է, որովհետեւ կալուածքի պատճառաւ մինչեւ

## Գ. ԼԵՒՈՆԱԲԵՐԴ ԵՒ ՁԱՓՆԻ

Սոթքից կալուածքի առաջի գիւղը, Թուրքաբնակ, կոչւում է Իսաքբուլաղ, հին գիւղատեղում, որի նոր բնակիչները ընդարձակ վարելահողեր են բացել, անխնայ ոչնչացնելով խիտ անտառը։ Սրան կից է Լեւոնաբերդ (Ջալ. Բ., էջ 214, կոչւում է Լօհաբերդ) անուամբ յայտնի բնական ամրութեամբ օժտուած և արհեստական պա-

բնագծերով անմերձենալի դարձրած փոքր իշխանական ամրոցը, որ գտնվում է Համանուն գետակի աջ ափին։ Մենք ուշադրությամբ քննեցինք հին շինությունները, որոնց մեջ մի քանիսը միայն ծածկից են զրկված, խուլոր ջրամբարները կամ անձրևաջուր ամբարելու, կամ գաղտնի քանդերով բերված ջրերը ամբարելու, պաշարման միջոցներին։ Մեր հետաքրքրությունը չբավարարվեց որևէ գրավոր հիշատակարանով։ Բայց մինչև այժմ անց մի չնչուց, իմ բարեկամ ինժեներ-երկրաբան Գրիգոր Աղաբաբյանը, որ կոչվածքով հանքային հարստությունների տեղեր էր ուսումնասիրում և պատահաբար այդ բերդի շրջանում ի յայտ էր բերել պղնձի հանքի մինչև 18 վերջնակ հարստությամբ հանքային երակ, գտել էր բերդի մեջ մի խոլարձան, գեղեցիկ արձանագրությամբ, որ արտագրելով ինձ էր ուղարկել։

332. Աղաբաբյանը գրում է այսպես․ «Արձանագրությամբ խոլ քարի ձախ կողքին։ Այդ խոլքարը ընկած է Թոթավանքի կալվածքի Լևանաբերդ ամրոցի մէջ, մատուռի պարսպի միջանցքը։ Խաչը փորագրված է վերևից եւ պարզ գծերով, առանց շատ քարդ նկարների։ Խաչի թևերի տակ փորագրված է հետևյալ թվականը.

«Թվ. ∴ ՈԽԵ (= 1196) Ես կ.. / ռաղ. / լս.. / ՑզՅ.. (այս չորս տողի մասը կոտրված է) / ի զխաչ / բարե/խաւսու/թեն ∴ որ/զո ∴ խմ/ո ∴ խոսա/րոզբկա / որ վախչ /ածնցաւ / ի մեջ ա. / լադ.. / որէ կ.. / ռայ..»: (Վերջին չորս տողը գրաբար կոտրված)։

Լևոնագետի հոսանքով առաջ ընթանալով հասանք մի ավերակ գյուղատեղի, որի մերձակայքում 12 ջրաղացի ավերակներ՝ նախկին բազմամթիվ բնակիչների չափանիշն էր, իսկ այժմ նույն ընդարձակ տեղերում ապրում է միայն մի բազմանդամ ալևորի ընտանիք, ամեն տեսակ անասունների մեծ հոտերով, որ օգտագործելով շրջապատի անմարդաբնակ դարձած տեղերը, միջնադարյան ավատական իշխանի դիրք էր ընտրել իր համար, ավելի օգտվելով կալվածքից, քան կալվածատեր Ղարաբաղի հայոց հոգևոր իշխանությունը կամ Էջմիածնի վանքը։ Գյուղի անունն էր Չափնի, արդյոք նոր թե հնուց մնացած անուն. այրում Թուրքի Հաջի Ալիի հովիվները իրենց համար ձմեռանոց ծառայող այդ անդին այդ անունն էին տալիս։

Ավերակների մեջ կիսականգուն են տակավին մի քանի կամարակապ խցեր, մատուռանման շինություններ եւ երկյարկանի մի դամբարան, միջում պահված խաչարձանը։ Սրա ներքևի յարկը քառանկյունանի է, երկու ու կես մետր բարձրությամբ, մի ճակատը բաց, իսկ երեք կողմերը կառուցված մաքուր սրբատաշ քարերով։ Երկրորդ յարկը կառուցված է չորս միակտուր քարերի սյուներից, վրան փոքր գմբեթ հաստատված։ Այդ գմբեթի տակ, սյուների արանքում կանգնեցրած է գեղեցիկ քանդակներով զարդարուած խաչարձանը, կիսատ թողնված արձանագրությամբ։

333. «Թվին ՉԻԴ (= 1275)։ Կամաւն Այ / ես Սուքիման եւ Ուքնա / կանգնեցաք զխաչս նաւր / ձեռոյ Առաւօսյ / մաւր յաղաւթս»: (Ջալ. Բ. էջ 215, Վիմ. Տար. էջ 136, թվական ունին ՉԽԴ (= 1295), Աղբ. Հանդ. էջ 78)։

Քարի վրայ այլ ևս տեղ չկար արձանագրության միտքը լրացնելու, փորագրողը աներևույթ ոճով է հուշել արտածությունը։ Չոլոլյանը Չանկի անուն է տալիս այդ ավերակին և խաչարձանին կից մատրան մասին գրում է. «Ի ներքոյ վիմի այսր մատրան է գերեզման Աշոտոյ. . ի վերայ որմոյն այնր մահարձանի գրեալ է»․

«Սուսամն Այ ես Հասան եւ Զորբեկ եւ Խնանիկ խաթուն զինչ Աբրուրայ որդւոյն կայր ծախեցաք Հասանայ հողով եւ մարդով առ Կարապետին. Եւ սոյն ամենայն եկեղեցիք Հասանայ. կատարիչք ուրենին յԱյ»:

Արձանագրության ընթերցումի մեջ ակներև թերություններ կան. կարևոր է, որ պահել է Սուրբ Կարապետ եկեղեցու անունը և վկայում է, որ տեղում ուրիշ եկեղեցիներ էլ կային։

## Դ. ՔԷՇԻՇՔԵԱՆԴ

Այդ անունը յայտնի ավերակ գյուղը դարձել Լևոնագետի ափին է, որտեղ ի մի է խառնվում գետակի ճյուղերից մեկը. մեծ թեքությամբ ձորակի միջով փրփրալից ներքև գլորվելով։ Ընդամենը երեք տուն այ-

րումներ են ապրում այդտեղում և տակավին կանգուն է հին եկեղեցին։ Շինութիւնը դիտեցի հեռուից, երեկոյացած ժամանակի պատճառով կանգ առնել և արձանագրութիւնը կարդալ չկարողացայ, մանաւանդ որ հասարակ քարերից աննշան շէնքը, անտանելի ճանապարհներից յոգնած, առանձին գրաւչութիւն չէր ներկայացնում։ Գիւղական հասարակ եկեղեցի էր, որի նմաններին յետոյ ուրիշ տեղերում պատահեցի։

## Ե. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱԴԻ ՎԱՆՔՈՒՄ

Որովհետև արձանագրութիւններ արտագրելը և շինութիւնների լուսանկարելը բաւական ժամանակ էին պահանջում, իմ ուղեկիցները անընդհատ ինձ շտապեցնում էին, շարունակ յիշեցնելով, որ յաճախ այդ վանքը աւազակների կայարան է դառնում և պէտք է շտապել, նոյն յարձակումներին զոհ չլինելու համար։ Երկու աւուր մէջ այդտեղերում ոչ մի կենդանի շունչ չհանդիպեցինք։ (Ընդհանուր նկարագրութիւն տես Աղք. Հանդ., էջ 80–84)։

Բազմաթիւ արձանագրութիւնների շատերը կոտրատուել, անհետ կորել են, կամ ծածկուած են փլատակների տակ. անկորուստ պահուածներն իսկ բաւական են վերականգնելու վանքի յաջորդական անցեալի նկարագրութիւնը։ Ինչպէս յիշուել է, քանի որ լուսանկարները անհետ կորան, իմ արտագրութիւնների մէջ մնալու են կասկածելի և թերի մասեր, մխիթարականն այն է, որ իմ տուածը նախորդներիս տուածներից աւելի լրիւ է լինելու։

Կաթուղիկէի արձանագրութիւնները.— Հարաւային պատի վրայ եկեղեցւոյ հիմնարկութեան արձանագրութիւնը (տես էջ 87, թիւ 323)։

Նոյն տեղում, առաջնից ներքեւ.

334. «Կամաւն Այ ես Վախթանգ որդի Սմբատա ծառայի եւ ամուսին իմ Նանա աղախին Քի միաբանեցաք / Դադիվանայ եւ ետուաք ի ձայրենեաց մերոց զՃեչաչորեցն եւ այգի մի ի Խոզենիկս / եւ մեծամեծս մատամբ խաչ մի մեծաւ յուսով եւ բնակիչքս որ Դոփիզորիս եւ միաբանք սահմանեցին մեզ բ. աւր ժամ զամենայն եկեղեցիս զաւուն Յովհաննուն՝ Անաին եւ զաւուն Վարդանանց՝ Վախթանգա. ով խափանէ զժամս կամ խլէ զմեր ետուածս մեր եւ մերազգի մեղաց տէր է քու. ՈՂ. թւ» (= 1241)։ (Շահխաթ. էջ 597, Վիմ. Տար. էջ 35, տարեթիւ նշանակել են ՈԼԱ (= 1182))։

Նոյն տեղում, աւելի ներքեւ.

335. «Կամաւն Այ ես Գոնցէս եւ որդիս Հասան ու Վահրամ թոռն Դոփանաց ետվաք / ի Դադիվանս զմեր հայրենիքն զԽուզիկես սահմանովն խասամբն...»: (Տես Ջալ. Բ. էջ 226)։

Նոյն պատի վրայ.

336. «Արդ այս է / մահին բե/վն ՌՃԺԶ թւ (= 1667) / ես անարժան Մովսէս գրեցի»:

Նոյն պատի վրայ.

337. «Կամաւն Այ ես Գրիգոր ամենա / հրամանաւ սն Արքանոսի եւ կամակցութ ալ/լ եղբարցս գնեցի իմ ընչիւք Զախուակալն* եւ եսու քննեցեցա եւ խառնեցա ընդ եղ/բայրութի սոցա եւ սահմանեցին ինձ ի տանի Սրբուման Սբ Խաչին գ. աւր պատարագ ար/դ եթէ ոք զայն ճո լն յայս եկեղեցոյս ճանէ կամ զսահմանն խափանէ խափանեսցի յոյ/սն որ առ Քս . . . մաս Նորայ ընդ Յուդի ու ընդ այլ խաչահանսն եղ»: (Տես Ջալ. Բ. էջ 226–7, ունի Զախուկալն)։

338. «Ած ողորմի սր Սղինէին Ճեղոյն»:

339. «+ (Կ)ամաւն Այ ես Սասնա ձեռնաւոր* միաբանեցա սբ ուխտիս / առաջնորդութ սր Աքանոսի եւս զՄարուսանց Ճողն ղ. / եղն եւ այլ արդիւնք ի սբ Կաթողիկէս եւ սահմանեցին ինձ բ. աւր ժամ զամէն եկեղեցիք ի տանի Սանակա եւ կիւրակէն ով զ/ճողն խլէ կամ զիմ ժամն խափանէ իմ մեղաց պարտական է: ՉԺ» (= 1261)։ (Տես Ջալ. Բ. էջ 227, Վիմ. Տար. էջ 103, ունին ձեռնափոխ)։

340. «Կամաւն Այ ես Սերոբ քրմն / սկեցի միաբանեցա սբ ուխտիս ճաւրա/յին մի աւր պատարագ սահմանեցին ի տարին կատարիչքն աւրհնին յԱյ»:

341. «Ած ողորմի Կիրակոսին ամուսնուն թվ. ՋԻԸ» (= 1479):

342. «Քս Ած ողորմի սար/կաւագ: Որ ես ընծա եղ/ծղեցայս սր Ուխտ եւ միա/բանքս եպուն բ. պատար/ագ ի տարում ի տանի սբ Թէ/ոդորոսի կատար/(իչքն) աւրհնին. . ՉՁ» (= 1331):

*Այսքանով վերջանում է հարավային պատի թևով եղած արձանագրությունները, որոնցից նախորդներիս աշխատությունների մեջ արձանագրված են հինգը։*

*Արևմտյան պատը, որի մի մասը ուշ շինված որահի պատով է ծածկված, ունի եօթն արձանագրություն։*

313. «Ես Մամա դուստր / Վասակա ան Հասբերդոյ եւ զի/մ նայրենի պաշտօյգամակ եւ սպասս ենեղեցյոյ / յոսկո եւ յարծաթո ի սբ Կաթողիկես յառաջնորդու/թն սն Գրիգո-րիսի եւ սբ եղբարս սահմանեցին զաւուն սբ / Յակոբա եւ զկիրակեն զամեն եկեղեցիս անխափան: ՈՂ. թվ.» (= 1241): *(Տես Չամ. Բ. էջ 227, Վիմ. Տար. էջ 84)։*

314. «Զուասա Վարդնի որդի Գրիգր կազմող որ ճշանիս յշել աղչիմ ի Քս»:

*Դանիելի գեղեցիկ զարդաքանդակի փո-րագրիչն էր յիշված Վարդանի որդի Գրի-գորը։*

345. «Նկրող որ ճշանացն զՊօղս յէՔ»:

346. 347. և 348. *արձանագրություն-ները օդի ազդեցությամբ խիստ վնասված լինելով՝ անընթեռնելի դարձին։*

349. «. . . իմ եղբարն եսուն ինձ եւ ես / կամաւ եուի որ Կաթողիկես ա. / չա-րեցայ նողի ոբնակնաւոււն ա. / չաղայ ս . . . անապահի սուրբաս պատուական / յառաջ-նորդութե սբ Գրիգորիսի որդ/ւս Վասակա եւ սոհա եսուն ինձ / զ. աւր զամենայն (ե-կեղեցի)ս զնոր / կիրակեն եւ զնես . . . ան կաս/արիչք գրոյս արն(նեայ) լիցին յԱյ / եւ ով խափանէ . . . կամ ի ծ/անաւրից նզով-եալ եղիցի ի / ՅԺԸ հայրապետացն մասն եւ բա/ժին ընդ Կայենի եւ ընդ Յուդայի եղիցի»:

350. *Սոչոր գեղեցիկ տառերով է փո-րագրված.* «Ած ողորմի Սարգսի»:

351. «Անուամբ Այ ես Գրիգոր որդի Հա/սանա որ մեծ յուսով եուի ի / Դաղի ցն-էզմանս դ. սուն ռի/նակ վա հոգո իմո յա-ռաջնորդ/ութն սն Գրիգորիսի եւ սոհա / սուին ինձ զաւուն սրբոյն Գր/իգորի զամե-նայն եկեղեցիս / արդ ով խափանի յա-ռաջնոր/դաց զիմ ժամն կամ յաւազա/ց ի-նց կամ յաւտարաց զշ/ինականց եւ առնլով իմ մեղ/ացս պարտական է եւ մասն / ընդ Յուդայի եղիցի ՈՀԳ» (= 1224): *(Տես Չամ. Բ. էջ 227, Վիմ. Տար. էջ 68)։*

352. «. . . Այ ես Հասան որդի Գրիգորի / . . . զեսն իւր սահմանօքն . . .» *Մնացածը եղծված։*

*Այս պատի արձանագրություններ նախորդ-ներիս մոտ միայն երկուսն են նշանակված։*

*Արևելյան պատի արձանագրություն-ները հինգ են, նախորդներից արտագրված միայն երկուսը։*

353. «Յանուն Այ ես Սեւադ իշխան որդի Սմբատա եւ ամուսին իմ Թանեւն սուաք ի հայր(ենեաց) / մերոց ի Դողի վանս զԿա-մրջառափ ա. այգենեի եղենեկուց ի ճշխա-րտունն մեծ յուս/ով սն Գրիգորիսի / միա-բանքս եսուն մեզ բ. ժամ զամեն եկեղեցիս զաւուն Տնընդառաջին ինձ / զԱւագ նինգշա-բաթ աւրն Թանեւին ով զայն այգինն յայս վանացս հանէ ի փառաց որդոցն որ/ոնել եղիցի ՅԺԸ հրպյն անիծած է եւ Յուդայի մասնակից եղիցի ամեն թիւն ՈՂ.» (= 1241)։ *(Տես Չամ. Բ. էջ 225, Վիմ. Տար. էջ 83)։*

354. «Կամաւն ամենակալին Այ ես Ներսես եպիսկոպոս Չարա/բերդոյ միաբա-նեցայ Դաղիվանայս մին այգի նուիրասնն / սբ Գրիգորիս եւ միաբանք սահմանեցին ինձ ի տունն սն Սարգի բ. աւ/ր պատարագ ով խափանէ իմ մեղացս տէր է առաջի Այ թ. ՉԲ» (= 1253)։ *(Տես Չամ. Բ. էջ 226, Վիմ. Տար. էջ 98)։*

355. «Խոնդկար Փաշեն դուստր / պր Աղպուղին եղու կազմել / որ ճշանես աղ..»։ *(Տես Չամ. Բ. էջ 226)։*

356. «Թվ. ՌԾԴ (= 1605) բուղոն ե-րեր»։

357. «Ես Յովանես երեց Կոստւցի իմ հալալ արդեամբք միա/բանեցա որ ... եւ սեցին ինձ ի Յայտնութե ճրագալուս/ցին ա. պարգ ով խափնէ իմ մեղացս տէր է առաջի Քի. ՉԻ» (= 1271)։ *(Տես Չամ. Բ. էջ 226, Վիմ. Տար. էջ 96, Թուականն ունին Չ = 1250)։*

*Եկեղեցու ներսում բավական թվով ար-ձանագրություններ կան, մի մասը ծեփի տակ, մի մասը ծեփի վրա։ Այդ հանգա-մանքը ապացույց է, որ երկար ժամանակ սկզբնական մաքուր տաշած քարերն էին եկեղեցու բուն զարդարանքը, յետոյ են սպիտակ գույնի ծեփով ծածկել և նկարա-զարդել։*

*Սկսենք սեղանի պատերի վրայ։*

358. «Ասցնուքբ Այ ես Մամքան ամու-սին արիակամ/ին Հասանա եւ որդի մեր Գրգր

սերմ գոլով սերոյս հ/այրենեաւք եւ մեր պարոնէին հաստատեցին ի ՉԿԵ (= 1216) թվին / ավաք ի սբ ուխտս զՄովսէսդ զՉաչուանայ զԳոլթէկ/նայ եւ Գոգր սվի զԳագունենայ նոդերն զմեր բաժին իւր / ծորեցովն որդիք իմ եւ Սզ եւ միաբանքն սահմանեցին սբ ըՍտ/եփանոսի տօնէին ժամն որ լինի իմ մաւր եւ ամուսնո իմ Աափ/ին թե ոք զժամն խափանէ կամ զընծայն ես աւմէ դատի լԱյ: / Մոխրաքանս մեր բաժին ավաք թն. ՉԿԱ» (= 1312): *(Տես Շահխ. էջ 597, Արցախ էջ 205, Վիմ. Տար. էջ 157, անունների տվյալների տարբերություններով)։*

*Արտաքին ճակատին, եղծված.*

359. «Շնորհիւն Այ ես Աեոս որդի Ամիր Հասանայ... ած իշխանէն Գռուաստ եւ մայրն իմ Անիրճի միաբանեցաք սուրբ ուխտիս եւ ավաք... հողն ի խաչենագետի գլ... սուրբ կաթուղիկէս սէր Արտանաս... սվին ինձ պատարագ զամեն եկեղեցիս... թվ. ՉԻ» (= 1271)։ *(Արցախ, էջ 205, Վիմ. Տար., էջ 114։ Մենք նշանակել ենք միայն թվականը, բնագիրը լրացնում ենք Արցախից)։*

*Նույն տեղում.*

360. «Կամաւն Այ ես Սմպատ իշխան / որդի մեծին Լիպարտի միաբանեցի/ա սբ ուխտիս Դադու վանաց առաջնորդութբ տէր Արտանաս / եւ զնեցի զեռնատանն այգին եւ յնդեցի զիմ զնած / Ջիրաման/ն եւ այլ արդիւնք քաս կարի եւ զկանանչաւոր / ընդ եղնայն որ հաստատեցի ամեն խաչովն անչար եւ ես/ու սբ Կարողիկէս Տր Արտանաս եւ այլ միաբան/ք սահմանեցին մեզ զաւկին յարուքն կիրակի / աւրն զամէն եկեղեցիս մեզ ժամ: Աեղ ով խլէ / զմեր աւանն կամ զժամն խափանէ ԵԺԸ հայրապետացն նզոված եղիցի թիւն ՉԺԴ» (= 1265): *(Տես Շահխ. էջ 597, Արցախ, էջ 205, Վիմ. Տար., էջ 107)։*

361. «Թ. ՈՀԳ (= 1224) / Ես Գրիգորիս առաջ/նորդ սբ ուխտիս որդի / Նահատակին Վասա/ակայ ետինեցի զմամատոնս յի/շատակ հոգոյ / իմոյ յաղաւ»:

*Ժամատան մէջ կան գերեզմաններ, որոնց արձանագրություններն են.*

362. «Այս է հանգի/ստ Մամքանի/ն ամուսնո Հ/ասանա դստե/ր Թրդին եւ եոր/իսանի մաւր / Գրիգորս աղա/չեմ յիշել ար թվ. Չ» (= 1251)։ *(Արցախ, էջ 206, թվականը կարդում է ՉԿԷ։ Արցախի մէջ, էջ 405 յիշատակված է մի գեղեցիկ խաչքարի վրա, վրան փորագրած Աստվածածին Երեխա մանուկը գրկած, յիշատակարանով.*

363. «Սուրբ Աստուածածին Քրիստոս Աստուած... եւ Մամքան դուստր Թրդին ու եորիսանի, ամուսին Հասանայ կանգնեցի զխաչս»:

364. « . . . . եռան/եալն եւ Դաքփի եւ Զայսի / արդ... սէր Յոհաննէս / եղբայր Հաչ զաւրականին / Հասանս ամատնոր իշխան/նին հաւրն զինվորին Գրի/գորս աղաչեմ յիշել ի քաւ / թվ. ՉՄԴ» (= 1305)։ *(Տես Արցախ, էջ 206, ծն. 2, թվական ունի ՉՂԴ)։*

365. «Ես ոռ Գրիգորիս որդի Նա/հատակին Վասակայ ա/ռաջնորդ սբ ուխտիս Դ/ադու վանաց կանգնեց/ի զխաչս Մահանին որք / ընթեռնոյք յաղաւթս յիշեցէք»:

366. «Թիւ ՈԼ (= 1181) / ես Սարգիս որդի Աեոսա կան/գնեցի զխաչս ի փրկութի հոգո / հանգուցեալ իմո որք երկրպագէք / յաղաւթս յիշեսջիք եւ Ած զձ/եզ յիշէ ամէն»:

367. «Թ. ՈԼԱ (= 1182) յիշեցէք / ես Հասան կանգնե/ցի զխաչ եղբաւր իմ/ո Վասհամա յաղաւթս»:

368. 369. *Կամարակապ Սրահի պատերի վրա կան երեք արձանագրություններ, որոնցից երկուսը եղծված և անընթեռնելի են, երրորդը տես նախընթացում, էջ 88, արձանագրություն թիվ 324։*

Ձանգակատան *երկու խաչարձանների գեղեցիկ տառերով, բարձրաքանդակ արձանագրությամբ. տես նախընթացում, էջ 89, արձանագրություն թիվ 325 և 326։ (Տես Ջալ. Բ. 221, Արցախ 208, ծն. 1)։*

*Սրահի հանդեպի խարխլված եկեղեցու և նրա հարակից ժամատան վրա արձանագրություն չնկատեցինք։*

Տանարի կամ Տան *արձանագրությունը տեսնել նախընթացում, էջ 90, թիվ 327։*

*Մի կոտրած խաչքարի վրա կայ Մամա թագուհու արձանագրությունը, տեսնել նախընթացում, էջ 90, թիվ 328։ Տես նաև Շահխ., էջ 507, Արցախ, էջ 204, Վիմ. Տար., էջ 34։*

370. *Երկրորդ խաչարձան.* «Թ. ՈԼԹ (= 1290): Ես Գրիգորէս որ(դի) Վախտանգա կանգնեցի զխա/չս մաւր իմո Նուէկանա որք / երկրպագէք յաղաւթս յիշե»:

*Հետևեալ արձանագրութիւնները մենք չենք նկատել և Արցախի հեղինակն չի յիշատակում թէ աւերակների ո՛րտեղերից է արտագրել, բայց կարևոր յիշատակարաններ են.*

371. «Կամաւն Այ ես Հասան որդի Վախտանգայ, տէր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւախաղացին կողմի յաւայութեամբ ամս Խ. ըստ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն Աստուծոյ և եղեն ինձ Զ. որդի, զբերդերս և գաւառս հաւր նոցա և ես եկի ի վանս մոս իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս և եղէ կրաւնաւոր և բերի զխաչքարս ի յԱզուայ *(Ծանօթ. յԱզուայ)*, ըստ աշխատութեամբ և բազում հնարիւք կանգնեցի սբ նշան հոգւոյ իմոյ: Արդ՝ վասն ձեր հոգւոց, որք ընթեռնոյք զիս՝ յաղաւթս յիշեցէք ՈԼԱ թուիս» (= 1182): *(Տես Ծանօթ., էջ 597, Արցախ, էջ 203–4, Վիմ. Տար., էջ 34)*.

372. «Զտէր Սարգիս . . . յիշեցէք ի քարի թվ. ՉՁԲ» (= 1333): *(Արցախ, էջ 206, ծն. 3, յիշատակուած է ժամատան գերեզմաններից չորսում)*.

*Երկու խիստ ընդարձակ արձանագրութիւններ յիշում են Զանգակատան Նկարագրութեան մէջ. չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս ուշադրութիւնից դուրս վրիպած լինէր նշանաւոր զոյգ խաչարձանների մասին այդ արձանագրութիւնները, քանի որ երկար դիտել եմ յատկապէս այդ չափազանց ուշագրաւ յուշարձանները. Արցախի հեղինակը ոչ մի բառով չի յիշատակում թէ ո՛րտեղից է արտագրել.*

373. «Կամաւ ամենակալին Աստուծոյ և շնորհն մերոյ Յի Քի այս մեր գիր է իշխանական հրամանի: Ես Տուրսունս, Սեյթիս, Գռաւես, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս սուաք տէր Աւագ եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուկլ արեղային, որ մեր հայրենի արոռն զԴաշի վանս, զՄարրի վանս, զԴեսամեղն, որ մեր գերեզմանատունն է ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի ի վանաւորայքս մարդ չկար, որ յառաջն կար և եկն պահէր և եկեղեցիս լուսաւորէր. յայս պատճառս երես դրամ և զայս սուրբ արոռնին ի նոքա ապաւարեցաք, և զերկու իշխանութիւնն էլ ճենց ի (Նոտա) յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթուղիկոսն մեծ տէր Զաքարիային, տէր Աթանասին և տէր Սարգսին էր սուեալ զԴաշի վանս, զԽարրի վանս, զՀաղբաս իւր վիճակաւն, նոյնպէս և այս տէր Գրիգոր կաթուղիկոսն զայս երեք արոռս հաստատեաց վիճակաւ և օրհնաբերական թղթիւ: *(Արցախ, էջ 208)*.

374. «Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Սեյթիս, որդի պարոն Ծանեին, թոռն պարոն Հասանայ, ես Գրիգորս, Հասանս, Գեկիս, Այթունս որդիք պարոն Վախտանգայ, թոռունք պարոն Հասանայ, ես Այթինս որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին. ես Ծանանեսս որդի Հասանայ, թոռն պարոն Ճնանեին. մեք չորս եղբարք սուաք մեր վանորէիցս զԱպահեն, զեուք, զեղեղենակս իւր չորս սահմանովն, ի Զափարին հանդէն Զագուեանց պատրակ սեղովն, Բունչի աղբիւրովն, Թաղանանց գետովն. Գեօրսաքակ, որ մեր պապերն սուեալ են զՄոխանանց, զՄովմսեղն, Չաչոռանց, Զուլբեկանց, զՑոլնոսն, զԾիռմանանց, զԳրիգորաքաղս, զԴաշի վանս իւր քուլասակերովն, զՀերանանց Հակառակաբերդովն, Նաւի աղբիւրովն, Բերդամարովն, Կռապատսուցովն, Ողնովն, Խուցենակուց մեծ այգին, Մանանածովն, Մադիկանց, Եղնարածանց սուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր հոգաւոր էր, քանի որ իւր պէտն է՝ վարէ Աստուծով ազատ է: Թէկ եթէ այլ մարդ վարէ, սատանորդն առնու և սոյ վանքին անպատճառ: Այս եղեւ մեր ուխտ առաջի Աստուծոյ և սուրբ Դաշի առաքելոյս: Արդ՝ ով որ զկնի այս վախմիաթներս այլայլէ կամ խլէ թէ՛ յորդոց և թոռանց մերոց և յազգայնոց իցէ, առաջի Աստուծոյ պարտական և անէծեալ լիցի. ՅԺԸ. հայրապետաց նզովեալ է . . . »: *(Արցախ, էջ 208–209)*.

## Զ. ԶԱՐԵՔԴԱՐ ՎԱՆՔ
## ՄԾԱՀԱՆԱՑ ՎԱՆՔ

*Պաշտօնական գրութիւնների մէջ այդ ընդարձակ կալուածքը կոչւում էր Զարեքդարի կալուածք և ոչ աւելի նշանաւոր Դադի վանքի անունով. իսկ ընդհանրացած և աւելի գործածական է Խութայ վանքի անունը. Մօտ հինգ կիլոմետր բաւական դըժուարանցանելի ճանապարհով, Թառթառի*

հոսանքով Դաշի վանքից հասնում էք Զարեքզար, շինուած գետի աջ ափին, բարձրացիր ժայռից գոյացած մի բլրի վրայ։ Իմ այցելած ժամանակը այդտեղ հանդիպեցի հայ գիւղացիների, որ միքանի տարի առաջ ռուսահպատակութեան պատճառով թողել էին Ղազախ գաւառի Բաշքենդ գիւղը և այդտեղ նոր գիւղ հաստատել, հին հայկական աւերակների տեղում։ Դոքա իրենց հետ բերել էին այն նորութիւնը, որ բնակելի անասունների հետ միասին ունէին սայլեր, միքանի տեղ ճանապարհներ էին շինել և այդ լեռնային անհամբույր միջավայրում, ցուցէ առաջին անգամ, սայլ էին գործածում։

Զարեքզար վանքը բաղկացած է չորս փոքր մատուռներից, միմեանց կպած, որոնցից երկուսը աւելի, միւս երկուսը աւելի փոքր չափերով աւերակ են դարձած, միանգամայն հասարակ շէնքեր են և շինարարական առանձին հետաքրքրութիւն չեն ներկայացնում։ Դրանով հանդերձ որմերի վրայ եղած յիշատակարանները պատմական կարևորութիւն ունին, լրացնելով աւեռաներից պակասը։ Ջալալեանն ու Բարխուդարեանը այդ վանքին տալիս են Մեսանճայ վանք անունը. որպիսի անուն ո՛չ ականատես արձանագրութեանց մէջ հանդիպեցի և ոչ էլ Ղազախից նոր գաղթած հայերն էին գործ ածում։

375. Արձանագրութիւն եկեղեցու մուտքի մօտ կանգնեցրած խաչի.

«. . . եր բւին ես Սուադա / . . . իմ Տանանդուխս կանգնեց / . . . խաչս ի բապանի Դրիգորա իս / . . . նա որդոյն նզաւր եւ յաղթող իս / . . . որ բաղում ճաղուրք եճար զօա / . . . ք եւ երկեր յեմ զոր գիտացին / . . . եւ չրոզին վանց գին անքեր / . . . ամեր եւ մեծ պատերազմ որ անկ / . . . ՌՀԿ ամնին եւ անդր ճան. . . »: (Տես Ջալ. Բ., էջ 228, բաւական փոփոխուած, Աղվ. Հ., էջ 77)։

376. Եկեղեցու դրան պատի մէջ.

«Կամաւն Այ / այս գիր է Նորադինեա որ / ավն զՓարլանանց ի կոզր/ապան իմ հոգոյս առաջնորդ / սբ ուխտիս Յոհանէս եւ եղ միաբան/քս ավին ինձ բ. աւր ժամ / սբ Սարգսի նա ինձ / ու ա. աւրն Խորիսանի. ՅԺԸ նայրապետ/աց Եղոված որ զհողն խըկ կամ ճակա/ռակ Ան: Եա Արաքիսարուն միաբանեցա / սբ ուխ(տ)իս առաջնորդ Յոհանէս եւ եղբ/արքս ավին ինձ բ. ժամ Հոռոմինէ աւուրնն»: (Տես Ջալ. Բ., էջ 229, Արցախ, էջ 211։ Վերջինս ունի միայն արձանագրութեան վերջի մասը, երկուսն էլ Արաքխաչունի փոխարէն կարդում են Մամախաթունն. Աղվ. Հ., էջ 77)։

377. «Ես տէր Յովան/էս եւ այլ եղբարքս զեկեղեցիս ն/ւրբաք աւրն ճառագայթից ճաշամ/եցաք ՅԺԸ ին Եղով/ած ով խափանէ»: (Աղվ. Հ., էջ 77)։

378. «Կամաւն Այ ես եռ/իսան ամուսին Ջաքար/ո տուի զիմ աւեսարանն / Անանէն եր ա եւ այլ մ/իաբանքս բ. աւր պաշ/արաւ տուին ինձ Աւ/եսեց Անանին»: (Տես Ջալ. Բ., էջ 229, Աղվ. Հ., էջ 78)։

379. Եկեղեցու որմի վրայ, որ ես չեմ նկատել.

«Ասսուծով ես Մլեն տուի զիմ գնած հողն եւ մի Զափարին (Արցախ՝ ի Զափարին) ի սուրբ ուխտս. միաբանքն տուին Սուրբ Յակովբի երկու ժամն, մեկ ինձ, մեկ Փուփին, ով խափանէ կամ զհողն խլէ նզոված է յԱսսուծոյ»: (Տես Ջալ. Բ., էջ 229, Արցախ, էջ 211)։

380. Բնական ժայռ, վրան փորագրած երկու խաչ և արձանագրութիւն.

«Թվին ՈՂԶ . . . » (= 1247), Ջալալեանը եղծուած. (Աղվ. Հ., էջ 78)։

381. «Թ. ՈԱ (= 1152) / Ես ճորճ կանգն/եցի զխաչս եղ/բաւր իմ Ջար/բազալի բարեխաւս»: (Աղվ. Հ., էջ 78)։

Ճանապարհը շարունակելով գետի հոսանքով, կարելի է հասնել Խաթրայ վանքին. «Կառուցեալ ի հաստատ քարանց ի Յովհաննէս արքեպիսկոպոսէ յեղբօրէ Հասանայ իշխանի, ի թուին Հայոց ՈՁԳ» (= 1234) գրում է Ջալալեանը և չորս օրինակ արձանագրութիւն (էջ 230–31) տալիս, երկուսը շինութեան վերաբերեալ, երկուսը նուիրաբերութեան։ Մենք այդ հնութիւնը այցելելու ժամանակ չունէինք։

## Է. ՎԱՐԴԱՆԼՈՒ

Մշհանայ վանքը մեծ կոչուածքի արեւելահարաւային վերջի սահմանն էր, այդտեղից թողնելով Թարթառ գետի հովիտը վերադարձայ արեւմտահիւսիսային

ուղղությամբ և մինչև դարձյալ Խաչ-բուլաղ հատվածը, հանդիպեցի մի քանի ավերակների, որոնցից առաջինը Վարդանլու անունն էր կրում: Այդ տեղը հայ Վաղահաս գյուղին մոտ լինելով, այնտեղից մի քանի շինաքարեր կրելով վերցրած օգտագործում էին: Ընդարձակ կալվածքի երկրորդ անկյան կողմն էր հայերի ձեռքին: Վարդանլուն հին գյուղատեղ է, ավերակների ծածկոցներով, խառնակված է մատուռանման փոքրիկ եկեղեցին, հասարակ քարերից շինված: Ունի մի ավելի փոքր գավիթ, իսկ հյուսիսային պատին կցված է մի փոքր մատուռ: Ուշագրավ է շենքը նրանով որ նրա երկու փոքր պատուհանները գտնվում են արևմտյան և ոչ արևելյան մասում: Կամարածածկ է, առանց գմբեթի և արտաքին պարզությամբ կարելի էր ԺԷ–ԺԸ դարու շենք համարել թէ դրան գլխի միակտուր սալի վրայ հաստատուն արձանագրությունը չլինէր, 1215 թուականից: Տառատեսակը բոլորգիր է:

382. «Ի թվին ՈԿԴ (= 1215) ես / ի վերջին և ի նվազել ժամանակիս / ես Հասան դուստր մեծին Գրիգորոյ ամուսին Տաւսան/այ իշխանի շինեցի(ի) զեկեղեցիս ի փրկութիւն ի / և անձ իմո: Առաջնոր(դ) չինի առ(դ) զեկեղեցի/ն անձ իմոյ արասցեն երգ ոճ յիմ/ոց կամ յաւտարաց խափանել զ/անայ եր միջացն պատարակ/ան և կատարիչք ա.րն յն»: (Աղզ. Հ., էջ 78–79): Անգրագետ և խոտոր բառերով գրություն է:

## Ը. ՄԱՐՋՈՒՄԱԿ

Մարջումակ նոր հաստատված [illegible]: Թուրք բնակիչներից տրված անունն է հին ավերակ հայկական գյուղի, որտեղ հին մեծ եկեղեցին նախկին բնակիչների մեծ թվի չափանիշն է: Դիրքը լեռնային է և անտառապատությունը գյուղի սահմաններում առկա է ասում: Նկատելի են աղբյուրների առատությունը: Կայ մի փոքր լճակ և գեղեցիկ կանաչով ծածկված մարգագետիններ: Ոչ եկեղեցու պատերի վրայ, որ բնակիչներից մարագի է վերածած, ոչ էլ ամբողջութիւն տապանաքարերի վրայ արձանագրություն գտայ, եղածները անճանաչելի կերպով քերված էին, որ և է մոլեռանդ անմիտ գործ: Բայց գյուղից մի կիլոմետրաչափ հեռու, ավելի բարձր և հյուսիս՝ կանգուն մնացել է բազիլիկ մի փոքր եկեղեցի, հասարակ քարերից շինված, փոքրիկ դռնով, որի ճակատին անկորուստ պահված է հին արձանագրությունը:

383. «Թվ. ՉԾԳ (= 1304) / Ակ իշխանութբ մեծ/ին Գրիգորո ազնականութբ Սեւ/ադի որդո Զաքիկս մեք նվաստ ք/անանայքս Գրիգոր Մեսրոպ և եղբ/այր իմ Ովանէս շինեցաք զեկեղեցի / յիշատակ մեզ և ծնողաց մերոց: / Ես Սեւադա ավի զԳՆիՆպաստ. Ենխառ/ացու վս նոցա Թանէրին Ած ողոր»: (Աղզ. Հ., էջ 79):

Սևադա և Թանէր անուններ յիշված են Դադի վանքի հ. 353 արձանագրութեան մէջ, միայն այնտեղ թվականը ՈՂ = 1241 է, իսկ այստեղ 1304: Առաջինը Սմբատայ որդի է, իսկ այս՝ Զաքիկա:

## Թ. ՔԻԼԻՍԱԼՈՒ

Ճանապարհին մի քանի տեղ պատահեցի [illegible] շինանյութերով նորահաստատ բնակիչների, բայց մեծ ավերակներ և կանգուն եկեղեցի տեսայ Քիլիսալու կոչված գյուղում, որտեղ ապրում է հին բնակիչներից թողած և նորերից օգտագործված պատմական ծառերի այգիներ՝ ծիրանի, ընկուզենի, տանձ ու խնձորենի և կաղնենի ծառերով: Հին եկեղեցին միանավ էր, շինված էր հասարակ, անտաշ քարերով, փոքր ու ցածր՝ կամարածածկ: Շինութեան արձանագրութիւն չկար, այլ երկու հին, հասարակ խաչարձաններ կային արձանագրված.

384. «Ի թվին ճաոց ՈՂԸ (= 1249) / ես Գրիգոր դարբ/ոյն կանգնեցի զխաչս / ինձ և իմ... / ... յիշեցէք»: (Աղզ. Հ., էջ 80):

385. «Այս ես Մամանս ... կանգ / ... ան ... թվ. ՉԵ» (= 1256): (Աղզ. Հ., էջ80):

Բացի այդ կային մի քանի տապանաքարեր արձանագրություններով մաշած և կարդալ չկարողացայ:

## Ժ. ՋՈԹ–ՍՈԹՔ

Ինն օր անց կալվածքի մէջ մեր կատարած շրջանը, երկու՝ գլխավոր ճանա-

պարիսպ կոչուած ուղղութեամբ, առանց աջ ու ձախ թեքուելու եւ բոլոր վայրերը պըրպտելու։

Նորից վերադառնալով Չոթ գիւղը եւ մի օր հանգստանալով, արտագրեցի նաեւ այդտեղի արձանագրութիւնները։ Չոթ թուրքաբնակ դարձած գիւղը մինչեւ 1705 թուականը, ամենաուշը, ինչպէս մի գերեզմանաքարի արձանագրութիւնն է ցոյց տալիս, հայաբնակ է եղել եւ նայելով ընդարձակ գերեզմանատանը, որոշ փառաւածքներով, դեռ եւս կանգուն պահուած եկեղեցու մեծութեանը, եղել է միեւնոյն ժամանակ շրջանի կենտրոնատեղին՝ աչքի ընկնող ազգաբնակչութեամբ։ Նշանաւոր գերեզմանատան մեծաթիւ խաչարձանները, մի մասը սովորական մեծ տափակ քարերից, իսկ չորս հատը բարձր քառակուսի սիւներ, որոնցից մի օրինակ Էջմիածին է բերուած եւ հինգ մետր բարձրութիւն ունի, այդ նոյն բանն են հաստատում։

Գիւղը գտնւում է Սեւանայ լճի հարաւ–արեւելեան ուղղութեամբ, Ղարաբաղի եւ լճի աւազանի ջրբաժան բարձունքներում, ենթակայ կլիմայի տարբերութիւններից առաջացող քամիների հոսանքներին, ինչպէս Օրբելեան պատմագիրն է պատկերաւոր եղանակով յիշատակում. «Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց եւ գառնաշունչ օդոյն կոչեցաւ Սոթք»։

Եկեղեցին կամարածածկ է, չորս որթմաչար սիւների վրայ տանող գմբէթի բազիլիկ է, արեւմտեան եւ հարաւային երկու դռնով եւ ունի ներսն ու դուրսը եւ խաչքարերի վրայ փորագրած արձանագրութիւններ։

386. *Շինութեան արձանագրութիւնը.*

«Թվ. ՋԻԵ (= 1476)ի թ/ագաւորութ Աղ/ադին կաթողիկոսու/թի տր Սեփանոսի պա/րոնութի Հասանա / ազնականութի ամու/սինիս ու Մամխանինի ես անարժան Առաք/ելս շինեցի զեկեղեցիս յիշատ ինձ եւ ամուսին / իմ եւ զաւակաց իմ / եւ ունին Գերկա ծնողաց . . . »։ (*Տես Ազգ. Հանդ.*, XIX, 1910, 25–6, (*թվ. ունի* 1276). *Մ. Եպս. Սմբատեան, Նկար. Գեղ.*, *էջ* 625, (*թվ. նշանակում է ՋԻԷ*)։

387. *Գիւղի մէջ մի խաչքարի վրայ, բարձրաքանդակ տառերով, եկեղեցաշինութեան երկրորդ յիշատակութիւն կայ, որ կարող է մի այլ եկեղեցու քարերից լինել։*

«Գր. Լուսնատաս ծ/առայ Քի շինեցի զփր / եկեղեցիս յիս Գ...»: *Վերջի Գ տառը կարող է թուական լինել։*

388. *Գառների միջի փոքր խաչքարերի վրայ.*

«Աձ ողորմի Նանգաշին թվ. ՋՂԹ» (= 1550)։

389. «Խաչս Տէրունա/կանին ի ԺԲ սարեկանի.. / խնդաւ սուգ եւ տրտմու...»։

390. *Աջ խորանի ճակատին.*

«Ես անարժան Առաքել երեց / ամուսին զՄըլքխանըս թվին / ՌՀԷ» (= 1628)։ (*Տես Նկար. Գեղ. էջ 626*)։

391. *Գառի մի խաչի արձանագրութիւն.*

«Աձ ողորմի Թէոդորոսին թվ. ՋՂ» (= 1541)։ (*Տես Նկար. Գեղ. (թ. ունի ՋՂԹ), Ազգ. Հանդ., էջ 26*)։

392. «Կամաւն Այ մեք Տէրունս եղբարքս / իմ Վարդան Եվագս / կանգնեցաք խաչերս ի քարէ / ծնողացն մերոց»։ (*Ազգ. Հանդ., էջ* 26, *ունի* «Վարդանեան վասակեցաք խաչերս քարեխաւս ծնողաց մերոց թվ. ՋՂՋ»։

393. *Եկեղեցու սեղանի առաջ կայ մի տապանաքար, վրան փորագրած խաչ ու գաւազան եւ արձանագրութիւն, որից մենք նշանակել ենք միայն* «Թվ. ՌՂԴ» (= 1645), *իսկ Ազգ. Հանդ.*, 1910, *ունի ամբողջ յիշատակարանը.*

«Այս է հանգիստ Ղուկաս վարդապետի Գանձասարու առաջնորդ. թվ. ՌՂԴ»։ (*Ազգ. Հանդ., էջ 26 (թվ. ՌՂՋ)*։

*Ղուկաս վարդապետի գերեզմանի մօտ կան երեք խաչարձան արձանագրութիւններ.*

394. «Աձ ողորմի տր Սահակին»։

395. «Աձ ողորմի Ամիր սուլթանին»։

396. «Աձ ողորմի Ոսակեսին»։

*Արտագրում ենք Ազգ. Հանդ., էջ 26։*

*Չոթի ամենահետաքրքիր յիշատակարանները միակտուր քարերից, քառանկիւնի այն կոթողներն են, որով յաւերժացրած են հանգուցեալների գերեզմանները շատ սովորական տափակ խաչարձանների փոխարէն։ Սոքա եւս ամրացրած են միակտուր խարսխաքարերի խորը փորուած փոսի մէջ, առանց չաղախի եւ զարդարուած են հայկական օրնամենտներով եւ խաչերով։ Պէտք է ցաւել, որ խաչերի մի մասը անխնայ կո-*

տրատել և գիւղական կողմը շինութիւննե-րի մէջ են գործադրել, միջանիկը խորշխո-ներից հանած գետնին են փռած, բայց այդ Թիֆլիսի Թանգարանային վարչութեան կար-գադրութեամբ երեք խաչքարեր հանւած էին Թանգարան տանելու։ Երկուսը տարել էին, իսկ երրորդը, ամենամեծը և հետա-քրքիրը, տեղից գլորել, մինչև կոտրել էր և տանողները անուշադիր Թողել էին գիւղի հեղեղատի փոսի մէջ։ Մեր կարգա-դրութեամբ Բայազէտի գործակալ Արտակ Վարդապետը այդ կոտրած և երկուսի բա-ժանւած կոթողը գիւղական սայլով ուղար-կեց էջմիածին, որտեղ կոտրւած կտորները երկաթի ցցով ու արճճով ամուր միացնել տալով, նորաշէն Մատենադարանի գաւիթին հանդէպ կանգնեցրի։ Որպէսզի իրականին մօտ տպաւորութիւն ստացւի, իբրև խարըս-խաքար գործադրեցի վանքի հին ձիթահանքի երկու մեծ անիւաձև սալեր՝ միմեանց վրայ տեղաւորւած։ Բացի այդ ցեմենտով ծած-կել տւի կոտրւած աննշան ճաքւածքները։

Իսկական խաչքարն ունի 1,05 եւ 1,40 մետր կողեր, 1,40 մետր բարձրու-թիւն որի մէջ 27 սանտ. խորութեամբ եւ 40 ական սանտ. լայնութեամբ փոս կայ փորւած, մետաղեայ բաղաւոր ծանր քարը անշարժ և անվտանգ պահելու։ Այժմ ձի-թահանքի երկու քարերն ունին 0,86 մետր. կտրւած է գլուխը պսակող խաչը և չհաշ-ւած նաև խարիսխի մէջ ծածկւած մասը, քարտափւնի իսկական ամբողջ երկարու-թիւնն է 3,86 մետր, հինգ գօտիով բաժան-ւած անհաւասար մասերի։

Չորս երեսները միմեանց հաւասար չեն, այլ, որինակ, արձանագրութեան երկրորդ գօտին ունի այսպիսի չափեր. 32–46–29–45 սանտ. լայնութիւն, ուստի ոչ մի երեսը միւսին հաւասար չի։ Նոյնպէս հաւասար չեն գօտիների միջի տարածութիւնները. այսպէս, ներքևից վերև 45–83–85–69 և 50 սանտ. են միմեանցից անջատւած, չը հաշւած գօտիները։ Այստեղից պարզ է, որ քարգործ Զոհրապը, խաչարձանի վարպե-տը, հաստատուն և երկրաչափական կըրկ-նութիւնների հաւանելու չի ձգտել։ Գօտի-ների արանքներում, հիւսւածքի, փոքրիկ խաչերի և այլ զարդերի շրջանակներում փորագրւած են խաչեր, ամեն մի երեսին չորստական. ուրեմն բոլորը միասին 16 խա-չեր, բարձրաքանդակ փորագրութեամբ։ Ամբողջ սիւնը վերջանում էր, հաւանական, խաչով Տաթեւի սիւնի նմանութեամբ, որ կոտրւած և կորած է։ Ուստի հաշւել պէտք է 0,40+3,86+խաչի բարձր. = 5 մետր։

Արձանագրութիւնը տեղաւորւած է ներ-քևից երկրորդ և առաջին գօտիների վրայ. իսկ Թւականը այժմ հարաւ նայող, երկրորդ գօտու բարձր երեսին։ Արձանագրութեան տառերը նոյնպէս բարձրաքանդակ են, զար-դարուն եզրներով։ Արուեստը անհամեմատ ցածր է հայկական նախորդ շրջանի գործերից։

397. «Թվին ՌՃԹ.

| | | | |
|---|---|---|---|
| I Կամաւքն Աս<br>ծո Ուլուխա<br>նս ես Մալք | II ումս ես Գաս<br>պարս որդի ս<br>ր Մելիքսեթի<br>ն կանգնեցո | III ւցաք սբ խա<br>չս բարեխօս<br>ւս որ Մելքիսե | IV թին կողակց<br>ին Իլբուծին<br>Գային Ղասումին |
| | II Ես մեղաց պարտ ք<br>արգործ Զօհրապ<br>ս կանգնեցի զխ | III աչերս որ կ<br>րդաք մեզ ողո<br>րմած լերուք<br>Ած ձեզ»։ | IV Եւ ճարսնեռուն<br>իւրեան Եփրոյսի<br>մին խասլաթինեին |

(Տես Ազգ. Հանդ., 1910, Գիրք ԺԹ., էջ 26–27, Նկար. Գեղ., էջ 625։ Սոքա տե-սել են քարը իր տեղում և արտագրել են, անհնարին սխալներով)։ Երկրորդ գօտու մի երեսը անգրել է Թողնւած, իսկ չորս սա-

*գանի II երեսը չրջագարդ չունի, արձանա-գրութեան վերջի և IIIի երեք տողը փո-րագանդակ է։ Ղափադարյանը կարծում քարը երկու խաչարձան է գործելի և* Խաչատուրի *(որ կարդում է «Հաշտարադաձ») ու* ճատանէրի, *հետևապէս երկրորդ շերտի արձանագրու-թիւնը նոր խաչի մաս է համարել։*

*Տփխիսի Թանգարան տարւած խաչար-ձաններ մենք տեսնելու և արձանագրու-թիւնը կարդալու առիթ չենք ունեցել։*

*Գ. Ղափադարյանը գրում է. «Երեք կո-թողներից երկուսը տեղափոխուած են Կով-կասեան Թանգարան. որանցից առաջի խաչ-քարի վրայ գրուած է».*

398. «Կամաւն Այ ես Թակոբս կենկցի զսբ խաչս բրխս ծնողացն իմ Իզային Ան-ծռայինն(?) թվ. ՌՋէ»:

399. «Շնորհօքն Այ ես Այթին Պալտասնս Դաւլաթբէկս Ածապատւս ծառայք Այ կենկցու-ցաք սբ խաչս բարեխաւս ծնողաց մերոց Թամային եւ Փարին, Ասլտանին, Մանդու-րին, թվին ՌՃԹ»: *(Ազգ. Հանդ., էջ 26, չի յիշատակւած թէ արձանագրութիւնները մրանեղ են կարդացւել)։ Այս երկու քարէ սիւներ յիշում է նաև Սարգիսդովեցին,* II, *էջ* 695։

400. *Տակաւին գիւղում ձգւած եւ չոչնչացած քարերի վրայ կարողացայ կար-դալ.* «Ած ողորմի Ուլու/պեկին թվ. ՌԺԱ»:

401. *Ձոր գիւղի բէկերից Հաջի Ալիլ աղան իւր տանն էր տարել մի փոքր կոր մարմար,* 10 × 7 *սանտիմ մեծութեամբ, որն ունէր արձանագրութիւն.*

«Զամոս / պատուական ծնօղին իմ»:

402. *Խաչարձան* 2,84 *մետր բարձր, մի մետր լայն, որի վրայ փորագրւած են երկու մեծ, չորս փոքր եւ տասը ունեցի փոքր խաչեր եւ գեղեցկացրւած է հատա-րակ զարդերով, ունի արձանագրութիւն.*

«Կամաւ ամեն/ակալին Այ ես Մով/սէս կանգ(ն)եցի / զխաչս իոս ե ճաւր իմ / Անճա/ին իսեցիէ / ի Քս թվին ՌՃԼԴ»:

*Այս արձանագրութիւնը գրւած է խաչի մէջքին։ (Ազգ. Հանդ., էջ 27)։*

403. *Բւակտանով ամենահին խաչար-ձանը, գիւղի բէկերի ամենածերի պատ-մածության քարն էր, որովհետև ամեն որ նրա առաջն էր նամազ անում և այդ պատ-ճառով կոչւում էր Նամազի խաչ։ Ունէր* 2,10 *մետր բարձրութիւն մի մետր լայնու-թեամբ, վրան փորագրւած երկու խաչ.*

«Թվ. ՉԻԳ (= 1274) / Ես Աջիբս կանգ-նեցի / զխաչս իսաակ ինձ / եւ ամուսնո իմոյ»: *(Տես Ազգ. Հանդ., էջ 25)։*

404. *Համեմատաբար ուշ ժամանակւայ մի տապանաքարի վրայ կար թւականով արձանագրութիւն.*

«Այս է հանգի/ստ Միքուէլին որդի . . . թ. ՌՃՄԴ»:

*Տապանի վրայ փորագրւած է մկրատ, հանգուցեալի արհեստը բնորոշելու համար։*

## ԺԱ. ՄԱԶՐԱ ԳԻՒՂ

*Զոթից վերադառնալիս, առաջի հան-դիպած գիւղն է, դէպի արեւելք ընկած Թուրքարանի* Մազրան. *որտ հնութիւններից նկատեցինք և արձանագրեցինք ամենահին յիշատակարանը, խաչար մէկ մետր բարձր և մի մետր լայն կոպիտ տաշւածքով խա-չարձանի վրայ.*

405. «ՅԼ թվականութ/եանս հայոց ես Գրիգոր Ամիր Ներսէն եւ ամնս Սիւնեաց եւ Աղւանից իշխան կանգնեցի սբ Նշան ազգ-նականութիւն հառասցելոց, որք երկրպա-գէք սբ խաչիս Քի զիս յաղաւթս յիշեցէք»: *(Տես Զալ. Թ., էջ* 110–112, *Ազգ. Հանդ.,* XIX, 1910, *էջ* 21, *Նկար. Գեղ., էջ* 607)։

*Ուրիշ արձանագրութիւն արտագրելու ժամանակ չունեցայ, իսկ արձանագրու-թեան միայն առաջին տողն էի արտագրել, շարունակութիւնը Ազգ. Հանդէսից է։*

*Զալալեանը եղել է Զոթում, տեսել է արձանագրութիւնը, բայց ոչ մէկը ամբող-ջութեամբ չի արտագրել, այլ բաւականա-ցել է յիշելով, որ տեսել է չորս սիւնաձև բարձր և բարակ մահարձանք. «Ի վերայ չիրմին Յակոբայ, երկրորդն ի վերայ Բա-յաստանայ Դօլվաթ բէկի (այժմ Թիֆլիզում), երրորդն ի վերայ Սուլութանին և Մելքու-մին (այժմ էջմիածին), չորրորդն ի վերայ Գրիգոր եպիսկոպոսին»։ Սոցանից Զալալ-եանի տեսնելուց յետոյ փչացել են և ան-խնայ կոտրատւել է երրորդը։*

*Աշխատութեանս մէջ ամփոփւած* 405 *արձանագրութիւնները Հայաստանի միայն միքանի վանքերից և աւերակներից ի մի հաւաքւած, բոլորն այնպիսի տեղերից են,*

որ մեզնից առաջ արդէն ենթարկուել են հետախուզութեան։ Մենք յաւակնութիւն չունինք մեր կատարածը լրիւ համարելու, մեր աշխատանքը չծանրաբեռնելու համար նախորդների ընթերցած արձանագրութիւնների տարբերութիւնները հարկ չենք համարել յիշատակելու, բայց ամէն մի մասնագէտ երբ կարիք ունենայ օգտուելու այդ հնութեան աղբիւրներից ինքը բաղդատելով, կը համոզուի որ նախորդ հրատարակութիւնները շատ աւելի ակնյայտնի թերութիւններ ունին, ոչ միայն բաղմաթիւ անուշադիր թողնուած օրինակներով, այլ և բաղմաթիւ աչք ծակող սխալաշատ ընթերցուածներով։ Մեր այս փորձը մի ուրիշ բան էլ է պարզում. ժամանակ է կազմելու այն կորպուսը, արձանագրական այն գիտական լրիւ ժողովածուն, որը ծրագրել էր Գր. Մառը և որը մինչև այսօր անկատար է մնում։

## ԺԲ. ԲԵՐԴԵՐ ԵՒ ԹԱԳՍՏԻ ՔԱՐԱՅՐԵՐ

Հայաստանի իմ այցելած տեղերը ամբողջովին մեր երկրի լեռնաստանը ներկայացնելով, բնութիւնից արդէն չափազանց ամուր եւ անմերձենալի դիրքեր ունին, բայց ներս խուժող զօրեղ թշնամիների դէմ այդ բաւական չի եղել, և տեղական փոքր իշխանները յատուկ ընտրութեամբ տեղեր են որոնել եւ բերդեր կառուցել, որոնց մի քանիսը, իմ ճանապարհին գտնուածները, յիշատակում եմ։

Մամռուս կամ Կզլղալա անունով է յայտնի Զարեք անտառի մէջ գտնուած բերդաւերակը, այժմ անմարդաբնակ եւ անտառով ծածկուած։ Ոչ շատ դիւրութեամբ բարձրացայ նրա բարձունքները, հնութեան հետքերը որոնելու։ Բերդի անունը հնում Զարեք էր, որ ներկայ անտառի եւ կալուածքի անունն է դարձել, որի սահմանում մի քարայրի մէջ Մոնղոլների յարձակման ժամանակներում Աղուանից կաթողիկոսները ապաստան են գտել. «Կաթուղիկոսքն Աղուանից ... գան ի քարայր մի ի սահմանս բերդին որ կոչի Զարեք ... եւ անդ ուտեն հովուեն զհօտ ... տէր Յովհաննէս էր, որ հաստատեաց զաթոռ իւր ի սահմանս Զարեքին ի քարի անդ...», ինչպէս հաղորդում է Կիրակոս Գանձակեցին։

Գանձակի գաւառի Փիփ գիւղից լեռնային ճանապարհով, անտառների միջով, հասնում էք Ծամքոր գետին, որի բնական ժայռերից նեղացած տեղում մի կամուրջ է շինուած դէմ յանդիման աջ գետափում գտնուող աւերակ բերդի։ Այդտեղից մինչև անտառ մօտ չորս կիլոմետր է։ Կամուրջն անցնելով ճանապարհը շարունակւում է երկու ուղղութեամբ, կամ գետի հոսանքով բարձրանալով դէպի արեւմտահիւսիս, մինչև Գետաբեկ, այդտեղից լեռների բարձունքը հասնել և ապա իջնել Սեւանայ լճի ափը. Գեղարքունեաց գաւառը, կամ բերդի տակով հասող Գետաբեկի վտակի հովտով՝ հասնել դարձեալ նոյն գիւղը։

Բերդը շինուած է կամրջի դէմ յանդիման բարձր ժայռի գլխին և իշխում է երկու ճանապարհների վրայ։ Բնական այդ յարմարութիւնից զատ, ամրոցի տեղը անառիկ դարձնելու լաւագոյն պայմաններ կային, թէ բնական ամրութեան և թէ շինանիւթերի առատութեան և մերձաւորութեան պատճառով։ Ամուր կրաշաղախով հաստ պարիսպները շինուած են անտաշ խոշոր քարերից, հէնց նոյն տեղից գոյացած և լաւ թրծած, կարմրագոյն աղիւսներով, որպիսի կարմիր գոյնից ծագում է թուրքական Կզլղալա անունը։ Բերդը թեք մակերեւոյթ ունի, գետի ափից աստիճանաբար բարձրանալով ամենաբարձր, ցից ցից ժայռերը։

Ընդհանուր պարիսպներից եւ ամրութիւններից բացի՝ երկու միջնորմով ամբողջը բաժանուած է երեք մասի. գետամերձ մասը ամենաընդարձակն է, միջին մասը աւելի փոքր է, իսկ ամենաբարձր տեղը, արծուաբոյնի անմերձենալիութեամբ թառած, խոշոր ժայռերի գլխին, անշուշտ իշխանի միջնաբերդն էր, տիրող իշխանի կացարանը և թշնամուն ամենամեծ ընդդիմութիւն ցոյց տուող վայրը։

Բերդի եկեղեցին հիմնովին կործանուած է, նաեւ բերդի գլխաւոր մուտքը. հաւանական դոցա վրայ կը լինէր արձանագրեր, որ ես չտեսայ, իսկ աւերակների կոյտերը ցրուած բոլոր տեղերում գրաւոր ոչինչ չէին ցոյց տալիս։ Թուցէ մանրակրկիտ հետախուզութիւնը այդ ուղղութեամբ անհե-

տեղանք չի մնար, չխօսելով պեղումների մասին։

Եօթավանքի կալուածքում գտնուեցին արդէն յիշատակուած Լեւոնաբերդը։ Սա շինուած է համանուն գետակի աջ ափին առանձնակի բարձրացած մի ժայռի վրայ։ Կրաքարեայ համարեա շրջանաձեւ մի ժայռ է, բաւական լայն հատուածքով, երեք կողմերը շատ բարձր ուղղահայեաց կտրուածքներով, միանգամայն վիթխարի պարիսպների նմանութեամբ։ Այդ բնական պարսպի արեւմտահիւսիսից հոսում է մի վտակ, միանալով պարսպի ներքեւում Լեւգետի հետ։ Հիւսիսից միայն կարելի է բարձրանալ այդ զարմանալի բնական բերդը, թէեւ այդտեղ եւս ժայռեր են ամրափակում ամրոցը, որ աւելի անմերձենալի դարձնելու համար, հաստաբակ քարերով բարձր պարիսպներ են կառուցուած, թողնելով միակ անցքը, ժայռերի տակով բերդի մէջ ներս մըտնելու։ Այդ մուտքն իսկ արհեստականօրէն է յարմարեցրած։ Այս բերդն էլ նախորդի պէս երկրի պաշտպանութեան եւ հաղորդակցական ճանապարհների վրայ կարեւոր հըսկողութիւն ունենալու ամենամեծ յարմարութիւններ ունէր։ Գեղարքունեաց գաւառից, ներկայի Նոր Բայազէտի շրջանից Արցախ անցնելու համար, երբ լեռնային բարձունքները կարելով իջնում էք, Խաչբուլաղ կոչուած լեռնային գիւղը, երկու ճանապարհ կայ միայն առաջ շարժուելու, մէկը Լեւոնագետի հովտով, հետեւապէս այդ ամուր բերդի տակով, միւսը պէտք է իջնել Թութխուն վտակի հովիտը եւ այստեղ առաջ անցնել, իսկ այդտեղ էլ ապահովութեան եւ պաշտպանութեան համար հսկում էր հետեւեալում յիշուելիք Ջոմարդու բերդը։

Լեւոնաբերդը բեռ ամայի է, վայրի անտառային ծառերով շրջապատուած, միայն թէ կանգուն եւ հաստատուն են ամրակուռ պարիսպները, իսկ միջի շինութիւններից մնացածները միայն տանիքների ծածկն է պակաս։ Բերդի բնակիչներին խմելու ջուր մատակարարում էր մերձաւորութիւնից բղխող անսպառ աղբիւրը, բացի այդ՝ բերդի մէջ կան խոշոր աւազաններ, ամուր կրաշաղախով պատած անձրեւաջրով կամ գուցէ ստորերկրեայ քանդերով լցնելու համար։

Լեւոնաբերդն էլ միջնորմով բաժանուած է երեք մասերի, ամենաընդարձակ մասը թողնելով ժայռի գլխի մեծ տարածութիւնը, առանց որեւէ արհեստական յաւելուած միջոցների, իսկ իշխանական միջնաբերդը ներսից եւ դրսից պարիսպներով է շրջափակուած։

Ջալալեանը մի փոքր չափազանցրած նկարագրութիւն է տալիս, այսպէս. «Հոհարերդ... կառուցեալ ի կատար միոյ վիմի միապաղաղ ի վեր բարձրացելոյ... որոյ կատարն գրեթէ ճաճող է յամպս», եւ շարունակում է. «Առանցեն ծերունիք ի բնակչաց, թէ սա է Հանդաբերդն զոր շինեաց իշխանն Ատրներսեհ»։ Վկայութիւն բերելով Կիրակոս Գանձակեցու հաղորդածը, թէ Գոգի վանքի Գրիգորիս եպիսկոպոսը իսրայէլներով եկել է մի գիւղ «ի սահմանս Գեղարքունեաց ծովուն ի կողմն Սալէնոյ հուպ ի Հանգաբերդ, որ ջերմուկն է Սարայ»։

Բաւական հետաքրքիր տուեալներ են, բայց ոչ հաստատուած յիշուած աղբիւրներով։ Լեւբերդի մօտ ոչ ծերունի եւ ոչ երիտասարդ բնակիչներ կային յիշելու աւանդութիւնը հաղորդելու համար, իսկ Կիրակոս պատմագիրն էլ յիշում է Գրիգորիս եպիսկոպոսի Սար գալը, բայց Հանդաբերդի անուն ամենեւին չի յիշատակում, եւ ոչ Ատրներսեհ իշխանի անունը։

Շնորհիւ ինջիներ Աղաբաբեանի գտած արձանագրին, հաստատապէս գիտենք, որ բերդը գոյութիւն ունէր արդէն 1198 թւից առաջ, իսկ պեղումների միջոցով կարելի կը լինի նոր արձանագրութիւններ եւ նոր տուեալներ ի յայտ բերել։

Ջոմարդու անունով բերդի մասին շատ բան ասել չեմ կարող, որովհետեւ նրա տակով միայն անցայ եւ հեռուից ինձ ցոյց տուին բարձր լեռնագագաթի վրայ նրա պարիսպները, Մարջումակ եւ Թթխուալու գիւղերի միջում երբ երկրորդ ճանապարհով վերադառնում էի։

Երկրի լեռնոտ յատկութեամբ հասկանալի է, որ բնական խարայրեր շատ յաճախ են, որ թէ նախապատմական ժամանակներում եւ թէ յետոյ, Զանգազուր գաւառում մասամբ մինչեւ ներկայ ժամանակները, մարդկանցից օգտագործուել են բնակութեան եւ պաշտպանութեան համար։ Այդ այրերից միքանիսը այնպիսի դժուարամերձ տեղե-

րում են գտնում, որ նրանց մէջ ելեւմուտը կապւած է դժուարութիւնների հետ և յաճախ նաև վտանգաւոր է։ Այդպիսի դժուարամերձ այրերում մշտական բնակութիւն հաստատելն անհնարելի էր, այլ օգտագործւում էին միայն թշնամու յարձակումներից ժամանակաւորապէս պաշտպանւելու համար և այդ պատճառով դոցա տրւած է յարմար Թագստարան անուն։ Մինչև մեր երկրի ամենայայտնի այրերից միքանիսը՝ Անիում, Սաղկաձորում գտնւածները, Դեղարդի կամ Այրից վանքի շրջանինը, որոնք բնականի հետ արհեստականներն էլ են շինւել։ Թառը Օձուն գիւղի մօտ, Հողբառի մեծ թագստարանները, որոնք ժամանակին վտանգից պահւած էին վանական նշանաւոր ձեռագրերի մասը և ի յայտ բերւեցին 1880-ական Թւերին մասամբ քարացած վիճակում. իսկ ամենից բազմաթիւ այրերը Սագաձորինն են, Թուրքական արտասանութեամբ Զանգազուր դարձած, գլխաւորապէս Գորիսում, բայց նաև Խնձորեսկ, Այիգուլիշէն, Կոռնձոր, Ղարաղլլաղ և շատ այլ տեղերում, որոնց մի մասում առկայսին կան գիւղական տներ, մարագներ և գոմեր։ Վերջապէս բնական այրեր գտնւում են իմ այցելած Հաղարծնի, Զարեքի անապատի և Խօթայ վանքերի մերձակայքում։

Արդէն յիշեց որ Կիրակոս պատմագրի վկայութեամբ Աղուանից կաթողիկոսները Զարեք բերդի սահմաններում — մի քարայրում — են պատսպարւում եւ այնտեղից էին հովւում եղհօտ իւրեանցս։ Փիփ գիւղում տեղացիներից լսեցի որ այնտեղից վանք տանող ճանապարհին ժայռերի մէջ, անմերձենալի տեղերում, հնուց մնացած տեղեր կան, բայց ներս մտնելը շատ է դժւար։ Որոշեցի անձամբ տեսնել այդ հին տները և փորձել ներս մտնել։

Փիփից գնացող ճանապարհը, անտառի միջով, տանում է դէպի եալլագները, գեղեցիկ անտառներով և աղբիւրներով հարուստ։ Սարի ջրերը փոքրիկ առու կազմելով, հիւսիսային ուղղութեամբ բարձունքներից ներքև են գլորւում, դէպի Ճամբոր գետը։ Առուակի հետ ներքև իջնելով, մօտ վեց կիլոմետր նախ քան Հարեքայ բերդը հասնելը, առուակի աջ կողմում բարձրանում են ահագնացած գամու ուղիղ վիթխարի պարիսպների նման ժայռեր 150–200 մետր բարձրութեամբ, իսկ տարածութեամբ մի քառորդ կիլոմետրաչափ։ Ահա այդ պարըսպանման քարերի մէջ են գտնւում հին թագստարանները, մինչդեռ աչքի առաւթեամբ քարէ բնական վիթխարի պատը, կարծես արհեստական շարւածքով ուղղահայեաց վերև է սլանում։ Դիտակով նայելիս միայն նկատելի եղան անհաւասարութիւններ եւ հասարակ քարերից շինւած պատի հետքեր։

Հակառակ ուղեկիցներիս համոզմանը և զգուշացումներին, գնացի անձամբ դիտելու պատմական այդ թագստարանը։ Ճանապարհը մեծ թեքութեան և զառիվայրութեան պատճառով շատ ծանր էր, բայց ոչ անմերձենալի։ Պէտք էր բարձրանալ տաստութեամբ բուսած ծառերի եւ թուփերի ճիւղերից բռնելով և առուակի ափից մօտ 50 մետր բարձրանալուց յետոյ, հասնում էք մի տեղ, որտեղ քարէ պարիսպը միանում է մայր հողի հետ և ցցւած մեծ քարերի արանքով հնարաւորութիւն կայ մօտենալ թագստարանին։ Հեռուից ուղղահայեաց պատնման ժայռը իսկապէս ունի դուրս ընկած փոքրիկ հարթութիւն, կամ պատի կարւածք, որ կարելի է հանել մէկից մինչև երեք մետր բարձրացող տափճաններ մագլցելուց յետոյ։ Յիշեալ կարւածքը իբրև նեղ ճանապարհ, գլխապտոյտ ունեցող անձի համար միանգամայն անմերձենալի է։ Երբ քսան մետրաչափ քայլեցի, իմ առաջ բացւեցին մի քանի փոքր քարայրեր, որոնց մէջ վտանգի դէպքում կարող էին մօտ 100–200 անձն թշնամուց միանգամայն անվտանգ եղանակով պատըսպարւել, օգտւելով իրենց հետ վերցրած ուտեստի պաշարով և քարերից կաթացներով իջնող ջրերով։

Աւելի առաջ անցնել և հետախուզել բոլոր այրերը չվստահացայ, ժայռանցքը աւելի էր նեղանում, ներքևից անդունդը եւ վերևից ուղղահայեաց պատը սարսափ էին ազդում, մանաւանդ որ մենակ էի, ինձ ուղեկցողներից ոչ մէկը ինձ հետ չեկաւ։

Ներս մտնելու տեղում հասարակ քարերից պատնէշ էր շինւած խիդախարար ներս մտնող անհատ յարձակողի դէմ պանելու։ Եթէ թագստարանի տեղը չիմացւի և պատսպարւածները դուրս չնային, հորով անցնող որևէ թշնամի այդ ուղղահայեաց

ժայռի մէջ չի կարող պատկերացնել մարդու ներկայութիւն։

Հաստատապէս պնդել դժուար է, բայց մեծ հաւանականութիւն կայ, որ Կիրակոսի յիշած քարայրն այդ է, որովհետև, հաւատալով գիւղացիների վկայութեանը, Ջարեքայ միջնակայքում ուրիշ թագստարաններ կամ քարայր չկան։

Դադի վանքի դիմացը, Թառթառ գետի աջ ափին նայելիս երևացած է մեր նկարագրածի նմանութեամբ մի քարէ պարիսպ, որի մէջ թագստարաններ կան։ Վանքի դիրքը, ինչպէս յիշել է, բնական ամրութիւններով է օժտուած, բայց Տաթևի պէս բերդի չի վերածուել և եղած անկարևոր չրջապարիսպը միայն մեծ հարուստ անդրի ամրութիւնն ունի։ Հաւանական է ընդունել որ մեծ վտանգի դէպքում վանականները, վանքի արժէքաւոր առարկաներով պատըսպարւում էին դէմ յանդիման գտնուող ժայռի թագստարաններում։ Լայլին դայա է կոչւում ներկայումս. տեղացի ոչ ոք չհանդիպեց, որ ժայռին մատենալու ճանապարհ ցոյց տար։ Ջարեքդար, Վարդանլու և մի քանի այլ գիւղեր շրջան անելուց յետոյ, դէպի արևելք և ապա դէպի արևմուտք շրջագարձ անելուց յետոյ, հասանք Դադէի վանքի յանդիման գիւղը. իմացայ որ Լայլին դայայի քարագլուխը այդ գիւղի խոտահարքն է. դառիվայր ճանապարհով եկայ մինչև այդ խոտահարքը՝ տեղում աշխատող գիւղացիներից լսելու, թէ արդեօք իրենք գիտե՞ն քարայրի տեղեր և ի՞նչ ճանապարհով կարելի է ժայռից ներքև իջնել։ Զուր ակնկալութիւն և յոգնածութիւն։

Ջալալեանը այդ տեղը համարում է ամրոց. «Է ամրոց անառիկ յարևելս հարաւոյ Մռաւայ լերին, ունելով ի կատարին մենաստան տեղի և տաճարակ ...»։ Բայց թէ ի՞նչ հիման վրայ է այդ տեղին բերդ համարում, մութ է կարծածելի (տես Բ., էջ 222)։ Նոյնպէս մենք չտեսանք և չցոյց տւին Արցախում յիշած (էջ 210) «Վիմափոր գիտարան» անուամբ կնքուած քարայրը. գետի ձախ ափին, Դադի վանքից ներքև։

Հնութեան յուշարձաններ էին գետափների ընթացքում չինուած ջրաղացների աւերակները, որոնց 12 հատը, մէկը միւսի ներքեւում շինուած են Լեւանդաչեաի հովանքում, Ջափնի աւերակների միջնակայքում։ Նոյն գետակի հովտում կային հին կամուրջների աւերակներ և չայն՝ այլի ճանապարհի հետքեր, հաստատուն պատնէշներով, այնպիսի դժուարամերձ տեղերով որ հին ինքնիշխանական ձեռնարկների լաւագոյն արգասիքներ էին ներկայացնում։

Այդ աւերակները, հին վանքերը, աննման փորագրութեամբ խաչարձանները, հոյակապ վանական անդրի յուշարձանները հաստատուն աւեւայներ են աւելի հիմնովին պատկերացնելու Ղարաբաղ-Արցախի անցեալ պատմութիւնը, քան մինչև այժմ եղ պատկերացրել, աղբիւր ունենալով միայն տարեգրական չափազանց թերի գրուածքներ։

# Դ.

# ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի երեք հարկական մեծ վանքերի ծանօթութեամբ կարելի է վանական ավերական կենցաղի մասին ամփոփ մի գաղափար կազմել՝ ի մօտոյ զննելով այն շէնքերը, որ սակաւին կանգուն պահուած են, կամ որոնց մասին հաստատուն յիշատակութիւն կայ։ Երեք վանքերն էլ միանգամայն անջատուած եւ առանձնացած են գիւղերից եւ ժողովրդական բնակութեան միջավայրերից։ Վանքերի ընդարձակ տեղերն ամբողջովին պատելով հոգեւորականների իրաւանց սահմաններում, Հնարաւորութիւն էին տալիս նրանց լաւ ցանկութեան եւ նիւթական միջոցների հասուցանել թէ զուտ եկեղեցական եւ թէ բնակարանային ու տնտեսական ամենատեսակ կառուցուածքներ։ Ոչ մի մեծ վանք չէր բաւականանում մի եկեղեցիով, այլ օրինակ Տաթեւն ունէր երեքը, Հաղարծինը հինգը եւ Դադին չորսը։ Դրանց մէջ գլխաւորը եւ մեծը սովորաբար Կաթողիկէ անունն էր կրում, իսկ փոքրերի մէջ առ երեւոյթ մէկն աւելի յաճախ նուիրուած էր լինում Գրիգոր Լուսաւորչի անունը. օրինակ այդպէս է մեր երեք եւ Էջմիածնին (Զուարթնոցը), Հաղբատ, Սանահին, Մխիթար Գոշ, Կեչառիս, Նորավանք եւայլն, մեծ վանքերում։ Պատարագի սեղան հնարոյն եկեղեցիներում կար մէկը, լինում արեւելեան պատին մէջ, յետոյ սկսում են սեղանների թիւը շատացնել, լինելով նաեւ եկեղեցիների շուրջ անկիւնների փոքր սենեակներում, պատ նոյն սենեակներում, երկուսական, երկու յարկերի մէջ։ Կաթողիկէներից միայն Տաթեւինն ունէր 9+2+11 հաշուած գաներին կից լինածները, իսկ Հաղարծնի ու Դադի վանքինը ինքնական։

Վանականութեան գլխաւոր գործը կատարում էր, համեմատ վանական կանոնների, աղօթել իրենց եւ հաւատացեալների հոգիների փրկութեան համար. ամեն սեղանի վրայ կանոնով թոյլատրելի էր օրական միայն մի պատարագ մատուցանել, այն էլ տարւայ ոչ բոլոր օրերում, եւ որովհետեւ մեծ վանքերում միաբանների թիւը շատ մեծ էր, նրանց հարկաւոր էր իրենց պարտքը կատարելու յարմարութիւն տալ։ Սեղանների շատանալու մի ուրիշ ոչ պակաս գրգռապատճառն էր վանքերին յատկացրած տասն նուէրները, որոնց փոխարէն իրենց պարտաւորութիւն սահմանւում էին յատուկ, մէկից աւելի պատարագներ, եկեղեցիների որմերի վրայ արձանագրուած եւ ամենածանր անէծքներով պայմանաւորուած կամ սահմանուած ժամանակում անպատճառ կատարելու այդ պատարագները։ Բնական է, որ մի եկեղեցում կամ մի սեղանի վրայ այդքան պարտաւորութիւն կատարել կարելի չէր։ Նուիրատւութիւնները վանքերի հարստութեան եւ ճոխութեան խարիսխներն էին, որով պայմանաւորուած էին եկեղեցաշինութեան գործերը եւ դրա հետեւանք հայկական ճարտարապետութեան ծաղկումն ու զարգացումը։

Ինչպէս վանքերի թիւն էր Հայաստանում շատ շատացել, մի ժամանակ այդպէս շատացել էին հայկական թագաւորական իշխանութիւնները. մեր աչքի առաջ եղած փոքր երկրամասում այդպիսի թագաւորութիւններ կային Սիւնիքում, Բաղաց երկրում, Աղուանքում կամ Արցախում, Դուգարքում։ Յայտնի եւ ծանօթ են այդ թագաւորների բնակած տեղերն ու ամրոցները. նրանք չեն ստեղծել եւ ոչ մի մեծ քաղաք, եւ որ ուշագրաւ է, եւ ոչ մի տեղում չեն կառուցել այնպիսի պալատներ կամ շինուածքներ, որ պատմական կամ ճարտարապետական որեւէ արժէք ներկայացնէին եւ կամ հետախուզութեան արժանի տարրկայ լինէին, մինչդեռ դրա հակառակն է վանքերում։

Օրբելեանի պատմութեան տուեալները, իր տեսակում բաւականաչափ լրիւ են, բայց եւ այդ դեռ կանգուն մնացած ու արձանագրութիւններով վկայուած վանական շինութիւնները համարեա թէ անթերի պատ-

կերացնում են ոչ միայն այդ շինարարական գործունեության, այլ որոշ չափով նաև վանական անտեսությունների և վանական կենցաղի պատկերը։ Հետևապես Տաթևի նկատմամբ հաջող պայմաններում ենք։

Տաթևում շինարարության արժանի գործեր են կատարել Սյունյաց Փիլիպպե իշխանը, երկու Յովհաննես, Յակոբ, Ստեփանոս, Գրիգոր, Հայրապետ ու գործեղ Յովհաննես և պատմագիր Ստեփանոս եպիսկոպոսները, մինչև ԺԴ. դարու վերջը, սկսած ութերորդից. իսկ ավելի ուշ եկող առաջնորդները պահպանել են եղածները նորոգություններով, ավելացնելով միայն անտեսական-բնակարանային կառուցվածքներ և ոչ մի եկեղեցի։ Թւենք թե նրանք ինչ բաներ են շինել, լրացնելով միուս երկու վանքերի և այլ տեսակներով։

1. Կաթողիկէ է գլխավոր եկեղեցին, յանուն Պետրոս-Պողոս առաքյալների, հիմնարկած 895ին և ավարտած 906ին, տաս ու մէկ տարիների ընթացքում. շինողն է Յովհաննես առաջինը։ Վերջերում նորոգում են Ստեփանոս, Հայրապետ և Յովհաննես երրորդ եպիսկոպոսները։

2. Սուրբ Աստուածածին եկեղեցին շինել է Գրիգոր եպիսկոպոսը 1087ին, որ առերևույթ անփոփոխ մեզ է հասել։

3. Սուրբ Գրիգոր եկեղեցի, շինված էր Կաթողիկէից ավելի կանուխ, Փիլիպպե իշխանի ձեռքով, յետոյ մի անգամ հրդեհւել էր։ Վերաշինուել է երկրորդ Յովհաննեսի ձեռքով։ Երկրորդ անգամ երկրաշարժից կործանուել. վերջին կանգուն շինությունը պատմագիր Ստեփանոս Օրբելեանի շինել տուածն է 1295ին։

Մենք տեսանք, որ Արդուխաթունի եկեղեցին Կաթողիկէն Ս. Նշան, Ս. Խաչ անունով է յիշատակում, իսկ երկու բազիլիկների և փոքր եկեղեցու մասին այդպիսի յիշատակութիւն պակասում է. նուէրներ արձանագրուել են. «ի վանս Տաթևի», «ի սուրբ եկեղեցիքս», «ի կաթողիկէս», «ի սուրբ ուխտս»։ Մայր եկեղեցու համար էջմիածնի մասին առաջին անգամ Ս. Խորենացին է «յեկեղեցւոյն կաթողիկէ որ ի Վաղարշապատ քաղաքի» գործածում, իսկ արձանագրական յիշատակութեան հնագոյնն է Արուճի 670ին հիմնուած եկեղեցին և Մրենի կաթողիկէն 992ին։

Հաղարծնի բոլոր հինգ եկեղեցիներից միայն երեքի անունները կան պահուած արձանագրութեանց մէջ, Կաթողիկէն և Ս. Աստուածածին է գլխավոր եկեղեցու անունը, նրանից փոքրը, խոշոր ժամանով, Սուրբ Գրիգոր է կոչւում, երրորդի անունը Սուրբ Ստեփանոս է, երկու մատուռները, որ կրում են կամ ավելի ուշից կոչել են «Գերեզմանք թագաւորաց», այդպէս էլ մենք ենք կոչում, առանց իմանալու թէ ակզբնապէս ո՞ր սրբերի անուններ էին կրում դրանք։

4. Կամար վրան երկու խորաններ, կանգնեցնում է երկրորդ Յովհաննես եպիսկոպոսը Տաթևում մօտ 1040ին, որպէսզի բաւարարութիւն տայ այդ ժամանակ արդէն մեծ թւով պատարագներ մատուցանելու պահանջին։ Դրանք վաղուց են կործանուել, անհետ քանդուելով։ Երկրորդ անգամ էլ շինել է միուս գրան հանդէպ որ նոյնպէս քանդել են։

Պատարագի սեղանների չափազանց մեծ թւի համար 1793 թւի մի յիշատակարանի մէջ կայ այս հետաքրքիր տեղեկութիւնը, թէ Սանահնի վանքում կային 40 սեղան եւ ննջեցեալի հոգւոյ համար քահանաներ կատարում էին միևնոյն օրում միաժամանակ 40 պատարագ մատուցանելով. «Վանիցս որրոյ տաճարին են սեղանք 40 ըստ խորհրդոյն քառասնից եւ եւս ի հարկաւորին զ՚ի առէր ննջեալ հոգւոց մատուցանել զպատարագս ի միում աւուր կատարել զ40 եւս յիշատակելիւր բեմի»։ (Տես Սերոբէ գրիչ, Պատմութիւն Աւերման Տփխիս Քաղաքի, տպուած Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ., Թիփլիս, 1912, էջ 372)։

Տարսայիճ իշխանի արձանագրութեան մէջ 40 պատարագ է պատուիրուած, 10-ական պատարագներ Յայտնութեան, Զատկի, Աստուածածնի և Խաչի տօների օրերին։ Հաւանական է, որ միևնոյն օրը միաժամանակ այդ մեծ տօներին նոյն վանքի տաս սեղանների վրայ պատարագներ էին մատուցանում, համեմատ նուիրատուութեան պայմանի։

5. Մեծ վանքերն իրենց շրջապատից դուրս, առավելապես բարձրադիր տեղերում և կամ գերեզմանատներում ունեն շատ փոքր Մատուռ կամ Վկայարան կոչուած շինութիւններ։ Տաթևում այսպէս կոչուած Ծամալկկաց մատուռը, Հաղարծնի գերեզմանատան և Դադի վանքի բլուրների շէնքերը, որոնց ոչ մէկի վրայ արձանագրութիւն չգտայ, իսկ արձանագրութիւններ կան նրանց հարևանութեան խաչարձանների և գերեզմանաքարերի վրայ, որ կարող են միջոց ծառայել մատուռների ժամանակները մօտաւորապէս որոշելու։ Հոռոմոսի Ս. Գէորգի մատուռն է թուականով ամենահինը՝ 1001ից (Վիմ. Տար., էջ 26). իսկ իբրև մատուռ էջմիածնի Շողակաթ վանքի հին մատուռը, որ ունեցել է 1154 թ. արձանագրութիւնը (Վիմ. Տար., էջ 30)։

Անշուշտ այս մատուռների հետ պիտի համարել նաև արձանագրութեանց մէջ գործածուող Հանգստարան և Տապանատուն անուններով յայտնի շինութիւնները։

Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցու արևմտեան պատի վրայ կայ Վաչէ իշխանի մի ընդարձակ արձանագրութիւն որ ՉԿ = 1311 թուականից յիշատակում է, «զդասուն Տորոզանց ի կարգի իւր հայրենեացն հասուն յիմ [illegible]»։ Մի բառ որ գտնում ենք նաև Տաթևի արձանագրութեան մէջ. «Ի յայս տապան [illegible] (կան) հանգուցեալ նշխարք» 1655 թ.ից (Տես արձանագրութիւնը թի. 34, էջ 47)։

6. Տուն աղօթից և տեղի դամբանի Միանձանց եպիսկոպոսների և իշխանների համար։ Այս շէնքի կառուցողն էր առաջին Յովհաննէսը. մի փոքր անհամաչափական մընում, որովհետև յետոյ Ժամատուն կոչուած այդպիսի յարակից շէնքը կառուցել են միշտ մայր շէնքից տարիներ անցնելուց յետոյ։ Մա քանդուեց 1890-ական թուերին, որի տեղում շինուեց նոր Զանգակատուն, հինի միայն թեք կամարը երևում է Երմակովի լուսանկարում, որ մենք տուել ենք (Տես նկար 1 և 2)։

Հաղարծնի վանքի ժամատունը շինուած է Ս. Գրիգորին կից, արևմտեան ճակատին։ Արձանագրութեան մէջ շինութեան թուականը չկայ, այլ յիշատակուած է Զաքարէ և Իւանէ սպասալարների յաջորդութիւնները և որ Իւանէն շինել է ժամատունը, այդ անունով արձանագրուած, Զաքարէի մահուանից յետոյ, ուրեմն ԺԳ. դարու սկզբներում. 1200ից յետոյ երկու անթուական արձանագրութիւններ ժամատան փոխարէն Գաւիթ են յիշատակում։

Դադի վանքում կան երկու ժամատներ երկու հին բազիլիկների արևմտեան ճակատներին շինուած, որոնցից հնագոյն շէնքի յանդիմանն աւելի ուշ է կառուցուած։ Ուրիշ ժամատների մասին խօսելու ենք հետևեալում։

7. Սրահ կամ Գաւիթ անուն են տալիս եկեղեցու հարաւային պատին կցուած կամարակապ սիւներով այն շէնքին, որ կառուցել է Տաթևի առաջնորդ երկրորդ Յովհաննէսը, 1047ին. որը նորոգութիւններով մնում էր մինչև վերջը։ Վերջին նորոգողը Եղիշէ եպիսկոպոսը 1605ին, փոխանակ սրահի, գաւիթ անուանում։

Դադի վանքի Սրահը միանգամայն նման է Տաթևի շէնքին, շինութեան թուականն անյայտ է, իսկ Հաղարծինը այժմ չունի, հնում շինելու մասին էլ տեղեկութիւն չունենք։ Այդպիսի մի սրահ, բայց ճակատով դէպի արևմուտք դարձած, գըտնւում է Սանահնի վանքում, որի սիւների արանքում յետոյ կէս բարձրութեամբ որմեր են շարել։ Սրահ կայ Որոտնայ վանքում, իսկ ամենավերջինն է էջմիածնի Գայանէի վանքի արևմտեան պատին կցուածը 1688 թուից։ Հաւանական այս սրահի մի այլ անունն է Նորավանքի 1271ի արձանագրութեան մէջ գործածուած «[illegible]» բառը։ Այդպիսի մի սրահ է Կեչառիսի Ս. Յարութեան եկեղեցուն կից (Տես Նկ. Ազգ. Հանդ., 1912, Գիրք ԻԴ., էջ 125 և 132), որի մասին Լալայեանն այս է գրում.

«Եկեղեցու դրան առջև բացւում է գաւիթը, որ առկախէն է և արևմտեան կողմը մի սիւնով և երկու որմասիւնով երկու կամարակապ բացուածք ունի։ Սիւնը կլոր է, միակտուր քարից, իսկ որմասիւները երեքական բոլորակաձև կիսասիւներ են, միակտուր քարից, գեղեցիկ խոյակով և առաջակողմային փորուածքով, նման Սանահնի ժամատան սիւներին։ Գաւթի հարաւային և հիւսիսային կողմերում կան մի մի փոքրիկ պատուհան, շղթայաձև որնա-

մնում. գմբէթի երկարութիւնն է 4 մետր, լայնութիւնը 4,25 և բարձրութիւնը 4 մետր» (Նկար 32)։ Ս. Յարութիւնը շինուել է ՈԿԹ=1120ին (յ. տ. էջ 131), Սրահը հաւանական ժԴ. դարուց է։

8. Սրբատան է շինում առաջին Յով-



(Նկար 32)
Կեչառիսի Ս. Յարութիւն եկեղեցու սրահը։

հաննէսը միայն. չի տւած մերձաւոր տեղը եկեղեցու վերաբերմամբ և որով չափով անորոշ է գործադրութեան նպատակը։ Համանման մի շէնք է Դադի վանքի 1241 թուականի Սեւադ իշխանի շինած Նախատունն, որպիսի շէնք յիշատակւած է նաեւ Սանահնի վանքում, 1063ի Հրանուշ թագուհու արձանագրութեան մէջ, Հոռոմոսի վանքում երկու արձանագրութեանց մէջ, մէկը 1241 (Ծահխաթ. Բ. 353) միւսը 1277ից (Սարգիսեան, 163) գրում են. «Ես Վաչէս որդի Սարգսի եւ ամուսինն իմ Մամա խաթուն դուստր Աղուսերթին / շինեցաք զնշխարատանս ի վանս Հոռոմոսի յառաջնորդութեան տեառն Բարսղի / արհի եպիսկոպոսի որդւոյ ամուր Երկաթայ . . . թիւ ՈՂ» (= 1241). (Ծահխաթ. Բ. էջ 353)։

Երկրորդն է. «Թվին ՉԻԶ ... (= 1277) ես Առիւծս հոգեւ ... Սարգսի որդիս եւ

կենակից իմ Սեդա / եփենցյամ ... գնչխատա-չաւս ... վարպետ Զորու Կարնոյ Թաղակա-ցի . . . . » . (Սարգիսեան, էջ 163, և Վիմ. Տար. էջ 119)։ Դուցէ երկրորդ շինողները նախորդն են նորոգել։

Այդ թիւը առաջ ունենալով մեծ վանքերի պատարագների յաճախութիւնն ու շատութիւնը, խիստ անհրաժեշտ կը լինէր յա-տուկ մի անգ նշխար պատրաստելու հա-մար։ Նշխարատուն, նաև Մատենադարան անունն է կրում Հաղբատի Յովհաննէս Թա-չիկեցու մի շէնքը։ Լալայեանն այսպէս է նկարագրում. «Սա գտնւում է Ս. Նշանի արեւելեան կողմում, և մի փոքրիկ գաւ-թով է կցած, անախն, կամարակապ, պա-տերին կիսասիւներ, կենտրոնում ութան-կիւնանի մի գմբէթ, լոյս ներս թողնելու։ Պատերի մէջ կան հինգ հատ կամարակապ մեծ դարակներ գրքեր դնելու կամ այլ ի-րեր պահելու համար» (Ազգ. Հանդ., 1901, Գ. է–Ը էջ 407)։

9. Դրատուն. Տաթեւի վանքը պայծա-ռացնող Յովհաննէս եպիսկոպոսն այդ էա-կան շինութիւնն էլ է կառուցանում. ան-դրկանում ենք միայն պատմագրի հաղոր-դագրութիւնից որի հնագոյն, մեզ ծանօթ եւ պահուած օրինակը կարող ենք համարել Հաղբատինը. Դոփեանց Յովհաննէս եպիս-կոպոսի շինածը, որի շինութեան թուականը թէեւ չկար պահուած, բայց շէնքի պատի վրայ կայ 1179ի մի այլ արձանագրութիւն որ շինութեան ժամանակին մօտ թուականն է, որով «Ես Արամ որդի Համազասպայ իբ այգին նուիրում է ի դրատունս Հաղբատայ» (Վիմ. Տար., էջ 33)։ Սանահնում Դրատան մէջ շինել է «Ես Արքահամ վարդապետ, 1214ին, «ժամատարքս» — «դիմ ժամատարքն բաղում աշխատութեամբ շինեցի ի դրա-տունս»(?) (Ջալ. Ա. 33)։ Մի այլ արձա-նագրութեան մէջ գրուած է. «Ես տէր. Յով-հաննէս . . . շինեցի զդաւիթս, զդրատունս և զորահս նորին. . . թ. ՉԻԲ» (= 1273) (Տես Վիմ. Տար., էջ 115, նաեւ էջ 235, Հ. 75)։

Կայ մի երկրորդ արձանագրութիւն 1063 թւից, որի մէջ արձանագրուած է. «Ես Հրա-նուշ Թագուհի, դուստր Դաւթի արքայի շի-նեցի զնշխարատունս»։ Այս արձանագրու-թիւնը արտագրել է Ջալալեանը, այժմ չկայ և կարծել են, որ այդ շէնքն է եկեղեցի-ների հարաւում գտնուած հոյակապ կառու-ցուածքը, որը մեր կարծիքով ոչ Նշխարա-տունն է և ոչ էլ Դրատուն, այլ վանահայ-րական հանդիսական ընդունելութեան Տունն է, ինչպէս Համազասպինը Հաղբատում և Տանարինը Դադի վանքում. Դրատուն յիշ-ւում է Հոռոմայրում (Վիմ. Տար., էջ 45) ՈՄ = 1201ից։

Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Գոշ Մխիթարի յաջորդ Մարտիրոսը «շին-եաց եւ դրատուն մի գեղեցկաշէն»։ Իս. Օրբելին նկարագրելով այդ վանքի բոլոր շէնքերը, ենթադրում է, որ Զան-գակատան ներքին յարկն է եղել Կիրակոսի յիշած դրատունը, բայց արձանագրութեամբ այդ չի հիմնաւորում, որովհետև այդ շէն-քի արձանագրութիւնը 1291ից վերաբերում է իբրեւ երկրորդ յարկ շինած Զանգակա-տանը։ Կարող է այդ ենթադրութիւնն ու-ղիղ լինել. միայն հիմնուած ենթադրութեան վրայ։ Հաստատապէս վկայուած մի շինու-թիւն միջոց կ'տար որոշ կերպով պարզա-բանելու թէ հնում ինչպէս էին շինում այդքան մի կարեւոր շինուածք (Տես Ազգ. Հանդ., 1903, էջ 34–36)։

10. Զանգակատուն կային երեք վան-քերից միայն Տաթեւում եւ Դադի վան-քում։ Տաթեւի հինը քանդել էին 1880-ա-կան թւերին, փոխարէնը նորը կառուցել ե-կեղեցու արեւմտեան ճակատին, Աղօթա-տան անդում. այդ եւս կործանուեց վերջին շարժին. Երմակովի լուսանկարում պահուած են այդ Տնի պատկերը, իսկ զանգակների վրայ Օրբելեան Ստեփանոս եպիսկոպոսի արձանագրութիւնները։ Դադի վանքի զան-գակատունը շատ աւելի հին է և որովհետեւ կանգուն է թէ զանգակատունը և թէ նրա վրայի արձանագրութիւնը ներքի յարկի եր-կու խաչարձանների 1283 թուականով։ Մենք ունենք երկու նշանաւոր զանգակատներ՝ Սանահինինը, որ թուական ու շինողի անունը ցոյց տուող արձանագրութիւն չունի (Ազգ. Հանդ., 1898, Գիրք Գ., էջ 301–303) և Հաղբատինը որ շինել է Համազասպ եպիս-կոպոսը 1245ին (Տես Ազգ. Հանդ., 1901, էջ 407–410). (Նկար 33)։

Սարչիզովսկին ընդունում է, որ զան-գերի հնչման ամփոփութիւնը Հայերի մօտ

*1000 թուականից առաջ է սկսել, թէև հաստատուն համարել նրա բերած վկայութիւնը դժուար է, որովհետև Առաքէլի գրածը (Դիւան Գ., Գլ. Ի.) թէ Սեբաստիայում Յոյները հալածում էին Հայերին կրօնի հակառա- գուարի ժամանակը զանգեր կախելու յարմար էր, որուն գմբէթի չլինելութիւնը, եթէ հաստատուէր թէ այն 1038ից է, ամենահաստատ փաստը կը լինէր։ Ընդհանրապէս 1290ից առաջ զանգակատներ չունենք. Հա-*



*(Նկար 33)*
Հաղբատի Զանգակատունը։

*կութեամբ ևս արգելքին զծանանալն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ, կարող է ժամանակի և եկեղեցւոյ համար գործածած լինել (տեսնել մանրամասն տես Սարգիսեանի հար. Ա., էջ 242–244)։ Յովհաննէս Թառոմայրի, Անիի և Գօշ Մխիթարինը 1291ից են (Վիմ. Տար., էջ 131 և 133–134), Գայլիձորինը կոչւում է Զանկակի առուն 1321ից (Ոսկեան, էջ 113). Իբրև չլինութիւն ամենից չքեղն է Էջմիածնի Փիլիպպոս և.*

*Յակոբ կաթողիկոսների շինածը* 1664*ին (Տես Ծահխաթ., Ա., էջ* 27)*։*

11. Տրապէզ կամ Տրապիզ *Տաթևում շինում է Տէր Յովհաննէսը,* 906*ից յետոյ. երկրորդ հնագոյն յիշատակութիւնն է Բաղաբերդի Վահանաւանքի Տրապէզը, որ շինեց Վահանը* 965*ին։ Մենք տեսանք թէ ինչ հոյակապ շինութիւն է Հաղարծնի* 1248*ի Յովհաննէս վարդապետի շինածը, որի հետ համեմատելինք Հաղբատի, յետոյ ձիթահանքի վերածած, շէնքը։ Տաթևում ներկայումս էլ կանգուն է մի կամարակապ մեծ սեղանատուն, բայց ասել չենք կարող թէ մի ժամանակուանից է դա շինուած, նոյնպէս անորոշ է [illegible] Դադի վանքինը։ Սրանց մէջ ամենախոշորն անշուշտ էջմիածնի վանքինն է Աղեքսանդր Ջուղայեցու շինածը* 1713*ին (Ծահխաթ. Ա. էջ* 30*), բաղկացած երկու բաժանմունքից, կամարածածկ, երկար* 47*, լայն* 5 *մետր և բարձր* 4,5 *մետր, որի մէջ մինչև* 1891 *թիւը քարէ նստարաններ էին պատերի տակ երկար ձգուած և քարէ սեղաններ, որ պահուած են մինչև այժմ Տաթևի սեղանատան մէջ, միայն անգործածելի։ Փոխանակ «Տրապէզ» բառի յետոյ գործածական է «Սեղանատուն»։*

12. Տուն–Տանար–Թանգարի. *Մենք կամենում ենք այդ երեք զանազան կոչումները յատկացնել նոյն և նման շէնքի, այն է վանահայրական պաշտօնական ընդունելութեան մեծ* Սրահներին*։ Մեծ վանքերի միաբանութեան թւի բազմութիւնը, նշանաւոր տօների և ուխտագնացութիւնների մեծաթիւ այցելութիւնները, մանաւանդ այն մեծ հանդէսների ժամանակ, որոնց օրինակները յաճախ են պատմագիրները նկարագրում եկեղեցիների շինութիւնների օծման և բացման դէպքերում, եկեղեցական ժողովների, թագաւորների և կաթողիկոսների, երկրի աւագանու այցելութիւններին ևայլն, անհրաժեշտ էր ունենալ մեծ դահլիճներ։ Տանար անունն է տրուած Դադի վանքի* 1190*ի շինած այդպիսի ընդունարանին, շինած Վախտանգի որդի Դրիգորէս եպիսկոպոսի ձեռքով։ Տաթևի* Թանգարին *ունի սքանչելի տեսարան, իր դէպի արևելք նայող լուսամուտով և բուխարի շնորհիւ, բայց իրենից ներկայացնում է երկար, տափաստանձև կամարով մի ծածկ, առանց սիւների և որ և է ճարտարապետական առանձնայատկութեան. հայկական ճարտարապետութեան անկման շրջանի մի գործ է, ԺԷ. դարուց, Տէր Յովհաննէս Ծինաթաղեցու ձեռքով շինած, Նրա Սպահանից վերադառնալուց յետոյ և բոլ ամենայնի յիշեցնում է, ոչ միայն իր պարսկական «թանարի» անունով, այլ և շինարարական արուեստով, թէ պարզ ընդօրինակութիւն է։ Ի՞նչպէս կարելի է այդ համեմատել Սանահնի* Նախարարխուց *անունը կրող փառաւէղ կառուցուածքին՝ որը մենք «*Ճաշդիտարան*» ենք վերակոչում, կամ Հաղբատի* 1257*ի Համազասպաշէն տանը հետ, որի ճակատին իրաւացիօրէն արձանագրուած է. «Շինեցաւ* մեծափառ տունս Աստուծոյ*»։ Անշուշտ է՝ Տաթևի հին* Տունը *կործանուել է, ինչպէս Հաղարծնի վանքում, որի հետքը պիտի որոնել վանքի շրջապատի անվերջ աւերակներում։*

13. *Յովհաննէս երկրորդը Տաթևի վանքի նորոգութիւնից յետոյ շինում է Սրահը* 1043*ին և անշուշտ այն թւերին է նա շինել նաև* Տունն Հասարակացը*, որը կարելի էր գուցէ համարել ընդունելութեան սրահ, տակային աւելի հաւանական ենք համարում որ դա էր վանքի* Հիւրատունը*, որ այդ անունով յիշուած է Դադի վանքի* 1253*ի արձանագրութեան և Սանահնի վանքում, արձանագրուած Միրանաւոր կոչուած մի խաչքարի վրայ. «Ես տէր Յովհաննէս գաւառաս Խաչինեցի եկեղեցւոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ շինեցի* զՀիւրատունս*»* 1157*ին (Ջալալ. Ա. էջ* 29*)։*

Հիւրանոց *և* Պանդոկ *անուն է կրում Վաղարշու վանքի նոյն նպատակի Օրբելեանների կառուցածքը, Որոտնայ վանքի հիւսիսային պատին արձանագրուած. «Թվ. ՉՀԵ* (= 1326)*. Ես տէր Սարգսիս Օրբելեան որդի Ջալալեան արքեպիսկոպոսի տանն Սիւնեաց եկի մեր հայրենի տունս, ի վանս* Վաղարշու *և ասի* զՀիւրանոցն*.. որ շինել էր հայր Սարգսին վասն արևշատութեան Բուրթէլին եւ զաւակացն իւր Բէշքէնէին եւ Իվանեայ յիշատակի իւր. կամ եղեւ ինձ մտանակցել այնմ արդեանց եւ ավել զՎաղարշի ուխտաղահորէն (Հոլանեան՝ զխրադահորէն) զգիւղ մեր եւ Կիւրզի վանս*

ապա ի մեր յամէն տուած էր ժողովուրդ եւ մեք մեր բաժին հասն տվաք ի պէտս Գանձակին...» (Մ. Փափազեան, Այրում, Ս. Հ. 318, Ազգ. Հան., 1898, Գիրք Դ., էջ 151–152)։

Իր եղբայր Էլիկումի որդի Բուրթել իշխանին յիշում է Օրբելեանը. Նա յիշատակւում է Սիւնեաց միջանի վանքերի արձանագրութեանց մէջ, յատկապէս Արփա գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում իր երկու որդիներով «Բէշքէնին և Իւանէին» 1322ին (Սիսական, էջ 182)։ Ուստի պէտք է ընդունել որ այդ հիւրանոցը շինուած էր 1320-ական թուերին։ Նոյն թուերին է որ արձանագրել է իր անունը Նորավանքի եկեղեցու վրայ. «Ես տէր Սարգիս քեռորդի տէր Ստեփանոսի Սիւնեաց արհեպիսկոպոսի շինեցի զեկեղեցիս...» (Սիսական, էջ 189)։ Հիւրանոցի շինողն Սարգսի յիշատակարանն է։ «Հոյրատուն» է արձանագրած այն Յակոբ երէց՝ «Ի վանքս շինեցի Հոյրատուն» 1317ին, Աշտարակում (Տես Վիմ. Տար., էջ 159)։ Հիւրատուն հանդիպում է նաեւ Բագնայրի արձանագրութեան մէջ (Տես Շիրակ, էջ 120)։

Չեսար իշխանը իր Հոգետան մասին շինութեան ճակատին արձանագրել է պարսկերէն լեզուով, իսկ հայերէնով գահլիճի արեւելակողմում, ի վերայ սեան վիմի։ Շէնքի արտաքինը հայ եկեղեցիների կտուրների ծածկի նման է. «Շինուած մեծ եւ հոյակապ, յարարուեստ հարուստ կողմանէ սնելով զմուտն կամարական եւ քանդակազարդ ի վերայ երկուս սեանց յորոց ի կամարամէջն ի կիսաբոլոր վիմի կայ արձանագիր, խառն արաբ-պարսիկ. զոր օրինակ եւ ի միւսում սեանցն, ի վերայ խոյակաց սեանցն քանդակեալ են առիւծ վիշապատուան եւ ցուլն։ Այսքան ընդհանուր բառերով նկարագրութիւնը, ինչպէս եւ նոյն տեղից վերցրած եւ կցուած նկարը տալիս են միայն բաւական աղօտ մի գաղափար այդ աշխարհիկ շէնքի մասին (Տես Սիսական, էջ 164 եւ նկար էջ 165)։

Վանքի հիւրանոցին գիւղ նուիրելու նպատակն աւելի է պարզւում Սելիմի Կարաւանատան մէջ գտնուած արձանագրութեամբ որտեղ հիւրատուն, կարաւանատուն բառի փոխարէն գործածուած է Հոգետուն, որ շինւում էին ճանապարհի կարաւանորդներին խնամելու և մանաւանդ ճանապարհորդներին կայան տալու։ Հայ ժողովրդի հասկացողութեամբ հասարակական եւ հոգու համար գործ կատարել է նշանակում գետերի վրայ կամուրջներ շինել, անջրդի տեղերի համար աղբիւրներ ու տուներ պատրաստել, ահա այդպիսի կայան էր Սելիմի Հոգետունը։ Նրա արձանագրութիւնը հետեւեալն է.

«... թվին ՉՁԱ (= 1332) յաւխտենակալութեան Բուսայիդ ղանին ես Չեսար, որդի իշխանաց իշխանին Սմբատի եւ մաւրն Անայի, թոռն Իվանէին եւ եղբարց իմ ատի-ծագեղ իշխանացն Բուրթելին եւ Սմբատայ եւ Ելիկումին, յազգէ Աւրբելեանց. եւ կենակից իմ Խորիշահն, դուստր իշխանին Վարդանայ եւ Դուքինէի, յազգէ Սենեքարիմանց. ի ճալալ արդեանց մերոց շինեցաք զհոգետունս ի փրկութիւն հոգւոց մեր ծնողաց եւ եղբարց ի Քրիստոս ննջեցելոց եւ կենաց իմոց եւ որդւոցս Սարգսի եւ Յովհաննիսի ֆաջի, Քրդին եւ Վարդանայ...» (Ջալալ. Ա., էջ 164, Սիսական, էջ 164)։ (Նկար 34)։

Այսպիսի Հոգետուն հիւրատներից Հայաստանում ամենահռչակաւորն է Փոքր Ս. Գէորգ վանքինը, շինուած Արտօս լեռնաշղթայի եզերով, լեռան լանջում, առատին բուք ու բորանով մի անցում տարւայ մեծագոյն ժամանակներում։ Այս լեռան կիրճն է միացնում Մոքս գաւառը հարաւային այլ երկրներով Վանայ լճի հարաւային ափերի հետ։ Ճանապարհորդներն երբեմն առիպուած են օրերով այդտեղ մնալ, մինչեւ վանքի ալքերի կանչողը ճանապարհելու նշան է տալիս։ Վանքն անխտիր կերակրում է բոլոր ճանապարհորդներին իրենց անասուններով, կատարելով Սեն Բեռնարի դերը Սեն Գոտարդ բարձունքում։ Այստեղ գիշերել են Լեման–Հաուպտն ու Բելկը (Armenien Einst und Jetzt Bd. II p. 90), որ համառօտ նկարագրում են. աւելի մանրամասն՝ Եր. Լալայեանը իր Ազգագրական Հանդէսում, (1912, XXII, էջ 97–99)։

14. Ցարկէ կրօնաւորաց, ընծուածէ կրօնաւորաց կամ կրօնաւորանոց (Տես Վ. Տ., էջ 7–8), երբեմն նաեւ վանք անուն էր տրւում վանականների համար շինուած սենեակներին, որ Տաթեւում կառուցանում է երկրորդ Յովհաննէսը և իրենցից ներկայա-

ցընում էին վանական շինութիւնների ամենաաննշան և անկարևոր կառուցուածքները, որոնց համար յետոյ խուց բառն է գործածական դարձել։ Հաղարծնում ու Դադի վանքերում դրանցից դեռ եւս կանգուն կային միքանի հատ միայն. Տաթևում աւելի են, որովհետև այդտեղ մինչև վերջին ժամանակները թուով աւելի վանականներ էին ապրում։ Դրանք արժանի են ուշադրութեան միայն կենցաղային, բայց ոչ երբեք շինարարական կամ արուեստի կողմից։ Դրանց սովորական պատկերն է՝ երկու անգամ երեք մետր տարածութիւն, երկու կամ երկու ու կէս մետր բարձր, մի փոքր դռնով եւ աւելի փոքր լուսամուտով, կամարակապ, շինած հասարակ անտաշ քարերից։ Որքան էլ շատ է եղել դրանց թիւը մեծ վանքերում, իբրեւ անխնամ կառուցուածքներ, բոլորն էլ կործանուել են։

15. Հնձան-Գինետուն վերջերում պարսկերէն բառով Շիրախանայ անուանական այն կացարանն է, որ մի տեսակ անհրաժեշտութիւն էր մեծ վանքերի բազմաթիւ պատարագներին «բաժակ» պահելու և մատակարարելու համար։ Թէ հնձաններում պատրաստուած և գինետներում ամբարուած գինին ծառայել է նաև վանականների վայելման համար, հասկանալի է։ Դադի վանքում դեռ կանգուն է հին հնձան-գինետունը։ Տաթևում յիշւում է Շիրախանայ, շինած 1827ին. հին հնձանը չկայ։ Հնձանների մեծագոյնը գտնւում է Էջմիածնում, քանի որ այդտեղ այգեգործութիւնն ամենամեծ ծաւալն ունի և վանքն տեղական մշակուած այգիների ամենամեծերն ունէր։

16. Զիրախանէն նոյնպէս մի անհրաժեշտ արհեստանոց էր, ի նկատի ունենալով



(Նկար 34)
Սելիմի քարվանսարայի ճակատը 1932 թ.

որ նրա մէջ պիտի պատրաստուէր եկեղեցիների լուսաւորման անհրաժեշտ ձէթը, նաև բնակարանների, քանի որ նաւթի գործածութիւնը գոյութիւն չունէր, բայց դա անհրաժեշտ էր նաև հայկական եկեղեցու մէջ ընդունուած չափազանց մեծ թուով պահոց օրերին կերակրի ձէթ պատրաստելու։ Բուսական հատիկներից ձէթ հանելու ճմլիչի նախնական գործարանն իր չափազանց մեծ քարերի անիւասալերն ու երկար ուղղաձիգ գերաններն ի նկատի ունենալով, որ պտտեցնելու համար ուժեղ գոմէշների ընդունութիւնն էր գործադրւում, ձիթահան-

քերի չինութիւնները պէտք է ունենային բաւական մեծ բարձրութիւն ու լայնութիւն։ Երեք վանքերից կանգուն է միայն Տաթեւինը, պարզից դուրս, հասարակ մի չէնք։ Հաղբատում այդ նպատակի համար աւելի ուշ սկսել են օգտագործել անգործածելի դարձած Սեղանատունը։

Ջիթահանք անուան փոխարէն միանգամ յիշուած է Սիւնիքում ժողովրդական գործածական Սրանոց բառը, 1308ի մի արձանագրութեան մէջ. «Ես Վարդան վարդապետ զսրանոցիս չարէցի ի հիւանէն գնեցի. ի սուրբ ուխտս ավիս (այն էր Հերհերի վանքը). (Զալ. Բ. էջ 140)։ Ամենատարօրական բառը ձիթահանքն է, որ առաջին անգամ հանդիպում ենք 1036ին Անիի մի արձանագրութեան մէջ. «Ես Ապլղարիբ մարզպան, որդի Գրիգորո Խլխանի և թոռն Ապուղամրի և եղբայր Վահրամա և Վասակա չինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս Անի... և գնեցի.. ձիթահանք.. և ետու ի սուրբ Փրկիչս...» (Շիրակ, էջ 82)։

Աւելի ուշքի ընկնող է դրա յիշատակութիւնը Տիգրան Հոնենցի ընդարձակ արձանագրութեան մէջ, որի մէջ նա յիշում է իր չինած Սուրբ Գրիգոր եկեղեցուն արուած մի չարք նուէրների մասին, զանազան չինութիւններով, որ անհրաժեշտ էին վանական տնտեսութեան համար եւ որոնց միքանիսի ճիշդ իմաստը մնում են ինձ անծանօթ։ Այդ արձանագրութեան մեզ հետաքրքրող մասն է. «Թվ. ՈԿԴ (= 1215) ... չինեցի զվանքս Սուրբ Գրիգորոյ.. զընտրական վանականաց եւ իշխանաց.. եւ ետու հայրենիք.. բաղնիսն ու մեչն ի մոգանիս, խանապարն կուչապանեաց ու կամարակապ փնոցն, ու մարազն հետ բաղնեցն. առէր Սարգսի ախոռն ու մարագն, զոր գնեցի. կալն եւ երկու ակն ձիթահանքն եւ ախոռնի եւ մարագնի վանիցս ի գաւառս վանիցս առջեւ պահեզն, զոր գնել էի եւ չինել ի Դիմացանն, կէս ակն ջրաղաց, բարդն մի բոլոր.. Գլխձորին ջաղաց.. պապենց խանապարն չորս գանգն ու գոան կուղպակն.. զայս.. վանացս էի տուել...» (Շիրակ, էջ 75)։

Արձանագրութեանս մէջ ինձ անծանօթ են ա) Մեչն ի մոգանիս, բ) խանապար, գ) փնոցն և դ) բարդն չինութիւնների նչանակութիւնը։ Նոյնպիսի անծանօթ բառեր են Հոռոմայրի 1201ի «ձիթահանքն ի գրաստանս» (Զալ. Ա., էջ 93), և Սանահնի 1214ի «ձիթահանքն ի գրաստունս» (Զալ. Ա., էջ 33), և Հոռոմայրի նոյն արձանագրութեան մէջ «չինեցի եւ զօսկատապետոցն եւ չփ զձիթահանքն ի գրաստանն» (Զալ. էջ 93)։

Ջիթահանք յիշւում է նաև Խծկոնքի, Հաղբատի, Սանահնի, Հառիճի և Բագնայրի վանքերի արձանագրութիւնների մէջ։

17. 18. 19. Օրբէլեանը Յովհաննէս առաջինին է վերագրում մի չարք մեծ տնտեսութեան համար անհրաժեշտ կառուցուածքներ, այն է Գործատներ, Համբարանոցներ եւ Դաղձանոցներ «զգետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկս»։ Անուններն արդէն բնորոշում են, թէ դրանցից ամեն մէկը ինչ նպատակի էր յատկացուած, և քանի որ բուն չէնքերը չկան պահուած, կարելի է նրանց մասին միայն ենթադրութիւններ անել։ Զուարթնոց եկեղեցուն կից կաթողիկոսական տան չինութիւնների չարքում ի միջի այլոց կայ մի չինութիւն, որի պատերի միջից կուժ փողերով անցքեր կան դէպի տանիքը տանող. մենք ենթադրել ենք, որ դրանք պատրաստուած էին մթերանոցի մէջ օդափոխութիւնը կանոնաւորելու, բայց դա չոկ ենթադրութիւն է։ Երկու տարի առաջ Էջմիածնի վանքում, տպարանի չինութեան առաջում կրահոր պատրաստելու մի փոս փորելիս, փոսի մէջ յայտնաբերուեցին բաւական երկար ցից ցից անկուած կուժ փողեր — քունքեր, վիթխարի մեծութեամբ թրծած աղիւսներ, երբեմն խողովակների բերնին դրուած. պեղումներ չկատարեցին և այդ յայտնաբերուածներն ծածկեցին, անորոշ թողնելով խնդիրը։ Արդե՞օք չկար նըմանութիւն Զուարթնոցի պատերում ամբացրած խողովակներին։ Էջմիածնի վանքում մեծ «Ամբարանոց»ը չինել է Ղուկաս կաթողիկոսը 1791ին, «Տնտեսատուն»ը Աստուածատուր կաթողիկոսը 1718ին։

20. 21. 22. 23. 24. 25. Տաթեւի տնտեսութեան մէջ վերջի վանահայրերի չինութիւնների մէջ յիշատակւում են. Հացատուն, Խոհանոց, Գոմ, Ցարդանոց, Կալ և Ջաղաց: Ցարդանոցին տալիս են նաև Մարագ անուն. Մենք տեսանք դրանց միքանիսը Տիգրան Հոնենցի արձանագրութեան մէջ։

*Այդքան բազմաթիւ շինութիւններ վանական միաբանական կենցաղի համար իրենց զարգացումը ստացել են աստիճանաբար, երբ սկզբնական պարզ կենցաղը նուիրաբերութիւններով կուտակուած հարստութեան հետեւանքով թէ՛ ճոխութիւն էր առաջացրել եւ թէ վանականների թիւն արտակարգ չափով մեծացրել։ Օրբէլեանը թուելով առաջին Յովհաննէսի շինածները, վանականների մասին այս է հաղորդում.*

*«Ջահաւորեալ իբրեւ զարեգակն ի մէջ աստեղաց երեւելի էր (վանքն) ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլ եւ պայծառանայր քահանայական եւ կրօնաւորական դասուք ի չափ 500 եղբարց. լի էր եւ ծովամտայց փիլիսոփայիւք երաժշտական երգոց. նոյն էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբ, նաեւ արհեստաւորք նկարչաց եւ գրողաց անհամեմատք» (Գլ. ԽԱ., էջ 226)։ Համարեա թէ նոյն ձեւով է նկարագրում վանքի գրութիւնը երկրորդ Յովհաննէսի ժամանակ, որ զարդարել էր Սիւնեաց նախագահ աթոռ եպիսկոպոսարանը «զանազան զարդուք եւ մեծամեծ սպասուք եւ գեղեցիկ կարգօք աստուածայնոց, եւ ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիւք եւ անհման երաժշտօք եւ բանիբուն վարդապետօք եւ աստուածազգեաց ճգնաւորօք, նաեւ յոգնապատիկ արհեստաւորօք . . . շինեալ կայր բազմութիւն* եղոց *եւ ամբոխութիւն իբր* հազար արանց*. . .» (Գլ. ԾԸ., էջ 312)։*

*Այսպէս յիշատակուած 500 եւ 1000 թուերն անշուշտ մեծ չափազանցութիւններ են. վանքի պարիսպների ներսում անկարող էին մշտական այդքան անձինք ապրել, հաշուի առնելով եղած բնակարանների սակաւութիւնը։ Պատմագրի հէնց իր օրով, ամենափայլուն շրջաններից մէկը, յայտնի չէ թէ վանքն ունեցել է այդպիսի մի խոշոր թիւ վանականների, թէ չէ այդ մասին էլ մի խօսք կ'ասէր։ 500 թիւը գտնում ենք կրկնուած նաեւ Կոռուց անապատի պատմութեան մէջ, որտեղ վանք դառնալուց յետոյ «հաւաքուեցան մինչեւ 500 կրօնաւորներ» (Ազգ. Հանդ., 1911, Գիրք ԺԱ., էջ 88)։*

*Այդ խոշոր թուերը, կարծում ենք, միայն նպատակ ունին ցոյց տալու, որ իսկապէս ինչպէս նաեւ «գերահռչակ ուխտն Հաղարծնոյ» (Օրբէլ., Գլ. ԿԳ.) եւ Դադիւանց իշխանական տան գամբարան Դադի վանքը, ասորական թեւից ուրիշ միաբաններ ունէին։ Մեզ շատ հեռուն կը տանէր եթէ թուելու լինէինք այն խոշոր գիւղերն ու մեծամեծ կալուածքները, որ Սիւնեաց տան իշխանները սկսած ամենահին ժամանակներից յաւիտենական ժառանգութեան էին թողնում Տաթեւի վանքին, որոնց ընծայաբերութեան վաւերագրերի մի բաւական խոշոր թիւ բառացի բերուած են Օրբէլեանի գրքում, մի մասն էլ արձանագրուած են գլխաւոր շինութիւնների որմերի եւ խաչարձանների վրայ։ Այդքան նուիրաբերութիւններով ճոխացած հիմնարկութեան անդամների թիւը բնականաբար շատ մեծ էր լինելու, բայց հազիւ թէ 500ի կամ 1000ի հասնէր։*

*Ահաւասիկ այդ պայմաններն էին, որ զարկ տուին հանդիսացած հայ եկեղեցական ճարտարապետութեան զարգացմանը։ Այդ ճարտարապետութիւնը ուշադրութիւն է գրաւել եւ քննութեան առարկայ դարձել ամենից առաջ Ֆրանսիացի, Անգլիացի եւ ապա Գերմանացի մասնագէտների կողմից սկզբում ճանապարհորդական նկարագրութիւններով եւ նկարներով, մինչեւ 1918ին լոյս տեսաւ յայտնի մասնագէտ Յ. Ստրժիգովսկու երկհատոր խոշոր ուսումնասիրութիւնը, 828 լուսանկարով եւ այլ նկարներով։ Այդ կապիտալ աշխատանքը, որի վերնագիրն է* „Die Baukunst der Armenier und Europa", Wien, 1918. *ամբարել էր այնպիսի մեծաքանակ նիւթ, որ հանդիսացաւ հայ մարդու եւ հաւանաբար նաեւ եւրոպացի մասնագէտների համար իբրեւ աչքի ընկնող մի յայտնագործութիւն։ Եւ դեռ նա իր աշխատութիւնը սահմանափակել է հայկական ճարտարապետութեան հնագոյն գործերով, գլխաւորապէս հինգից մինչեւ տասնեւմէկերորդ դարերը եւ, թէեւ մինչեւ տասնչորս էլ տալիս որոշ է նիւթական ձեւագրների բազմաթիւ նմոյշներ եւ նրանց վրայ համառօտակի կանգ առնում. բուն ուսումնասիրութիւն կատարել է հնագոյն շրջանի համար։ Այդ գրքի մէջ տեղ են գտել համարեա հարիւր եկեղեցական շինութիւններ, մեծաւ մասամբ լուսանկարչական վերարտադրութեամբ եւ մանաւանդ ճարտարապետ Թ. Թորամանեանի խնամքով չափագրուած եւ նկարուած յատակագծերով, հատուածներ-*

րի ճարտարապետական վերականգնումներով և առանձին դետալների մշակումներով, որոնք ապացուցնում են թէ առանց այդ ճարտարապետի անհատական քրտնաջան աշխատանքի Գերմանացի մասնագէտի աշխատանքը նման ծաւալով կամ հնարաւոր չէր լինել կամ շատ թերի դուրս կը գար։

Այդ վերարտադրութիւնները հայ շինարարական արուեստի կոթողներ են. դրանք հնարաւորութիւն են տալիս կարող և հմուտ գերմանացի մասնագէտին այդ բոլորը համեմատել հարևան և քրիստոնեայ ժողովուրդների շինարարական գործերի հետ և եզրակացնել, թէ Հայաստանում, իր ներքակալ շրջանում, ստեղծուել է ճարտարապետական ինքնուրոյն արուեստ, գեղեցիկ, համարձակ և գրաւիչ կողմերով, որ ապա այդ փոքր լեռնային երկրից դուրս գալով իր բեղմնաւոր և շինիչ ազդեցութիւնն է տարածել նաև Եւրոպայում, նոյն իսկ այնպիսի խոշոր կենտրոնում ինչպիսին Հռոմն է։ Ահա թէ նա ինչո՞ւ է իր գիրքն այնպէս վերնագրել։

Պատմական Հայաստան երկրի անկումն ու կործանումը միմեանց յաջորդող վայրենի հորդաների, կրօնական մոլեռանդութեամբ լցուած մրցակիցների և ընչաքաղցութեամբ տարուած գիշատիչ տիրապետողների միջոցով անօրինակելի են եղել և չափազանց յաճախ։ Մարդկային չարութեան զուգահեռ իր աւելի սոսկալի քայքայիչ դերն է կատարել երկրում շատ սովորական երկրաշարժը, որից բազմաթիւ կառուցածքներ կործանուել են հիմնայատակ։ Եթէ երբեւէ ձեռնարկուին կանոնաւոր պեղումներ, կասկած չկայ՝ փլատակների տակից հնութեան աւելի արժէքաւոր յայտնագործումներ են լինելու, քանի որ հողակոյտերի ներքոյ ծածկուածները ամենից քիչ են ենթարկուել հնարաւոր աղաւաղումների, ինչպէս ակներեւ պարզուեց Զուարթնոցի պեղումներով։

Աւերի գործ են կատարել նաև նորոգիչները, որոնք իրենց անճաշակ ձևափոխումներով, ժամանակի ճաշակներին հարկ տալով, աղարտել են բուն նախատիպը։

Այդքան ձախողակի հանգամանքների հանդէպ նիւթի առատութեանը մենք պարտական ենք այն բանին, որ թէև ինչպէս օրինակներն են ցոյց տալիս, փայտ գործ է ածուել, բայց կարող ենք ասել համարեա առանց բացառութեան շինանիւթը քար ու կիր էր, որ ունեցել են իրենց յատկութեան յարատևութիւնը և դրան ենք պարտական որ Ստրշիգովսկու խոշոր գործը մեր առաջն է դրուած։ Այդ գրքի հրապարակ գալով թէ՛ հետաքրքրութիւն է ստեղծուել բուն առարկայի մասին և թէ հիանալի ուղեցոյց է պատրաստել ինչպէս մի փոքր աւելի գիտակցուած ուսումնասիրութիւններ կատարել քան մինչև այդ։

Փոքր, բայց մանաւանդ մեծ վանքերը համախմբուած անդամների բազմութեամբ, ներկայացնում էին մի տեսակ կոմունաներ, ծրագրուած կամ աւելի ուղիղ կանոնադրուած նպատակով համայնական կեանքով ապրելու և համայնական գործեր կատարելու։ Անհատը ու նրա եսական պահանջները յետ էին մղուած և ձգտում էին ամեն ինչ կատարել ընդհանուր առաջադրուած նպատակի համար։ Փոքրիկ անշուշան խցիկներ, հասարակ անտաշ քարերից շինուած. ընդհանուր միատեսակ կերակուր, մեծ ընդարձակ սեղանատներում. ժամապաշտութեան բաւական երկարաձիգ ու միատեսակ կատարումը, օրուայ միքանի ժամերում. խիստ պահեցողութիւն և ընտանիքից զուրկ կուսակրօնական կեանք. ահա այն ընդհանուր պարտաւորական պայմանները որ միացնում էին «հինգ հարիւր» թւով, կամաւոր համախմբուած անձանց ուխտաւորներին։

Դրանց անհատականութիւնն ի յայտ էր գալիս ամեն մէկի բնական ձիրքերով, որ որոշ չափով և տեսակաւորւում էին ամեն մէկի անելիքը ընդհանուր գործի մէջ։ Պատմագիրը վերև առաջ բերած երկու վկայութիւնների մէջ թուել է այդ պարտաւորութիւնները կամ գործերը. նրանց մէջ կային «անյաղթ փիլիսոփաներ», «աննման երաժիշտներ», «բանիբուն վարդապետներ», զուտ ճգնական կեանքով ապրողներ, բազմապիսի արհեստների հետևողներ, «անհամեմատ հմուտ նկարիչներ», գաստատոց վարդապետներ, այնպիսի զբաղմունքներ, որ բոլորն էլ բարձր մտաւորական պահանջների ու ձգտումների յայտարար են։ Եթէ հաշւի առնենք այն հանգամանքը, որ վանական գաստակերպային որ ևս է ամփոփւում կամ խորութիւն

չէր, կարելի կը լինի մի գաղափար կազմել թէ ինչ աստիճանի լայն եղանակով, վանքերի շնորհիւ, երկրի ամեն անկիւն և ժողովրդական բոլոր խաւերի մէջ մտաւոր զարգացումը պիտի ընդլայնէր, հարկաւ կրօնական սահմանափակութիւններով կաշկանդուած։

Անհատապէս այդ համայնական խմբաւորումներն են հեղաւորութիւններ ստեղծել որոշ չափով պատմական անաւելի ծանր պայմաններ տակով Հայաստան երկրում քաղաքակրթութեան գործ կատարել և ընդհանրացնել օրէնքի և կարգաւորեալ կեանքի բարձր գիտակցութիւն։ Հայերիս մէջ այդ խմբաւորումն է ստեղծել գրականութիւն, դժբախտաբար շատ սահմանափակ կրօնական շրջանակով, և գեղարուեստական ամեն տեսակ ճիւղերի մշակոյթ, որպիսի արուեստներից խօսք անք է գրաւում եկեղեցական ճարտարապետութիւնը։

Հնագիտական տեսակէտից մեր նկարագրած երեք վանքերը զանազան շրջանների շինարարական յուշարձաններ ունին։ Թւականով ամենահինը պէտք է լինէր Առաքելոց եկեղեցին Տաթեւում, բայց նա նորոգութիւններով ենթարկուել է փոփոխութիւնների. հաւանական անփոփոխ է Շարժական Սիւնը, իսկ ենթադրական շատ աւելի հին են Դադի վանքի երկու բազիլիկները, հանելով այն գործերին, երբ Հայաստանում եկեղեցիներ էին շինում անտաշ քարերից, «խորթին եւ ամթին ձեւով»։ Տաթեւի ու Հաղարծնի Աստուածածին եկեղեցիները պատկանում են ԺԲ. դարու կէսերին. իսկ երկու Ս. Գրիգորները ու Ս. Խաչը կամ Ս. Նշան արդէն ԺԴ. դարու սկզբից ու վերջից են։ Համեմատելով գործերի այդ ներկայացուցիչներին, առաջին տեսքի տպաւորութիւնն այն է, որ նրանց արուեստի մէջ ոչ մի կամ շատ աննկատելի տարբերութիւն կայ. պատերը մեծատեսակ հարթ տաշուած խոշոր սալերի շարուածք, խիստ կանոնաւոր ուղիղ պատեր, բոլորի կամարները լորփիններով կամ սալքարերով ծածկուած. միայն վարժ ու սովոր աչքն է կարողանում նկատել հին գործի ամբողջ նրբութիւնը, հետագայ գործերի հետ համեմատած։ Տարբերութիւններ նկատելի են նաև կորնիզների և ասկուագանակ օրնամենտ քանդակների մէջ։ Այդ կողմից զարմանալի անալոգիա է նկատւում հայ ձեռագրերի արուեստի և ճարտարապետութեան մէջ։ Դարերի ընթացքում հայ տառերը միշտ ձեւափոխուել են, բայց արդէն հաստատուն ձեւակերպուած տառերը միշտ կրկնուել են, և միայն ձեռագրերին քաջածանօթ անձը կարող է նկատել և մտաւորական ճշտութեամբ որոշել նոյն ձեւի տառերի գրելու ժամանակը կամ գոնէ դարը։ Մենք ունենք հին երկաթագիր, միջին մեսրոպեան երկաթագիր, հին բոլորգիր ևայլն. հայ ճարտարապետութեան համար տակաւին չկան մշակուած և ընդհանուրին մատչելի գործնական աստիճանական զարգացման որոշումներ, ինչ որ կարող ենք գրչութեան արուեստի ասպարէզում ցուցադրել։ Ճարտարապետ Թորամանեանն իբրև ամենից շատ և երկար հայ ճարտարապետութեան յուշարձաններով զբաղուած մի անձն, ի վիճակի էր և ցանկալի էր որ այդպիսի մի աշխատանք հրատարակէր։ Յովհաննէս եպիսկոպոսի խաչքարի օրինակով կարծում եմ բաւական մի համոզեցուցիչ օրինակ տուանք, թէ ինչպէս մի Ստրշիգովսկի անգամ կարող է չորս հարիւր տարիների ակնյայտնի տարբերութիւնն աննկատելի թողնել և ԺԴ. դարու գործը Թ. դարուն յայտարարել։ Ստրշիգովսկին իր այդ սխալ դատողութիւնը կրկնել է նաև Տիւբինգենի նշանաւոր հայերէն երկաթագիր ձեռագիր աւետարանի գեղարուեստական նկարագրութիւնն անելիս (Տես Tübingenar - Evangeliar, 1915)։

## Ե.

# ԺԱՄԱՏՈՒՆ-ԳԱՒԻԹ-ՍՐԱՀ

Մեծ պատերազմի նախօրեակին Յ. Ստրժիգովսկին հնագիտական մի արշաւախմբի գլուխ անցած Հայաստան եկաւ երկրորդ անգամ իրեն ծանօթ կարեւոր հնութիւնները նորից վերանայելու և նորերի հետ ծանօթանալու։ Տփխիսում եղաւ նա ինձ մօտ. զրոյցի ընթացքում ես նրա ուշադրութիւնը հրաւիրեցի մի հանգամանքի վրայ, խնդրելով առ տեղեան ստուգելու։ Ես նրան ասացի, որ իմ կարծիքով հայ եկեղեցիներին կից ժամատները իրենց ծագումն առել են հայկական գիւղական տներից, որով գուցէ կարելի լինի բացատրել նաև հայ եկեղեցիների գմբէթների ծագումը, և յայտնեցի որ այդ մասին յօդուած եմ գրելու Ազգագրական Հանդէսում։ Մեր զրոյցը նա միտն է պահել և իր գրքի երկրորդ հատորում (էջ 821) յիշում է այդ և կարծելով որ իմ յօդուածը արդէն լոյս է տեսել, ենթադրում է, թէ հաւանական պատերազմի հետեւանքով իր ձեռքը չի ընկել իմ գրածը։ Մինչդեռ իրականութիւնն այն է, որ յառաջացած Հայերիս համար ամէն կերպ աղէտաբեր պատերազմի հետեւանքով, ես և մեզնից շատերն անկարող դարձան լուրջ աշխատանքով պարապելու։ Արժէքաւոր և շատ օգտակար Ազգագրական Հանդէսը դադարեց լոյս տեսնելուց. նրա մէջ լոյս տեսաւ իմ յօդուածի միայն սկզբի մասը, Հաղարծինի վանքի արձանագրութիւններով, իսկ շարունակութիւնը մնաց մասամբ նաև անգրել։ Նոյն եղանակով թերի մնաց Արարատ ամսագրում հրատարակած Տաթեւի արձանագրութիւնը։ Տարիներ են անցել, իմ կարծիքի հիմք ծառայող շատ մանրամասնութիւններ հարատարապետական չէնքերի նորանոր տպաւորութիւններով մոռացել եմ, իմ այս առաջացած հասակիս այժմ անկարող եմ հնութեանց վայրերն այցելել, բայց այնու ամենայնիւ անշահ չեմ համարում իմ տեսլիքները հրապարակ գնել։

Նախապէս փորձեմ ցոյց տալ թէ Հայերը երբ և ինչ նպատակի համար են սովորութիւն դարձրել իրենց եկեղեցիների մեծ մասին ժամատներ կցել, սովորաբար նրա արեւմտեան ճակատին։ Առաջուց յայտնի էր, — Ստրժիգովսկու գրքի մէջ բազմաթիւ եկեղեցիների հրատարակած յատակագծեր ակներեւ ցոյց են տալիս այդ — թէ ինչպէս հայ եկեղեցիների յատակագծերը շարունակ փոփոխութիւնների են ենթարկել։ Եկեղեցու կանոնադրուած ծիսապաշտութիւն, հարեւան երկրների փոխադարձ ազդեցութիւնները, դարերի ճաշակի ու ոճի հասկացողութեան ըմբռնումները թողել են իրենց հաստատուն կնիքները այդ ձեւափոխումների վրայ։ Ստրժիգովսկին հայկական եկեղեցիների յատակագծերի մէջ ոչ պակաս քան 12 հիմնական ձեւափոխումներ է ընդունում։ Դրանցից երեքը քառակուսիներ են, որոնց վրայ բարձրանում են գմբէթներ. յատակագծերից երեքը կամ քառաթեւեան են, կամ վեցթեւեան, կամ ութթեւեան քառակուսուց դուրս ընկած կիսաշրջաններով. դարձեալ գմբէթաւոր, երկու տեսակները առանց գմբէթի են եւ միանաւ, ծածկած չորսի պատերն է կամ մի երկարացրած նաւով՝ եռաթեւեան դուրս ընկածներով, կամ երեք նաւով եռաթեւեան դուրս ընկածով առանց գմբէթի, կամ եռաթեւեան գմբէթաւոր, կամ արահամձեւ՝ վրան գմբէթ։ (Տես Հատոր Ա., էջ 71)։ Այդ բոլոր փոփոխութիւններն ակներեւ վկայում են, որ Հայերի մէջ շարժանը անբաւարար չի դարձել, որովհետև յատակագծերի բազմատեսակութիւնն առաջ է բերել համապատասխան նորանոր, հարուստ եւ ակնախտիղ արտաքին արտայայտութիւններ։ Արտաքուստ հայ եկեղեցու արտայայտութիւնը կարելի է ճանաչել գլխաւորապէս նրա բարձր թմբուկով վերեւացող գմբէթի միջոցով և ոչ որմերի ձեւակերպմամբ։

Եւ սակայն, չնայած այդքան ձեւափոխումներին, Հայերը չեն սովորել մեծ եկե-

ղեցիներ շինելու արհեստը. մի կարգ որ հնում մինչեւ խորապէս զգացուել է, քանի որ ժողովուրդը, մանաւանդ հին գիւղերում, ժամապաշտ էր և բազմութեամբ յաճախում էին եկեղեցիները. Իմ տեսած հայկական ամենամեծ եկեղեցին գտնւում է Ռուսաստանի Հաշտարխան քաղաքում, կառուցուած յանուն Պետրոս-Պօղոս առաքեալների, 1763–1765 թ., նոյն քաղաքում վերաբնակուած Հայերի ձեռքով, բայց կարելի է ապահովապէս ընդունել, որ նրա օրինակն ու հաւանական նաև վարպետները, տարել է ռուս ժողովուրդը. Նոյն իսկ Անիի մայր եկեղեցին եւ Էջմիածնի մայր եկեղեցին, շատ յաճախ մեծահանդէս հաւաքոյթների վայր, շատ սահմանափակ ծաւալ ունին.

Եկեղեցիներ յաճախող ժողովրդեան բաւարարութիւն տալու համար գործադրել են այլ միջոցներ, այն է՝ կամ գլխաւոր եկեղեցուն կցել են նորերը, օրինակ ինչպէս Կոստանդնուպոլսի Դումգափուի թաղում, կամ մօտ առ մօտ մի քանի եկեղեցիներ են շինել, ինչպէս բոլոր հայկական մեծ քաղաքներում, կամ արեւմտեան մասում ներքին երկրորդ յարկ են բարձրացրել, ինչպէս քաղաքների շատ հայկական եկեղեցիներում, երկրորդ յարկը կանանց յատկացնելով. վերջապէս կամ եկեղեցու արեւմտեան ճակատին, գլխաւոր մուտքի հանդէպ, նոր շինութիւն են կցել, Աղօթատուն, Ժամատուն, Գաւիթ անուններով, մի պահանջ որ սկսել է բաւական հին ժամանակներից և գործադրուել մինչեւ.

Ճարտարապետ Թորամանեանը, «Գաւիթ և Ժամատուն Հայոց հնագոյն եկեղեցիներու մէջ» յօդուածով փորձել է այդ յաւելեալ շինութիւնների ժամանակն ու նպատակը որոշել (Ազգ. Հանդ., 1911, ԺԱ., էջ 5–33). Նա հայ եկեղեցիների աստիճանաբար կատարուած ձեւափոխութիւններն այսպէս է ընդունում. Հնագոյնն է «երկար քառակուսի սրահ, առանց որ և է յարակից բաժանմունքների, բացի պատարագին խորանէն», (խորան բառը նա գործածում է հին մտքով — ներկայի սեղանի փոխարէն). Երկրորդ աստիճանն է, երբ արեւելեան գլխաւոր խորանին երկու փոքր սենեակ են աւելացնում և այդ սենեակները կցուած են արեւելեան պատին, գլխաւոր խորանի աջ ու ձախ կողմերին. Այս յատակագծով մի փոքր եկեղեցի մենք տեսանք Դսեղի վանքից ոչ հեռու գտնւող այժմ Վարդանլու կոչուած աւերակ մի գիւղում, կանգուն և համարեա անվնաս պահուած.

Երրորդ ձեւը նա նկատում է այն եկեղեցիների մէջ, որ արեւելեան կողմից՝ բացի միւս երեք կողմերում՝ սիւնազարդերով ծածկ են շինում, կամ աւելի ուղիղ կը լինէր ասել, սրահներ են շինում, որի տիպիկ օրինակն է Օձունի եկեղեցին (Նկարը տես Ստրժիգովսկի, հատ. Ա. էջ 175, Ազգ. Հանդ., 1901, էջ 374, յատակագիծը՝ էջ 177). Այս նոյն ձեւի մէջ յետոյ սիւնազարդի արեւմտեան սրահի անկիւնում մի մի սենեակ են շինում, որի տիպիկ օրինակն է նշանաւոր Երերոյքի բազիլիկան (Տես Ստրժիգովսկի, հատ. Ա. էջ 153, յատակագիծին նկարներ՝ էջ 154–8). Աւելի ուշ է այն ձեւափոխութիւնը, երբ սկսում են եկեղեցու ներսում չորս անկիւններում սենեակներ շինել, մինչև անգամ երկյարկ գործելով. դրանց լաւագոյն օրինակներից են Տաթեւի, Հաղարծնի և Դսեղի վանքի կաթուղիկէները. Ամենավերջին փոփոխութիւնը նա համարում է, երբ յաւելեալ նոր շինութիւններ են կցում, ամենաշատը արեւմտեան ճակատից. բայց հանդիպում են օրինակներ երբ դրանք շինում են կից հարաւային և մինչեւ իսկ հիւսիսային պատերին, որոնց օրինակները բազմաթիւ են և մեր քննութեան առարկայ.

Զգիտենք ինչո՞ւ է Գ. Թորամանեանը մի կողմ թողել Զուարթնոցի հետեւողութեամբ շինուած եկեղեցիների արեւելեան յաւելուած սենեակները (Տես Ստրժիգովսկի յատակագծեր Զուարթնոցի, հատ. Ա. էջ 109, Անիի Գագկաշէն Սուրբ Գրիգորի, էջ 120 և Բանակի, էջ 123).

Այդ յաւելեալ շինութիւնները պատմագիրների մօտ և արձանագրութիւններում կոչւում են Տուն աղօթից, Աղօթատուն, Ժամատուն, Գաւիթ և Սրահ։ Այս չորս անունները կարելի է յատուկ ձեւերի կառուցուածքներին յատկացնել. բայց դրանք հայկական լեզուի հին բառեր են, որ գործադրուել են սկսած Սուրբ Գրքի թարգմանութիւնից, բացառութեամբ Ժամատուն բառից և կիրարկուել են թէ՛ քաղաքացիական և թէ եկեղեցական շէնքերի այս կամ այն մասի համար, յաճախ մէկը միւսի փոխարէն.

Ժամատուն բառի հնագույն գործածությունը հայ հեղինակների մոտ ինձ ծանոթ է Արիստակես Լաստիվերտցու այս հարևոր հիշատակությամբ. Ասպատակիչները Պարսկաստանից արշավելով ավերում են Մելետին քաղաքը «եւ ի նոյն ամի աւերեցին զգեղեցիկ ապարանս սուրբ Կարապետին, զոր Հրահատ ածե ի գործակալացն մեծին Գրիգորի որդւոյ Վասակայ մեծաւ ջանիւ շինեալ էր, մինչ երկրին տէր էին, զժամատունն որ առաջի սուրբ Կարապետին, զոր գեղեցկայարմար պատրաստութեամբ յարդարեալ ի պատիւ մեծ վկային Կարապետին Քրիստոսի. Նաև զայլ շինուածս և զփայտակերտ եկեղեցին, զոր սուրբ Գրիգոր կոչեն, և էր թուականիս մերոյ ամք հինգ հարիւր եօթն յորժամ այս այսպէս եղեւ»։

Այստեղ հիշված Վասակայ որդի Գրիգորը քաջածանոթ հեղինակ Գրիգոր Մագիստրոսն է, որ վախճանուել է 1058ին. Հետևապէս նրա կառուցած ժամատունն այդ թուականից առաջ էր որ ասպատակիչները վառում են 1058ին, նոյն տարում.

Արձանագրական հիշատակութեամբ մենք արդէն տեսանք Հաղարծնում Սպասալարների շինած ժամատան արձանագրութեան մէջ, մօտ 1200 թուականից. Իսկ բառի աւելի հին գործածութիւնը կայ 1038ին կառուցված և կանգուն մնացած մի ժամատան արձանագրութեան մէջ, դա Հոռոմոս վանքի ժամատունն է, կցված Սուրբ Յովհաննէս եկեղեցուն, այսպիսի արձանագրութեամբ.

«Ի ՆԶԷ (= 1038) թուականիս հայոց եսու ես Յովհաննէս Ճաճանեան, որդի Դագկա Ճանանեանի զիմ այգին որ ի Կողբ լիմ եկեղեցիս ի սուրբ Յովհաննէս, զոր շինեցի ի փառս Հոռոմոսի հանդերձ *ժամատամբս*» (Տես Վիմ. Տար., էջ 21).

Գ. Թորամանեանն առանձին ուսումնասիրել է այդ ժամատունը, պատրաստել նրա յատակագիծը և նրա մասին գրում է մեր կարծիքով միանգամայն այն ուղիղ խօսքը թէ «ժամատան ձևը զուտ հայկական ստեղծագործութիւն է»։ Թագաւորաշէն ժամատունը պէտք է ընդունել որ 1038ից մի քանի տարով աւելի կանուխ է շինուել, որովհետև արձանագրութեան մէջ ոչ թէ շինութեան թուականն ունինք, այլ պատարագի չէնքի վրայ արձանագրուել է եկեղեցուն տրուած մի նուիրաբերութիւն.

Գ. Թորամանեանի յատակագիծը (Ստրչիգովսկի Ա. էջ 257) իր կազմած կտրուածքի պատկերը (յ. ա. էջ 820) և լուսանկար պատկերները (յ. ա. էջ 243 և մանաւանդ էջ 821) հնարաւորութիւն են տալիս լաւ ծանօթանալու այդ շինութեանը, որ է երկարացրած մի քառանկիւնի, բուն եկեղեցուց աւելի լայն և երկար, կենտրոնում չորս և պատերին կից նոյնպէս չորսական, ընդամենը 16 սիւներով, միակտուր հաստ քարերի բուներով և խարիսխների ու խոյակների համանման կլորացրած ձեւերով, միայն թէ խոյակների արտաքները քառակուսի են տաշված, իսկ պատուանդանի քարերը ութանկիւնանի են. Կենտրոնական չորս սիւների վրայ է բարձրանում մի առակ երկյարկանի գմբէթ. Ներքեւում ութանկիւնանի որմնաշար, դրա վրայ ութ միակտուր քարերի սիւներ, աղեղաձեւ միացած կրում են գմբէթի կանուրը, իսկ աղեղներ միացնող շարուածքի մէջ փոքրիկ լուսամուտներ են բացված. Գմբէթի միջում վերնալոյսի հերթիկ կայ, որ կազմուել է ութ միակտուր խաչաձեւ սալերի միացմամբ, որոնցից ամէն մէկը տարբեր զարդանախշով է փորագրված. Հաւանական այդ հերթիկի տակում երկար ժամանակ կրակ են վառել, որովհետեւ սալերը միանգամայն սեւացած, արտաքուստ գոյն են առել. Եկեղեցու մեծութիւնն է 16,84 մետր երկար, 11,45 մետր լայն, իսկ ժամատան չափերն են 18,80 մետր երկայն, 14,87 մետր լայն.

Տանիքի վրայ բարձրացող գմբէթը վերջերում ծառայում էր իբրև զանգակատուն. եթէ ընդունելու լինինք, որ դա շինութեան սկզբի ժամանակակից է և նպատակին յատկացրած, այն ժամանակ հաւանական կը թուայ թէ Անեցիի «ժամատուն» բառը «զանգակատուն» պիտի հասկանալ, ինչպէս Ստրչիգովսկին է ընդունում և որ Յովհաննէս Թագաւորը զուցէ առաջինը գործածեց զանգերը խորաշէն եկեղեցու մէջ.

Սիւների շարքերով ու թաղով այդ ժամատունը ամենից շատ նման է Անիի Առաքելոց եկեղեցու ժամատանը, որ նման հոյակապ մի շէնք էր, միանգամայն կործանուած եւ Գ. Թորամանեանի վերակազմութեամբ կենդանացած (Տես Ստրչիգովսկի Բ. էջ 825, իսկ իսկական վիճակը էջ 824). Այս սիւները եւ միակտուր խոշոր քարեր

ունին, միայն թէ խարիսխներն ու խոյակները առաւել կատարեալ գեղեցիկ փորագրութիւններով են զարդարուած։ Այս դէպքում եկեղեցին ինքը, կառուցուած 1031–1067, ստուգապէս ժամանակակից է Յովհաննէս Թագաւորի շինութեանը, իսկ ժամատունը Գ. Թորամանեանն ու Գր. Մառը համարում են ԺԳ. դարու գործ, Սելջուկների տիրապետութեան շրջանից։

Մեր նկարագրութիւնը, կարծում ենք, ակներև է դարձնում, որ Յովհաննէս Թագաւորի շինած ժամատունը իրենից ներկայացնելով ճարտարապետական մի լաւ մշակուած արտադրութիւն, պէտք է ունենար նախընթացներ, որոնցից շինող ճարտարապետը ընդօրինակել է, գուցէ որոշ փոփոխութիւններով և աւելի հարմարեցրել է քանի որ Թագաւորի պալատն էր կառուցում։ Բարեբախտաբար գրական աւանդներ գալիս են հիմնաւորելու այդ պարզ ենթադրութիւնը։ Մենք Օրբէլեանի պատմութեան շնորհիւ արդէն ծանօթացանք Տաթեւի վանքի և Վահանայ վանքի ագօթատներին, որոնցից առաջինը այժմս գոյութիւն չունի, իսկ միւսից ստացել ենք միքանի նկարներ, թէև հարկաւոր է սա տեղական ուսումնասիրութիւն կատարել։ Դրանք մօտ մի դար կանուխ են Հոռոմոսի ժամատնից։

Բայց նոյն Սիւնիքում գտնում է մի ժամատուն Ժ. դարու վերջից, 999ից։ Սիւնեաց Սմբատ իշխանի կին իշխանուհի Սոփիան «ի խորանոր վայրն որ Դնդկվանս կոչի», ուխտի է գնում և հաւանելով տեղին, ճարտար քարտաշ արհեստաւորների ձեռքով մի եկեղեցի է շինել տալիս, ի թուականին հայոց ՆԶԵ (= 936ին)։ Տարիներ յետոյ, ի ՆԽԸ (= 999ին) եկեղեցու վանահայր Գրիգորափորը «շինէ զգաւիթն եկեղեցւոյն» (Օրբէլ. Պէ. Ե.)։ Այդ եկեղեցին ու գաւիթը, թէև քանդուած, բայց կանգուն են և նկարագրուած ու յատակագծուած են Ազգ. Հանդէսում (1916, էջ 7–16)։ Յատակագծից երևում է, որ այդ գաւիթը կցուած է եկեղեցու արևմտեան պատին, սկսած խաչաձևի արտաքին անկիւնից, ազատ թողնելով պատի մի մասը և մի փոքր ձգուելով դէպի հիւսիս, ուստի և այդ պատի մի մասը ներս առնելով ժամատան դուռը չէ շինուած արևմտեան պատի մէջտեղում, այլ մի անկիւնում եկեղեցու ընդրան յանգիման։ Բացի այդ ներս ընկած մի պատ և պատերին կպած կիսասիւներ են ծածկի կամարների յենարան ծառայում։ Շինուած է լաւ տաշած սև գոյնի քարով, 7 մեթր երկար, 6 մեթր լայն, ծածկուած կամարակապով, որ մասամբ քանդուած է։ Ազգ. Հանդէսում կայ բաւական երկար նկարագրութիւն։

Դրական վկայութիւններն ու Դնդէվանքի կանգուն գաւիթը ժամատների կամ ագօթատների շինութիւնները տանում հասցնում են մինչև Ժ. դարու սկզբները, այն ևս բաւական ընդհանրացած Սիւնիքում։ Թուականով յայտնի երկրորդ հնագոյն ժամատան յիշատակութեամբ արձանագրութիւն արտագրել է Ն. Վ. Սարգիսեանը Անիում, այն ևս շատ հետաքրքիր ձևով, որովհետև յիշում են միաժամանակ ժամարանս եւ ձմերանոց ժամատներ.

«. . . Յամի ՈԻԲ (= 1173) թւ. արդ ես Տղայս ճանանա . . եւ զուգակից իմ Խուեռւ . . / շինեցաք զսուրբ Փրկիչս . . շինեցաք սմա ժամատունս ամարանս եւ ձմեռանս . . »: (Տես Ալիշան, Շիրակ, էջ 85, Վիմ. Տար. էջ 31–32).

Եր. Լալայեանը բաւական մանրամասն նկարագրել է Հոռոմայրի Ս. Նշան վանքը, տալով ընդօրինակելու այն արձանագրութիւնները, թւով 30, որ ունի Ջալալեանը (Ա. էջ 93–103), որոնց հէնց առաջնի մէջ կան կարևոր տեղեկութիւններ գաւթի, գրատան, մառանակի և սակառապետցի մառին, տալով ցոյց տալու իր նկարագրութեան մէջ, թէ ներկայումս կա՞ն արդեօք այդպիսի շէնքերի հետքեր (Ազգ. Հանդ., 1901, էջ 376–378). Թէ ի՞նչ էին իրենցից ներկայացնում վերջի երկու շինութիւնները, մնում է մեզ անհասկանալի, նոյնպէս անորոշ է մնում թէ գաւիթն այստեղ ժամատա՞ն թէ որահի մաքով պիտի ընդունել, մանաւանդ որ արձանագրութեան ՈԾ (1201) թուականը հին յիշատակութիւններից մէկն է ներկայացնում. Արձանագրութիւնն է.

«Ես Առաքել, որդի Գրիգորի . . . հաւ ի հայրենի գանձագին այգուն որ ի Դուռնգնանց / զիմ բաժինն ի սուրբ Նշանն, շինեցի զգաւիթս . . . զմառանիկն շինեցի / եւ գրատանապետին եւ լցի զմառանիկն ի գործածութիւն ամենայն իմոյ . . »:

Հաղարծնի վանքի մերձաւորութեան

մէջ է, ընդամէնը մօտ 20 կիլոմետր հեռաւորութեամբ, Մակարայ վանքն իր խոշոր մի ժամատնով, որ հաւանական ամէնից հին է Հաղարծնում Սղասաշարների շինածից. Թարխուդարեանն այսպէս է նկարագրում այդ. Աղստեւ թափուող Հաղարծնի մօտ է շինուած Մակարայ վանքը. հնագոյն եկեղեցին Աստուածածնի անունով. «որ ունի իր արեւմուտքում մի գաւիթ, կառուցած չորս սիւների եւ սրան կիսասիւների վրայ... որ ունին գեղեցիկ պատուանդաններ եւ խոյակներ... երկու դուռ հարաւային եւ արեւմտեան կողմերից, վերջ լուսամուտ, 14,10 մետր երկար և 10 մետր լայն... մէջտեղում չորս կամարների վրայ եղած է մի հրաշալի գմբէթ (ասած է գաւիթը), որ խանարհած է այժմ» (Արցախ. էջ 373–374), (նկար 35).



(Նկար 35)

Ս. Մակարի վանքի եկեղեցին ու ժամատունը.

Այդ ժամատան հարաւային դուռը կողմում է եկեղեցու. նոյն կողմի դրան հետ մի ուղիղ գիծ և ներսանուած է հարուստ փորագրութեամբ մի շրջանակի մէջ, իսկ վերեւի մասում ունի երկու քառակուսի գեղեցիկ ակլինիներ, առիւծ յուշատում է մի ցուլի, իսկ միւսում առ երեւոյթ եղջերու է նոյնպէս գեղարդի յարդարման ենթարկուած. Այդ պատը և դրան գլխի մեծ սալը ծածկուած են արձանագրութիւններով և գեղեցիկ խաչերով. բայց Զուլալեանի կարգադրածով ոչ մէկը, նոյն իսկ դրան վրայինը, անմիջապէս չէնքին չեն վերաբերում, իսկ ազգութիւ հիւսիսակողմում մի արձանագրութեան մէջ նորոգման մասին կայ այս արձանագրութիւնը.

«Ես Վայի Անբերդեցի իշխանաց իշխան հասու եկեղեցիս զամենայն ի ծնօրութեան / զաւթիս նորոգման Գրիգոր վարդապետի առաջնորդութեան հաւր Դաւթի...»:

Այս «Գրիգոր վարդապետ որդի Արտաշիրխանի», հաւանական Դիտէ Պաճառացի հեղինակը, յիշուած է մի երկրորդ արձանագրութեան մէջ ՊԾԶ (= 1207) թուականով, իբրև վանքին առաջնորդական գրեանց նուիրող. այդ հիման վրայ գաւթի նորոգութեան թուականը կարելի է համարել նոյն 1207 թուականներից. իսկ շինութեան ժամանակը ուրիշ կանուխ, յամենայն դէպս Հաղարծնի ժամատնից առաջ.

Ժամանակով շատ ուրիշ ուշ են այն բազմաթիւ ժամատները որ կցուած են հայ-

կական հին եկեղեցիներին, գլխաւորապէս վանքերում։ Ծանօթանանք մի քանիսի հետ, որոնց մէջ ամենահայտնիներն են Հաղբատի կից Ս. Նշան եկեղեցուն և Սանահնում, կից Ս. Աստուածածնին։

Առաջինի շինողն էր Ռոշկենցի Դոփեանց տոհմից Յովհաննէս եպիսկոպոսը, սովորական քառանկյունի յատակագծից տարբեր ձեւով։ (Տես յատակագիծը Սարգ. Բ. էջ 594). Երկու փոքրիկ սենեակներով միացած է Ս. Նշան եկեղեցու հարաւային և հիւսիսային պատերին, այնպէս որ եկեղեցու արեւմտեան պատը մի կերպ մտնում է ժամատան մէջ, իսկ ժամատան հարաւ և հիւսիսի պատերը մէջտեղում քառանկիւնի դուրս ընկած մասեր ունին, երկուական խոշոր լուսամուտներով, որով-թէ տարածութիւնն է մեծացել և թէ միատեսակութիւնը ոչնչացրել։ Երկու կլոր և չորս պատերին կցուած սիւներ զատում են այդ քառանկիւնի կտրուածքից դէպի արեւմուտք, գլխաւոր դրան հանդէպ։ Կենտրոնական մասում կայ կարծի ռոմնորական բացուածք, հերթիկը, որի տակը, յատակին, մի խոշոր քարէ աւազան է տեղաւորուած վերեւից անձրեւ ջրերն իր մէջ հաւաքելու, և սովորութիւն է եղել նաև Քրիստոսի մկրտութեան խորհուրդն այդտեղ կատարել։ Հերթիկի շուրջը առաստաղը կազմուած է մոզաիկանման, գոյնզգոյն քարերից, իսկ շինութեան չորս անկիւններին առաստաղը կամարաձեւ չէ, այլ տափակ շարուածքով, ինչպէս Հաղարծնի վանքի ժամատան մէջ։

Տէր Յովհաննէսն իր շինութիւններին և նրանց ժամանակի մասին թողել է այսպիսի արձանագրութիւն.

«Ես տէր Յովհաննէս ի հայրենոյ (սկսեալ) զպարուսպիկս սալել եւ զդուռս կազ/մել, զսուրբ Երիզորն նորոգել, զզաւիթս օծնել, զկարթի սուրբ սեղա/նոյն եւ զերեւ սուրբ ռանն . . թւին ՈՀ» (= 1221):

Ջալալեանն (Ճան. Ա., էջ 61) և Երիցեանը մի արձանագրութիւն ունին ՉԲ (= 1253)ից, որի մէջ ոմն Տփխիսեցի Շնորհաւոր իր ամուսին Ռուսուդանի հետ 100 դահեկան է տալիս Ս. Նշանի ժամատան շինութեանը։ Տէր Համազասպ եպիսկոպոսին։

Տաթեւի ազօթատան նման այս գաւիթն էլ յատկացրած էր միաժամանակ իբրեւ ահեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց և չափազանց շատ են արձանագրութիւններով և տասնյակ արձանագրութիւնների գերեզմանաքարեր, որ մի տեսակ սալայատակում են շէնքի ընդարձակ տարածութիւնը։

Սանահնի ժամատունը ներկայացնում է նման շինութեան ամենատիպիկ ձեւը, եկեղեցու արեւմտեան կողմում, հարաւ-հիւսիս պատերի շարունակութիւնը կազմելով. յատակագծով քառակուսի է, միջում չորս խոշոր սիւների միակտուր բուների և պատերին կպած ութ կիսասիւները միմեանց հետ միանում են խաչաձեւ կամարներով, ուղիղ կենտրոնում հերթիկի համար վերնալոյսի անցք թողնելով։ Սրա յատակն էլ է ծածկուած բազմաթիւ գերեզմանաքարերով։ Ժամատունը շինել են, ինչ որ անջնջելի են պահպանել սիւների վրայ փորագրած արձանագրութիւններ, Կիւրիկէ թագաւորի երեք դուստրները Մարիամ, Թամարն և Ռուսուդան, որոնց միացել է թագուհու հորաքոյր Թամարը, ամեն մէկը մի մի սիւն, իսկ գլխաւոր շինել տուողն էր վանքի առաջնորդ Յովհաննէսը ՈԼ (= 1181)ին, ուրեմն աւելի կանուխ քան Հաղբատինը։

Սրա հարաւային պատին կից, սիւնազարդ և կամարաձեւ ճակատով դէպի արեւմուտք բացուող, շինուած է ընդարձակ սրահը, որը կարող է միեւնոյն ժամանակ Ամենափրկիչ եկեղեցու համար ժամատուն ծառայել, մանաւանդ երբ աւելի ուշ, կամարաձեւ ճակատի մասում, կիսով չափ պատ են բարձրացրել, լուսաւորութեան համար որոշ բաց թողնելով, քանի որ այդ ընդարձակ սրահը վերնալոյս չունի։

Սրահանման մի երրորդ տարածութիւն էլ առաջացել է երբ երկու եկեղեցիների միջի տարածութիւնը կամարաձեւ առնիքով միացրել են, տանալով նեղ եւ երկար ձգուած մի շէնք, արեւելք, արեւմուտք, տանող ուղերի (Տես Դրիմի յաջող յատակագիծը, վերարտադրած Սարգ. Ա. էջ 67).

Հառիճայի վանքի երկու եկեղեցիներից փոքրը համարւում է Է. դարու շէնք, իսկ մեծը շինել է Սմբատ առաջին 985ին. ԺԴ. դարում կառուցուած ժամատունը, քառանկիւնի յատակագծով, մէջտեղում կամարներով միացած չորս սիւներով, միաժամանակ ժամատուն է երկու եկեղեցիների համար,

մեկի արեւմտեան, փոքրի հարաւային ճակատից (Տես Ստրժ. Ա., էջ 67)։ Թուականը կորած մի արձանագրութեան մէջ ազատ-րանն Հիմէուր Վահրամ շինեաց գմայելուչ ժամատունս (Շիրակ, էջ 162, Վիմ. Տար. էջ 141)։ Թուական ընդունել է 1235։

Նոյն Սմբատ Բագրատունու շինած Բագնայրի եկեղեցու ժամատունն էլ հաւանական ժամանակով ԺԴ. դարու կառուցուած է (Տես Ստրժիգովսկի Ա., էջ 211), միայն թէ նկարից երեւում է, որ այստեղ սրահ է և ոչ ժամատուն։

Ժամատներ ունին Կեչառիսը, Վարագը. Արատես 1270ից, Գեղարդը 1288ից. Սեւանի Առաքելոցը, նշանաւոր է նրանով, որ փայտածածկ էր. փայտեայ սիւները և նրանց խոյակները նոյնպէս փայտից. ԺԴ. դարու գեղեցիկ փորագրութեամբ. ուստի Հայաստանի Թանգարանային վարչութիւնը տեղափոխել է Երեւանի Թանգարանը անկորուստ և անփոփոխ պահելու համար. Գետիկի Գօշ Մխիթարայ վանքը, շինուած 1270ին, մինչդեռ եկեղեցին 1191ից է. Գանձասարի եկեղեցին շինուել է ՈԿԵ–ՈՁԷ = 1216–1238 տարիներում, իսկ ժամատունը 30 տարի յետոյ է շինուել. 1266ին (Տես Արցախ, էջ 173–175 և Ճանապարհորդութեան Բ., էջ 372–3, որ թուական նշանակել է ՉԾԵ = 1306)։

Այս անունների ցուցակը կարելի է շատ աւելի երկարել, յիշատակելով Յովհաննավանքը, Սաղմոսավանքը, Վասպուրականի, Սիւնեաց աշխարհի վանքերից շատերը. յատկապէս Սիւնեաց Լիպարիտի որդի Սմբատ իշխանի մասին բազմիցս յիշած Օրբէլեանը գրում է. «Շինէ ժամատուն մի հրաշակերտ յօրինուածովք, տեղի աղօթարանի ի դրան սրբոյ Նախավկային ի տաշածոյ վիմաց եւ ի կոփածոյ քարանց» (Գլ. ԿԵ. էջ 363), մօտ 1260ին. Ահաւասիկ այս դէպքում պատմագիրը գործածում է ժամատուն բառը, իր գործածած Տուն աղօթից, Աղօթարան, Գաւիթ բառերի փոխարէն, որով պարզ ապացոյց է տալիս, որ նա տերմինների մէջ խտրութիւն չէ դրել։

Քննելով ժամատների յատակագծերը, տեսնում ենք որ նրանք ամենահին ժամանակներից ի վեր տարբեր ձեւակերպութիւններ են ընդունել, համեմատ շինողների ճաշակների և հաւանական նաև տրամադրելի նիւթական միջոցների ու եկեղեցու յաճախողների թւին, բայց էական գծերով հաստատուն մի ձև ունին, որից չեն շեղւում։ Ժամատունն, առաջին՝ երբեք եկեղեցի չի դառնում, այսինքն մնում է միշտ առանց պատարագի սեղանի։ Հաղբատի երկու պատարագի սեղանները ժամատնից դասւած փոքրիկ սենեակներում են շինել. երկրորդ՝ նրանց յատակագիծը միշտ քառանկիւնանի է, առանց նիշերի կամ կիսաշրջան ապսիդների. երրորդ՝ լոյս առնում են, սակաւ բացառութեամբ, վերեւի երդիկից, իսկ երդիկի կողմով կամարները յենւում են սովորաբար չորս, բայց նաև երկու սիւների վրայ. երբ շատ փոքր են, այն դէպքում են սիւներն անհետանում, ինչպէս Գօշի վանքի երկրորդ բազիլիկում. Իսկ ինչ որ յատուկ ուշադրութեամբ պիտի առնել, նրանք կցւում են ոչ թէ մեծ և հոյակապ եկեղեցիների շէնքերին, այլ աւելի հին և աւանդութեամբ հռչակւած եկեղեցիներին. այդպէս ենք տեսնում Հաղարծնի և Գօշի վանքերում, իսկ Տաթեւում Առաքելոց եկեղեցուն, որովհետև դա էր հնագոյն եկեղեցուն փոխարինողը։

Այս ընդհանուր նկատողութիւններից յետոյ, փորձենք երկու էական խնդիրներ եւս լուծել. ե՞րբ և ինչի՞ համար են Հայերը ժամատներ շինել. երրորդ հարցը լինելու է թէ ի՞նչ տեղից են փոխ առել, կամ գուցէ միանգամայն անկախ ստեղծագործութիւն է։

Քրիստոնէական հնագոյն եկեղեցիներն մինչև հինգերորդ դարն հեթանոսական շինութիւններից փոխ առած ունէին peribolos (= շրջապատ), որ շրջափակում էր եկեղեցու շինութիւնը, առանձնացնելով շրջապատի աղմուկից. ունէր միայն արեւմտեան, ճակատի կողմից Atrium–նախագաւիթ կամ կտուրեալ քառակուսի կամ դրա մօտ ձեւով, միջակը բաց, չորսը կամարներով կամ սիւներով ծածկւած, բաց տարածութիւնը առաջայատկւում էին՝ վրան շրջելու. կենտրոնում սովորաբար շինւում էր մի աւազան, այցելուներին մաքրւելու ջուր մատակարարելու։ Այդպէս էր օրինակ Երուսաղէմի Գերեզմանի եկեղեցին, Ս. Սոֆիայի եկեղեցին, Բեթղեհեմում և ուրիշներ։

Յետոյ Սիրիայում սկսում են եկեղե-

ցիներին կցել զաւիթներ—Narthex անունով, միայն կողքերի նեղ կողմերը ծածկուած. այդ նարթեքս անունը գործածական է գոր-ծում սկսած Բիւզանդիական ժամանակնե-րից, որ մասամբ նոյն Ատրիումն է և ծա-ռայում էր իբրև տեղի ապաշխարողների։

Ուրեմն եկեղեցւոյն յաւելեալ շինութիւն կցելու սովորութիւնը գոյութիւն ունէր ընդ-հանուր եկեղեցու մէջ, մանաւանդ որ այդ շինութիւնները յիշուած և նկարագրուած են Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութեան Ժ. գրքի չորրորդ գլխում և այդտեղից էլ ծա-նօթ կը լինէին Հայերին։ Ժամատունն իր գրաւած տեղով արտայայտում է նոյն գա-ղափարի իրագործումը, բայց նոյնը չէ ոչ ձեւով և ոչ էլ մանաւանդ իր նպատակ-ներով։ Ինչպէս Թ. Թորամանեանն է ար-տայայտել, դա զուտ հայկական ստեղծա-գործութիւն է, իսկ նրա մէջ ենթադրու-թիւնները՝ ժամատների ծագման ժամանակի ու նպատակների մասին՝ չեն համապատաս-խանում իրական և մեր արդէն առաջ բե-րած տուեալներին, որովհետև նա կարծում է թէ ժամատներ շինելու սովորութիւնը Կիլիկիա գաղթած Հայերն են Հայաստան բերել Կիլիկիայից, այն եւս ԺԱ. դարում։

Ներսէս Լամբրոնացին իր գրած Պատա-րագի Մեկնութեան մէջ ունի այսպիսի մի կարևոր տեղեկութիւն, որից օգտուել է Թ. Թորամանեանը. «Ինձ թուի թէ յորժամ բառ մեղաց մերոց ի ծառայութեան մատ-նեցաք այլազգեաց և տիրեաց հասարա-կաց ի վերայ աշխարհիս Հայոց ազգն Իս-մայելացւոց, փախստական եղեն բնակիչք աշխարհիս, տարաբերեալք յերկիրս յորում եմք որ էր Հոռոմոց, և ոչ ունելով ընդ նոսա հաղորդութիւն, զորոյ պատճառն ցնել է յայլում վայրի, ոչ թոյլ տային նոցա Հոռոմք յիւրեանց սեպհական յեկե-ղեցիս, որք են յայս աշխարհի՝ աղօթել։ Իսկ նոցա Թափառական գոլով և բարեպաշտ ի վերստին դառնալն յաշխարհս հայրենի, եկեղեցիս միայն ըստ ժամանակին պիտոյից մատուցին փոքրկունս որպէս և տեսանեմք, և զի ոչ գոյին վերստին գործ և տատ ակսան դադրանել, ոչ կարացին եկեղեցիքն ամփո-փել զնոսա, և ի հարկէ շինեցին առընթեր զատունս» (Տես Մեկ. Պատարագի, Վենետիկ, 1847, էջ 29–30)։

Գ. Թորամանեանը հիմնուելով այս վը-կայութեան վրայ եզրակացրել է. «Ժամա-տունը ծագում առեր է Կիլիկիոյ կամ Փոքր Ասիոյ Հայերուն մէջ և կամաց կամաց հա-սեր է բուն Հայաստան, հաւանականօրէն ԺԱ. դարէն առաջ» (Ազգ. Հանդ. յ. տ. էջ 26)։ Անշուշտ նրա ուշադրութիւնից վրիպել են Օրբէլեանի բազմաթիւ վկայու-թիւնները և առհասարակ չէր հրատարակուած Դնդէվանքի ժամատան յատակագիծը, հա-մապատասխան տուեալներով, որպիսի փաս-տական տուեալներ հիմք են տալիս ուրիշ ուղիղ բացատրելու Լամբրոնացու վկայու-թիւնը, թէ Հայերն իրենց հայրենիքում արդէն սովոր էին ժամատներ շինելու ար-տաքին և այդ սովորոյթը կիրարկեցին ի-րենց նոր գաղթավայրում, երբ տեսան որ շինած մատրանման եկեղեցիներ իրենց չեն բաւարարում։

Լամբրոնացու անդաճուցած բացատրու-թիւնն օգնում է մեզ ուրիշ վճռականօրէն յայտարարելու, որ ժամատներ շինուել են այն եկեղեցիներին կից որ ծառայում էին» ամփոփելու ժամաւորների մեծ բազ-մութիւն և կառուցւում էին առընթեր, այդ մեծ կարիքին բաւարարութիւն տա-լու։ Ի վերջոյ այդ վկայութիւնը մատնա-ցոյց է անում նաև թէ այդ նոր շէնքերը ոչ այլ ինչ էին այլ լոկ տուն. Նման այն կացարանին որի մէջ աղօթում էր հայ մար-դը, որ սկզբի շրջանում կոչուել է աղօթա-տուն, տուն Աստուածածնի, տուն Տեառն. Իսկ աւելի ուշ երբ սովորութիւն է դարձել ե-կեղեցուն ժամ կոչել և ասել, ժամ գնալ, ժամ տալ, ժամ անել, ժամ կատարել, ժա-մատացութիւն ևայլն, այդ աղօթատներն էլ սկսել են անուանել ժամատուն։

Հայ եկեղեցիների յատակագծերի գա-ւառութիւնը 12 զանազան ձևերի, համե-մատ Ստրշիգովսկու սխեմայի, Հինգ դէպի հե-տեւեալ դարերը մի ձգտում է յայտնաբե-րում, ըստ կարելոյն մեծացնել եկեղեցի-ները և խրթին ու մթին շինութիւնները դարձնել «աւելի պայծառ»։ Եօթներորդ դարուց Հայաստանում գմբէթաւոր եկեղե-ցիներ շինելը համարեա բացարձակ տիրա-պետող ձև է դառնում. հին բազիլիկները, Երերոյք, Թալին, Օձուն, Դաւթի վանքը չեն ընդհանրանում և մինչև իսկ ձևափոխ-ման են ենթարկւում յարմարացնելով նոր պահանջների և առանց գմբէթների բազի-

լինները վերափոխւում են գմբէթներով։ Եւրոպայում չափազանց մեծ եկեղեցիներ են կառուցւում շնորհիւ բազիլիկ յատակագծերի տուած յարմարութեանը, որ կարելի էր եկեղեցին ըստ հաճոյս երկարացնել և մէկ նաւը երեքի մինչև իսկ հինգի վերածել։ Դրա հակառակը քարից շինած ահագին գանգուածներով գմբէթները, որոնց կայունութեան համար անհրաժեշտ էր նաև ներսում կամ վիթխարի սիւներ բարձրացնել, կամ նիշերի միջոցով հնարաւորութիւն ստեղծել գրաւ պատերից որոշ ներսառումներ կատարել և դրանց վրայ յենել վերև ալացող գմբէթների ահագին գանգուածը. տարածութիւնն ըստ հաճոյս մեծացնել չէին կարող։ Շինարարական տեխնիկի այդ սահմանափակման օժանդակ են գործել յաւելեալ աղօթատան կառուցմամբ։ Ճարտարապետների խորհրդատուն եղել և նոր գաղափարի յղացումը տուել է ինքը կեանքը, երբ նահապետական պայմաններում ապրող ընտանիքը չափազանց բազմանդամ է դառնում և շարունակում է անբաժան եղանակով նոյն տան մէջ կենցաղավարել, հիմնական տանը կցւում են նոր շինութիւններ. հազիւ թէ կարելի լինի կասկածել, որ նոյն եղանակով են վարուել երբ որ և է եկեղեցու յաճախողների թիւն է մեծացել։

Մի հանգամանք էլ հարկաւոր է ի նկատի առնել. ժամատան կից եկեղեցիները ընդհանրապէս իբրև նորահաստատ հիմնարկներ մեծ չէին ծրագրւում, հաւանական՝ թէ միջոցների աղքատութեան պատճառով և թէ որովհետև մեծաթիւ այցելուներ չունէին։ Իսկ երբ գործերը որ և է վանք առաջադիմում և հռչակաւոր էին դառնում, այլևս ոչ ոք չէր համարձակւիլ նրան քանդել նորով՝ աւելի մեծով փոխարինելու. Յովհաննէս եպիսկոպոսը երազում է և հրեշտակից հրաման ընդունում քանդելու Տաթևի հնացած և խախտուած եկեղեցին, ապա թէ վստահանում նրա քանդման հրաման արձակելու նորի կառուցման համար։ Եւ ահա՛ թէ ինչով է բացատրւում, որ ժամատները բուն եկեղեցուց միշտ ուշ են շինուել, երբեմն տասնեակ տարիներ յետոյ, ինչպէս Հոռոմոսի ժամատունը, երբեմն դարեր յետոյ, ինչպէս Առաքելոցինը Անիում։

Իբրև ամփոփումն մեր ասածների կարող ենք եզրակացնել, որ Աղօթատուն կամ ժամատուն Հայերը սկսել են շինել բուն հայրենիքում, առանց դրսի հետեւողութեան. սկսած առնուազն IXներորդ դարուց, եթէ ոչ աւելի կանուխ. դրանք շինուել են եկեղեցի յաճախողների բազմութեանը բաւարարութիւն տալու, բայց ոչ իբրև տեղի եկեղեցական արարողութեան խորհուրդների կատարման, այլ իբրև տեղի աղօթելու և տեղի դամբարանների, գլխաւորապէս իբրև տոհմական գերեզմանատներ։

Նոյն այդ շէնքերը ամենահին ժամանակներից սկսել են ծառայել նաև իբրև հանգստեան տեղի ազնուատոհմ և բարձրաստիճան ննջեցեալ անձանց, որոնք թաղուել են ոչ թէ «ի տաճարի», որ Հայոց եկեղեցին չի ընդունել, այլ «ընդ հովանեաւ տաճարի»։

Ժամատների նպատակի մասին համանման կարծիքի է Գր. Մառը. «Հայերի մօտ ժամատները յաճախ յետոյ են կցել եկեղեցիներին, յատկապէս այն ժամանակ երբ եկեղեցին չէր բաւարարում մեծաթիւ աղօթողներին ժամապաշտութեան ժամանակ. Ժամատներում թաղւում էին ականաւոր ննջեցեալներ և առհասարակ ննջեցեալներ. Բացի այդ ժամատներում հաւաքւում էին քննելու ոչ միայն եկեղեցական, այլ նաև հասարակական և քաղաքական հարցեր»։

Իր այդ միտքը գիտնական պրոֆեսորը փորձում է հաստատել Առաքելոցի ժամատան որմերի այնպիսի արձանագրութիւններով, որ վերաբերւում են ոչ յատկապէս այդ եկեղեցուն, այլ Անի քաղաքի բոլոր բնակիչներին (Տես Անի, Մայրաքաղաք հին Հայաստանի, Ս. Պետերբուրգ, 1898, Հնագիտական Կոմիսիայի Յայտարարութիւնների մէջ, էջ 137–222, գրուած ռուսերէն)։

Մնում է գտնել թէ ինչ շինութիւններ են ժամատներին նախագաղափար օրինակ ծառայել։

Ինչպէս արդէն յիշել է, Գ. Սարգիզովսկու հետ ունեցած մեր զրոյցի ժամանակ այն կարծիքն էի յայտնել, թէ հայկական ժամատները հայկական գիւղական տան ընդօրինակութիւն են ներկայացնում, հետևապէս նրա նախագաղափարը պիտի որոնել այդտեղում։

1892ին մենք հրատարակել ենք մի փոքրիկ ուսումնասիրութիւն գերմաներէն, որ յետոյ թարգմանուել է հայերէն.

*Das armenische Bauernhaus, Mitteilungen der Antropologischen Gesellschaft in Wienn N. 5, XII, 1892.:

Ստրժիգովսկին յիշատակելով այդ աշխատութիւնը, ասում է. «Որովհետև այս (այսինքն գիւղական տունը) եկեղեցաշինութեան մէջ ոչ մի նշանակութիւն չի ունեցել. դրա վրայ երկար կանգ չեմ առնում» (Հա. Ա. էջ 262)։

Մեր աշխատութեան մէջ մենք փորձել ենք ապացուցանել, որ հայկական գիւղական տունը շատ հին ձև ունի և իր յատակագծով ու բաղկացուցիչ մասերով միանգամայն համապատասխանում է Հոմերոսի հերոսների ապրած տներին։ Հայաստանի զանազան շրջանների բոլոր գիւղական տները միատեսակ չեն, այլ գոյութիւն ունին հիմնական վարիանտներ, դրանց մէջ այն տիպը որ տարածուած է յատկապէս Սիւնիքում, Արցախում և կոչւում է Ղարադամ, եթէ թարգմանելու լինինք «սև տուն» պիտի կոչենք. ահա այդ ղարադամերն են հայկական ժամատների սկզբնատիպ դարձել։

Դրանց հիմնական չեման այսպէս է. քառակուսի կամ երբեմն ձգուած քառանկիւնի յատակագիծ, անտաշ քարերով ցեխաշար չորս որմ նրա շրջափակն են կազմում. նայած տան մեծութեան, յատակի մէջ, ոչ կենտրոնում, կանգնեցնում են փայտեայ հաստ սիւներ, մի հատ, բայց նաև երկու կամ չորս. քառանկիւնու ամբողջ երկարութեան մի գերան են հաստատում այդ սեան կամ սիւների վրայ, երկու ծայրերը հասցնելով հակադիր պատերի գլուխը, որով գերանն ունենում է չորս կամ երեք յենման կէտեր. կողմնակի գերաններն, աւելի կարճ, դարսում են հակադիր, ծայրերով յենւած մի պատի և երկար հիմնական գերանի վրայ։ Ընդհանրապէս տան տանիքը ստացւում է միանգամայն տափակ, հաւասար հարթութիւն, բայց չորս սիւների գործադրութեան հանգամանքում և առհասարակ կողմնակի գերաններն այնպէս են միմեանց վրայ շարում, որ ներքուստ ստացւում է մի տեսակ խաչաձև, աստիճանաբար բարձրացող կամարածածկ, որ գնալով նեղանում է ուղիղ կենտրոնում։ Երկու դէպքում էլ այդ կենտրոնում տան կրակարանն է շինած, գետնի մակերևոյթից թեթև խորութեամբ, բուստկան մեծ մի շրջան, պատուանդանները յատակից մի փոքր բարձրացրած։ Կրակարանի գլխին կտուրից բացւում է տանը լուսաւորող և կրակարանի ծուխը դուրս թողնող կլոր բացուածքը, որ Երդ–Երդիկ անուն է կրում. եթէ կտուրը միանգամայն տափակ է, այդ հերթիկը դրսից շրջափակում են գլանաձև թարմ ճիպոտներից հիւսուած մի գամբիւղով, որ աւելի ամուր և հաստատուն դարձնելու համար երկու տեղից, բարձրութեան վրայ, ոլորուած հաստ պարանի նմանութեամբ զօլնման հիւսուածքներ են գործում. Այդ գամբիւղը ներսից և դրսից ծեփում են հաստարակ յարդախառն ցեխի շաղախով. Միւս անձրևների ժամանակ և գիշերները, երբ կրակարանն այլևս չի ծխում, հերթիկի բաց գլուխը ծածկում են. Կամարաձև ծածկոյթի մի օրինակ նկարուած է, միջի կտրուածքով Հ. Ալիշանի Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց գրքում (Վենետիկ, 1890, էջ 44), միայն թէ այստեղ կրակարանը շինած է պատի մէջ, այսպէս կոչւած բուխարիկում, որ սովորական է փոքր սենեակների մէջ։

